ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌ. ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՅՈՒԹԵՐ

ՊՐԱԿ

31(47.925)
Հ-17

ԵՐԵՎԱՆ — 1951

10 NOV 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

91(47-925)
Հ-17
ա/ճ

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐ

ՊՐԱԿ I

ԵՐԵՎԱՆ—1951

30.05.2013

21/21

4362-51 g

Т. Х. АКОПЯН

ИСТОРИЧЕСКАЯ ГЕОГРАФИЯ АРМЕНИИ

(Материалы)

вып. I

(На армянском языке)

Изд. Гос. Заочного педагогического института Арм. ССР
Ереван—1951

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի պատմական աշխարհագրությունը հնագիտության (արխեոլոգիայի), ազգագրության (էթնոգրաֆիայի) և մի քանի այլ առարկաների հետ միասին, հանդիսանալով հայ ժողովրդի պատմության օժանդակ և անհրաժեշտ առարկաներից մեկը, իր ուսումնասիրություններով կարևոր տվյալներ է տալիս նրան՝ մի շարք հարցեր լուսաբանելու խնդրում։ Հայկական բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմության և աշխարհագրության ֆակուլտետների օժանդակ դիսցիպլինների շարքում դասավանդվող այդ առարկայի գծով չկա որևէ ամփոփ աշխատություն, որպեսզի համապատասխան ֆակուլտետների ուսանողները կարողանային այս կամ այն չափով օգտվել նրանից։ Մխիթարյանների կողմից Հայաստանի պատմական աշխարհագրությանը վերաբերող գրված շատ թե քիչ ամփոփ բնույթի աշխատությունները՝ Ղ. Ալիշանի «Սիսական», «Այրարատ», «Սիսիուան», «Տեղագիր Հայոց մեծաց», Ղ. Ինճիճյանի «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» և մի քանի այլ հեղինակների ուրիշ աշխատությունները չեն կարող բավարարել մեր այսօրվա ուսանողության պահանջները ո՛չ միայն այն պատճառով, որ նրանք սոսկ փաստերի ժողովածուներ են, և միայն պիտանի կարող են լինել գիտական այս կամ այն նեղ հարցում՝ իբրև հում նյութ, այլև այդ աշխատությունները շարադրված են կղերա-ֆեոդալական սխոլաստիկ մեթոդոլոգիայով ու խրթին գրաբարով։ Բացի դրանից, նրանք արդեն մեծ մասամբ հնություն են ներկայացնում, որովհետև այդ աշխատությունների հրապարակ գալուց հետո անցել է արդեն կեսից—մեկ դար, իսկ այդ ժամանակամիջոցում հայագիտությունը պարզաբանել է բազմաթիվ ու բազմատեսակ հարցեր, որոնք, բնականաբար, իրենց լուծումը չեն ստացել կամ միան-

գամայն սխալ են մեկնաբանվել հիշված հեղինակների երկերում։ Էլ չենք խոսում այն մասին, որ նոր ու նորագույն (սովետական) ժամանակաշրջաններին վերաբերող պատմա-աշխարհագրական բնույթի ամփոփ աշխատություններ դեռևս գրեթե բացակայում են։

Սույն աշխատությունը հեռու է Հայաստանի պատմական աշխարհագրության ձեռնարկ լինելուց։ Բայց նրա մեջ զետեղված են գրեթե այն բոլոր հարցերը, որոնց յուրացումով ուսանողները անհրաժեշտ չափով կծանոթանան Պատմական Հայաստանի աշխարհագրական միջավայրի, այնտեղ տարբեր ժամանակներում ապրող բնակիչների, վարչական-տերիտորիալ բաժանումների և այլ խնդիրների հետ։ Դրա հետ միասին, ծանոթագրություններ են արված Հին Հայաստանի հարևան երկրների վերաբերյալ։

Աշխատության համար հիմք են ծառայել Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի պատմության ու աշխարհագրության և Հայկական ՍՍՌ Հեռակա Մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետներում 1946—1948 թ.թ. Հայաստանի պատմական աշխարհագրության գծով մեր կարդացած դասախոսությունները, որոնք հարստացրել ենք այլ նյութերով։ Սկզբնաղբյուրներից բացի, օգտագործված բազմաթիվ ուսումնասիրությունների շարքում մեծ չափով օգտվել ենք հետևյալ աշխատություններից. Լինչի «Հայաստան» (ռուսերեն լեզվով), Ստ. Լիսիցյանի «ՀՍԽՀ ֆիզիկական աշխարհագրություն», Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» (ռուսերեն լեզվով), Լեոյի «Հայոց պատմություն» (հ. Ա.), ակադ. Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», պրոֆ. Գր. Ղափանցյանի «Հայասան—հայերի բնօրրան» (ռուսերեն լեզվով), «Ուրարտու», դ-ր Բ. Բ. Պիոտրովսկու «Ուրարտուի պատմությունը և կուլտուրան» (ռուսերեն լեզվով) և դոց. Ս. Երեմյանի ձեռագիր վիճակում գտնվող մի աշխատությունից։

Աշխատությունը բաղկացած է լինելու չորս պրակից։ Ներկա պրակի նյութը կազմում է Հայկական լեռնաշխարհի ֆիզիկո-աշխարհագրական պայմանների բնութագրությունը, հնում Հայաստանով անցնող գլխավոր ճանապարհների նկարագրությունը, Հին Հայաստանի բնակչության հետ կապված մի շարք հարցեր

և վարչական-տերիտորիալ բաժանումների ընդհանուր տեսությունը։

Նկատի ունենալով այն, որ ֆիզիկո-աշխարհագրական բաժինը հնարավոր չէ պատմական անուններով լրիվ չափով ներկայացնել (որովհետև՝ ա) այդ աշխարհագրական տեղանունների մի մասը դեռևս չի ճշտված. բ) մատենագիրները հաճախ աշխարհագրական հատուկ անունները հիշատակելու փոխարեն գործ են ածում անանուն «հովիտ», «դաշտ», «լեռ», «սար» և այլն, որոնք հնարավորություն չեն տալիս աշխարհագրական մի շարք վայրերի հատուկ անուններն իմանալ. գ) ֆիզիկո-աշխարհագրական պայմանները վերաբերում են պատմական ոչ թե մեկ, այլ բոլոր ժամանակաշրջաններին), ուստի Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական առանձնահատկությունները նկարագրելիս գործ ենք ածել թե՛ պատմական և թե՛ այժմյան տեղանունները։ Հետևաբար, կարիք չի եղել այս պրակին կցել հատուկ քարտեզներ. վերին աստիճանի դյուրին է և լիովին կբավարարի այստեղ շարադրված նյութին ըմբռնել ժամանակակից ֆիզիկական, վարչական և պատմական քարտեզների հիման վրա, որոնք մեծ տիրաժով հրապարակի վրա են։

Հնարավոր է, որ աշխատությունը պարունակում է որոշ թերություններ։ Սիրով կունկնդրենք համապատասխան մասնագետների և առհասարակ ընթերցողների կողմից նկատված թերությունները և կաշխատենք անպայման վերացնել այդպիսիները։

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

1950 թ. մայիսի 20, ք. Երևան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՑՅԱԼՆՈՒ ՌԵԼԵՖԸ

Հայկական լեռնաշխարհը, որը որոշ հեղինակների մոտ երբեմն կոչված է նաև Հայկական բարձրավանդակ կամ սարահարթ, տարածվում է Առաջավոր Ասիայի կենտրոնական մասում, Իրանական սարահարթից հյուսիս-արևմուտք։ Նա տեկտոնիկ և նրա հետ սերտորեն կապված հրաբխային ուժերի հետևանքով վեր բարձրացած մի երկիր է, ֆիզիկո-աշխարհագրական մի ուրույն մեծ շրջան։

Հայկական լեռնաշխարհը, որ գրեթե բոլոր կողմերից սահմանափակված է բարձրաբերձ լեռնաշղթաներով, ընդհանուր առմամբ ունի ավելի բարձր դիրք, քան նրա հարևան երկրները, այդ պատճառով էլ աշխարհագետների մոտ այն երբեմն համարվում է «լեռնային կղզի»։ Նրա հյուսիսային սահմանը կազմում է Փոքր Կովկաս կամ Ստորին Կովկաս լեռնասիստեմը, որը ձգվում է Մեծ Կովկասին (Կապ-Կոհ) զուգահեռ՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ։ Հարավից Հայկական Տավրոսն է, որը ձգվում է Եփրատից մինչև Կոտուր (Կոտոր) և Զագրոշ կամ Զագրոս լեռնաշղթաների սահմանը կազմող Սուրովա գագաթը։ Արևելքում Հայկական լեռնաշխարհը Իրանական սարահարթից անջատվում է Ուրմիո լճի (Կապուտան ծով) ու Արաքսի (Երասխ) ավազանների ջրբաժան շղթայով և Կարադաղի (կամ Ղարադաղ) լեռներով։ Իսկ հյուսիս-արևմուտքում Հայկական լեռնաշխարհի սահմանն անցնում է Անտիտավրոս և Պոնտական լեռնաշղթաներով։ Նշված սահմաններում Հայկական լեռնաշխարհի տարածությունը

հասնում է մոտ 300 000 քառ. կմ-ի։ Հայկական լեռնաշխարհում բարձրանում են զանազան ուղղություններ ունեցող բազմաթիվ լեռնաշղթաներ ու առանձին լեռնախմբեր։ Լեռնաշխարհի միջին բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 1500-ից 1800 մետրի։ Նա ավելի բարձր է, քան իր հարևան Փոքր Ասիան (որի միջին բարձրությունը 800-ից 1200 մ է) և Իրանի բարձրավանդակը (միջին բարձրությունը 1400 մ)։ Ամբողջ լեռնաշխարհում ամենաբարձր գագաթը Մեծ Մասիսն է (5156 մ)։ Զգվելով տարբեր ուղղություններով՝ լեռնաշղթաները հատվել են իրար հետ և առաջացրել բազմաթիվ փակ շրջաններ՝ ֆիզիկո-աշխարհագրական ռայոններ։ Լեռնաշղթաների մեջ ձգված են ձորեր, հովիտներ և դաշտեր։ Հենց ռելեֆի այդպիսի բնույթի շնորհիվ է, որ հին և միջնադարյան Հայաստանի գավառների մի զգալի մասի անունները բարդված են «ձոր», «փոր», «հովիտ» բառերով։ Առանձնապես խոր է Արաքս (Երասխ) գետի հովիտը, որն իր արևմտյան մասում, Կողբի մոտ, ունի 900 մ բարձրություն, իսկ դեպի արևելք ցածրանալով, Օրդուբադի մոտ ունի միայն 600 մ բարձրություն։ Արաքսի մեծ հովտից հետո նշանավոր են Արևելյան Եփրատի (Արածանի) երեք ընդարձակ հովիտները՝ Ալաշկերտի, Մուշի և Խարբերդի դաշտերը։

Հայկական լեռնաշխարհի ռելեֆը թե՛ իր ծագման տեսակետից և թե՛ բնույթով բազմազան է։ Այնտեղ մենք հանդիպում ենք տարբեր ժամանակներում առաջացած ծալքավոր լեռնաշղթաների, հրաբխային լեռնախմբերի ու առանձին գագաթների, գետերի գործունեությամբ առաջացած ձորերի ու հովիտների, առանձին սարահարթերի և այլն։

Հայկական լեռնաշխարհի ներկա ռելեֆը հիմնականում ձևավորվել է երրորդական և չորրորդական ժամանակաշրջանում։ Նրա ռելեֆի ձևավորման մեջ սկզբնական շրջանում վճռական դերը պատկանում էր լեռնակազմական և նրա հետ սերտորեն կապված հրաբխային երևույթներին, այսինքն՝ ներքին ուժերին։ Իսկ հետո ռելեֆի ձևերի մեջ հսկայական փոփոխություններ են առաջացրել արտաքին ուժերը (արև, քամի, ջուր)։ Գետերը (հատկապես Արաքսը), արագընթաց հոսանքի շնորհիվ, կտրտել ու ողողել են լեռնաշղթաներն ու առանձին բարձրացումները, իրենց հետ տանելով ահռելի քանակությամբ տիղմ՝ այն նստեցնելով ցածրադիր

մասերում։ Դա, իհարկե, չի նշանակում, որ տեկտոնական (լեռնակազմական) և հրաբխային երևույթները դադարել են գործելուց։ Դեռ տակավին շարունակվող լեռնակազմության արտահայտություններն են Հայկական լեռնաշխարհում կրկնվող երկրաշարժերը։ Երկրաշարժեր են տեղի ունենում թե Արևմտյան Հայաստանում և թե մեզ մոտ՝ Սովետական Հայաստանում, նրանք արտահայտվում են երբեմն թույլ, իսկ երբեմն էլ ավելի մեծ ուժով։ Սովետական Հայաստանում վերջին ժամանակներում տեղի են ունեցել մի քանի համեմատաբար ուժեղ երկրաշարժներ։ 1926 թ. Լենինականում (Կումայրի, Գյումրի, Ալեքսանդրապոլ) տեղի ունեցավ երկրաշարժ, որ բավականին վնասներ պատճառեց քաղաքին, 1931 թ. ապրիլի 27-ին Զանգեզուրի և Մեղրու (Սյունյաց աշխարհի հարավ-արևելյան մասը) շրջաններում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով առաջացան զգալի ավերումներ։ Այդ երկրաշարժը միաժամանակ որոշ փոփոխություններ առաջացրեց ռելեֆի վրա՝ փլվածքներ, աղբյուրների անհետացում և այլն։ 1937 թ. հունվարի 6-ին Երևանում տեղի ունեցավ բավականին ուժեղ երկրաշարժ, որը, սակայն, գրեթե վնաս չպատճառեց։

Ավելի վաղ ժամանակներում տեղի ունեցած մի շարք երկրաշարժների մասին տեղեկություններ են հաղորդում մեր պատմիչները։ Կիրակոս Գանձակեցու (13-րդ դարի պատմիչ) հիշատակության համաձայն 8-րդ դարի առաջին կեսում[1] Հայոց ձորում (հետո՝ Վայոց ձոր, մինչև վերջին ժամանակներս՝ Դարալագյազ) տեղի ունեցած երկրաշարժից սպանվել է 10 000 մարդ։ Երկրաշարժի կատարած ավերումների պատճառով ընկղմվել է Մոզան կամ Մոզն քաղաքը, իսկ գավառն իբր այդօրվանից կոչվել է «Վայոց ձոր» («ողբերի ձոր»)[2]։ Ճիշտ է, որ «Վայոց ձոր» տեղանվան առաջացման այդ մեկնությունը, որ տալիս է Կիրակոս Գանձակեցին, միանգամայն կամայական է և անհամոզեցուցիչ։ Այդ, նախ, այն պատճառով, որ Վայոց ձոր անունը դեռևս հիշատակ-

---

1 Գեորգ-Մեսրոպի հաշիվներով («Հայոց պատմութիւն» (քննական), հրատ. Ա., Կ. Պոլիս, 1914, էջ 97) այդ ավերիչ երկրաշարժը տեղի է ունեցել 735 թվին։

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910, էջ 70։

վում է 5-րդ դարի պատմիչների (Եղիշե և Ղազար Փարպեցի) մոտ, հետևապես, այդ անունը ոչ թե առաջացավ 8-րդ դարում, այլ ավելի վաղ ժամանակներում և, երկրորդ, Վայոց ձոր գավառանվան առաջացումը կապված է նույնանուն ցեղի (վայ-երի) անվան հետ, ուստի էթնիկական ծագում ունի։ Սակայն պատմիչի հաղորդած այդ տեղեկությունից երևում է, որ 8-րդ դարի երկրաշարժը ոչ միայն մեծ վնասներ է պատճառել բնակչությանը, այլև աղդել է ռելեֆի վրա։ Մի քիչ ավելի թույլ ուժով Սյունիքում երկրաշարժ է տեղի ունեցել 10-րդ դարի սկզբներին, որի հետևանքով բնակչությունը նորից բավականին տուժել է։

Ինններորդ դարի երկրորդ կեսում երկու երկրաշարժներ են տեղի ունեցել Դվին քաղաքում և նրա շրջակայքում։ Դրանցից մեկը տեղի է ունեցել 862 թվին Աշոտ Բագրատունու Հայաստանի իշխանաց իշխան լինելու ժամանակ։ Հիշատակության համաձայն երկրաշարժի հետևանքով մայրաքաղաքում (Դվինում) մեծ ավերումներ եղան և իբր սպանվեց 12 000 մարդ։ Մյուս երկրաշարժը, որն ըստ նկարագրությունների ավելի ուժեղ և աղետաբեր էր, տեղի է ունեցել 893 թվին։ Աղետը պատահել է գիշերը, երբ քաղաքը խորը քնի մեջ էր ընկղմված։ Այդ երկրաշարժի հետևանքով փլվել են քաղաքի պարիսպներն ու պատվարները, բոլոր խոշոր և հաստահիմն շինությունները՝ եկեղեցիներ, ապարանքներ և այլ հաստատություններ։ Ավելի մեծ չափերով տուժել է մանավանդ ռամիկ ժողովուրդը, նա կորցրել է իր տների մեծագույն մասը։ Մեծ է եղել մարդկային զոհերի թիվը։

1138 թվին տեղի ունեցավ Գանձակի մեծ երկրաշարժը, որի ալիքները տարածվեցին նաև Սյունիքում։ Դրանից հինգ տարի անց, 1143 թվին Սյունիքում եղավ մի ավելի ուժեղ երկրաշարժ[1], որի պատճառած վնասները հսկայական չափերի հասան։

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ տարբեր ժամանակներում երկու երկրաշարժներ են տեղի ունեցել Մեծ և Փոքր Մասիսների շրջանում։ Նրանցից առաջինը տեղի է ունեցել 341 թվին (մ. թ.)։ Եդեսիայի եպիսկոպոս Եփրեմը պատմում է, թե այդ երկրաշարժի միջոցին իբր Մեծ և Փոքր Մասիսները նախ հեռացան իրարից, ապա սարսափելի ճայթյուններով մոտեցան իրար և իբր լեռների միջից դուրս ժայթեցին ծուխ ու կրակ։ Դա, իհարկե, չափազանցություն է, որովհետև Մասիսները վաղուց արդեն հանգած էին, սակայն նկարագրությունից երևում է, որ իրոք երկրաշարժը բավական ուժեղ է եղել։

Երկրորդ երկրաշարժը նույն Մասիսների շրջանում տեղի ունեցավ ոչ շատ վաղ անցյալում՝ 1840 թվի հունիսին։ Այդ երկրաշարժը ցնցեց Մասիսները (Մեծ Մասիսի լանջին գտնվող Ակոռի գյուղը կործանվեց)՝ իր ալիքները տարածելով հեռու նաև Արաքսի ձախակողմյան ափերին։

Պատմությանը առանձնապես հայտնի է 1319 թվի երկրաշարժը Այրարատյան աշխարհում։ Այդ երկրաշարժը, ինչպես պատմվում է, քարուքանդ արավ բազմաթիվ բնակավայրեր ու քաղաքներ, որոնց թվում և Անի մայրաքաղաքը։ Մի քանի երկրաշարժներ են տեղի ունեցել նաև Բարձր Հայքում, Ծոփքում և Հայաստանի այլ մասերում։ Պետք է նկատել, որ հին ու միջին դարերի մատենագիրները, որոնց թվում և հայ պատմիչները, առհասարակ մեծ չափով ուռճացնում են երկրաշարժների պատճառած վնասների չափերն ու մարդկային զոհերի թիվը։ Սակայն, դրա հետ միասին պետք է նկատի ունենալ նաև այն, որ այդ ժամանակներում կառուցվածքների մեծագույն մասը իրենց վիճակով շատ խախուտ էին, և 6—7 բալանոց երկրաշարժն անգամ կարող էր մեծ ավերածությունների պատճառ դառնալ։

Ներքին ուժերի արտահայտություններ են նաև հրաբխային երևույթները, որոնք անքակտելիորեն կապված են լեռնակազմական երևույթների հետ։ Այժմ Հայկական լեռնաշխարհում կա միայն մի գործող հրաբուխ. դա Թոնդրակ կամ Թոնդուրեկ գագաթն է Ալա-դաղ (Ծաղկաց) լեռների արևելյան մասում։ Սա ամբողջ Փոքր Ասիայում միակ հրաբուխն է (բարձրութ. 3330 մ), որ դեռ բոլորովին հանգած չէ։ Նրա մեջ հաճախ լսվում են

[1] Այդ երկրաշարժի մասին Սյունյաց իշխանական տան պատմիչ Ստեփաննոս Օրբելյանը գրում է. «... և ամենևիմբ ջնջեցան մարդ և անասուն. և անբնակ եղև բոլոր աշխարհս Սիսական. միայն թէ ի ծերպս քարանց մնացեալ էին ուրեք-ուրեք երկու կամ երեք արք» («Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 341)։

[1] Լեո, Հայոց պատմություն, հ. Ա., Թիֆլիս, 1917, էջ 132—133։

դղրդոցներ, գագաթից ոչ շատ հեռու ժայռերի միջից դուրս են ժայթքում ջրային գոլորշիներ, ծուխ և ծծումբ, բայց լավա չի արտավիժում։ Խառնարանի խորությունը հասնում է 600 մետրի։ Գլխավոր խառնարանից հետո երեք կմ արևելք կան ուրիշ փոքրիկ գագաթներ ևս, որոնք ժայթքում են բարձր ջերմություն ունեցող ջրային գոլորշիներ։

Երկրաբանական ժամանակաընթացքում Հայկական լեռնաշխարհի ռելեֆի ձևավորման մեջ, լեռնակազմական և հրաբխային երևույթներից բացի, առանձնապես նշելի են նաև սառցադաշտերի թողած ազդեցությունները։ Հայտնի է, որ չորրորդական դարաշրջանում տեղի են ունեցել մի քանի սառցապատումներ։ ՍՍՌՄ-ի Եվրոպական մասում սառցադաշտի հարավային եզրը հասել է մինչև Վոլգայի ստորին հոսանքը։ Այդ սառցապատումների ժամանակ, կլիմայի ընդհանուր ցրտության պատճառով, տեղական սառցադաշտեր են առաջացել նաև բարձրադիր լեռնային զանազան շրջաններում, այդ թվում և Հայկական լեռնաշխարհում։

Գիտության մեջ երկար ժամանակ պահպանվում էր այն կարծիքը, թե Հայկական լեռնաշխարհը՝ չնայած իր մեծ բացարձակ բարձրությանը և բարձրադիր լեռնային ընդարձակ սարահարթերի շատությանը՝ ոչ մի տեղ չի պահպանել չորրորդական դարաշրջանի սառցապատման հետքերը։ Սակայն վերջին հետազոտություններն ապացուցեցին, որ պարզ երևում են սառույցների շարժման հետևանքները և մորենների (լեռնալանջերից սառույցների պոկած քարաշերտերի) գոյությունը (Գեղամա շղթայի Գնդասար և Սպիտակասար գագաթների լանջերին, Արագածի ու Մասիսների վրա և այլն)։ Ժողովրդական դիտողությունը դեռ հնուց նկատել է Հայկական լեռնաշխարհի զանազան կողմերում լեռնային ապարների վրա սառույցի հոսելուց առաջացած խորագծեր և վերագրել է այդ «Անգղ հսկայի» եղունգների վարպետությանը։

Հայկական լեռնաշխարհի այժմյան ռելեֆը բազմազան է։ Նրա եզրային և կենտրոնական մասերում ձգվող լեռնաշղթաները ու նրանց ենթաճյուղերը, հատելով երկիրը, վեր են ածել ֆիզիկո-աշխարհագրական բազմաթիվ շրջանների։ Հայկական լեռնաշխարհի ռելեֆի ձևերի մեջ լայն տարածում ունեն գլխավորապես բարձր լեռնային շրջանները, հրաբխային սարահարթերը,

գետահովիտները, դաշտերը և լճային իջվածքները։ Նրա ռելեֆի համառոտ նկարագիրը տալու համար, հարմարության տեսակետից, սկսենք հյուսիս-արևելյան մասից և աստիճանաբար շարժվենք դեպի հարավ-արևմուտք։

Փոքր Կովկաս լեռնային սիստեմը։ Փոքր Կովկասը երբեմն կոչվում է նաև Անտիկովկաս։ Փոքր Կովկասը ձգվում է գրեթե Մեծ Կովկասին (Կապ-Կոհ) զուգահեռ։ Նա սկսվում է Սև ծովի (Էվքսինյան Պոնտոս) ափերի մոտից Աճարայի (հնում՝ Ղազո) և Սուրամի (հնում՝ Լիխի) լեռնաշղթաներով, որոնք ունեն լայնական ուղղություն։ Աճարայի լեռնաշղթայի շարունակությունը Բորժոմի կիրճից հետո, նույն արևելյան ուղղությամբ, կազմում է Բրիալեթի (Թռեղք) շղթան, մինչև Թբիլիսի (Տֆղիս), որտեղ նա վերջանում է Մթա-Ծմինդա («Սուրբ սար») կամ Մամա-Դավիթ («Հայր Դավիթ») սարով, որոնք այժմ քաղաքից բարձրանում են ֆունիկուլյորով։ Նշված երկու լեռնաշղթաները ամբողջապես գտնվում են Հայկական ՍՍՌ սահմաններից դուրս։

Փոքր Կովկասի արևելյան կեսը բաղկացած է տարբեր ուղղություններով ձգվող մի շարք լեռնաշղթաներից, որոնք իրենց ծագմամբ ու բնույթով զանազանակերպ են և, միակցվելով իրար հետ, առաջացրել են բազմաթիվ ֆիզիկո-աշխարհագրական շրջաններ։ Փոքր Կովկասի արևելյան կեսի մասերն են կազմում՝ Վիրահայոց կամ Սոմխեթի լեռնաշղթա։ Սկսվում է Բրիալեթի (Թռեղք) լեռնաշղթայի Առջևան գագաթից և ձգվում մինչև Աղստև գետը։ Նա խրամ գետով և նրա աջակողմյան վտակներով (Մաշավեր, Դեբեդ և այլն) մասնատված է մի քանի մասերի, որոնցից հարավայինը, որ կոչվում է Բաբաքարի շղթա, մտնում է Սովետական Հայաստանի տերիտորիայի մեջ։ Բաբաքարի լեռնաշղթան ունի հյուսիսից հարավ ուղղություն և վերջանում է Դիլիջանի դիմաց Թռչնասար (2309 մ) գագաթով։ Շղթայի արևմտյան լանջերը զառիթափ են, իսկ արևելյան լանջերը ունեն համեմատաբար մեղմ թեքություն։ Գլխավոր լեռնաշղթան և նրա բազուկները ծածկված են փարթամ անտառներով։ Բաբաքարի լեռնա-

շղթայի արևմտյան կողմով անցնում է (հնում՝ Զորագետ) Դեբետ գետը։

Գանձակի կամ Գանջայի լեռներ։ Այդ լեռները ձգվում են Աղստև և Թարթառ (Տրտու կամ Տրտուական) գետերի միջև։ Նա իր երեք մասերում ունի տարբեր անուններ։ Արևմտյան մասը Մրղուզ գագաթի (3010 մ) անվամբ կոչվում է Մրղուզի լեռներ, միջինը՝ Սևանի լեռներ, իսկ արևելյանը, որ սկսվում է Գինալ գագաթից և արևելյան ուղղությամբ ձգվում է մինչև Թարթառ գետի ստորին հոսանքը, կոչվում է Մռավ-դաղ լեռներ։

Ոչ մի գետ չի ճեղքում Գանձակի շղթան։ Նա հանդիսանում է ջրբաժան գիծ Կուր և Արաքս գետերի միջև։

Գանձակի լեռնաշղթայի արևմտյան մասը կազմող Մրղուզի լեռները ձգվում են իրենցից հարավ գտնվող Արեգունի լեռներին զուգահեռ և վերջիններիս հետ կազմում են Ճամբարակի հովիտը։ Մրղուզի լեռներից դեպի հարավ նայող լանջերը զառիթափ են, իսկ դեպի հյուսիս նրանք երկար տարածության վրա գրեթե պահպանում են գլխավոր շղթայի բարձրությունը և ապա, աստիճանաբար իջնելով, խառնվում են Մերձկուրյան դաշտավայրի հետ։ Շղթայի հարավային լանջերի ստորին մասերը ծածկված են անտառներով։

Գանձակի լեռների միջին մասը՝ Սևանը Մրղուզից ավելի բարձր է։ Նրա հարավային մասը, որ նայում է դեպի Սևանա (Գեղամա) լիճը, ժայռոտ է, լեռնանցքները բարձր են և ձմեռը համարյա անանցանելի։ Շղթայի այդ կողմում գտնվող մի քանի առանձնացած ձորերում պահպանվել են գիհու պուրակներ, որպես Սևանի ավազանում մի ժամանակ եղած անտառների մնացորդներ։ Սևանա լեռնաշղթայից սկիզբ են առնում և դեպի հյուսիս տարածվում մի քանի երկար լեռնաճյուղեր, որոնց միջին մասերը ծածկված են ճոխ անտառներով, իսկ դրանցից բարձր ալպյան փարթամ արոտավայրեր են։ Շղթայի այդ ճյուղերը հայտնի են հանքային հարստություններով։ Այդ ճյուղերի միջով են հոսում Զեղամ-չայ (Զակամ), Ջաղրի-չայ և Գյանջա-չայ (Գանձակ) գետերը։

Մռավ լեռներից հարավ, Թարթառ գետի ափից սկսած դեպի հարավ, ձգվում են Ղարաբաղի (Արցախի) լեռները, որոնք

ունեն հրաբխային ծագում և շրջապատի համեմատությամբ փոքր բարձրություն։

Խոնավ լեռներ (Կեչուտ)։ Հնում մի մասը կոչվում էր Մթին լեռներ։ Ունի հրաբխային ծագում։ Հարավային մասը կոչվում է Քար-խաչի և Ջաջուռի լեռներ։ Արևմտյան լանջերն ավելի զառիթափ են, քան արևելյանները։ Շղթայի վրա տարածվում են ճոխ արոտավայրեր։ Քար-խաչի լեռնաշղթան տարվա մեջ մեծ մասամբ պատած է լինում մառախուղով։ Հենց այդ պատճառով էլ նա կոչվել է նաև Մթին լեռներ։ Քար-խաչի վրա գտնվող նույնանուն լեռնանցքը հարմար է հաղորդակցության համար։ Այդ լեռնանցքով է այժմ անցնում Շիրակի դաշտավայրից դեպի Լոռի տանող խճուղին։ Քար-խաչից դեպի հարավ գտնվող Ջաջուռի լեռնանցքով խճուղին նույն Շիրակից տանում է դեպի Փամբակի ձորը, իսկ լեռնանցքի մոտ փորված թունելով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղագիծը։ Խոնավ լեռների Լեգլի գագաթից դեպի արևմուտք ձգվում է Զըլդրի լեռնաշղթան, որի վրայով այժմ անցնում է Լենինականից Ախալքալաքի տանող խճուղին։ Խոնավ լեռների հարավային մասից սկսվում և դեպի արևելք է տարածվում Բազումի լեռնաշղթան, որը հասնում է մինչև Դիլիջանի մոտերքը։

Բազումի, Մթին և Վիրահայոց (Սոմխեթի) լեռնաշղթաների միջև տարածվում է Լոռու հրաբխային բարձրավանդակը (հնում՝ Տաշրատափ)։ Լոռին ունի ծովի մակերևույթից 1450 մ բարձրություն։ Նրա արևմտյան մասը ծածկված է ճոխ արոտավայրերով, իսկ արևելյանը՝ թանձրախիտ անտառներով։

Բազումից հարավ, գրեթե նրան զուգահեռ տարածվում են Շիրակի և Փամբակի լեռնաշղթաները։ Լոռուց հարավ, Բազումի և Փամբակի լեռնաշղթաների միջև եղած իջվածքը Կիրովական քաղաքի և Ֆիոլետովոյի միջև գտնվող մի թամբոցով բաժանված է երկու մասի՝ Փամբակի հովտի և Աղստևի ձորի։ Փամբակի վրա գտնվող Փամբի լեռնանցքի և Մայմեխ գագաթի մեջտեղից սկսվում և դեպի հարավ-արևելք է տարածվում Ծաղկունյաց լեռնաշղթան, որի և Փամբակի լեռնաշղթայի արևելյան կեսի միջև տարածվում է Մարմարիկ գետի անտառապատ ավազանը։

Գեղամա հրաբխային լեռնաշղթան սկսվում է Հրազդանի (Զանգու) ակունքի մոտից և տարածվում է հարավ, մինչև Գնդա-

սար գագաթը։ Գեղամա լեռները կազմված են քսանից ավելի հրաբխային գագաթներից, որոնք իրար հետ միացած են թամբոցներով և ներկայացնում են լեռնաշղթայի տեսարան։ Նրա գլխավոր գագաթներից են Աժդահակը, Սպիտակ սարը, Գեղասարը և այլն։

Հրաբխային կոների գագաթները պարզորոշ կերպով պահպանվել են 200—600 մ տրամագիծ ունեցող խառնարանները, որոնցից մի քանիսը, լցվելով ջրով, վեր են ածվել լճակների։ Ամառվա ընթացքում դեպի Գեղմաղանի ճոխ արոտավայրերն էին գալիս ոչ միայն շրջապատի, այլև շատ հեռավոր տեղերի (անգամ Կասպից ծովի ափերից) բնակիչները իրենց անասունների հոտերով։ Նշված լճակները ժողովրդական ավանդությունը համարում է արհեստական լճակներ, որոնք, իբր թե, կառուցվել են մարդկանց կողմից, իրենց անասուններին ամառվա ընթացքում ջուր տալու համար։

Գեղմաղանի հարավային մասից հեռանում են երկու լեռնաբազուկներ, որոնցից մեկը՝ Ողջաբերդինը ձգվում է Աժդահակ գագաթից՝ Ազատ (Գառնի) գետի աջ ափով և վերջանում է Բլրաշարերով։ Սրանք գրկում են Երևանը՝ մի կողմից Կոնդի, իսկ մյուս կողմից՝ Նորքի բարձրություններով։

Գեղմաղանի երկու լանջերն էլ զուրկ են անտառներից։ Նրա վրայով այժմ անցնում է մի ճանապարհ հետևյալ ուղղությամբ՝ Արտաշատի շրջան—Վեդի գետ—Արքաշեն և Գնդասար գագաթների արանքում գտնվող մի քանի լեռնանցքներ—Արգիճի գետ և Յանբիի մոտ միանում է խճուղուն։ Այդ ճանապարհով Արգիճի գետի վերնագավառում տարածվող արոտավայրերն են բարձրանում Վեդու շրջանի սարվորները։ Հանգուցյալ պրոֆ. Ստ. Լիսիցյանը ենթադրում է, թե հնում նույն այդ ճանապարհի ուղղությամբ էր անցնում Արտաշատ—Դվին քաղաքներից դեպի Աղվանից Պարտավ մայրաքաղաքը տանող ճանապարհը[1]։

Վարդենիսի, Գեղամա, Արեգունի, Սևանի և Զանգեզուրի (Սյունյաց) լեռնաշղթաների միջև տարածվում է Սևանա (Գեղամա) լճի ավազանը, որն ունի 4760 քառ. կմ տարածություն։ Այդ

1 Տես՝ ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1940, էջ 29։

տարածության մի մասը (1416 քառ. կմ) բռնում է լճի հայելին։ Սևանա լճի ավազանն ունի եռանկյունու ձև։ Ավազանի Հարավարևելյան և հարավային մասերում տարածվում են Բասարգեչարի և Մարտունու դաշտերը։ Սևանա լճի ավազանը աղքատ է անտառներով, միայն երբեմն պատահում են կարճահասակ և նոսր պուրակներ։ Դեպի Սևանա լճի ավազանն իջնող նշված լեռնաշղթաների լանջերը ծածկված են փարթամ արոտավայրերով։

Զանգեզուրի (Սյունյաց) լեռներ։ Տեղացիները հարավային մասը անվանում են Ալաղյազ։ Սկսվում է Գինալ գագաթից և, երկու աղեղ տալով, վերջանում է Արաքսի (Երասխ) մոտ խոր կիրճով (600 մ)։ Զանգեզուրը Փոքր Կովկաս լեռնային սիստեմի մեջ ամենից բարձր լեռնաշղթան է. ունի 3700 մ-ից ավելի բարձրություն ունեցող չորս գագաթ, 3300 մ-ից ավելի վեց գագաթ և 3000 մ-ից ավելի վեց գագաթ։ Շղթայի շարունակությունը պարզ երևում է Արաքսի աջ ափին՝ Իրանի Ղարադաղում։ Զանգեզուրի հյուսիսային մասում գագաթները լայնանիստ են և լեռնանցքներն այդ բարձրության վրա աննկատելի[1]։ Լեռնաշղթայի միջին մասում եղած լեռնանցքներից նշանավոր են երկուսը. առաջին՝ Որոտանի լեռնանցքը (2344 մ), որով այժմ անցնում է Հայոց ձոր (Վայոց ձոր)—Սիսիան (Ծղուկք) խճուղին, երկրորդ՝ Սիսիանի լեռնանցքը (2348 մ), որով անցնում է այժմյան խճուղին նույն Սիսիանից դեպի Նախիջևան։

Զանգեզուրի հարավային մասը, որ սկսվում է Սարվարդ գագաթից, խիստ կերպով տարբերվում է հյուսիսայինից։ Այստեղ են գտնվում նրա ամենաբարձր գագաթները՝ Կապուտջուղ (3906 մետր), որն Արագածից հետո Հայկ. ՍՍՌ-ի ամենաբարձր գագաթն է և նրա նման ծածկված է մշտնջենական ձյունով, Սարվարդը, Երկաթասարը և ուրիշները։ Զանգեզուրի հարավային մասի լանջերը երկու կողմերից էլ ակոսված են խորխորատներով, որոնց միջով անձրևաջրերը և ձյան հալոցքից առաջացած ջրերը պոկում տանում են ժայռակտորներ, որոնք իրենց հերթին խառնվելով ցեխի հետ, առաջացնում են սելավներ։ Լեռնաշղթայի այս մասում շատ թե քիչ հարմար են երկու լեռնանցքներ,

1 Շղթան այդ շրջանում ունի չափազանց փոքր հարաբերական բարձրություն, որի պատճառով էլ հնարավոր եղավ Որոտան գետից ջրանցքով ջուր տանել շղթայի արևելյան մասից դեպի արևմտյանը։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՍՌ ԳԱ
ՍՍՌ Գր. ՊԿՄ

Նրանցից առաջինը գտնվում է Կապուտջուղ գագաթի հյուսիսային կողմում և նրա անունով էլ կոչվում է Կապուտջուղի լեռնանցք (որտեղով անցնում է Ողջի գետի հովտից Գիլան-չայ գետի հովիտը տանող ճանապարհը), իսկ երկրորդը Բուղաքարի լեռնանցքն է, որտեղից ճանապարհը տանում է Մեղրի գետի հովտից դեպի Ագուլիսի և Օրդուբադի կողմերը։

Սյունիքի կամ Զանգեզուրի լեռնաշղթան արձակում է մի քանի լեռնաբազուկներ։ Դրանցից ամենաերկարը սկսվում է Որոտանի և Սիսիանի լեռնանցքների մեջտեղից և, ձգվելով արևմուտք, հասնում է Արփա գետի հովիտը։ Այս լեռնաբազուկը կոչվում է Հայոց ձորի (հնում՝ Վայոց ձորի) շղթա, որը ծալքավոր է և եզրավորում է Հայոց ձորը (Վայոց ձոր) հարավային կողմից։ Հայոց ձորի հյուսիսային սահմանը կազմում է Վարդենիսի լեռնաշղթան, իսկ արևելյանը՝ Զանգեզուր լեռների կենտրոնական հատվածը։

Հարավում Զանգեզուրից (Սյունյաց լեռներ) բաժանվում և դեպի արևելք են տարածվում Բարգուշատի (Բարկուշատ) և Մեղրու (Արևիքի) լեռնաբազուկները։ Բարգուշատի ամենաբարձր գագաթը Արամազդն է, իսկ Մեղրունը՝ Բաղացսարը։ Մեղրու լեռնաշղթայից դեպի հյուսիս տարածվող ճյուղերից մեկի վրա է գտնվում Խուստուփ լեռն իր «Նվիրական» գագաթով։ Թե՛ Բարգուշատի և թե Մեղրու լեռնաշղթաների բարձր մասերը ծածկված են ալպյան փարթամ արոտավայրերով, իսկ ստորին մասերը ծածկված են անտառներով։

Մեղրու լեռնաշղթայի վրա գտնվող Տաշտունի լեռնանցքով ճանապարհը Մեղրի գետի հովտից անցնում է Ողջի գետի հովիտը, ապա այստեղից էլ ամենակարճ ճանապարհն անցնում է Ղափանի շրջանի Գիրաթաղ գյուղի մոտով, Բարգուշատի վրա գտնվող Արամազդ լեռնանցքով և Տաթևի տակ «Սատանի կամուրջ»-ով դեպի Գորիս և ապա, շարունակվելով Թթուջրի լեռնանցքով, հասնում է Շուշի-Եվլախ։

Բարգուշատի և Մեղրու լեռները հարուստ են գունավոր մետաղների հանքերով։

Զանգեզուր լեռնաշղթայի հյուսիսային մասը հարավային Քեթի գագաթից մինչև Գինալ գագաթը (որը գտնվում է Սևանի և Մռավ-դաղ լեռնաշղթաների սահմանագլխին) Սևանա լճի ավազանը փակում է հարավ-արևելյան մասից։ Զանգեզուր լեռնաշղթայի այս հատվածի լանջերը զառիթափ են։ Նրանից դեպի արևելք տարածվող լանջերը միանում են Թարթառ (Տրտու) գետի անտառապատ վերնագավառին, իսկ արևմուտք տարածվողները իջնում են դեպի Մասրիկի դաշտը։ Նրա վրա գտնվող Սոթիկի լեռնանցքով է անցնում Սևանա լճի ավազանից դեպի Ադրբեջանական ՍՍՌ-ի (Աղվանք) սահմանները տանող ճանապարհը։

Զանգեզուր լեռնաշղթայի Քեթի գագաթից սկսվում և դեպի արևմուտք է ձգվում Վարդենիսի (Հարավ-Սևանի) լեռնաշղթան։ Վարդենիսի լեռնաշղթան Զանգեզուրի հետ կազմում է մի անկյուն, որի մոտ գտնվում են Մեծ և Փոքր Ալա-գյոլ լճակները։ Վարդենիսի արևմտյան մասում գտնվում է Հայոց ձորի (Սուլեմա) լեռնանցքը, որով անցնում է ճանապարհը Սևանա լճի ավազանից դեպի Հայոց ձոր, իսկ այստեղից էլ Հայոց ձորի լեռնաշղթայի վրա գտնվող Մարտիրոսի լեռնանցքով՝ Նախիջևան։

Արագած և Արայի լեռ։ Ծաղկունյաց լեռներից բաժանվում են երկու լեռնաճյուղեր, որոնցից մեկը, մի աղեղ կազմելով, դիմում է դեպի արևմուտք և միանում Արայի լեռան հետ։ Արայի լեռան լանջերը խիստ քարքարոտ են և ծածկված են խղճուկ արոտավայրերով։ Արայի լեռան հարավ-արևմուտքում գտնվում է Հայկական լեռնաշխարհի երրորդ բարձր լեռը՝ Արագածը, որն իր բարձրությամբ միայն զիջում է Մեծ Մասիսին և Սիփանին։ Արագածը (ադրբեջաներեն՝ Ալազյազ) Հայկական ՍՍՌ ամենաբարձր գագաթն է (4095 մ)։

Արագածի խառնարանի շուրջը բարձրանում են չորս բուրգեր։ Խառնարանից ոչ հեռու ցրված են բազմաթիվ լճակներ, որոնցից ամենամեծը Սև լիճն է (3225 մ)։ Նրանց մի մասը ամառվա ընթացքում ցամաքում է։ Արագածի լավային հեղեղները բռնել են ընդարձակ տարածություն (8000 քառ. կմ ավելի)։ Նրա լավաները հյուսիսում հասնում են Լենինական, արևմուտքում՝ Ախուրյան, հարավում՝ Արաքս, իսկ արևելքում՝ մինչև Ծաղկունյաց շղթան. այստեղ նրա լավայի հեղեղի շնորհիվ առաջացել է Ապարանի սարահարթը՝ (հնում՝ Նիգ գավառը), 2100 մ միջին բարձրությամբ։

Սևանա լճի ավազանից հարավ-արևելք, Զանգեզուրի և Ղա-

բաբաղի լեռների միջև, տարածվում է Անդրկովկասի ամենաբարձր բնագավառը՝ Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակը։ Բարձրությունը վերին մասերում մոտ 3000 մ է և կազմվել է հրաբխային ինտենսիվ գործունեությունից։ Նրա վրա տարածվում են բազմաթիվ հրաբուխներ, որոնք դասավորված են հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ։ Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակը, իջնելով հարավ-արևելյան ուղղությամբ, առաջացնում է Տեղի և Եռաբլուր սարահարթերը, որոնք իրարից անջատված են Գորիս գետի լայն հովտով։ Բարգուշատի լեռնաշղթային հյուսիսից կպած են արևելքում՝ Գորիսը (Հարանդ կամ Զագեձոր), իսկ արևմուտքում՝ Սիսիանը՝ (Ծղուկք)։ Նույն Բարգուշատի և Մեղրի լեռնաշղթայի միջև տարածվում է այժմյան Ղափանի շրջանի (հնում՝ Զորք, Բաղք և Կովսական գավառները)։ Ավելի հարավ՝ Մեղրի լեռնաշղթայի և Արաքս գետի միջև, զետեղված է Մեղրու (Արևելք) եռանկյունու ձև ունեցող գավառը։ Դրանցից Ղափանում և մասամբ Գորիսում բավական ընդարձակ տարածություն են գրավում անտառները։

Փոքր Կովկասի սիստեմին արևմուտքից հարակցվում են մի քանի սարահարթեր։ Դրանք են՝ Ապարանի սարահարթը, Կոտայքի սարահարթը, Քասաղ և Հրազդան (Զանգու) գետերի միջև՝ Եղվարդի սարահարթը և Վարդենիս ու Հայոց ձոր լեռնաշղթաների միջև տարածվող Արփա գետի ավազանը։

Ավելի հյուսիս-արևմուտքում Փոքր Կովկասին են կպած Ամասիայի (հնում՝ Աշոցք) սարահարթը և Շիրակի դաշտը։ Վերջինս կազմում է «Անդրկովկասյան հրաբխային բարձրավանդակի» հարավ-արևելյան անկյունը։ Շիրակի դաշտն իր բերրիությունը համար հռչակված էր դեռ հնուց։ Սակայն մթնոլորտային տեղումներն այնքան շատ չեն լինում, որ առանց արհեստական ոռոգման հնարավոր լինի շոշափելի բերք ստանալ։ Այդ պատճառով էլ Սովետական իշխանության հենց առաջին տարիներում Ախուրյանից հանվեց Շիրակի առուն՝ Շիրկանալը, որը ոռոգում է Շիրակի դաշտը։

Արարատյան, կամ Մերձարաքսյան, (հնում Այրարատի) դաշտ։

Արարատյան կամ Մերձարաքսյան դաշտը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասի ամենացածրադիր շրջանն է, եթե չհաշվենք Զանգեզուրի և Մեղրու ստորին փոքրիկ հովիտները։ Նա միաժամանակ Հայկական լեռնաշխարհի ամենընդարձակ հարթությունն է։ Այս դաշտը պատմական ժամանակներում հանդիսացել է հայկական կուլտուրական կյանքի կարևոր կենտրոնը, հայ ժողովրդի գլխավոր օրրանը։

Արարատյան դաշտի միջին բարձրությունը ծ. մ. 800—825 մ է։ Տարածվում է Արաքսի երկու ափերով՝ Ախուրյանի գետախառնուրդից մինչև Մեղրու կիրճը՝ մոտ 200 կմ երկարությամբ։ Լայնությունն հյուսիս-արևմտյան մասում (Արագածի փեշերից մինչև Հայկական Պար լեռնաշղթան) հասնում է 40 կմ-ի, իսկ հարավ-արևելք գնալով նեղանում է և վերջանում Մեղրու կիրճի մոտ։ Ընդհանուր առմամբ, Արարատյան դաշտն ունի եռանկյան ձև։ Նա մի ժամանակ եղել է ծովի հատակ։ Այդ ծովն աստիճանաբար ետ քաշվելով, Արարատյան դաշտի տեղում թողել է մի խոշոր լիճ, որը հետագայում ցամաքել է։ Արարատյան դաշտը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ (Արաքսի ուղղությամբ) ցածրանում է, նա ցածրանում է նաև շրջապատի լեռնաստորոտներից դեպի Արաքսի հունը։ Կլիմայի չորության պատճառով ամբողջ հարթությունն իրենից կներկայացներ կիսանապատ, եթե Արաքսից և նրա ձախակողմյան վտակներից ոռոգման նպատակով հանած առուները չլինեին։ Այնտեղ, որտեղ հասնում է ջուրը, գյուղերը կորշում են թանկարժեք կուլտուրական բույսերի արտերի մեջ։ Անջրդի տեղերում բուսնում են միայն վտիտ մոլախոտեր և փշաբույսեր։ Դեռ ուրարտական ժամանակներից սկսած այստեղ անց են կացրել արհեստական առուներ։ Սակայն Արարատյան դաշտի իսկական և սիստեմատիկ ոռոգման աշխատանքները սկսվեցին սովետական կարգերի հաստատումից հետո (խոսքը վերաբերում է Արարատյան դաշտի այն մասերին, որոնք մտնում են Սովետական Հայաստանի և Նախիջևանի ԱՍՍՌ-ի մեջ, այսինքն՝ Արաքսի ձախ ափին)։ Սովետական իշխանության տարիներին նորոգվեցին բոլոր հին առուները, հանվեցին նորերը (Լենինի անվան, Հոկտեմբերյանի մեծ, Ստալինի անվան, Այղր լճի և այլն), չորացվեցին գետերի (Հրազդան, Սև ջուր) ստորին մասերում տարածված ճահիճների մեծագույն մասը, տնկվեցին արհեստական անտառներ։ Ավելի մեծագույն մասը, տնկվեցին արհեստական անտառներ։ Ավելի լայն մասշտաբի ոռոգչական պլաններ են կապված Սևանի պրոբլեմի հետ, որը հաջողությամբ իրականանում է։ Սևանա լճի ջրերով հարստացած Հրազդանը (Զանգու) ոռոգելու է տասնյակ հազարավոր հեկտար տարածություն։

Արարատյան դաշտը բլրաշարքերով մասնատված է մի շարք մասերի, որոնք իրենց բնական պայմաններով իրարից զգալի չափով չեն տարբերվում։ Արաքսի ձախ կողմում նրա մասերն են կազմում.

ա) Հոկտեմբերյանի տափաստանը (հնում՝ Արագածոտն), որը ոռոգվում է Մաստարա, Քասաղ և Սև ջուր (Մեծամոր) գետերով.

բ) Զանգիբասար (Հրազդանի հովիտ), որը տարածվում է Հրազդան (Զանգու) գետի ստորին հոսանքի շրջանում.

գ) Ազատ գետի հովիտը հնում հայտնի էր Ոստան (դավառ) անունով։ Ազատ գետի խառնարանում գտնվում էր Արտաշատ մայրաքաղաքը, իսկ նրանից ոչ հեռու՝ Դվինը.

դ) Նարուրի դաշտ, որը հիմնականում տարածվում է Երփա գետի ստորին հոսանքի ավազանում.

ե) Բեյուկ-դուզ կամ Նախիջևանի դաշտ, որը տարածվում է Նախիջևան գետի հովտում.

զ) Նախիջևանի դաշտից հետո, դեպի արևելք, Արաքսի ձախ ափին տարածված են մի շարք փոքրիկ գետահովիտներ (Ալինջայի, հնում՝ Երնջակ, Ագուլիս-Օրդուբադի, Մեղրու և այլն), որոնք համարվում են Արարատյան դաշտի մասերը։

Արարատյան դաշտն ավելի նեղ շերտով է ձգվում Արաքսի աջ կողմում։ Այստեղ նրա մասերն են կազմում Սուրմալուի և Մակուի դաշտերը, ինչպես և Աղ-չայ (Սպիտակ գետ) և Կարմիր գետերի ստորին հոսանքում ընկած դաշտը։ Կաղզվանի (հնում՝ հայտնի էր Երասխաձոր անունով) հովտից արևելք բարձրանում է Կարակալա ժայռը՝ նույնանուն կիրճով։ Այդ կիրճից սկսած դեպի արևելք տարածվում է Սուրմալուի (այժմյան Իգդիրի շրջանը) կամ Կարակալայի դաշտը, որի սահմանները կազմում են հյուսիսից՝ Արաքս գետը, հարավից՝ Հայկական Պար լեռնաշղթայի դեպի հյուսիս իջնող լեռնալանջերը, իսկ արևելքից՝ Մեծ և Փոքր Մասիսների հյուսիսային տեռասները։ Ոռոգման տեսակետից այդ դաշտի վիճակն այժմ աննախանձելի է, այնտեղ Արաքսից հանված են մի քանի նվազ առուներ, որոնք ի վիճակի չեն գոնե մինիմալ չափով հագեցնելու ծարավ դաշտերը։ Հայկական Պարից հարավ՝ Սարը-սու գետի ավազանում տարածված է Բայազետի շրջանը (Կոգովիտ)։ Բայազետի միջով հոսում է մի

գետ, որն իր վերին հոսանքի շրջանում կրում է Բալըղ-չայ անունը, իսկ Մ. և Փ. Մասիսների հարավային լանջերից բխող աղբյուրներով հորդանալուց հետո՝ կոչվում է Սարը-սու։ Բայազետի շրջանը ոռոգվում է այդ գետով։ Բայազետից հարավ-արևելք Մակուի շրջանն է (հնում՝ Արտազ գավառը)։ Բայազետով հոսող գետը՝ Սարը-սուն անցնում է նաև Մակուի շրջանով. նա իր ստորին հոսանքի շրջանում կոչվում է Զանգիմար։ Մակուի հիշված գետին շփվող շրջաններն ունեն դաշտավայրային բնույթ, և կարող ենք հաշվել Արարատյան դաշտի մասերը, իսկ նրա մյուս մասը լեռնային է։ Զանգիմարը աջ կողմից իր մեջ է ընդունում Մակուի գետը, որի վտակներից մեկի ավազանում (այդ վտակը հնում կոչվում էր Տզմուտ) տարածվում էր մի դաշտ, որը հնում հայտնի էր Ավարայր անունով։

Մակուից հարավ-արևելք տարածվում է Արարատյան դաշտի մասը կազմող Սպիտակ (Աղ-չայ) և Կարմիր գետերի ստորին հոսանքում փռվող դաշտը՝ Նախիջևան և Ալընջաչայ (Երնջակի գետ) գետերի դիմաց։

Անդրկովկասի հրաբխային բարձրավանդակ։ Անդրկովկասի հրաբխային բարձրավանդակը պարփակված է արևմուտքից Արսիան—Սողանլուղ, արևելքից՝ Խոնավ—Արագած, հյուսիսից՝ Աճարայի շղթաների և հարավից՝ Արաքս—Կաղզվանյան ձորի միջև։ Բարձրավանդակը կիսված է երկու մասի՝ հյուսիսային և հարավային, որոնց սահմանն սկսվում է Խոնավ կամ Մթին լեռների Լեյլիի կամ Լեզլի գագաթից և բլրաշարերով ձգվում է մինչև Զըլդրի լեռները, ապա հասնում Արսիան—Սողանլուղ լեռնաշղթաների սահմանը կազմող Ալահ-Ագբար (հնում՝ Կարմիր փորակ) գագաթը։ Նրա հյուսիսային մասը բաղկացած է մի քանի բնագավառներից.

ա) Գյոյչ, որը տարածվում է Քուռ գետի ակունքների շրջանում, մեծ մասամբ պատած է ճահիճներով, տերիտորիալ տեսակետից համընկնում է Տայոց աշխարհի կազմի մեջ հիշատակվող Կող գավառի հետ.

բ) Աղդաման (հնում՝ Արտահան)—Գյոյչի հյուսիսային հարևանն է, տարածվելով նրա և Ախալցիխեի միջև.

գ) Ախալցիխե (հայ. Ախլցխա)—տարածվում է Քուռ գետի ձախակողմյան վտակ Փոցխովի ավազանում։

Նշված երեք բնագավառներն էլ հարուստ են անտառներով, նրանցից առաջին երկուսն այժմ մտնում են Թյուրքիայի մեջ, իսկ երրորդը՝ Ախալցխեն կազմում է Սովետական Վրաստանի մասը։

դ) Ախալքալաքի դիրքը բավականին բարձր է։ Նա հայտնի է իր փարթամ արոտավայրերով ու սառնորակ աղբյուրներով։ Այստեղ ցրված են բազմաթիվ լճակներ՝ Փարվանա, Դուման, Խանչալի կամ Խանջալի և ուրիշները, որոնք բոլորն էլ ունեն անուշահամ ջրեր և սնունդ են տալիս Ախալքալաքի գետին։ Ախալքալաքի սարահարթը հնում կոչվում էր Ջավախք գավառը (վրաց. Ջավախեթի)։ Նրա արևելյան մասում գտնվող Փարվանա լճից է սկիզբ առնում գավառի միջով անցնող Ախալքալաքի գետը, (հնում՝ Ջավախեթիս—Մտկվարի), որն իր վերջին հոսանքում կոչվում է Փարվանա գետ։ Ախալքալաքի գետը Խերթվիս բերդի տակ թափվում է Քուռի մեջ, գետաձաղուրդից քիչ վերև, Քուռի բարձրադիր ձախ ափին, գտնվում են Թմկաբերդի (վրաց. Թմոգվի) ավերակները։

Անդրկովկասի հրաբխային բարձրավանդակի հարավային մասը համընկնում է Կարս (Վանանդ) և Ախուրյան գետերի ավազանների հետ։ Այդ ամբողջ շրջանը բաժանվում է ֆիզիկո-աշխարհագրական մի քանի գավառների՝ Կարսա դաշտի (հնում՝ Վանանդ), Շիրակի դաշտի և Տեկորի սարահարթի։ Կարսա դաշտը, որն ավելի ճիշտ կլիներ կոչել սարահարթ, առանձնապես աչքի է ընկնում իր բնական խոտհարքներով և ջինջ օդով, իսկ նրա հարավ-արևմտյան մասում ընկած Սարիղամիշի շրջանը (հնում՝ Աբեղյան գավառ) խեժատու ծառատեսակներով, որոնք կազմում են համատարած անտառներ։ Կարսա դաշտից հարավ-արևելք Առճռ-Առիճ (այժմ՝ Ալաջա) լեռների և Ախուրյան ու Արաքս գետերի միջև պարփակված եռանկյունաձև բարձրավանդակը կոչվում է Տեկորի սարահարթ, որը հնում հայտնի էր Արշարունիք անունով։ Արշարունիքն Այրարատյան աշխարհի մեջ մտնող նշանավոր գավառների թվին էր պատկանում։ Այնտեղ էին գտնվում մի քանի նշանավոր պատմական վայրեր՝ Երվանդաշատ, Երվանդակերտ, Բագարան և այլն, որոնց մասին խոսք կլինի իր տեղում։

Հրաբխային բարձրավանդակի հարավային կեսի մեջ մտնող

Շիրակի դաշտի մասին մենք ասացինք Փոքր Կովկաս լեռնային սիստեմի մասին խոսելիս. այժմ մի քանի խոսք նրա հարևան Ամասիայի սարահարթի մասին։

Ամասիայի սարահարթը (հնում՝ Աշոցք) սահմանագծվում է Զըլդրի, Մթին լեռների հարավային հատվածի և Շիրակի լեռներով։ Սարահարթը դեպի հարավ ունի թեքություն։ Նշված լեռնաշղթաներից իջնող ճյուղերի արանքներում առաջացել են մանր հովիտներ, որոնց մեջ երբեմն հանդիպում ենք առանձին փոքրիկ անտառների։ Նրա հյուսիս-արևմտյան ծայրին բարձրանում են Ղուկասյան Մեծ և Եռակատար գագաթները։ Սարահարթն ընդհանուր առմամբ հարուստ է ջրերով, վերնագավառում որոշ տարածում ունեն ճահիճները։ Հյուսիսային մասում գտնվող Արփի լճից սկիզբ է առնում Ախուրյան գետը, որը հոսում է դեպի հարավ գրեթե միջօրեական ուղղությամբ։ Բարձրադիր մասերում տարածվում են լեռնային մարգագետիններ։ Ամասիան մտնում է Սովետական Հայաստանի մեջ և սահմանակից է Թյուրքիայի կողմից բռնազրավված Արևմտյան Հայաստանին։

Հայկական պար։ Հայկական Պար լեռնաշղթան (այժմ Թյուրքերը կոչում են Ազրի-դաղ) հնում հայտնի էր իր երեք գագաթների՝ Բարդղի, Սուկավետի և Այծպտկունքի անուններով։ Նա սկսվում է Արևելքում Փոքր և Մեծ Մասիսներով և, զուգահեռական ուղղությամբ ձգվելով դեպի արևմուտք, վերջանում է Արևմտյան Եփրատի մոտ Մարիամ-դաղ գագաթով։

Հայկական Պարը մի մեծ պատնեշ է, որը բարձրանում է Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնում, վերջինս բաժանելով երկու մասի՝ հյուսիսային և հարավային։ Մեծ մասամբ ունի հրաբխային ծագում։ Փոքր և Մեծ Մասիսներից սկսած մինչև Բալըխ-գյոլ (հն. Գայլատու) լճի արևմտյան մասում գտնվող Սինակ գագաթ լեռնաշղթան ձգվում է լայնական ուղղությամբ։ Սինակից արևմուտք կազմվում է մի մեծ աղեղ, որի արևելյան ծայրը հանդում է Սինակի գագաթին։ Արևմուտքում՝ Թուրքմենկալա գագաթից լեռնաշղթան ընդունում է լայնական ուղղություն և այդ ուղղությունը գրեթե չի խախտվում մինչև նրա արևմտյան ծայրը՝ Մարիամ-դաղ գագաթը։ Լեռնաշղթայի ամենաբարձր գագաթներն են Մեծ Մասիսը, որը հնում կոչվել է նաև «Ազատ Մասիս» (5156 մ) և Փոքր Մասիսը (3925 մ)։ Երկու Մասիսների

(կամ Արարատ) միջև առաջացել է մի թամբոց, որտեղ ձյան հալոցքի ջրերը կեսօրից հետո դուրս են գալիս որպես աղբյուրներ։ Այդ թամբոցը կրում է Սարդար-բուլաղ անունը։ Երկու Մասիսներն էլ ունեն հրաբխային ծագում։ Մեծ Մասիսի դեպի հյուսիս և հարավ նայող կողմերում առաջացել են խոր ձորեր, որոնցից հյուսիսայինը, որը սկսվում է մշտենջենական ձյան տակից և իրենից ներկայացնում է մի հսկա պատռվածք, կոչվում է Սուրբ Հակոբի ձոր («Վիհք Մասեաց»)՝ համանուն վանքով։ Մեծ Մասիսի վրա մշտենջենական ձյան գիծն սկսվում է մոտ 4000 մ բարձրությունից։ Նրա Գագաթին, ինչպես հաղորդում են ուսումնասիրողները, լինում են ուժեղ քամիներ։ Մասիսներն անհամեմատ ավելի սակավաջուր են, քան Արագածը։ Նրանց լեռնատեսակները փխրուն են, այդ պատճառով էլ ձյան հալոցքի ջրերը ներծծվում են դեպի խորքերը, առանց սկիզբ տալու աղբյուրների։

Մասիսներից արևմուտք՝ մինչև Բալըղ-գյոլ (Գայլատու) լճի արևմտյան ափի մոտ բարձրացող Սինակ գագաթը, լեռնաշղթայի կատարները իջնում են՝ հասնելով 1700 մ։ Լեռնաշղթայի այս հատվածում առաջացել են մի քանի հարմար լեռնանցքներ, որոնցից են՝ ա) Մեծ Մասիսից անմիջապես արևմուտք գտնվող Խարաբա-բաղարի լեռնանցքը, որով այժմ անցնում է Բայազետից (հնում՝ Դարոյնք) Իգդիր տանող ճանապարհը. բ) Խարաբաբաղարից մոտ 15—20 կմ արևմուտք գտնվող Մեծ և Փոքր Չինդլիները։ Մեծ Չինդլին կոչվում է նաև Օրկովի հովիտ կամ կիրճ, որով այժմ անցնում է Բայազետ—Իգդիր երկրորդ ճանապարհը։ Այդ լեռնանցքով են անցել արաբական զորքերը Կոդովիտից (Բայազետի շրջան) դեպի Այրարատյան աշխարհը կատարած իրենց առաջին արշավանքի ժամանակ (մ. թ. 640 թ.). գ) Կուջաղի կամ Կարվանսարայի լեռնանցքը՝ Բալըխ-գյոլ լճից մոտ 25 կմ արևելք։ Դիադին—Իգդիր ճանապարհն անցնում է այդ լեռնանցքով։

Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով դեպի Այրարատյան աշխարհ և Արտաշատ մայրաքաղաք արշավելիս Կուջաղով անցան հռոմեական զորավարներ Պոմպեոսի (մ. թ. ա. 65 թ.) և Կորբուլոնի (մ. թ. 59 թ.) լեգեոնները։

Բացի նշվածներից, լեռնաշղթայի Մեծ Մասիս—Սինակ հատվածում կան և այլ լեռնանցքներ (Զորի, Ասլանի), որոնք ևս

հաղորդակցության համար դյուրին են։ Այդ է պատճառը, որ օտար նվաճողները Արածանիի հովտից դեպի Արաքսի ավազանը գրեթե միշտ անցել են Հայկական Պարի Սինակ—Մեծ Մասիս հատվածով։

Սինակից դեպի արևմուտք լեռնաշղթան շարունակ բարձրանում է և մինչև Քյոսա-դաղ (Սուկավետ) գագաթը այլևս հարմար լեռնանցքներ չունի։ Լեռնաշղթան իր այս հատվածի հյուսիսային կողմում արձակում է մի քանի ճյուղեր, որոնցից մեկը, որն սկսվում է Սինակից հյուսիս-արևմուտք և ունի հյուսիս-արևելյան ուղղություն, վերջանում է Կողբի հայտնի աղահանքերի մոտ և կոչվում է Բարդող (այժմ Թաքալթու)։

Հայկական Պարի հարավային լանջը, Մասիսներից մինչև Քյոսա-դաղ, ավելի զառիթափ է, քան հյուսիսայինը։ Լեռնաշղթայի այդ հատվածում հյուսիսային լանջն ունի մեղմ թեքություն և բաղկացած է երկու տեռասից։ Քյոսա-դաղից (հնում հայտնի էր Սուկավետ, Սուկավ և Ջրաբաշխ անուններով) մինչև Արաքսի ձեղքից մոտ 40 կմ արևմուտք գտնվող Փալանթյոքան (Այծպըտկունք) գագաթը լեռնաշղթայի հարաբերական բարձրությունը, հարևան հյուսիսային և հարավային բարձրադիր սարահարթների առկայության պատճառով, փոքր է։ Լեռնաշղթան իր այդ հատվածի (Քյոսա-դաղ—Փալանթյոքան) տարբեր մասերում կրում է տարբեր անուններ։ Նրանցից ամենաարևելյանը, որն սկսվում է Քյոսա-դաղից, կոչվում է Դրամի լեռներ։ Դրամի լեռների վրա գտնվում է Դալի-բաբա հայտնի լեռնանցքը. այժմ այդտեղով է անցնում Ալաշկերտ (Բագրևանդ)—Էրզրում (Կարին, Թեոդոսուպոլիս) ճանապարհը, որի ուղղությունը հիմնականում համընկնում է միջին դարերում գործող Թավրիզ—Տրապիզոն նշանավոր տարանցիկ ճանապարհի ուղղության հետ։ Դրամ լեռներին դեպի արևմուտք հաջորդում է Խալիաս-դաղ լեռները, որը վերջանում է Թուրքմեն-կալա գագաթով։ Թուրքմեն-կալա գագաթի արևմտյան կողմում գտնվում է Տաշլի-գյադուկ լեռնանցքը, որով կապ է պահպանվում Բասենի և Կարայազի (հնում՝ Տուարածատափ) միջև։

Փալանթյոքան (Այծպտկունք) գագաթի շրջանում Հայկական Պարը ճյուղավորվում է։ Այդ ճյուղերից մեկը ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք՝ իրարից բաժանելով Էրզրումի (Կարնո) և

Աշկալայի դաշտերը, երկրորդը դիմում է գրեթե ուղիղ արևմուտք՝ պատնեշելով Տուզլու գետն իր աջակողմյան Կոմսոր վտակի ավազանից։ Երրորդ լեռնաճյուղը տարածվում է դեպի հարավ-արևմուտք և միանում Բինգյոլի (Բյուրակն) լեռներին, իսկ չորրորդն ունի հյուսիս-արևելյան ուղղություն։ Վերջինս ձգվում է Փալանթյոքանից մինչև Անտիպոնտական լեռները՝ Երզրումի բարձրավանդակը բաժանելով Վերին Բասենի դաշտից։ Նրա հարավային մասը կոչվում է Դեվերոյնի լեռներ, իսկ հյուսիսայինը Կարգաբազար։ Դեվերոյնի և Կարգաբազար լեռնաշղթաները հանդիսանում են ջրբաժան շղթաներ Կասպից (հնում կոչվում էր նաև Վրկանաց) ծովի և Հնդկական օվկիանոսի միջև։

Դեվերոյնի լեռնաշղթայից արևելք մինչև Բաշքեյ սարահարթը, որն ընկած է Սողանլուղ (հնում՝ Մեծրաց) լեռնաշղթայի հարավային վերջավորության և Հայկական Պարի միջև, տարածվում են Վերին, կամ Անփայտ, և Ստորին Բասենի դաշտերը։ Վերին Բասենի դաշտը կազմում է Հասանկալա (հնում՝ Մուրց) գետի հովիտը, իսկ Ստորին Բասենի դաշտը տարածվում է Հասանկալա գետի գետախառնուրդից մինչև Բաշքեյ սարահարթը։ Հասանկալայի գետախառնուրդի մոտ, Արաքս գետի վրա, գտնվում է Զորան քյոփրի («Հովվի կամուրջ») կամ Քյոփրի-քեյ հայտնի կամուրջը։ Այդ կամուրջն ունի յոթ կամար, կառուցվել է հավանաբար 7-րդ դարում, մինչև հիմա էլ կանգուն է և բանուկ։ Բասենում որոշ տարածում ունեն ճահիճները, հատկապես Ստորին Բասենում։ Հողը բերրի է։

Շարիան-ալա-դաղի (Ծաղկաց) լեռներ։ Այս լեռներն ընդհանուր անուն չունեն։ Նրա արևմտյան մասը՝ Հայկական Պարի վրա գտնվող Թյուրքմեն-կալա գագաթից մինչև Արևելյան Եփրատի հունը, իր տարբեր մասերում կրում է տարբեր անուններ։ Դրանցից արևմտյանը, որն անմիջապես սկսվում է Թուրքմեն-կալայից՝ կոչվում է Շարիան լեռներ, իսկ Եփրատից արևելք մինչև Թոնդուրեկ գագաթը ձգվում են բուն Ալա-դաղ (Ծաղկանց) լեռները։ Այնպես որ Շարիան-Ալա-դաղի լեռներ ասելով՝ մենք նկատի ունենք այն ամբողջ լեռնային սիստեմը, որն սկսվում է Թուրքմեն-կալա գագաթից և ձգվում է հարավ-արևելք՝ մինչև Թոնդուրեկ։ Շարիան-Ալա-դաղն իր ծագման և բնույթի տեսակետից լիովին համապատասխանում է Հայկական Պարին։

Արդեն նշեցինք, որ լեռնաշղթան Թուրքմեն-կալա գագաթից մինչև Արևելյան Եփրատի հունն իր տարբեր մասերում ունի տարբեր անուններ։ Արևմուտքից-արևելք ուղղությամբ նրանք ունեն հետևյալ հաջորդականությունը՝ Շարիան, Մերգեմեր, Խալիաս և Խլիճ։ Խլիճի («Սուր») վրա գտնվում է նույնանուն լեռնանցքը, որով անցնում է Դութաղից Ալաշկերտ տանող ճանապարհներից մեկը։

Խլիճի լեռների դիմաց, նրանից հարավ-արևելք, Արևելյան Եփրատի ձախ կողմին բարձրանում է Ալա-դաղի (Ծաղկանց) լեռները։ Ալա-դաղն ունի 3512 մ բարձրություն։ Նրա լավաներն ընդարձակ տարածությամբ փռված են չորս ուղղությամբ՝ հյուսիսային, արևմտյան, արևելյան և հարավ-արևմտյան։

Դեպի հյուսիս փռված լավային բարձրավանդակը Եփրատի ձախակողմյան վտակների շնորհիվ վեր է ածվել վեցից ավելի լեռնաբազուկների, որոնք ունեն հովհարաձև դասավորություն։ Գրեթե կենտրոնով տարածվող լեռնաբազուկը վերջանում է մի ոչ այնքան բարձր գագաթով, որը հնում հայտնի էր Նպատ անվամբ։ Նպատի հյուսիսային ստորոտներին տարածվող դաշտը, որը կազմում է Ալաշկերտի դաշտի մի փոքրիկ մասը (և փռված է Եփրատ գետի հովտում), հնում հայտնի էր Զիրավ անվամբ։

Ալա-դաղի արևմտյան ճյուղը հասնում է Մանազկերտ քաղաքի մոտերքը և այստեղ վերջանում է Կարտևան կամ Կոտևան գագաթով, իսկ արևելյանը հասնում է Թոնդուրեկին։ Թոնդուրեկը, որ գործող հրաբուխ է և կազմված է երկու գագաթներից, գտնվում է չորս լեռնաշղթաների հատման կետում։ Նրանից սկսած դեպի արևմուտք տարածվում են Ալա-դաղը (Ծաղկանց լեռներ), դեպի հարավ՝ Կոտուրի (Կոտորի) լեռնաշղթան, դեպի հյուսիս-արևմուտք՝ Դիադինի լեռները, որը հասնում է Հայկական Պարի Սինակ գագաթին, իսկ դեպի հյուսիս-արևելք ձգվողը իրենից ներկայացնում է բլրաշարք։ Վերջինը կազմում է Բայազետի (Կոգովիտ) և Մակուի (Արտազ) բնական սահմանը։ Հյուսիս-արևելքում նա հասնում է Մասիսներին՝ հանդիսանալով ջրբաժան շղթա՝ Արաքսի և Եփրատի միջև։

Շարիան-Ալա-դաղի, Հայկական Պարի և Դիադինի լեռնաշղթաների միջև պարփակված է Ալաշկերտի դաշտը, որը բաժանվում է երկու մասի՝ բուն Ալաշկերտի և Դիադինի շրջանի։

Ալաշկերտի դաշտը չնայած ունի բերրի հող և ոռոգման համար լայն հեռանկարներ, այնուամենայնիվ այժմ գտնվում է կիսամշակ դրության մեջ։

Ալա-դաղից դեպի հարավ-արևմուտք ձգվող լեռնաշարքը, գրեթե առանց ընդհատվելու, հասնում է Նեմրութ գագաթին, որը գտնվում է Վանա լճի (Տոսպա լիճ, Բզնունյաց ծով և այլն) արևմտյան ափին։ Այս լեռնաշղթան ընդհանուր անուն չունի։ Նրա գագաթներից նշանավոր են երկուսը՝ Սիփանը (4434 մ, Ծիպան, Նեխ-Մասիք)՝ Վանա լճի արևմտյան ափի մոտ և Նեմրութը (3050 մ)։ Երկուսն էլ ունեն հրաբխային ծագում և իրենց շրջապատի նկատմամբ ներկայացնում են գեղեցիկ տեսարան։ Նեմրութի գլխավոր գագաթին հարավից կպած է մի երկրորդական գագաթ, որը, քայքայման ենթարկվելով, վեր է ածվել մի շարք ցցվածքների։ Ցցվածքները դասավորված են հաջորդական կարգով իրար կողք-կողքի[1]։ Նեմրութը Հայկական Տավրոսին հարավում միանում է Ռահ-օվա սարահարթով, որն անջատում է Վանա լճի ավազանը Մուշի դաշտից։

Բյուրակն (Բինգյոլ)-Մունձուրյան լեռներ։ Բինգյոլ-Մունձուրյան լեռնաշղթան ևս Շարիան-Ալա-դաղի պես ընդհանուր անուն չունի։ Նա սկսվում է Բինգյոլից (Բյուրակն) և վերջանում է արևմուտքում Մունձուր լեռներով։ Ուստի և հարմար է անվանել Բինգյոլ-Մունձուրյան լեռներ։ Տարածվում է զուգահեռական ուղղությամբ։ Լեռնաշղթան, Հայկական Պարի նման, սկսվում է հրաբխային սարով՝ Բինգյոլով։

Բյուրակնը, կամ Բինգյոլը հրաբխային ծագում ունի, նման է Արագածին։ Նրա պսակից մնացել են երեք ցցեր (Արագածինը՝ չորսն է) և ունի մերձգագաթային հրապարակներ, ինչպիսիք ունի և Արագածը։ Սակայն նա որոշ չափով Արագածից տարբերվում է։ Բինգյոլն ընդհանրապես ունի լանջի հյուսիսային թեքում, նրա լավաներն ընդարձակ տարածություն են բռնում միայն հյուսիսային ուղղությամբ, մինչդեռ Արագածի լավաները գրեթե հավասարապես փռվել են բոլոր կողմերում, այդ պատճառով էլ

[1] Մուշի կողմի ժողովուրդը այդ բնական լեռնաշարքի հետ կապում է մի ավանդություն, ըստ որի, իբր Բելն է այստեղ իր ուղտերի քարավանով քարացել։

վերջինիս լանջերը տեռասներով իջնում են ամեն ուղղությամբ։ Հրաբխային այդ բարձրավանդակը հայերը Բյուրակն[1] են կոչել այն պատճառով, որ ձյան հալոցքից առաջացած ջրերը այդտեղ սկիզբ են տալիս բազմաթիվ (կարելի է առանց չափազանցության ասել հազարավոր) աղբյուրների, իսկ թյուրքերը թարգմանաբար կոչել են Բինգյոլ։ Այդ բազմաթիվ աղբյուրները իրենց բխման կետերում, համարյա առանց բացառության, իրենցից ներկայացնում են մանր լճակներ։ Բինգյոլն իր փռվածության շնորհիվ բարձրավանդակի տեսք ունի։ Այստեղ ամռանը աճում են բարձր խոտաբույսեր։

Նրա երեք գագաթները դասավորված են աղեղի նման, որի ծայրերն ուղղված են դեպի հյուսիս։ Գագաթներից արևմտյանը կոչվում է Բինգյոլ-դաղ (հնում հայանի էր Սրմանց կամ Սերմանց անունով), որի հյուսիս-արևմտյան փեշերից սկիզբ է առնում Արաքս գետը։ Արաքսն սկզբում դիմում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա թեքվելով հյուսիս-արևելք, հասնում է Կարայազի (Տուարածատափի) դաշտը։ Կարայազի դաշտում նա ընդունում է հյուսիսային ուղղություն և, Թուրքմեն-կալա գագաթից արևմուտք ճեղքելով Հայկական Պար լեռնաշղթան, դուրս է գալիս Բասենի դաշտը։ Կարայազի դաշտում՝ աջ կողմից Արաքսն իր մեջ ընդունում է Կարա-սու («Սև ջուր») վտակը։ Վերջինիս գետախառնուրդի մոտ գտնվում է Կյոլի կամ Կուլի գյուղը, որը գլխավոր հանգույց է համարվում այն ճանապարհների, որոնք Խնուսի դաշտից (Վարաժնունիքից) դուրս գալով, անցնում են դեպի Բասեն և Էրզրում։

Բինգյոլի բարձրավանդակը հանդիսանում է ջրբաժան Կասպից ծովի և Հնդկական օվկիանոսի միջև։ Բարձրավանդակն ունի որոշակի սահման. հյուսիսային կողմում նրա սահմանը կազմում է Հայկական Պարը, հարավային կողմում Բինգյոլ գետը, որն իր վերին հոսանքում կոչվում է Գյում-Գյում, իսկ ստորին հոսանքում՝ Չհարբոհար (այսինքն չորս տեղից անցնելի գետ. աջ կողմից թափվում է Արևելյան Եփրատի մեջ)։ Բինգյոլի արևելյան

[1] «Բիւր»-ը նեղ իմաստով նշանակում է 10 000, իսկ լայն իմաստով՝ շատ, խիստ շատ։ (Տես՝ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1927 թ.)։

կողմից ձգվում են երկու աղեղաձև լեռնաճյուղեր, որոնք, ծայրերով գրեթե միանալով իրար հետ, գրկում են Խնուսի դաշտը։ Այդ լեռնաճյուղերից հյուսիսայինը սկզբում ձգվում է մի գծով և իր այդ մասում կոչվում է Խնուսի լեռներ, ապա բաժանվում է երկու մասի՝ հյուսիսային և հարավային, որոնցից առաջինը կոչվում է Կազբել, իսկ երկրորդն՝ Աղ-դաղ, որի ստորոտներին կան աղահանքեր։ Կազբելի հյուսիսային ծայրից մի ուրիշ լեռնաճյուղ սկսվելով տարածվում է մինչև Թուրքմեն-կալա գագաթը։ Այդ լեռնաճյուղը Թուրքմենկալա գագաթի անվամբ կոչվում է Թուրքմենկալայի լեռներ։ Կազբել ու Թուրքմենկալայի լեռները իրար հետ միասին կազմում են Բինգյոլի բարձրավանդակի արևելյան սահմանը։ Խնուսի դաշտի հարավային սահմանով անցնող լեռնաշղթան, որն ինչպես արդեն ասացինք, սկսվում է Բինգյոլից, սկզբում կոչվում է Խամուրի լեռներ, իսկ արևելյան մասում՝ Ջերնակ։ Երկուսը միասին կազմում են ջրբաժան գիծ Արածանիի (Արևելյան Եփրատի) և նրա աջակողմյան վտակ Խնուս գետի միջև։

Բինգյոլ բարձրավանդակի արևմտյան սահմանը կազմում են Տեկմանի սարերը և դեպի հարավ նրանց շարունակությունը կազմող Կարագյոլի լեռները։ Տեկմանի սարերը սկսվում են Հայկական Պարի Փալանթյոքան (Այծպտկունք) գագաթից և ձգվում են դեպի հարավ-արևմուտք մինչև մոտավորապես Տուզլու գետի ակունքի շրջանը, որից հետո Կարագյոլի լեռներն են՝ մինչև Բինգյոլ-դաղի հետ միանալը։ Կարագյոլ—Տեկմանի լեռները ջրբաժան են Կասպից ծովի և Հնդկական օվկիանոսի միջև։ Կարագյոլն ու Տեկմանն իրար հետ կազմում են մի թամբոց, որով այժմ անցնում է Բինգյոլի շրջանից դեպի Տուզլու գետի հովիտը (Դերջանի դաշտը) տանող ճանապարհը։

Բինգյոլ բարձրավանդակի վրա այժմ գտնվում են հետևյալ գավառները.

ա) Շուշարա (հնում՝ Մարդաղի գավառ), տարածվում է Կարագյոլի լեռների արևելյան կողմում.

բ) Տեկման (հնում՝ Դասնավորք գավ.) գտնվում է Տեկմանի սարերի շրջանում.

գ) Կարայազ (հնում՝ Տուարածատափ), տարածվում է Կարասու գետի հովտում։

Բինգյոլ-Մունձուրյան գլխավոր շղթան, ինչպես ասացինք, սկսվում է Բինգյոլից և ձգվում է դեպի արևմուտք մինչև Մունձուրի շղթան։ Լեռնաշղթան բեկորային է, նա հանդիսանում է այն բեկորի հյուսիսային թևը, որը բարձրացել է երրորդական շրջանում։ Հյուսիսային լանջը զառիթափ է, իսկ դեպի հարավ նայող լանջն ունի մեղմ թեքություն և տալիս է դեպի հարավ տարածվող ճյուղավորություններ, որոնք մեծ մասամբ իրենց ծայրերով հասնում են Արևելյան Եփրատ։ Շղթան իր տարբեր մասերում կրում է տարբեր անուններ. սկսած Բինգյոլից նրանք ունեն հետևյալ հաջորդականությունը.

ա) Ջավրոշ, որը տարածվում է մինչև Խարդալիխ գագաթը։

բ) Շեյքանի («Սատանայի») լեռներ. տարածվում է Խարդալիխ գագաթից մինչև Լեչեգ գետի հոսանքը.

գ) Բազուտ, Բագիր կամ Խուզիչանի լեռներ—տարածվում է Լեչեգ գետից մինչև Մերջան գագաթը, որի մոտերքում ընկած լեռները կոչվում են Մերջանի լեռներ.

դ) Մունձուրի լեռներ—տարածվում է Մերջան գագաթից մինչև Արևմտյան Եփրատի հոսանքը։ Մունձուրի շարունակության վրա գտնվում են Խավաջուր և Հոշտե-Բելի կամ Հոսչեթ գագաթները։

Բազուտ գագաթի մոտից սկսած Արևմտյան Եփրատը հոսում է լեռնաշղթայի հյուսիսային ստորոտով, իսկ արևմուտքում՝ Հոսչեթ գագաթի արևմտյան կողմում, թեքվում է նախ դեպի հարավ-արևմուտք, ապա, օղակ տալով Ակն քաղաքի մոտ, ընդունում է հարավ-արևելյան ուղղություն։ Մերջան գագաթից մինչև Մունձուր լեռնաշղթայի հյուսիսային լանջն իջնում է տեռասներով, հյուսիսային կողմից այդ լանջի դիմաց են գալիս Անտիպոնտական լեռնաշղթայից տարածվող նույնպես լայն և բարձրադիր տեռասները, որոնք ճեղքվում են Արևմտյան Եփրատի հոսանքով։

Նշված երկու լեռնասիստեմներից իջնող տեռասները ստեղծում են մի բավականին ընդարձակ սարահարթ, որը հայտնի է Կամախ անունով (հնում Դարանաղի գավառ)։ Սարահարթի գրեթե կենտրոնում, Արևմտյան Եփրատ գետի ձախ ափին գտնվում է Կամախ քաղաքը (հնում՝ Անի բերդ)։

Բինգյոլ-Մունձուրյան լեռնաշղթան իր ամբողջ ընթացքում միայն մի տեղ ճեղքված է Լեչեգ-Քղի-Փերի գետով։ Գետի ճեղ-

քից զատ, լեռնաշղթայի վրա կան մի քանի լեռնանցքներ, որոնք, անշուշտ, կարևոր նշանակություն ունեն լեռնային այդ երկրում հաղորդակցության համար։ Արևմուտքից դեպի արևելք հաջորդականությամբ նշենք նրանցից մի քանիսը.

ա) գտնվում է Հոսչեթ և Խաղաջուր գագաթների միջև, հատուկ անուն չունի։ Այդ լեռնանցքով է անցնում Ակն—Կամախ (Անի բերդ) ճանապարհը.

բ) Ջիարաք լեռնանցքը—գտնվում է Խաղաջուր և Մունձուր գագաթների միջև։ Նրա վրայով անցնում է Օվաջիղի շրջանից Կամախ տանող ճանապարհը.

գ) Մերջան գագաթի արևմտյան լանջին գտնվող լեռնանցքով, որը ևս հատուկ անուն չունի, անցնում է Օվաջիղ—Երզնկա (Երեզ) ճանապարհը.

դ) Բագուտի լեռնանցքը—գտնվում է Բագուտ գագաթի արևմտյան կողմում։ Նրա վրայով անցնում է Խուզիչանի շրջանից դեպի Երզնկա տանող ճանապարհը.

ե) Շեյթանի (հայերեն՝ «Սատանա»-յի) լեռնանցք—գտնվում է Շեյթանի լեռների վրա։ Այստեղով, ինչպես և վերը նշված Լեչեգ գետի ճեղքով, այժմ անցնում են Էրզրումից (Կարին) Խարբերդ, ապա Դիարբեքիր (Ամիդ) տանող ճանապարհները։ Ճապոդաջրում (Հաշտյանք գավառ)—մի այլ ճանապարհ, նրանցից անջատվելով, դիմում է դեպի Մուշի շրջանը (Տարոն)։

Բինգյոլ-Մունձուրյան լեռնաշղթայի Բագուտ գագաթից դեպի հյուսիս-արևելք, մինչև Հայկական Պարից եկող Տեկմանի սարերի հետ միանալը, ձգվում են Ալաջայի լեռները, որի վրա նշանավոր են Շահ-դաղ և Խաչ-դաղ գագաթները։ Ջավրոշի և Շեյթանի լեռները հարավից, Կարագյոլը արևելքից, իսկ Ալաջան հյուսիսից իրենց մեջ պարփակում են մի եռանկյունաձև փակ աշխարհ՝ Էնդերես-օվա հովիտը, որի ջրերը հավաքվում են Լեչեգ գետի մեջ։

Բինգյոլ-Մունձուրյան լեռնաշղթայից սկիզբ են առնում և դեպի հարավ տարածվում մի քանի երկրորդական շղթաներ, որոնք հասնում են մինչև Արևելյան Եփրատի հովիտը։ Արևելքից-արևմուտք նրանք ունեն հետևյալ հաջորդականությունը.

1) Սերոկի կամ Սերոխի լեռներ—սկսվում են Բինգյոլ-դաղ (Սրմանց) գագաթի հարավ-արևմտյան կողմից և Գյունեկ-սու գետի արևելյան կողմով ձգվում են մինչև Արևելյան Եփրատի հովիտը։ Շղթան իր հարավային մասում արձակում է դեպի արևելք գնացող մի լեռնաճյուղ, որը կոչվում է Մերգեմեր։ Վերջինիս վրա է գտնվում ս. Կարապետ (Գլակա, Իննակնյան) հայտնի վանքը.

2) Սանջակի լեռներ—սկսվում են Ջավրոշից և ձգվում են մինչև Պալու (Բալու) քաղաքի մոտերքը, կազմելով ջրբաժան գիծ Քղի և Գյունեկսու գետերի միջև։ Սանջակի և քիչ առաջ նշված Սերոկի լեռներն արևմուտքից և արևելքից իրենց մեջ են առնում Գյունեկ-սու գետի հովիտը.

3) Սուրբ լույս (քրդերեն՝ Սիպլուս) լեռներ—սկսվում են Բագուտ գագաթից, սկզբից կազմում են երկու աղեղ, իսկ այնուհետև ձգվում ուղիղ դեպի հարավ, մինչև Մունձուր և Քղի գետերի գետախառնուրդը։ Նա հանդիսանում է ջրբաժան շղթա Քղի և Մունձուր գետերի միջև։ Սուրբ լույս և Սանջակ լեռների միջև տարածվում է Լեչեգ-Քղի գետի հովիտը, որն իր տերիտորիայով գրեթե համընկնում է այժմյան Քղի սանջակի հետ.

4) Բինգյոլ-Մունձուրյան լեռնաշղթայից դեպի հարավ տարածվող լեռնաճյուղերի մեջ ամենից արևմտյանը, որը կոչվում է Բոկուր-Բաբա կամ Բակուր-Բաբա, սկսվում է Խաղաջուր գագաթից և, տարածվելով դեպի հարավ-արևելք, հասնում է Արևելյան Եփրատի աջ ափը՝ Խարբերդ քաղաքի դիմաց։ Այդ լեռնաճյուղի և Սուրբ լույսի միջև տարածվում է Մունձուր գետի ավազանը, որը հայտնի է Դերսիմ անունով։ Դերսիմը խիստ լեռնային, անտառապատ և անմատույց մի երկիր է։ Նրա հյուսիսային մասը Բինգյոլ-Մունձուրյան լեռնաշղթայի Մերջան գագաթից սկսվող մի լեռնաբազկով բաժանված է երկու կեսի, որոնցից արևելյանը կոչվում է Խուզիչան, իսկ արևմտյանը՝ Օվաջիղ։

Անտիպոնտական և Անտիտավրոսյան լեռնաշղթաներ։

Անտիպոնտական և Անտիտավրոսյան լեռնաշղթաները կազմում են մեկը մյուսի շարունակություն։ Նրանք ունեն հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղություն։ Առաջինն սկսվում է Կիլիկյան Տավրոսից և ձգվում է մինչև Դիշ-դաշ գագաթը, իսկ երկրորդը՝ Դիշ-դաշից մինչև Սողանլուղ լեռները։

Անտիպոնտական լեռները, որոնք կոչվում են նաև Անտի-

պոնտական Պարը, սկսվում են Սողանլուղ շղթայի հարավային մասից՝ վերջինիս Աղա-Հյուսեին յուրդ գագաթի մոտից հեռացող Աղմեզար փոքրիկ լեռնաճյուղով։ Աղմեզարը իր արևմտյան հատվածի շրջանում կոչվում է Զախբը-դաղ լեռնաշղթա, որը կազմում է բնական սահմանագիծ Ստորին Բասենի և Օլթի գետի ավազանի միջև։ Նրա վրա գտնվող լեռանցքները բարձրադիր են և ձմեռը փակվում են։ Զախբը-դաղից արևմուտք մինչև Կանդիլ գագաթը կոչվում է Աջիգինի լեռներ, որը Վերին Բասենը բաժանում է Օլթի գետի ավազանից։ Աջիգինի արևմտյան ծայրին գտնվող Կանդիլ գագաթը չափազանց հարուստ է հորդաբուխ աղբյուրներով։ Նրա ստորոտներից են սկիզբ առնում հյուսիսում Օլթիի վտակ Թորթումը, հարավ-արևմուտքում՝ Արևմտյան Եփրատը, հարավ-արևելյան մասում՝ Արաքսի ձախակողմյան վտակ Հասանկալան (Մուրցը)։ Կանդիլը միաժամանակ հանդիսանում է մի քանի լեռնաշղթաների հատման կետ. նրանից հեռանում է մի լեռնաճյուղ և, հարավ-արևմտյան ուղղությամբ տարածվելով, հասնում է Հայկական Պարի Փալանթյոքան (Այծպտկունք) գագաթը։ Այս լեռնաշղթան իր հյուսիսային մասում կոչվում է Կարգաբազար, իսկ հարավում՝ Դեբերոյնի լեռներ, ինչպես ասացինք Հայկական Պարը նկարագրելիս։ Կանդիլից դեպի հյուսիս է տարածված մի ուրիշ լեռնաշղթա, որն սկզբում կոչվում է Տևրա-դաղ, իսկ հյուսիսում՝ Սևրի-դաղ։ Սրանք երկուսը միասին կազմում են ջրբաժան գիծ Օլթի գետի և նրա ձախակողմյան վտակ Թորթումի միջև։

Կանդիլից դեպի արևմուտք գլխավոր շղթան կոչվում է Դյումլի-դաղ, որի արևմտյան ծայրից սկսած լեռնաշղթան ընդունում է հարավ-արևմտյան ուղղություն և մինչև Քոսապունար («Պունար»՝ հայերեն «Աղբյուր») շղթան իր տարբեր մասերում ունի տարբեր անուններ, որոնց միասին վերցրած կարելի է անվանել Օվաջիզի լեռներ՝ նկատի ունենալով հարևան Սերչեմ-սուի հովտի անունը, որը նույնպես կոչվում է Օվաջիզ։ Օվաջիզի շարունակությունն են կազմում Քոսապունար և ապա Կոպի շղթաները։ Սրանք երկուսը միասին հյուսիսային կողմից սահմանափակում են Աշկալայի դաշտը։ Քոսապունարով անցնում էր Էրզրումից Բայբուրդի (Բայբերդ) վրայով դեպի Տրապիզոն տանող հին խճուղին, որի ուղղությունը լիովին համընկնում է հին և միջին դարերում գործող Կարին (այժմ՝ Էրզրում)—Բայբերդ (այժմ՝ Բայբուրդ)—Տրապիզոն տարանցիկ նշանավոր ճանապարհի հետ։ Իսկ Էրզրում—Տրապիզոն այժմյան խճուղին անցնում է ոչ թե Քոսապունարով, այլ Կոպի լեռներով և ունի հետևյալ ուղղությունը՝ Էրզրում—Աշկալա—Բայբուրդ—Տրապիզոն։

Դեպի արևմուտք գլխավոր շղթայի մասերն են կազմում.

ա) Օլրու-բել շղթան, որի վրա գտնվող Աղպունարի լեռնանցքով այժմ անցնում է Դերջանի դաշտից դեպի Ճորոխի վերնագավառն ու Բայբերդ քաղաքը տանող ճանապարհը.

բ) Սիպկորի (Սուրբ Գրիգորի) լեռներ, որի վրա գտնվող մի հարմար լեռնանցքով այժմ անցնում է Երզնկայից դեպի Տրապիզոն տանող խճուղին։ Շղթայից քիչ հյուսիս, այժմյան խճուղու մոտ, մի ժամանակ գտնվում էր Սատաղ նշանավոր կայարանը, որտեղից մի ճանապարհ գնում էր դեպի Այրարատ՝ Արտաշատ, երկրորդը՝ Տրապիզոն, երրորդը՝ Փոքր Հայք.

գ) Զարդակլիի լեռներ, Սիպկորի շղթայի հետ կազմում է մի անկյուն, որից սկիզբ է առնում Գոհանամ լեռնաբազուկը և դիմում դեպի հարավ-արևելք, հասնելով Արևմտյան Եփրատի հունը, Երզնկայից անմիջապես արևմուտք։ Զարդակլուն և Գոհանամը իրար հետ միանալու շրջանում առաջացրել են ձորեր, որ կոչվում են Եղի-դերելեր (հայերեն՝ «յոթ ձորեր»)։ Այս ձորերլեռնանցքներով այժմ անցնում է Կամախից (Անի) դեպի Կելկիտշայի (Գայլ գետի) ավազանը տանող ճանապարհը։

Անտիպոնտական և Անտիտավրոսյան լեռնային սիստեմների սահմանագլխից (Դիշ-դաղ գագաթից) մի երկար լեռնաբազուկ ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք՝ դեպի Պոնտական լեռները։ Այդ լեռնաշղթան կոչվում է Ղզըլ-դաղ և հանդիսանում է ջրբաժան գիծ Էշիլ-իրմակ և Ղզըլ-իրմակ (Ալյուս) գետերի միջև։ Հնում նա կազմում էր Կապադովկիայի և Փոքր Հայքի սահմանը։

Դիշ-դաղից հարավ-արևմուտք, մինչև Կիլիկյան Տավրոս, տարածվում է Անտիտավրոսը։ Անտիտավրոսը համեմատած Անտիպոնտական լեռների հետ ունի լանջերի ավելի մեղմ թեքություն և լայնանիստ գագաթներ։ Նրա գագաթների մեջ. սուր ցցված է միայն Իլան-դաղը։ Շղթան իր ամբողջ տարածության ընթացքում մատչելի է ճանապարհորդների համար։

Փոքր Ասիայից դեպի Եփրատի հովիտը նրա վրայով անցնող

ճանապարհների թվին են պատկանում Դելիկլի-դաշի լեռնանցքով դեպի Մալաթիա և Բաղդադ տանող այժմյան խճուղին և երկաթուղին։ Կիլիկիայի մոտերքում Անտիտավրոսը վեր է ածվում լայն ու երկար սարերի, որոնք կոչվում են Ուզուն-յայլա (հայերեն՝ «Երկար սար»)։ Սրանք, մոտենալով դաշտային Կիլիկիային, կտրատվում են Սարոս և Ջամանգի (Ծամնդավ) գետերով ու նրանց վտակներով։

Չնայած նրան, որ Անտիտավրոսյան և Անտիպոնտական լեռնաշղթաները կազմում են մեկը մյուսի շարունակություն, բայց, այնուամենայնիվ, նրանք իրենց բնույթով նույնը չեն։ Նրանցից առաջինը ծալքավոր է, մինչդեռ երկրորդը՝ բեկորային։ Անտիպոնտական լեռների դիմաց, Սև ծովի (Եվքսինյան Պոնտոս) հարավային և հարավ-արևելյան ափերին զուգահեռ, ձգվում են Պոնտական լեռները։ Պոնտական լեռները սկսվում են Ճորոխի (Վոհ, Ակամսիս) ստորին հոսանքի մոտից և ձգվում են արևմուտք՝ մինչև Էշիլ-իրմակի հովիտը։ Նրա արևելյան մասը կոչվում է Լազիստանի (Պարխար, Խաղտյաց կամ Պարիադրեսի) լեռներ։ Լեռնաշղթան իր մյուս մասերում ևս ունի տարբեր անուններ։ Ամենաարևմտյան հատվածը կոչվում է Իգդիր-դաղ, որի արևմտյան ծայրի ստորոտներով Էշիլ-իրմակն իջնում է Սև ծով։ Նախքան ծովի մեջ թափվելը, նա աջ կողմից իր մեջ է ընդունում Կելկիտ-չայ գետը (Գայլ գետ)։ Կելկիտի ավազանը համապատասխանում է նախկին բուն Փոքր Հայքի տերիտորիային, Էշիլ-իրմակի ավազանը՝ նախկին Եվդոկիային, իսկ Կզըլ-իրմակի (Ալյուս կամ Հալիս) ավազանը՝ Կապադովկիային։

Անտիպոնտական Պարի, Պոնտական լեռների և Արսիան-Սողանլուղ լեռնաշղթաների միջև տարածվում է Ճորոխ գետի ավազանը։ Ճորոխի միջին հոսանքի շրջանն ու նրա աջակողմյան վտակ Օլթի գետի ավազանը միասին կազմում էին Տայոց աշխարհի տերիտորիան, որն ընդհանուր առմամբ լեռնոտ, անտառապատ և ճանապարհներով աղքատ մի երկիր է։

Արևմտյան Եփրատի հովիտը։

Արևմտյան Եփրատի հովտում ընկած են մի քանի դաշտեր։ Սրանք, ծովի մակերևույթից մեծ բարձրություն ունենալու շնորհիվ, կոչվում են նաև բարձրավանդակներ կամ սարահարթեր։ Նրանք իրենց ֆիզիկո-աշխարհագրական պայմաններով՝ բարձրությամբ, հողա-կլիմայական տեսակետից և այլն, չի կարելի իրար հետ նույնացնել. չի կարելի նրանց միավորել ֆիզիկո-աշխարհագրական մի շրջանի մեջ։ Ուստի միայն հարմարության տեսակետից է, որ Արևմտյան Եփրատի ամբողջ հովիտը նկարագրում ենք մի վերնագրի տակ։

Արևմտյան Եփրատի հովիտը բաղկացած է հետևյալ հիմնական շրջաններից՝ Կարնո կամ Էրզրումի սարահարթ, Աշկալայի դաշտ, Դերջանի դաշտ, Երզնկայի դաշտ, Կամախի հրաբխային սարահարթ։ Նշված այդ շրջաններից առաջին երկուսը՝ Էրզրումի դաշտն ու Աշկալան, պարփակված են Հայկական Պարի արևմտյան վերջավորության և Անտիպոնտական լեռների արևելյան մասի ու նրանցից դուրս եկող երկրորդական լեռնաճյուղերով, իսկ վերջին երեքը՝ Դերջանի դաշտը (Դերջան դավառ), Երզնկայի դաշտը (Եկեղյաց գավառ) և Կամախի հրաբխային սարահարթը (Դարանաղի գավառ) տարածվում են նույն Անտիպոնտական լեռնաշղթայի արևմտյան մասի և Բյուրակն-Մունձուրյան լեռների միջև։

Էրզրումի դաշտը (հին Կարին գավառ) ոռոգվում է Արևմտյան Եփրատի վերին հոսանքի ջրերով։ Եփրատն այս դաշտավայրում առաջացրել է ճահիճներ, որոնք առանձնապես մեծ տարածում ունեն Էրզրումի հյուսիս-արևելյան մասերում։ Էրզրումի դաշտավայրի կլիման խիստ է՝ ձմեռը լինում են սաստիկ ցրտեր, իսկ ամառը համեմատաբար շոգ է։

Էրզրումի դաշտը արևմուտքում միանում է Աշկալայի դաշտին։ Աշկալայի դաշտն իրենից ներկայացնում է մի նեղ հովիտ, որն ընկած է Եփրատի երկու կողմերում։ Հյուսիս-արևելքում նրան է միանում Սերչեմ-չայ գետի բավականին լայն հովիտը, որը հայտնի է Օվաջըզ (հնում՝ Շաղագոմք գավառ) անունով։ Հարավային կողմից Աշկալայի հովիտը Դերջանի դաշտից բաժանված է Հայկական Պարի այն հատվածով, որ ձգվում է Փալանթյոքան (Այծպտկունք) գագաթից մինչև Մարիամ-դաղը, իսկ հյուսիսային կողմից Անտիտավրոսյան լեռների մասերը կազմող Օվաջըզի և Օթլուբել շղթաներն են։ Մարիամ-դաղ գագաթի արևմտյան կողմում, ուր Եփրատը միանգամից ընդունում է միջօրեական ուղղություն, Աշկալայի դաշտը մի նեղ հովտով միանում է Դերջան դաշտի հետ։ Հիշյալ դաշտը դրավում է բավա-

կանին ընդարձակ տարածություն։ Նա արևմտյան Եփրատի երկու ափերին տարածվելուց զատ, նեղ հովիտներով ձգվում է նաև Տուզլու գետի և նրա վտակների հոսանքներում։ Էրզրումի դաշտի համեմատությամբ, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը փոքր է։ Այս դաշտի տարբեր մասերում, մանավանդ նախալեռնային շրջաններում, բխում են բազմաթիվ սառնորակ և հանքային աղբյուրներ։

Դերջանի դաշտից արևմուտք ընկած է Երզնկայի դաշտը։ Երզնկայի դաշտն ունի հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք տարածում։ Նա Դերջանից բաժանված է Անտիպոնտական լեռների Սիպկոր (Ս. Գրիգոր) հատվածից դեպի հարավ-արևելք տարածվող մի լեռնաճյուղով, որն ընդհուպ մոտենում է Բյուրակն-Մունձուրյան լեռնաշղթայի մասը կազմող Բագուտ լեռնաշղթային և նրանից բաժանված է միայն Արևմտյան Եփրատի նեղ ու խոր ճեղքով, որը հայտնի է Ճերեզլե-բողազ անունով։ Երզնկայի դաշտը, ի տարբերություն Էրզրումի, Աշկալայի և Դերջանի դաշտերի, որոնք ընկած են Եփրատի երկու կողմերում էլ, տարածվում է Արևմտյան Եփրատի միայն աջ կողմում, որովհետև Եփրատն այս մասում հարավից անընդհատ շփվում է Բյուրակն-Մունձուրյան լեռնաշղթայի հյուսիսային բարձրադիր լանջերին։ Երզնկայի դաշտը, չնայած ծովի մակերևույթից ունեցած բավականին մեծ բարձրության, նշանավոր է իր մրգատու այգիներով. նրա հողակլիմայական պայմաններն այնպիսին են, որ այնտեղ անդամ կարելի է բամբակ աճեցնել և բարձր բերք ստանալ նրանից։

Երզնկայի համեմատաբար ցածրադիր դաշտավայրերից դեպի հարավ-արևմուտք ընկած է Կամախի սարահարթը (հնում՝ Դարանաղի դավառ)։

Կամախի սարահարթը կազմավորվել է Մունձուր լեռների և Անտիպոնտականի շրջանից արտավիժած լավաներով։ Սարահարթի տարբեր մասերում տարածված են ռելեֆի տարբեր ձևեր՝ բլրապատ տարածություններ, հրաբխային ծագում ունեցող առանձին փոքր լեռնաճյուղեր, փոքրիկ հարթություններ։

Արևելյան Եփրատի (Արածանիի) հովիտը։

Արևելյան Եփրատի (Արածանիի) հովիտը, Արևմտյան Եփրատի հովիտի պես, բաղկացած է մի քանի ֆիզիկո-աշխարհագրական շրջաններից, որոնք ռելեֆի տեսակետից նման են իրար։ Նրանք բոլորն էլ հարթություններ են։ Արևելյան Եփրատին համընթաց կարելի է նշել հետևյալ դաշտավայրերը. Ալաշկերտի, Դութաղի, Մանազկերտի, Բուլանըղի, Մուշի, Ճապաղաջրի, Բալուի և Խարբերդի։ Արևելյան Եփրատի հովիտն Արևմտյան Հայաստանի համար ունի այն նշանակությունը, ինչ որ Արաքսի հովիտը (Արարատյան դաշտը) Արևելյան Հայաստանի համար։ Նշված այդ դաշտերը, եթե ոռոգվեն ու ինտենսիվ կերպով մշակման ենթարկվեն, ապա նրանք կտան հսկայական քանակությամբ բերք, սկսած բամբակից, բրնձից, խաղողից և վերջացրած հացահատիկներով։ Սակայն այժմ այդ ամբողջ տարածության վրա բնակեցությունը շատ նոսր է, արհեստական ոռոգումը գտնվում է պրիմիտիվ աստիճանի վրա, բերրի հողերի մեծագույն մասն անօգտագործելի է մնացած, նրանք պատած են ճահիճներով, փշաբույսերով և վայրի այլ խոտերով։

Արևելյան Եփրատի հովտում ընկած դաշտավայրերը ընդհանուր առմամբ ավելի լայնատարած են և ցածրադիր, քան Արևմտյան Եփրատի վրա գտնվողները։

Արևելյան Եփրատի վերին հոսանքի շրջանում և արևմուտքից նրա մեջ թափվող Շարիան գետի ավազանում, Շարիան-Ալաղաղ և Հայկական Պարի լեռնաշղթաների միջև, տարածվում է Ալաշկերտի դաշտավայրը, որն իր ֆիզիկո-աշխարհագրական պայմաններով նման է Արարատյան դաշտին։ Արևելյան Եփրատը (Արածանի) ճեղքելով Շարիան-Ալաղաղի լեռնային սիստեմը՝ Ալաշկերտից խամուրի կիրճով դուրս է գալիս Դութաղի դաշտը։ Դութաղի դաշտը տարածվում է Ալաղաղի (Ծաղկանց) արևմտյան բարձրությունների և Շարիան լեռներից դեպի հարավ ձգվող լեռնաբազուկների միջև։ Նրա ռելեֆն իրենից չի ներկայացնում կատարյալ հարթություն, որովհետև Ալաղաղից և Շարիանից եկող լեռնաճյուղերը, որոնք այդ մասում ունեն հարաբերական փոքր բարձրություն, մոտենում են ընդհուպ Արևելյան Եփրատի հոսանքին, խախտելով ամբողջ դաշտի հարթ մակերևույթը։ Դութաղից

հարավ, Սիփանից և Ալադաղից դեպի արևմուտք տարածվող լեռնաճյուղերի միջև ընկած է Մանազկերտի դաշտը։ Նա գրեթե ամենուրեք ունի հարթ ռելեֆ, տեղ-տեղ, մանավանդ Պատնոս (Մանազկերտ) գետի ավազանում, պատած է ճահիճներով։ Դաշտավայրը հարուստ է ջրերով, այստեղ Եփրատի մեջ են թափվում բազմաթիվ վտակներ, որոնց ջրերը սակայն ոռոգման նպատակների համար այժմ շատ քիչ չափերով են օգտագործվում։

Մանազկերտի դաշտը (Ապահունիք գավառ), առանց ընդհատվելու, հարավ-արևմուտքում միանում է Բուլանըղի դաշտին (Հարք գավառ)։ Վերջինս ունի եռանկյունու ձև։ Նա սահմանափակված է հյուսիս-արևմուտքից և հարավից Խամուրի և Բուլանըղի լեռնաշղթաներով, իսկ արևելքից՝ Բիլեջանի (կամ Սիփանի նետ) լեռնասիստեմով։ Դաշտավայրը հիմնականում տարածվում է Եփրատի ձախ կողմում։

Բուլանըղի դաշտից հարավ, Բուլանըղ և Հայկական Տավրոս լեռնաշղթաների միջև տարածվում է Մուշի դաշտավայրը (Տարոն գավառ)։ Սա հիմնականում ընկած է Մեղրագետի ավազանում։

Իր բերրիությամբ Մուշի դաշտը չի զիջում Հայկական լեռնաշխարհի որևէ ուրիշ շրջանի։ Սակայն այժմ այնտեղ գրեթե չի զգացվում մարդու միջամտությունը։ Այնտեղ հսկայական տարածություններ են կազմում ճահիճները, չկան ոռոգման կանոնավոր սիստեմներ, այդ պատճառով էլ Մուշի դաշտը չի տալիս այն բարիքները, ինչ նա կարող էր տալ։

Մուշի դաշտից արևմուտք, Արևելյան Եփրատին համընթաց, հաջորդական կարգով տարածվում են Ճապաղաջրի (Հաշտյանք գավառ), Բալուի (հնում՝ Բալահովիտ) և Խարբերդի (Անձիտ գավառ) դաշտերը, որոնք պարփակված են հյուսիսից Բյուրակն-Մունձուրյան լեռնաշղթայից եկող լեռնաճյուղերի, իսկ հարավից Հայկական Տավրոսի միջև։

Վանա լճի ավազանը։ Վանա լճի ավազանը սահմանափակված է արևելքից Կոտուրի (Կոտոր) և Զուխի լեռներով, հարավից՝ Հայկական Տավրոսով (մինչև Բիթլիս), իսկ արևմուտքից և հյուսիս-արևմուտքից՝ Ռահ-Օվա սարահարթով ու Նեմրութ, Բիլեջան, Սիփան և Թոնդուրեկ գագաթները միացնող լեռնաճյուղերով։ Ավազանն ունի եռանկյան ձև և իր սուր գագաթով ուղղված է դեպի հյուսիս, դեպի Թոնդուրեկ։ Նրա հյուսիսային և արևելյան հատվածները կտրատված են Ալադաղ (Ծաղկանց) և Կոտուր լեռնաշղթաներից եկող լեռնաբազուկներով, որոնց շնորհիվ ավազանի այդ մասերում առաջացել են իրարից անջատ առանձին փոքրիկ գետահովիտներ։ Այդ գետահովիտների մեծ մասը բացվում է դեպի Վանա լիճը։ Նրանցից փակ է միայն մեկը՝ Արճակ փակ լճակի շուրջը տարածվող հարթությունը։ Գետահովիտներից համեմատաբար ընդարձակ տարածություն ունեն հյուսիս-արևելքում Բենդիմահի գետի հովիտը, որը կոչվում է Աբաղայի դաշտ, իսկ հարավ-արևելքում՝ Խոշաբ գետի ստորին հոսանքի շրջանը, որը հին ժամանակներից սկսած հայտնի է եղել Հայոց ձոր անունով։ Հայոց ձորից հյուսիս, Վան քաղաքից քիչ արևելք բարձրանում է Վարագա լեռը, որի վրա գտնվում է նույնանուն վանքը։

Ավազանի հարավային և արևմտյան մասերում նրա սահմանագիծը կազմող լեռնաշղթաների և լճի հայելու միջև տարածությունը քիչ է։ Նա այստեղ ձգվում է մի նեղ շերտով, իսկ տեղ-տեղ այդ շղթաները մոտենում են լճին, վերջանալով նրա ափին բարձր ժայռերով։

Վանա լճի ավազանի տարբեր մասերում ցրված են բազմաթիվ լճակներ (Նազիկ, Արճակ և այլն), նա հարուստ է նաև գետերով։

Արսիան-Սողանլուղի և Կոտուր-Զագրոշլեռնաշղթաներ։ Հայկական լեռնաշխարհում երկար տարածությամբ ձգվող լեռնասիստեմներից, եթե նկատի չունենանք Փոքր Կովկասը, ապա միայն Արսիան-Սողանլուղի և Կոտուր-Զագրոշյան լեռնաշղթաներն են, որ ունեն միջօրեական ուղղություն։ Ֆիզիկո-աշխարհագրական տեսակետից նրանք նույնատիպ չեն, սակայն իրենց ուղղությամբ համընկնում են։

Արսիան-Սողանլուղի (Մեծրաց) լեռնաշղթան սկսվում է Աճարայի լեռներից և ձգվում է հարավ մինչև Բաշքեյ սարահարթը, Կաղզվանի արևմտյան մասում։ Իր ամբողջ տարածությամբ, չհաշված մի քանի փոքրիկ աղեղներ, որ նա տալիս է իր կենտրոնական մասերում, լեռնաշղթան ունի միջօրեական ուղղություն։ Նա ունի բեկորային կառուցվածք, հանդիսանում է Պոնտական բեկորի արևելյան բարձրացած թևը։ Դեպի արևմուտք իջնում է

երկար լանջերով, իսկ դեպի արևելք նրա լանջերը զառիթափ են։ Լեռնաշղթան իր ամբողջ տարածությամբ մեծ մասամբ ծածկված է անտառներով։ Հյուսիսային մասը, Աճարայի լեռներից մինչև Ալա-Ագբար գագաթը կոչվում է Արսիանի շղթա, իսկ հարավայինը՝ Սողանլուղ (հնում՝ Մեծրաց)։ Վերջինիս կատարներն ավելի լայնանիստ են և նրանց վրայով համեմատաբար դյուրին է հաղորդակցություն կատարել հարևան երկու շրջանների՝ արևմուտքում Օլթի գետի ավազանի (հնում՝ Տայոց աշխարհ), իսկ արևելքում՝ Կարսա գետի ավազանի (հնում՝ Վանանդ գավառ) միջև։ Ավելի դժվար է անցնել Արսիանի շղթայի վրայով։ Նրա վրա լեռնանցքներ քիչ են և ձմեռվա ընթացքում գրեթե բոլորովին փակվում են։

Կոտուր-Զագրոշյան լեռնաշղթան սկսվում է Մեծ և Փոքր Մասիսների մոտից և սկզբում, մինչև Թոնդուրեկ գագաթը, բլրաշարք է, իսկ այդտեղից արդեն հարավային ուղղությամբ ձգվում է հիմնական շղթան։ Մասիսից մինչև Սուրովա գագաթը, որը գտնվում է Կոտուր (Կոտոր) գետի ճեղքից մոտ 25 կմ հարավ, Կոտուրի լեռնաշղթան է, իսկ նրանից հարավ, նույն ուղղությամբ, տարածվում է Զագրոշի լեռնաշղթան։

Մասիսից մինչև Թոնդուրեկ ձգվող բլրաշարքը, որը կազմում է Կոտուրի մի մասը, Մակվա շրջանը (Արտազ գավառ) բաժանում է Բայազետից (Կոգովիտ գավառից)։

Թոնդուրեկից հարավ շղթան կազմում է մի աղեղ, որի միջով վազում է Կոտուր գետը։ Կոտուր գետի ճեղքից քիչ հյուսիս գտնվում է Սարայի լեռնանցքը։ Կոտուրից դեպի հարավ մինչև Սուրովա գագաթը լեռնաշղթայի լանջերն ունեն մեղմ թեքություն և նրա վրայով անցնելն առանձին դժվարություն չի ներկայացնում։

Սուրովա գագաթից սկսվում է Զագրոշի (կամ Զագրոս) լեռնաշղթան։ Այս շղթան ավելի վայրենի բնույթ ունի, կատարները խիստ ժայռոտ են և լեռնանցքները քիչ։ Նրա վրա եղած լեռնանցքներից նշանավոր են երեքը։ Նրանցից մեկը գտնվում է Սալմաստ գետի ակունքների մոտ և կոչվում է Խանասորի լեռնանցք։ Այդ լեռնանցքով է անցնում Վանա լճի ավազանից դեպի

Սալմաստ և Դիլման տանող ճանապարհը[1]։ Զագրոշի մյուս երկու լեռնանցքները, որոնցից մեկը կոչվում է Քելիշինի լեռնանցք, իսկ մյուսը՝ Ռևանդուզ, գտնվում են ավելի հարավ։ Քելիշինի և Ռևանդուզի լեռնանցքներով, հնագույն ժամանակներից սկսած, Միջագետքի քաղաքները (Նինվե, Բաբելոն, Բաղդադ) կապվում էին Ուրմիո (Կապուտան) լճի ավազանի հետ։ Վերջինս՝ Ուրմիո լճից արևմուտք ընկած լեռնային երկիրը, ուրարտական շրջանում հայտնի էր Մաննա անունով և ուներ ստրատեգիական խոշոր նշանակություն։

Կոտուր և Զագրոշ լեռնաշղթաների սահմանագլուխը կազմող Սուրովա գագաթից սկսվում է մի երկար լեռնաշղթա և տարածվում դեպի արևելք՝ գրեթե մինչև Թալիշի լեռները։ Այդ երկարաձիգ լեռնաշղթան, չնայած ընդհանուր անունով կոչվում է Միշոու-դաղ, բայց իր տարբեր մասերում կրում է տարբեր անուններ։ Նրա արևմտյան մասը, որ հանդիսանում է ջրբաժան Ուրմիո լճի ավազանի և Արաքսի միջև, կոչվում է Սալմաստի լեռներ, կենտրոնական մասը՝ Ղարադաղի լեռներ, իսկ ծայր արևելյանը՝ Սավալանի լեռներ։ Ղարաբաղի լեռներն իրենցից արձակում են երկու լեռնաճյուղ՝ մեկն արևելքից, իսկ մյուսը արևմուտքից, որոնք ձգվում են դեպի հյուսիս աղեղների ձևով, մոտենալով առաջինը Ղարաբաղի (Արցախի) լեռներին, իսկ երկրորդը՝ Զանգեզուրին։ Սավալանից հարավ, նրան զուգահեռ, ձգվում է Ազբուզ կամ Վազբուզ լեռնաշղթան։ Սավալանի և Ազբուզի միջև եղած տարածությունը մի թամքոցով բաժանված է երկու մասի՝ արևմտյան և արևելյան։ Արևմտյանն Աջի-չայ կամ Թավրիզ գետի հովիտն է, իսկ արևելյանը Կարա-սու գետի վերին հոսանքի շրջանն է՝ Արդաբիլի շրջանը[2]։

Հայկական Տավրոս։ Տավրոսյան լեռնային սիստեմը Առաջավոր Ասիայի ամենաերկար լեռնաշղթաներից է։ Նա բաժանվում է երեք մասի՝ Անատոլիական Տավրոսի, Կիլի-

1 Նա ունի հետևյալ ուղղությունը. Վան—Բաշկալա (հնում՝ Ադամակերտ կամ Հադամակերտ)—Զուվի լեռնանցք—Խանասորի լեռնանցք—Սալմաստ—Դիլման, ապա Թավրիզ։ Դա լիովին համընկնում է միջին դարերում գործող և առանձնապես 14-ից 16-րդ դարերում մեծ նշանակություն ստացած Թավրիզ—Վան ճանապարհի հետ։

2 Հայկական լեռնաշխարհի ֆիզիկո-աշխարհագրական պայմանները նկարագրելիս երբեմն հարկ է եղել հարևան որոշ շրջանների մասին ևս մի քանի խոսք ասել։

կյան Տավրոսի և Հայկական Տավրոսի։ Անատոլիական Տավրոսը նրա արևմտյան մասն է, որ ձգվում է Միջերկրական ծովի հյուսիսային ափերին զուգահեռ, կենտրոնական մասը, որ տարածվում է Անատոլիական Տավրոսից մինչև Եփրատ գետի հոսանքը, Կիլիկյան Տավրոսն է, իսկ նրանից արևելք՝ մինչև Զագրոշի լեռները ձգվում է Հայկական Տավրոսը։

Հայկական Տավրոսը կազմում է Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանը։ Նա մի պատվար է, որի ոչ բոլոր մասերն են, որ հաղորդակցության համար դյուրին են։ Այդ տեսակետից էլ հին և միջին դարերում ունեցել է ստրատեգիական խոշոր նշանակություն։ Լայնությունը բավականին մեծ է. նրա վրա են գտնվում մի քանի լեռնային գավառներ, որոնք իրենց յուրահատուկ դերն են ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ (օրինակ՝ Սասունը, Խութը և այլն)։

Հայկական Տավրոսը սկսվում է Եփրատի ձախ ափից և Կիլիկյան Տավրոսի արևելյան մասում տարածվող Փիրան-դաղ շղթայից բաժանված է Եփրատի հոսանքով։ Ծայր արևմտյան մասում, ուր նա ձգվում է մի շարքով, կոչվում է Սարու-մեշե լեռներ, որից հետո նա ճյուղավորվելով՝ իր մեջ գրկում է Գյոլջիկի լիճը (հնում՝ Ծովք)։ Գյոլջիկի հարավը պատող լեռնաշղթայի ստորոտներից սկիզբ է առնում Արևմտյան Տիգրիսի ակունքներից մեկը՝ Արղանա-սու գետը։

Գյոլջիկից (Ծովք) անմիջապես արևելք Հայկական Տավրոսի կատարներն արագ իջնում են՝ շրջապատի նկատմամբ հասնելով միայն 200 մետրի և կազմելով մի շարք հարմար լեռնանցքներ։ Այդ լեռնանցքներով այժմ անցնում են Խարբերդ—Դիարբեքիր (Ամիդ) խճուղին և «ԲԲԲ» (Բեռլին—Բաղդադ—Բասրա) երկաթուղին։ Նույն լեռնանցքներով է անցել հնում Դարեհ Ա-ի կառուցած «արքունական ճանապարհը», որը Պարսկաստանի խորքերից գնվում էր մինչև Միջերկրական ծովի ափերը։

Ավելի արևելք լեռնաշղթան թեքվում է դեպի հյուսիս-արևելք և իր այդ ուղղությունը պահպանում է մինչև Դարկոշ գագաթին հասնելը։ Գյոլջիկ լճից մինչև Դարկոշ գագաթը, լեռնաշղթան կոչվում է Սիվանի լեռներ, իսկ Դարկոշի շուրջն ընկած մասերն հենց գագաթի անվամբ կոչվում են Դարկոշի լեռներ։ Դարկոշից արևելք գալիս են Սասունի լեռները։ Դարկոշից սկսած գլխավոր

շղթային զուգահեռ հարավից անցնում է մի երկրորդ՝ ավելի բարձր շղթա։ Գլխավոր և երկրորդական այդ շղթաների միջև գտնվում են Սասունի մի մասը կազմող Տալվորիկը և ինքը Սասունը։ Սասունի լեռների արևելյան մասը կազմում են Խութի սարերը, որոնք կտրատված են Բիթլիս (Բաղեշ) գետով և նրա վտակներով։

Բիթլիս գետի ճիղքից արևելք լեռնաշղթան ձգվում է Վանա լճի հարավային ափերին զուգահեռ և երկու տեղ ընդհատ մոտենում է լճի հայելուն։ Նրանցից արևմտյանը լճափին վերջանում է Ընձաքիարս լեռնագագաթով, իսկ արևելյանը՝ Արտոս գագաթով։ Լեռնաշղթան մերձլճյան և մերձխոշաբյան շրջանում խիստ կերպով բարձրանում է։ Այդ մասերում նրա բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 3000-ից ավելի մետրի։ Արևելքում Բաղեշ գետից սկսած լեռնաշղթան ձգվում է դեպի հարավարևելք և հասնում է Հեյթաղ կամ Հայթաղ գագաթին։ Հայթաղում Հայկական Տավրոսն արձակում է երեք ճյուղ, նրանցից առաջինը, որը կոչվում է Զուխի լեռներ, դիմում է դեպի հյուսիս արևելք և հասնում Կոտուր-Զագրոշյան լեռնաշղթաների սահմանը կազմող Սուրովա գագաթը։ Երկրորդը տարածվում է դեպի հարավ-արևմուտք և միանում Քրդստանի (Կորդուաց) լեռներին, իսկ երրորդը նույն հարավ-արևելյան ուղղությամբ շարունակվում է մինչև Զագրոշի վրա գտնվող Ազա Զեռանդ գագաթը՝ միայն մի տեղ ընդհատվելով Մեծ Զավ գետի հոսանքով։ Զուխի, Զագրոշի և Հայթաղից դեպի Ազա-Զեռանդ գնացող լեռնաշղթաների միջև տարածվում է Բաշկալայի շրջանը (Մեծ Աղբակ կամ Աղբակ գավառը), որտեղ գտնվում է Բաշկալա քաղաքը (հնում՝ Աղամակերտ)։

Հայկական Տավրոսն ունի պալեոզոյան ծագում և հարուստ է օգտակար հանածոներով։ Դեպի հյուսիս նայող լանջերը զառիթափ են, իսկ դեպի հարավ արձակում է մի շարք լեռնաբազուկներ, որոնք ձգվում են երկար տարածության վրա։

Հայկական Տավրոսից հարավ տարածվում են՝ արևելքում Արևելյան Տիգրիսի ավազանը, իսկ արևմուտքում՝ Արևմտյան Տիգրիսի (կամ՝ ուղղակի Տիգրիս) ավազանը, որոնք հնում կազմել են հայկական պետության մասերը։

Քանի որ Հայկական Տավրոսը կազմում է Հայկական լեռ-

նաշխարհի հարավային սահմանը, և նա իր բարձրության պատճառով դժվարացնում է հաղորդակցությունը Վերին Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի միջև, ուստի անհրաժեշտ է լավ ծանոթ լինել Հայկական Տավրոսի այն անցքերին (լեռնանցքներին), որոնցով կարելի է անցնել կամ անցնում են ճանապարհներ երկու Տիգրիսների ավազաններից դեպի Հայկական լեռնաշխարհը։

Քիչ առաջ ասվեց, որ Գյոլջիկ (Ծովք) լճից անմիջապես արևելք լեռնաշղթայի փոքր բարձրության շնորհիվ կան մի քանի հարմար լեռնանցքներ, որոնցով թե՛ հնում և թե՛ այժմ անցնում են ճանապարհներ։ Այդ լեռնանցքներից արևելք մինչև Բիթլիս (Բաղեշ) գետի ճեղքը Հայկական Տավրոսի վրա շատ թե քիչ հարմար է մի լեռնանցք, որը գտնվում է Տիգրիսի ակունքներից մեկի՝ Ջիբենեսուի վերնագավառում։ Նա հնում կոչվում էր Կլեյսուրի լեռնանցք և Հայաստանի քաղաքական առաջին բաժանման (որը տեղի ունեցավ 387 թվին) գծի վրա գտնվելու պատճառով, ամրացված էր հռոմայեցիների կողմից։ Նա այդ ժամանակներում ուներ ստրատեգիական մեծ նշանակություն ոչ միայն այն պատճառով, որ Հայկական Տավրոսի այդ մասերում ուրիշ հարմար լեռնանցքներ չկային, այլ և հիշատակության համաձայն Հայաստանի պարսկական տիրապետության տակ գտնվող մասից (Արևելյան Հայաստանից) դեպի հռոմեականը միայն կարելի էր անցնել Կլեյսուրով։ Այժմ այդ լեռնանցքով անցնում է մի ճանապարհ՝ Դիարբեքիրից դեպի Արածանիի հովիտը՝ Ճապաղաջուրը։ Հաջորդ լեռնանցքը, որը դարձյալ ուներ խոշոր նշանակություն, դա Բիթլիս (Բաղեշ) գետի հովիտն է, որով այժմ անցնում է Դիարբեքիրի (Ամիդ) և Սերխեսի (Սղերտ) կողմերից եկող ճանապարհը դեպի Ախլաթ (Խլաթ) և Մուշ։ Հին և միջին դարերում Միջագետքից դեպի Արածանիի հովիտը գլխավոր ճանապարհը դարձյալ Բիթլիս (Բաղեշ) գետի հովտով անցնողն էր։ Բիթլիսից արևելք լեռնաշղթան բարձրանում է, բայց այն մասնատված է առանձին հատվածների, որոնց միջև գտնվում են հարմար անցքեր, շրջապատի նկատմամբ ունենալով ոչ ավելի քան 200 մ բարձրություն։ Նշենք նրանցից մի քանիսը.

ա) Գյոզալդարայի լեռնանցք։ Իրենից ներկայացնում է մի գոգավորություն, ուր ձյան հալոցքի ջրերը հավաքվելով լճանում են և անհնարին են դարձնում հաղորդակցությունը Կարճկանի

շրջանի (Վանա լճի հարավ-արևմտյան ափին) և Գյոզալդարա գետի հովտի միջև։ Տեղացիներն ստիպված արհեստական առուներ հանելով հեռացնում են լճացած ջրերը.

բ) Խիզանի լեռնանցք։ Այս լեռնանցքով անցնում է ճանապարհը Կարճկանից դեպի Խիզան գետի հովիտը, որտեղ այժմ գտնվում են հետևյալ շրջանները՝ Խիզան, Կարկառ, Սպարկերտ և Մամրոտանք.

գ) Եղերովի լեռնանցք։ Գտնվում է Եղերով և Արտոս գագաթների միջև, որով այժմ կապ է պահպանվում Մոկսի (Մոկք) և Ոստանի միջև։ Լեռնանցքից քիչ հարավ սկիզբ է առնում Մոկս գետը, որի ավազանը համընկնում է Հին Հայաստանի Մոկաց աշխարհի՝ Առանձնակ Մոկք գավառի հետ.

դ) Գյոբանդաշի լեռնանցք։ Գտնվում է Արտոս գագաթի արևելյան կողմում։ Այդ լեռնանցքով անցնում է ճանապարհը Շատախի կողմերից դեպի Վանի շրջանը.

ե) Ճիլիճանի լեռնանցք։ Գտնվում է Արտոս և Լվավեր գագաթների միջև, որով անցնում է Նորդուզ—Վան ճանապարհը։ Հին և միջին դարերում նույն այդ Ճիլիճանի լեռնանցքով անցնող ճանապարհի շնորհիվ էր, որ կապ էր պահպանվում Անձևացիք գավառի և Վասպուրական աշխարհի միջև.

զ) հաջորդ լեռնանցքները գտնվում են Հայթաղ գագաթի արևմտյան և արևելյան կողմերում. վերջինը ճանապարհը Արևելյան Տիգրիսի վերնագավառից տանում է դեպի Ջուլամերիկ (նեստորական ասորիների կենտրոնը), իսկ առաջինը նույն Տիգրիսի վերնագավառից՝ դեպի Բաշկալայի կողմերը։

Եզրակացություն։ Հայկական լեռնաշխարհը բաղկացած է երկու խոշոր մասերից, որոնցից մեկը համապատասխանում է Արաքսի ավազանին և Քուռի վերնագավառին, իսկ մյուսը՝ Արևելյան ու Արևմտյան Եփրատների ավազաններին։ Լեռնաշխարհի զուգահեռական և միջօրեական ուղղություն ունեցող գլխավոր շղթաները մեծ մասամբ ձգվում են նշված մասերի եզրերով։ Լեռնաշղթաները որոշակի բաժանում են Հայկական լեռնաշխարհի մակերեսը առանձին ֆիզիկո-աշխարհագրական գավառների, որոնցից յուրաքանչյուրում զարգացել են կլիմայական, հողային և բուսական կյանքի ինքնատիպ պայմաններ։

Հայկական լեռնաշխարհում բավականին տարածություն են գրավում հարթությունները՝ լայնատարած լանջերը, դաշտերը, հովիտները և գոգավորությունները։ Այդ հանգամանքը նպաստում է տնտեսական կյանքի զարգացմանը։

Երկրի առանձին փակ գավառների մասնատված լինելը հին և միջին դարերում բավականին դժվարացրել է նրանց միջև փոխադարձ հաղորդակցությունը։

Ռելեֆի լեռնային բնույթի պատճառով երկրի կլիման, հողը, բուսականությունը, կենդանական աշխարհը ենթարկվում են ուղղաձիգ գոտևորման օրենքին։ Հայկական լեռնաշխարհում ֆիզիկո-աշխարհագրական երևույթները փոփոխվում են ոչ թե հյուսիս-հարավ ուղղությամբ, հասարակածից ունեցած հեռավորության համեմատ, այլ առավելապես ծովի մակարդակից ունեցած բարձրության տարբերության հետևանքով, շղթաների և առանձին լեռնազանգվածների ստորոտներից դեպի գագաթները, ներքևից դեպի վերև։

2. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհը հասարակածից գրեթե ունի նույն հեռավորությունը, ինչ որ Պիրենեյան և Ապենինյան թերակղզիները, Կորսիկա, Սարդինիա և Սիցիլիա կղզիներն ու Բալկանյան թերակղզին։ Տարվա ընթացքում նա ստանում է նույնքան ճառագայթային էներգիա, որքան նշված երկրները։ Թվում է, թե Հայկական լեռնաշխարհն իր կլիմայական պայմաններով շատ նման պետք է լիներ այդ երկրներին։ Սակայն երկրի բարձր լեռնային բնույթը, օվկիանոսներից ունեցած հսկայական հեռավորությունը, շրջապատում չոր տափաստանների առկայությունը և Սև ու Կասպից ծովերի մերձավորությունը Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմանների վրա թողել են իրենց առանձնահատուկ ազդեցությունը, այնտեղ առաջացնելով կլիմայական ուրույն պայմաններ, որոնք տարբերվում են նշված երկրների կլիմայական պայմաններից։ Այդ տարբերությունների կողքին նրանց կլիմայական պայմանների մեջ գոյություն ունի մի ընդհանուր գիծ՝ կլիմայի չորությունը, որը հատուկ է մերձարևադարձային գոտուն։

Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմանների ձևավորման մեջ ամենից կարևոր դերը խաղում է երկրի՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը։ Հայկական լեռնաշխարհի զանազան մասերը ծովի մակերևույթից ունեն 450—800 մետրից մինչև 4095 (Արագած)—5156 (Մեծ Մասիս) մետր բարձրություն, և նրանք արտահայտված են երբեմն լեռնալանջերի ու գագաթների, երբեմն էլ լեռնադաշտերի ձևով։ Հայտնի է, որ լեռնային երկրներում յուրաքանչյուր 200 մ բարձրանալիս տարեկան միջին ջերմությունն իջնում է 3ելսիուսի մեկ աստիճանով։ Հենց այդ է պատճառը, որ Վանի շրջակայքում և Արածանիի հովտում աճում են խաղողը, բամբակը, բրինձը, մինչդեռ նրանցից ոչ այնքան հեռու գտնվող լեռնային Սասունում անգամ ցորենն ու տարեկանը հաճախ չեն կարողանում նորմալ կերպով անցկացնել իրենց վեգետացիոն շրջանը։ Նույնպիսի հետևանքներ են տալիս նաև Արարատյան դաշտի ու նրա մոտ գտնվող Արագածի բարձրադիր լանջերի ջերմության տարբերությունները։ Այստեղ դարձյալ ծովի մակերևույթից ունեցած բարձրության հետևանքով առաջացած ջերմության տարբերության շնորհիվ է, որ երբ ցածրադիր մասերում (Արարատյան դաշտում, Արածանիի հովտում և ցածրադիր այլ շրջաններում) սկսվում է հացահատիկների հունձը, դեռ բարձրլեռնային շրջանները՝ Սյունյաց լեռնաշղթայի կատարները, Հայկական Տավրոսը և այլն դեռևս ազատված չեն լինում ձյան տակից։

Տեղի բարձրության հետ ավելանում են նաև մթնոլորտային տեղումները, սակայն մինչև որոշ բարձրություն, որից սկսվում են նորից նվազել։ Դա առաջանում է նրանից, որ օդի բարձր շերտերում բարեխառնությունը ցածր է, և լանջերից բարձրացող շրային գոլորշիները, արագ կերպով սառչելով, թափվում են անձրևի կամ ձյան ձևով։

Կլիմայական պայմանների այդ տարբերությունները առաջացնում են հողի և բուսական աշխարհի ուղղահայաց զոնայականություն, որոնք իրենց հերթին նույնպես ազդում են կլիմայի վրա։ Ուրեմն կլիման, հողերը և բուսականությունը Հայկական լեռնաշխարհում հանդես են գալիս ուղղահայաց գոտիներով։

Կլիմայական տարբերություններ են առաջ գալիս նաև ռելեֆի առանձնահատկություններից. այն է՝ լեռնաշղթաների ուղ-

զությունից, նրանց լանջերի դիրքից և այլն։ Հայկական լեռնաշխարհի լեռնաշղթաներն ունեն գլխավորապես հարավ-արևելյան (Փոքր Կովկաս), միջօրեական (Արևելյան-Սողանլուղ, Կոտուր և Զագրոշ) և զուգահեռական (Հայկական Պար, Հայկական Տավրոս) ուղղություններ։ Նրանցից հարավ-արևելյան և զուգահեռական ուղղություն ունեցողները թույլ չեն տալիս հյուսիսային և հյուսիս-արևելյան շոր և ցուրտ քամիներին թափանցելու դեպի երկրի խորքը։ Նրանք կանգնեցնում են նաև Կովկասի ձյունածածկ ու սառցապատ գագաթներից վար սահող ցուրտ օդը։ Իսկ միջօրեական ուղղությամբ ձգվող լեռնաշղթաներն արգելակում են Սև ծովից փչող խոնավ քամիների մուտքը դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասերը։

Լեռնալանջերից նրանք, որոնք ուղղված են դեպի հարավ, ստանում են համեմատաբար ավելի շատ ջերմություն, քան դեպի հյուսիս ուղղվածները, որովհետև առաջինները ենթարկված են արևի համեմատաբար ուղղահայաց ճառագայթների ներգործությանը։ Առաջանում է կլիմայի բավականին զանազանակերպություն դեպի հարավ և հյուսիս նայող լանջերի միջև։ Այդ հանգամանքն իր հերթին ազդում է նաև բուսական ծածկի վրա։ Սովորաբար անտառներն ավելի փարթամ են լինում դեպի հյուսիս թեքված լանջերի վրա։

Լեռների և դաշտերի մերձավորությունը, որը սովորական և նույնիսկ տիպական է Հայկական լեռնաշխարհի համար, պատճառ է դառնում մի շարք հետաքրքրական երևույթների, որոնք նկատվում են ամռանն ու ձմեռը։ Ամառը, լանջերի վրա, ցածրադիր մասերի հետ համեմատած, օդը սառը և ծանր է լինում, ուստի նա սահում է վար և բռնում ցածրադիր վայրերում տաքացած ու թեթևացած օդի տեղը, որն իր տեղը զիջելով նրան, վեր է բարձրանում։ Հայաստանի բոլոր դաշտերում կեսօրից հետո սկսում է փչել լեռնային քամին։ Այսպես. Արարատյան դաշտում ամառային սեզոնին Երևանի և Էջմիածնի վրայով ժամը երկուսից հետո փչում է Գեղամա և Ծաղկունյաց լեռների արանքով դուրս եկած քամին, որին բնակիչներն անվանում են «Լուսավորչի» քամի[1]։ Շիրակում Լենինականի վրայով գրեթե

[1] Տե՛ս Ստեփան Լիսիցյան, ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1940, էջ 74։ Լեո, Հայոց պատմություն, հ. Ա. Թիֆլիս, 1917, էջ 154։

օրվա նույն ժամերին փչում է խոնավ լեռներից եկող քամին, որին անվանում են «Կարախաչի քամի»։ Ախուրյանի ափերին, Անիից մինչև Մրեն և Բագարան փչում է Արագածի «Ծաղկավետ լանջերից սկիզբ առնող անուշաբույր, «մարմանդ» հովը»։

Ամառային սեզոնում նույնպիսի լեռնային քամիներ են առաջանում նաև Ալաշկերտում՝ Հայկական Պարի մերձավորության շնորհիվ, Մանազկերտի դաշտում՝ Ալա-դաղի (Ծաղկանց) լեռներից, Մուշում՝ Հայկական Տավրոսի և Նեմրութի մերձավորության հետևանքով և այլն։

Ձմռանը ցուրտ ու ծանր օդը, լեռնալանջերից ցած սահելով, լցվում է ցածրադիր գետահովիտներն ու դաշտերը և պարզկա երկնքի տակ երկար գիշերները ճառագայթարձակման շնորհիվ ուժեղ կերպով սառչում է, և հովիտներում հաճախ ջերմաստիճանները ավելի ցածր են լինում, քան լեռնալանջերին և լեռների բարձր մասերում։ Այդ երևույթը կոչվում է ինվերսիա, որը հատկանշական է Հայկական լեռնաշխարհի համար։ Նույն երևույթի արտահայտությունն են համարում այն, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան բարձրավանդակում ձմեռը լինում է սարսափելի սառնամանիքներ, մինչդեռ նրա սահմանները կազմող Հայկական Պարի, Իմերեթիան, խոնավ և այլ լեռների լանջերին օդը համեմատաբար տաք է լինում։

Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմանների վրա ազդող ներքին ազդակներից են նաև մակերևույթի բնույթը՝ նրա մերկ կամ բույսերով ծածկված լինելը։ Հայկական լեռնաշխարհում ցամաք տարածությունների համեմատությամբ ջրային տարածությունները չնչին են, հետևապես, նրանք շատ քիչ չափով են նպաստում օդի խոնավացմանը։ Անտառների տեսակետից Հայկական լեռնաշխարհը հարուստ չէ։ Անտառները տարածվում են գլխավորապես մերձսևծովյան շրջաններում, Փոքր Կովկասի հյուսիսային լանջերին և Բյուրակն-Մունձուրյան լեռների շրջանում։ Այդ շրջաններում անտառների շնորհիվ հողի և օդի խոնավությունը լավ է պահպանվում։

Խոնավությամբ աղքատ են մանավանդ Արածանիի հովիտը, Վանա լճի ավազանն ու Արարատյան դաշտը։ Արարատյան դաշտի այն մասը, որ պատկանում է Հայկական ՍՍՌ-ին և Նախիջևանի ԱՍՍՌ-ին, հողում բավարար քանակությամբ խոնավությու-

նը պահպանելու համար նախատեսված է և հաջող իրագործվում է դաշտապաշտպան անտառաշերտեր ստեղծելու հարցը։ Ըստ այդ նախագծի, Հայկական ՍՍՌ-ի էջմիածնի, Աշտարակի, Հոկտեմբերյանի, Արտաշատի և այլ շրջանների դաշտերում տնկվում է հարյուրավոր հեկտար արհեստական անտառ, որը խոշոր չափով նպաստելու է խոնավության պահպանմանը։

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վրա զգալի ազդեցություն ունեն նաև Սև և Կասպից ծովերը և հարևան լեռներն (Մեծ Կովկասը) ու շոր տափաստանները՝ Մերձկասպյան տափաստանը, Իրանական սարահարթը, Միջագետքը, Փոքր Ասիայի (Անատոլիայի) բարձրավանդակը։

Սև և Կասպից ծովերը, մանավանդ առաջինը, ընդհանուր առմամբ խոնավաբեր ազդեցություն են թողնում Հայկական լեռնաշխարհի վրա։ Սև ծովի ազդեցությունը ուժեղ կերպով զգացվում է լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան (Արևմտյան Եփրատի հովիտ, Արաքսի վերնագավառ) և Հյուսիսային (Լոռի լայն իմաստով, Անդրկովկասի հրաբխային բարձրավանդակ և այլն) շրջաններում, որի հետևանքով տեղումների քանակն այդ շրջաններում հասնում է 600—1000 մմ, այն դեպքում, երբ Սև ծովի խոնավ գոլորշիներից Արարատյան դաշտն ստանում է աննշան քանակություն. Հոկտեմբերյանում՝ 266 մմ, Երևանում՝ 312 մմ, Կողբում՝ 237 մմ և այլն։ Սև ծովի համեմատությամբ, Կասպից ծովի ազդեցությունն ավելի փոքր մասշտաբի է։ Կասպից ծովից եկող խոնավությունը Հայկական լեռնաշխարհում նկատվում է Մրղուզի, Սևանա (Շահ-դաղ), Բաբաքարի և Զանգեզուրի (Սյունյաց) լեռների լանջերին։

Իրանական սարահարթն ու Անատոլիական (կամ Փոքր Ասիա) բարձրավանդակը, ինչպես և Մերձկասպյան տափաստանը, Հայկական լեռնաշխարհի կլիման, ընդհանուր առմամբ, դարձնում են ավելի չոր և տաք։

Պետք է նկատել, որ Հայկական լեռնաշխարհն ընդհանրապես տեղումներով ավելի հարուստ է, քան Իրանական սարահարթը, Անատոլիական բարձրավանդակը և Միջագետքի երկրները։

Սակայն, Հայկական լեռնաշխարհի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է։ Նրա ցրտության կենտրոնը ձմեռվա ընթացքում Կարսի շրջանն է, որն իր հերթին սառեցնում է նաև հարևան շրջանների օդը։ Ամառվա ընթացքում, ընդհակառակը, լինում է շոգ՝ մանավանդ Արարատյան դաշտում ու Արածանիի հովտում։

Հայկական լեռնաշխարհի խստաշունչ և դաժան ձմեռը նկարագրված է թե՛ օտարազգի և թե՛ մեր սեփական պատմիչների կողմից։ Այսպես, Տակիտոսը հայկական ձմեռն անվանում է «դժնդակ», Ստրաբոնը պատմում է, որ հյուսիսային Հայաստանի լեռներում ձյունն այնքան առատ է լինում և բուքն այնքան սաստիկ, որ ճանապարհորդները հաճախ թաղվում են ձյան հոսքի տակ։ Հայաստանի ձմեռը նկարագրել է նաև Քսենոֆոնը, որը 401—400 թթ. (մ. թ. ա.) ձմեռը, 10 000 հույն զորքի գլուխն անցած, Կունակսայի անհաջող ճակատամարտից հետո Հայաստանի վրայով վերադառնում էր հայրենիք՝ Հունաստան։ Նրա հիշատակության համաձայն, հունական զորքերը, սաստիկ ցրտի պատճառով, շատ տառապանքներ քաշեցին, ցրտահարվեցին զգալի թվով մարդիկ և անասուններ[1]։ Սարսափով է հիշատակում Հայաստանի դաժան ձմեռվա մասին հռոմեական պատմագիր Պլուտարքոսը, որն անգամ անհաջող փորձ է կատարում հայկական սաստիկ ցրտերով ու սառնամանիքով բացատրել՝ Տիգրան Բ-ի կողմից հռոմեական զորավար Լուկուլլոսի կրած պարտությունը (68 թ. մ. թ. ա.)[2]։

13-րդ դարի հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը սաստիկ ցրտերով և բքերով է մեկնում Սյունիքի դավառներից մեկի՝ Սոթքի անունը («Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910 թ., էջ 12—«Սօթից գաւառ, որ սակս հանապազորդեան բքոց և դառնաշունչ օդոցն կոչեցաւ Սոթք»)։ Պակաս դաժան չէ ձմեռը նաև Հայաստանի հարավային կողմերում՝ Տավրոսյան լեռների շրջանում։ Սասունցիները երկարատև ձմեռվա ընթացքում ձյան ահագին կույտերի վրա մարդ գալու համար գործ էին ածում փայտից պատրաստած մի տեսակ ոտնամաններ, որը պատրաստում էին իրենք։ Մեր հին գրականության մեջ կան հիշատակություններ

---

1 Տես Լեո, Հայոց պատմություն, հ. Ա. Թիֆլիս, 1917, էջ 152։

2 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., Երևան, 1944, էջ 219—221։

Բիթլիսի (Բաղեշ) կողմերում ձյան մեծ հոսքերի մասին։ Հայկական Տավրոսին հարավից կպած Մոկաց աշխարհի ձմռան մասին Արծրունյաց նախարարական տան պատմիչ Թովմա Արծրունին գրում է. «Զիմնապատ սառնասոյր առհասարակ պաղեալ էր երկրին»[1]։

Հայկական լեռնաշխարհում տեղումներն անհավասարաչափ են բաշխված։ Ամենից առատ տեղումներ ստանում են, ինչպես քիչ առաջ ասացինք, Բյուրակն-Մունձուրյան լեռների շրջանը, Արևմտյան Եփրատի հովիտը, Ճորոխ գետի ավազանը, Անդրկովկասի հրաբխային բարձրավանդակը և Լոռին։ Համեմատաբար առատ են տեղումները Մրզուզի, Սևանի, Զանգեզուրի և Տավրոսյան լեռների բարձրադիր լանջերին։ Առհասարակ, որպես կանոն, լեռնային բարձր շրջաններում տեղումները համեմատաբար առատ են և գոլորշիացումը թույլ, ուստի այդպիսի վայրերում արհեստական ոռոգման կարիքը քիչ է զգացվում, կամ նույնիսկ ավելորդ է։

Միանգամայն այլ է դրությունը ցածրադիր վայրերում՝ գետահովիտներում և դաշտերում, որպիսիք են Մերձարաքսյան կամ Արարատյան դաշտը, Արածանիի հովիտը, Վանա լճի ավազանը և այլն։ Այս շրջանները, որոնք կազմում են լեռնաշխարհի մեծ մասը, և հանդիսացել են հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական կյանքի կենտրոններ, սառանում են չափազանց քիչ քանակությամբ մթնոլորտային տեղումներ, այնպես որ առանց արհեստական ոռոգման այդ վայրերում գրեթե անկարելի է աճեցնել որևէ կուլտուրա։ Նկատի ունենալով մթնոլորտային տեղումների սակավությունը, հնագույն ժամանակներից սկսած մարդիկ շատ թե քիչ չափով հոգ են տարել տեղումներով աղքատ այդ շրջաններում ոռոգման ցանց ստեղծելու համար։ Առուներ են անցկացվել դեռևս ուրարտական շրջանում։ Այսպես, ուրարտական Մենուա թագավորն (810—778 թթ. մ. թ. ա.) իր պետության մայրաքաղաք Տուշպայի (այժմ Վան) բնակչությանը խմելու ջրով ապահովելու և, ամենից կարևորը, նրա շուրջն ընկած չոր տարածությունները ոռոգելու համար անց է կացրել մի առու, որի կառուցումը մեր մատենագրության մեջ կապում են ասորական կիսառասպելական թագուհի Շամիրամի անվան հետ։ Այդ

[1] Տես Լեո, Հայոց պատմություն, հ. Ա., Թիֆլիս, 1917, էջ 153։

պատճառով էլ Մենուայի կառուցած առուն, որ մինչև օրս էլ գոյություն ունի և գործում է, ժողովուրդն անվանում է Շամիրամի ջուր կամ Շամիրամի առու (թյուրքերեն՝ «Շամիրամ-սու»)։

Շամիրամի առուն սկսվում է Խոշաբ գետից հարավ, Հայկական Տավրոսի հյուսիսային լանջերից և ուղղվում է դեպի հյուսիս։ Նա կամուրջով անց է կացված Խոշաբի վրայով[1]։ Խոշաբից դեպի հյուսիս, մի քանի գյուղերի և ավանների շրջակայքը ոռոգելուց հետո, Շամիրամի առուն հասնում է Վան քաղաքի ուրարտական պարսպի մոտ և նրանից քիչ ներքև թափվում Վանա լճի (Բզնունյաց ծով) մեջ։ Առուն իր ամենաջրասակավ ժամանակ վայրկյանում տալիս է ավելի քան 1500 լիտր ջուր։ Վան քաղաքից մինչև առվի ակունքն ուղիղ գծով 70 կմ է, բայց ընդհանուր երկարությունը, հաշվելով նրա կորությունն ու զիգզագները, հասնում է 80 կմ-ի։ Մենուայի կառուցած այդ առուն անգամ այժմ հիացմունք է պատճառում թե՛ հասարակ դիտողին և թե՛ մասնագետ ճարտարապետին։ Նա ուրարտական շինարարական արվեստի փայլուն նմուշն է, որը երկարաձիգ դարերի ընթացքում պահպանել է իր գոյությունը։ Նրա հոսանքի ուղղությամբ մի քանի տեղերում, ժայռերի վրա գետեղված են ուրարտական արձանագրություններ[2]։ Այժմ, չնայած գործում է Շամիրամի առուն, այնուամենայնիվ Վան քաղաքի շրջակայքը և նրանցից հարավ ընկած տարածությունները խոպանացած են՝ վերածվելով չոր ու անպտուղ տարածությունների։

Ենթադրվում է, որ ուրարտական շրջանում առուներ են հանվել նաև Մանազկերտում, Ալաշկերտում, Արմավիրի (ուրարտական շրջանում կոչվում էր Արգիշտիխինիլի) և Այղրը լճի մոտերքում։ Հրազդանից հանված էր մի առու, որը թունելով անցնում էր դեպի էջմիածնի դաշտը։

Հետագա դարերում, հայ ժողովրդի պատմության հին և միջին շրջանում, ոռոգման նպատակներով առուներ են կառուցվել նաև Արարատում, Վանա լճի ավազանում, Արածանիի հովտում, Զանգեզուրում և այլուր։ Ստեփանոս Օրբելյանի հիշատակության համաձայն 10-րդ դարում Տաթևի վանականները վանքապատկան

[1] Խոշաբ գետից մինչև Շամիրամի առվի ակունքն ուղիղ գծով հինգ կմ է։
[2] Տես «Հանդես ամսօրյա», 1893 թ., էջ 84—85։

Ցաքուտ վայրը (որը գտնվում է Տաթևի վանքի դիմաց, Որոտան գետի ափին) ոռոգելու համար ժայռերի և դժվար անցանելի տեղերով առու են փորում և Վարարակի ջուրը բերում հասցնում են այդ վայրը՝ այն վերածելով այգիների։

Մարդիկ իրենց այդ գործունեությամբ ահագին փոփոխություններ են առաջացրել կլիմայական և առհասարակ երկրի բնական պայմանների մեջ։ Մի դեպքում նրանք անխնա կտրատելով անտառները որոշ շրջաններ դարձրել են լերկ ու անպտուղ, իսկ մյուս դեպքում հանել են առուներ, կառուցել են արհեստական ջրամբարներ, տնկել են պուրակներ և այլն, որոնց շնորհիվ միաժամանակ ավելի բարենպաստ են դարձրել երկրի այս կամ այն փոքրիկ շրջանի բնական պայմանները։ Մոնղոլական տիրապետության շրջանում շոր ու անպտուղ դարձավ Անդրկովկասի այդ թվում և Հայաստանի զգալի մասը։ Հետագա դարերում թյուրքական և պարսկական դաժան լծի տակ գտնվող ժողովուրդը հնարավորություն չստացավ գոնե մինիմալ չափով ստեղծել ոռոգման ցանց, և անբերրիությունն ու սովն այդ դարերում դարձել էին մեր ժողովրդի մշտական ուղեկիցները։

Ըստ իս, Հայկական լեռնաշխարհի կլիման նշանավոր է իր բազմազանությամբ։ Այնտեղ կլիմայի փոփոխությունները մեծ մասամբ տեղի են ունենում ըստ բարձրության։

Հայկական լեռնաշխարհում ըստ բարձրության կարելի է տեսնել կլիմայական զոնաների ուղղաձիգ հերթափոխություն՝ սկսած շոր մերձարևադարձային զոնայից և վերջացրած լեռնային տունդրայի զոնայով։ Ընդհանուր առմամբ, Հայկական լեռնաշխարհում ձմեռը լինում են խիստ ցրտեր, իսկ ամառը՝ շոգեր։ Տեղումները չնայած հարևան Մերձկասպյան տափաստանի, Իրանական սարահարթի, Միջագետքի և Անատոլիական բարձրավանդակի համեմատությամբ առատ են, այնուամենայնիվ նրանք թափվում են գերազանցապես ծայրամասային շրջաններում, իսկ կենտրոնական մասերը՝ Արարատյան դաշտը, Արածանիի հովիտը, Վանա լճի ավազանը և այլ շրջանները ունեն շոր կլիմա, և առանց արհեստական ոռոգման գրեթե անհնար է այդ մասերում գյուղատնտեսական որևէ կուլտուրա աճեցնել։ Դրա պատճառով էլ մար-

դիկ հնագույն ժամանակներից սկսած որոշ քայլեր են կատարել ոռոգման ցանց ստեղծելու ուղղությամբ[1]։

3. ՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Լճերը։ Հայկական բարձրավանդակին առանձնահատուկ տեսք են տալիս լեռնային լճերը, որոնց մի զգալի մասն ունի հրաբխային ծագում, իսկ մյուս մասը նախկին ջրային խոշոր ավազանների մնացորդներ են։ Փոքր թիվ չեն կազմում Հայկական լեռնաշխարհում նաև անհետացած լճերը։ Երբեմնի լճի հատակներ են, ինչպես պարզել են երկրաբանները, Զանգեզուրի լեռնադաշտը, Արաքսի հովիտը, Ալաշկերտի դաշտը, Մուշի դաշտը, Երզրումի դաշտը և այլն։

Հայկական բարձրավանդակի լեռներում եղած անթիվ լճերի մեջ իրենց մեծությամբ և նշանակությամբ առաջնակարգ են հատկապես երեքը՝ Սևանը, Վանա լիճը և Ուրմիայի լիճը։

Սևանա լիճը (հնում՝ Գեղամա լիճ, Գեղարքունյաց ծով) աշխարհի լեռնային ամենամեծ և ամենաբարձր լճերից է։ Նրա բարձրությունը ծովի մակերևույթից 1916 մ է, մակերեսը հավասար է 1416 քառ. կմ-ի։ Նորատուս և Արդանիշի հրվանդաններով Սևանա լիճը բաժանված է երկու անհավասար մասի՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան։ Հյուսիս-արևմտյան մասն ավելի փոքր է, նրա մակերեսը 384 քառ. կմ է, իսկ հարավ-արևելյանն ընդարձակ է, նա ունի 1032 քառ. կմ մակերես։ Հարավ-արևելյան մասում միջին խորությունը 36 մ է (ամենախոր տեղում 47,5 մ), իսկ հյուսիս-արևմտյան մասի խորությունն ավելի մեծ է։ Այս մասում նրա միջին խորությունը 45,4 մ է, իսկ Սևանա կղզուց ոչ հեռու հասնում է 95 մ, և սա նրա ամենախոր տեղն է։ Լճի ջուրը, որ զարմանալիորեն ջինջ է, իր մեջ պարունակում է մագնեզիտ, որի հետևանքով եզրերի քարակույտերն ու ժայռերը պատած են սպիտակ շերտով։

Նորագույն հետազոտողների կարծիքով Սևանա լճի հյուսիս-արևմտյան մասը՝ Փոքր Սևանն առաջացել է տեկտոնիկ ուժերի ազդեցության տակ երկրաբեկորն իջնելու շնորհիվ, իսկ հետա-

---

1 Ջրի պաշտամունքը, որը բավականին լայն տարածում ուներ Հայերի մեջ, համարում են ոռոգման անհրաժեշտության վերապրուկը։

գալում Գեղամաղանի լավանները, դուրս ժայթքելով հնում ավելի առատաջուր Հրազդանի (Զանգու) բխման ընդարձակ հովտում, առաջացրել են նոր ամբարտակ՝ Մեծ Սևանը։

Մի ժամանակ, անշուշտ, լճի մակարդակը ավելի բարձր է եղել։ Այդ չափազանց պարզորոշ երևում է Սևանը շրջապատող հյուսիսային և հյուսիս-արևելյան շղթաների լանջերին, որտեղ որոշակի արտահայտված են մակերեսների քանդած կանոնավոր աստիճանները։ Չնայած լճի ավազանում ձմեռը լինում է խստաշունչ, այնուամենայնիվ նա շատ սակավ է ամբողջովին սառչում (Սևանա լիճը ամբողջովին սառչել է, օրինակ՝ 1906, 1920, 1925, 1949 թթ.)։ Գարնանն ու աշնանը լճի ջրերը քամիների պատճառով ալեկոծվում են, իսկ ամառը՝ հայելանման հանդիստ են լինում։

Սևանա լճի մեջ թափվում են մոտ 29 գետ և գետակ։ Դրանցից ամենանշանավորներն են.

Գավառագետը, որն սկիզբ է առնում Գեղամա կենտրոնական մասից և, անցնելով Նոր Բայազեդի մոտով, թափվում է լիճը։

Բախտակ գետը սկիզբ է առնում նույն շղթայի հարավային մասից և լճի մեջ է թափվում Մարտունուց հյուսիս-արևմուտք։

Արգիճի (Այրիջա), կազմվում է Արգիճի բարձրավանդակի վրայով հոսող Արևմտյան, Միջին և Արևելյան Արգիճի գետերից և լճի մեջ է թափվում Մարտունու մոտ։

Վարդենիս գետը սկիզբ է առնում Վարդենիս լեռների ստորոտներից և լճի մեջ է թափվում Վարդենիս գյուղի մոտ։

Մասրիկի գետը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռների տակից և կտրելով Մասրիկի դաշտը, թափվում է Սևանի մեջ։

Լճի հյուսիս-արևմտյան անկյունում նրա մեջ է թափվում Զրկնագետը։

Լճից դուրս է գալիս միայն մի գետ՝ Հրազդանը (Զանգուն)։

Այժմ Հրազդանի հունը ելման տեղում խորացված է և փորված է նաև կողմնակի օժանդակ առու՝ գետի ջրի քանակն ավելացնելու և կանոնավորելու միջոցով նոր կառուցվող հսկա հիդրոէլեկտրակայաններին անհրաժեշտ քանակությամբ ջուր մատակարարելու և ոռոգման նպատակների համար։ Լճի մակերեսը ձյան հալոցքի և գարնանային անձրևների ժամանակ (մայիսին) բարձրանում է, իսկ նրանից հետո սկսում է իջնել։ Մակերեսի տատանումներ են նկատվում նաև պարբերաբար երկար տարիների ընթացքում, ինչպես այդ տեղի է ունենում Վանա և Ուրմիո լճերում։ Սևանա լճի ջուրը քաղցրահամ է։ Այնտեղ ապրում են բազմաթիվ ձկներ, որոնց մեջ առանձնապես գովված են Իշխան ու Գեղարքունի տեսակները։

Սևանա լճի հյուսիս-արևմտյան մասում, ափից մեկ կիլոմետր հեռու, գտնվում է Սևանա փոքրիկ կղզին, որտեղ պահպանված են միջնադարյան վանքի ավերակները։ Այժմ կղզու վրա տեղավորված են հանգստյան տներ։

Կղզին, ինչպես և ծովեզրյա գյուղերն իրար հետ հաղորդակցությունը դարեր շարունակ պահպանում էին միայն լաստերով և պրիմիտիվ ձկնորսական նավերով։ Այժմ հաստատված է կանոնավոր շոգենավային երթևեկություն։ Սևանա լիճը որոշ տնտեսական նշանակություն է ունեցել նաև հին ու միջին դարերում։ Այնտեղ որսացվել է մեծ քանակությամբ ձուկ, եղել է պրիմիտիվ նավագնացություն։

Ներկայումս շատ մեծ է Սևանա լճի տնտեսական նշանակությունը։ Այդ հսկայական ջրային ռեսուրսների բազայի վրա է հենված Սևան-Զանգու կասկադի կառուցման պլանը։ Ըստ այդ պլանի, որն այժմ հաջողությամբ իրականացվում է, Սևանա լճից արհեստական եղանակով բաց թողնվող հորդահոս ջրերով պետք է գործի դրվեն մի քանի հզոր հիդրոկայաններ, որոնց տված էլեկտրաէներգիան Հայկական ՍՍՌ-ի բոլոր ճյուղերը կենթարկի էլեկտրիֆիկացիայի։ Նրանք միաժամանակ ոռոգելու են Արարատյան դաշտավայրի ընդարձակ տարածությունները։

Վանա լիճը (հնում՝ Տոսպա լիճ, Բզնունյաց ծով, Խլաթի լիճ, Ռշտունյաց լիճ) գտնվում է Հայկական լեռնաշխարհի հարավային մասում։ Նրա բարձրությունը ծովի մակերևույթից 1720 մ է, տարածությունը 2974 քառ. կմ։ Նրա մեջ թափվում են մի շարք գետեր, որոնցից նշանավոր են Խոշաբը, որը լճի մեջ է թափվում Վան քաղաքից հարավ, Մարմետը, որն սկիզբ է առնում Կոտոր լեռնաշղթայի արևմտյան ստորոտներից և, իր վերին հոսանքում ճահիճներ առաջացնելուց հետո, ուղղվում է դեպի արևմուտք ու թափվում լճի մեջ՝ Վան քաղաքից հյուսիս-արևմուտք։ Բերկրի կամ Բանդիմահի գետ, սկսվում է Թոնդուրեկ

գագաթի հարավային լանջերից և Բերկրի քաղաքից քիչ անց թափվում է լճի մեջ՝ նրա հյուսիս-արևելյան անկյունից։

Վանա լիճը հանդիսանում է երբեմնի մեծ ջրային ավազանի մնացորդ։ Նա փակ լիճ է՝ նրանից դուրս չի գալիս ոչ մի գետ։ Այդ պատճառով էլ ջուրն աղի է։ Վանա լճի ջուրն իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ բորակ։ Լճի մակերևույթն այժմ էլ աստիճանաբար բարձրանում է և ընդարձակվում։ Ջուրը հետզհետե ցամաքից նվաճում է նորանոր մասեր։ Այսպես. լճի ընդարձակման պատճառով հին Արճեշ քաղաքը, որը գտնվում էր հյուսիս-արևմտյան ափին, այժմ անցել է ջրի տակ, հետզհետե փոքրանում է Վան քաղաքի և լճի հայելու միջև եղած տարածությունը, ուստի բնակիչներն ստիպված են լճափից հեռանալ դեպի ցամաքի ներսը՝ իրենց դաշտերը թողնելով ընդարձակվող լճի ջրին։

Ձկներով այնքան հարուստ չէ։ Նրա մեջ հաջող կերպով բազմանում է ձկան մի տեսակը, որը հայտնի է «տառեխ» անունով։ Հին և միջին դարերում «տառեխը» որսվում է, աղ դնելուց կամ չորացնելուց հետո, արտահանվում էր օտար երկրներ։ Այնտեղ նույնիսկ գոյություն ուներ արքայական հատուկ ձկնորսարան, որը գտնվում էր հյուսիս-արևելյան ափին։ Ժամանակի տեսակետից մեծ էր Վանա լճի դերը նաև նավագնացության համար։ Լճափին ընկած քաղաքները՝ Վանը, Ոստանը, Խլաթը, Արճեշը, Բերկրին պրիմիտիվ նավագնացությամբ կապվում էին իրար հետ։

Վանա լճի մեջ կան մի շարք կղզիներ, որոնցից նշանավոր են՝ հյուսիսային մասում՝ Լիմը և Կտուցը, իսկ հարավում՝ Ոստան քաղաքի դիմաց՝ Արտերն ու միջնադարյան հուշարձաններով հարուստ Աղթամարը։

Ուրմիո լիճը (հնում Կապուտան ծով) հին Հայաստանի ամենամեծ ջրային ավազանն է։ Գտնվում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան մասում։ Նա ունի 1330 մ բարձրություն, մակերեսը 5775 քառ. կմ է։ Հանդիսանում է հին ծովի մնացորդ։ Արտահոսք չունի, ջրերը սաստիկ աղի են, զուրկ է ձկներից։ Չնայած իր մեծությանը, խորությունն աննշան է՝ 4—5 մ, իսկ ամենախոր տեղում՝ 15 մ. հյուսիսային ափերին առաջացրել է լայնատարած ճահիճներ։ Գրեթե կենտրոնական մասում ցրված են բազմաթիվ կղզիներ, որոնցից շատ թե քիչ նշանավոր են այժմ Էշակ և Կոյուն կոչվող կղզիները։

Ուրմիայի մեջ թափվող բազմաթիվ գետերից նշանավոր են հետևյալները.

Աջի-չայը, որը սկիզբ է առնում Սավալան և Ազբուզ լեռների կազմած թամբոցից և հոսում է դեպի արևմուտք՝ Շահի կոչվող թերակղզու մոտ թափվելով լճի մեջ։ Նա իր միջին և ստորին հոսանքների շրջանում առաջացնում է ճահիճներ։

Զուբա-չայ կամ Սալմաստի գետը սկիզբ է առնում Զաղրոշի լեռների հյուսիսային մասի լանջերից և, ձախ կողմից իր մեջ ընդունելով Դիլման վտակը, թափվում է լճի մեջ՝ նրա հյուսիս-արևմտյան անկյունում։

Նազլու-չայը սկիզբ է առնում Զաղրոշի լեռներից և լճի մեջ է թափվում Շահի թերակղզու դիմաց՝ արևմտյան ափից։

Հին և միջին դարերում Ուրմիո լիճն ըստ երևույթին շատ քիչ տնտեսական նշանակություն է ունեցել, որովհետև նա ծանծաղ է և ձկներից զուրկ։ Բայց դրան հակառակ նա խոշոր նշանակություն է ունեցել ստրատեգիական առումով։ Գտնվելով Հին Հայաստանի հարավ-արևելյան սահմանագլխին, Ուրմիո լիճ այդ մասում խափանել է արևելքից եկող օտար նվաճողների մուտքը դեպի Հայկական լեռնաշխարհը։

Հայկական լեռնաշխարհի մյուս, անհամեմատ ավելի փոքր, լճերից են Զլգրի լիճը (Ծովակ Հյոնսիսո)՝ Զլգրը լեռների շրջանում, Արփի լիճը՝ Ախուրյան գետի ակունքում, Այղր լիճը՝ Արագածից հարավ, Մեծ և Փոքր Ալագյոլները՝ Վարդենիս և Զանգեզուր լեռնաշղթաների ստորոտին, Բալըզ-գյոլը (Գայլատու)՝ Հայկական Պարի Սինակ գագաթի մոտ, Արճակի լիճը՝ Վանա լճից արևելք, որի մեջ է թափվում Մեհմեդիկ-չայ գետը, Նազիկ լիճը՝ Վանա լճից արևմուտք, Գյոլջիկի լիճը (Ծովք)՝ Հայկական Տավրոսի արևմտյան մասում և հազարավոր այլ ավելի փոքր լճակներ, որոնք ցրված են Զանգեզուրի, Գեղամայի, Հայկական Պարի, Արագածի, Բինգյոլի (Բյուրակն), Հայկական Տավրոսի, Նեմրութի և այլ լեռնային շրջաններում։

Սևանից, Վանից և Ուրմիայից բացի, մնացած լճերը տնտեսական ավելի փոքր նշանակություն են ունեցել։ Նրանց մեջ անհամեմատ տնտեսական մեծ նշանակություն է ունեցել հատկա-

պես Այղրը լիճը. նրանից հանված առուներով հնագույն ժամանակներից ի վեր ոռոգել են բավականաչափ հողային տարածություններ։

Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ Հայկական լեռնաշխարհում պատմական ժամանակներում եղել են մի քանի այնպիսի լճակներ, որոնք այժմ գոյություն չունեն, ցամաքել են, օրինակ՝ Սյունյաց իշխանանիստ Շաղատ ավանի (այժմ գյուղ՝ Հայկական ՍՍՌ-ի Սիսիանի շրջանում) մոտ, Երզրում (Կարին, Թեոդոսուպոլիս) քաղաքի մոտ և այլն։ Կարելի է ենթադրել, որ այդպիսի լճերը կամ եղել են շատ ծանծաղ, կամ թե ուղղակի՝ ճահիճներ, որի պատճառով էլ ցամաքել են։ Կային նաև արհեստական մի քանի ջրամբարներ և լճակներ Արագածի փեշերին և այլուր։

բ) Գետեր։ Հայկական բարձրավանդակը, մեծ մասամբ ունենալով հրաբխային-լեռնային ռելեֆ, հարուստ է սառնորակ աղբյուրներով և գետերով։ Սառնորակ աղբյուրներով առանձնապես աչքի են ընկնում Արաքսի վերնագավառն ու Արևմտյան Եփրատի ավազանը։ Վերջինս, որ գրեթե համընկնում է 7-րդ դարի (մ. թ.) «Աշխարհացույցի» մեջ նկարագրված Բարձր Հայքին, հնում իր պաղ ու վճիտ ջրերով այնքան է հանրահայտ եղել, որ տեղիք է տվել մի կիսաավանդական պատմության։ Աղբյուրներով պակաս նշանավոր չեն Անդրկովկասի հրաբխային բարձրավանդակը, Զանգեզուրը, Արագածը, Գեղամա լեռները և լեռնային ուրիշ շատ շրջաններ։

Հայկական լեռնաշխարհից սկսվող գետերը ըստ ավազանների բաժանվում են չորս խմբի՝ դեպի Սև ծով (Եվքսինյան Պոնտոս) հոսող գետեր, Պարսից ծոց հոսող գետեր, Կասպից ծով հոսող գետեր և ներքին ավազանները (երկրի ներսի լճերը) թափվող գետեր։ Վերջին խմբին պատկանող գետերի մասին արդեն ասվեց լճերի մասին խոսելիս։

Դեպի արտաքին ավազանները (Սև ծով, Պարսից ծոց, Կասպից ծով) հոսող բոլոր խոշոր (կամ մայր) գետերն սկիզբ են առնում Բարձր Հայքի (գրեթե համընկնում է այժմյան Երզրումի վիլայեթին) կամ բուն տերիտորիայից, կատ թե՝ նրան շրջապատող լեռների լանջերից։

Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող և դեպի Սև ծով

հոսող գետերից են Ճորոխը (երկարությունը 345 կմ, հնում՝ Վոհ, Ակամսիս), որն սկսվում է Անտիպոնտական լեռների լանջերից, Օվաջիկ շրթայի տակից։ Սկզբում հոսում է դեպի արևմուտք և, Բայբուրդ (Բայբերդ) քաղաքի շրջանում կազմելով մի աղեղ՝ ուղղվում է, նախ՝ դեպի հյուսիս-արևելք, ապա՝ ուղիղ դեպի հյուսիս ու թափվում Սև ծովը։ Աջ կողմից Ճորոխն իր մեջ է ընդունում Օլթի գետը յուր Թորթում վտակով։ Վերջիններիս ավազաններում և Ճորոխի միջին հոսանքի շրջանում էր տարածվում «Աշխարհացույց»-ի մեջ նկարագրված նահանգներից («աշխարհ»-ներից) մեկը՝ Տայքը։

Հայկական լեռնաշխարհի արտաքին եզրերից է սկիզբ առնում Խարշոտ կամ Խորշատ գետը, որի հովտում (վերին հոսանքի շրջանում) գտնվում են Գյումուշխանեի (հնում՝ Արգիրոկաստրոն) արծաթի հայտնի հանքերը։ Խորշատից հարավ-արևմուտք Կելկիտ (հնում՝ Գայլ գետ, հունարեն՝ Լուկոս) գետն է, որ սկիզբ է առնում Անտիպոնտական լեռների արևմտյան լանջերից և, ծովից ոչ հեռու միանալով Էշիլ-իրմակ գետի հետ, թափվում է Սև ծով։ Էշիլ-իրմակից հարավ, Անտիպոնտական լեռների արևմտյան սառրոտներից, սկիզբ է առնում Կզըլ-իրմակ գետը (հնում՝ Ալյուս կամ Հալիս), որը Հայկական լեռնաշխարհից դեպի Սև ծով հոսող գետերի մեջ ամենից երկարն ու ջրառատն է։ Կելկիտի (Գայլ գետի) ավազանում և Կզըլ-իրմակի վերին հոսանքում հնում տարածվում էր Փոքր Հայքը։

Դեպի Պարսից ծոցը Հայկական լեռնաշխարհից հոսում են երկու գետ՝ Եփրատը և Տիգրիսը։ Եփրատը (երկարությունը 2700 կմ, Հայաստանի մասում՝ 800 կմ) կազմվում է երկու ճյուղից՝ Արևմտյան, Ֆրատ կամ Կարա-սու (հայերեն՝ Սև ջուր) և Արևելյան կամ Մուրադ-չայ, որը հնում հայտնի էր Արածանի անունով։ Արևմտյան Եփրատը (երկարությունը 500 կմ) սկսվում է Դյումլու լեռների (հն.՝ Ծաղկավետ) հարավային լանջերից։ Նրա ակունքում կազմվել են մի քանի ավազաններ, որոնց մեջ հավաքվում է գետնից բխող վերին աստիճանի սառը ու վճիտ ջուրը։ Այստեղ գեռ նա մի լեռնային աղբյուր է, որը հնում տեղացիների մոտ հանդիսացել է պաշտամունքի առարկա։ Այդ աղբյուրն այնքան հորդաբուխ է, որ, ավազանից դուրս գալով, անմիջապես կազմում է հինգից-վեց ոտնաչափ լայնություն ունեցող մի գետակ. նա

հանդարտ իջնում է դեպի հարավ, աջ և ձախ կողմերից իր մեջ ընդունելով բազմաթիվ աղբյուրներ։ Հասնելով Էրզրումին (Կարին), նրա ընթացքն ավելի է դանդաղում։ Այստեղ նա առաջացնում է բավականին ընդարձակ ճահիճներ, որոնք մեր հին մատենագրության մեջ կոչվում են «Շամբ Կարնոյ»։ Ջուրը պղտոր է և, հավանաբար, հենց այդ պատճառով է, որ նա ստացել է իր Կարա-սու (Սև ջուր) անունը։ Էրզրումի մոտ նա թեքվում է դեպի արևմուտք և, շատ չանցած, աջ կողմից իր մեջ ընդունում է Սերչեմ-սու գետը, որը սկիզբ է առնում Օվաջիղի լեռների տակից և, ոռոգելով նույնանուն նեղ ու երկար դաշտը, հասնում է Եփրատին։ Սերչեմ-սուն ընդունելուց հետո, գետը շարունակում է հոսել Շողանի ձորով՝ արևմտյան ուղղությամբ, ապա շեշտակի թեքվում է դեպի հարավ և մտնում Դերջանի դաշտը։ Այստեղ ձախ կողմից նա իր մեջ է ընդունում Տուզլու-սու գետը։ Տուզլուի գետաբերանից հարավ Կարա-սուն նորից է ընդունում արևմտյան ուղղություն և, շարունակ քսվելով Բյուրակն-Մունձուրյան լեռնաշղթայի հյուսիսային փեշերին, հասնում է նախ Երզնկայի դաշտը, ապա՝ Կամախի հրաբխային բարձրավանդակը։ Կամախից հարավ-արևմուտք նա կազմում է մի օղակ և ուղղվում դեպի հարավ-արևելք, խարբերդի դաշտի արևմտյան մասում միանալով Արևելյան Եփրատի հետ։ Նախքան Արևելյան Եփրատի հետ միանալը, նա անցնում է Բյուրակն-Մունձուրյան լեռնաշղթայի արևմտյան մասով։ Այստեղ նրա հունը նեղ է և խոր։ Նրա ձորն ահավոր խորության է հասնում Ակն քաղաքի մոտ։ Ակնի կիրճը կազմող բարձրությունները հասնում են ձյան գծին և, մինչդեռ կիրճի հատակում ծաղկում է նշենին, վերևում, բարձրությունների վրա, խոր ձմեռ է[1]։

Արևելյան Եփրատը, կամ Մուրադ-սուն (հնում՝ Արածանի), որը Եփրատի մյուս ճյուղի՝ Կարա-սուի նման մի ամբողջ հոսանքով անցնում է Հայկական լեռնաշխարհի տերիտորիայով, սկսվում է Ալա-դաղ (Ծաղկանց) հրաբխային լեռնա-փատեմին պատկանող Թոնդուրեկ գագաթի մոտից։ Նա սկզբից ևեթ մի հորդահոս գետակ է կազմում, որը կարճ ճանապարհ անցնելուց

[1] Տես В. Штреккер, Очерки Верхней Армении, Тифлис, 1873, стр. 19.

հետո, մտնում է Թոնդուրեկի հյուսիսային լավային փռվածքների շրջանում գտնվող ձորը, Դիադին ամրոց-քաղաքից 22—27 կմ դեպի հարավ։ Այս շրջանում գետի երկու ափերին ձագարաձև փոսերից դուրս են ցայտում ծծմբային տաք ջրեր, այնքան տաք, որ «տեղացիները այդ աղբյուրների մեջ եփում են ոչխարի միս»։ Այդ տաք աղբյուրները, որոնք թափվում են Արևելյան Եփրատի մեջ, հնում կոչվում էին «Վարշակի ջերմուկ»-ներ։ Երկարատև դարերի ընթացքում նրանց հանքային պարունակությունները գետի վրա կազմել են երկու բնական կամուրջ։ Արևելյան Եփրատը ծակել է այդ հսկայական կրային զանգվածները և իր համար ճանապարհ բաց արել նրանց տակով։ Կամուրջներից մեկն այնքան լայն է, որ նույնիսկ նրա վրայով կարող են ձիավորներ անցնել[1]։

Այնուհետև Արևելյան Եփրատը մտնում է բազալտի սև ժայռերից կազմված մի նեղ և երկար ձոր, ուր նա դառնում է ավելի սրընթաց։ Շատ չանցած նա, դուրս գալով այդ անձուկ ձորաճեղքից, փոխում է իր հյուսիսային ուղղությունը և հոսում է դեպի հյուսիս-արևմուտք։ Դիադինի խոր ձորից դուրս գալուց հետո էլ հանքային ջրերը, գրեթե առանց ընդհատվելու, ուղեկցում են նրան երկար տարածության վրա՝ մինչև Ալա-դաղից դեպի հյուսիս մատնաձև տարածվող լեռնաճյուղերի հյուսիսային ստորոտները։

Արևելյան Եփրատը (Արածանին) իր վերնագավառում հանդիսացել է պաշտամունքի առարկա, այնպես, ինչպես Արևմտյան Եփրատն իր ակունքի շրջանում։

Ալաշկերտի հովտում նա իր մեջ է ընդունում բազմաթիվ գետակներ։ Ղարա-քիլիսա (հնում՝ Բագարան) գյուղի մոտ արևմուտքից նրա մեջ է թափվում Շարիան գետը, որից հետո Արևելյան Եփրատը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, իսկ Մա-

[1] Բնական այդպիսի մի կամուրջ, որն ավելի լայն է և ծածկի մասն ավելի հաստ, գտնվում է այժմյան Սիսիանի և Գորիսի շրջաններով (հնում առաջինը կոչվում էր Ծղուկք, իսկ երկրորդը՝ Հաբանդ, և որպես գավառներ մտնում էին Սյունյաց աշխարհի մեջ) անցնող Որոտան գետի վրա, Տաթևի մոտ։ Որոտանի բնական այդ կամուրջը կոչվում է «Սատանի կամուրջ» և պիտանի է սովորական երթևեկության համար։

Նազկերտ քաղաքի մոտից ընդունում է արևմտյան ուղղություն և մինչև գետաբերանը համարյա չի փոխում իր հոսանքի այդ ուղղությունը։ Մանազկերտի դաշտից մինչև Մուշի դաշտ մտնելը նա անցնում է լեռնային շրջաններով և ունի արագ ընթացք։ Աջից ու ձախից նրա մեջ են թափվում մի շարք գետեր, այսպես, Մանազկերտ քաղաքի մոտ նրա մեջ է թափվում Պատնոս (հնում՝ Մանազկերտ) գետը, դրանից արևմուտք, աջ կողմից՝ Խնուսի (Վարաժնունիք) գետը՝ ապա՝ Բինգյոլ-չայը, որն իր ստորին հոսանքի շրջանում կոչվում է Զհարբոհար (այսինքն՝ չորս տեղից անանցանելի)։ Մուշի դաշտում ձախ կողմից նրա մեջ է թափվում Մեղրագետը, որը այժմ կոչվում է Կարա-սու։

Մուշի դաշտից անմիջապես արևմուտք գետը դարձյալ մտնում է նեղ և խորը կիրճերի մեջ, որտեղ նրա հունը նեղ է և հոսանքը սրընթաց։ Այստեղ նա կազմում է մի քանի ջրվեժներ։ Նեղ կիրճը վերջանում է Բալուի մոտ և Արևելյան Եփրատը մտնում է Խարբերդի ընդարձակ ու բերրի դաշտը։ Մուշից մինչև Խարբերդ նրա մեջ աջ կողմից թափվում են մի շարք վտակներ, որոնցից նշանավոր են երկուսը. Գյունեկ-սուն, որն սկսվում է Բյուրակնյան լեռների հարավ-արևմտյան մասից և, հոսելով հարավ-արևմտյան ուղղությամբ, Եփրատի մեջ է թափվում Ճապաղաջրի (Հաշտյանքի) սահմաններում։ Երկրորդ՝ Փերի-սուն, որն սկսվում է նույն Բյուրակն լեռան արևմտյան մասից և իր տարբեր մասերում կրում է տարբեր անուններ՝ վերին հոսանքի շրջանում կոչվում է Լեչեգ-սու, միջին հոսանքում՝ Քղի, իսկ ստորին հոսանքում, աջ կողմից իր մեջ Դերսիմից եկող խոշոր վտակը ընդունելուց հետո, կրում է Փերի-սու անունը։ Փերի-սուն մայր գետին միանում է Խարբերդ քաղաքի մոտ։

Խարբերդի դաշտից արևմուտք Արևելյան Եփրատը մտնում է Բյուրակն-Մունձուրից և Հայկական Տավրոսից եկող լեռնաճյուղերից կազմված կիրճի մեջ։ Բայց շատ չանցած նա միանում է հյուսիսից եկող իր քրոջ՝ Արևմտյան Եփրատի հետ։ Արևելյան Եփրատն ավելի ջրառատ է, քան Արևմտյանը։

Երկու Եփրատները միանալուց հետո մտնում են Տավրոսյան լեռների շրջանը։ Այստեղ նրանք պատռում են Տավրոսյան հրակայական լեռնային սիստեմը՝ առաջացնելով բազմաթիվ զառիվեր կիրճեր։ Կիրճերից ամենանշանավորը կոչվում է Դեմիրխանի

կիրճ։ Այս կիրճում Եփրատն ունի ընդամենը 80 քայլ լայնություն, նա, սեղմված լինելով երկու կողմից և ունենալով մեծ անկում, հոսում է ահռելի աղմուկով։ Տավրոսյան լեռների շրջանում Եփրատը կազմում է փոքրիկ ջրվեժներ, որոնց թիվը հասնում է 300-ի։

Պատռելով Տավրոսի շղթան, Եփրատը դուրս է գալիս Միջագետքի հարթությունը։ Այստեղ նա նախ ուղղվում է դեպի արևմուտք՝ մոտենալով Միջերկրական ծովին, ապա թեքվում է դեպի հարավ և, շրջաններ տալով, աստիճանաբար մոտենում է իր արևելյան մեծ հարևանին՝ Տիգրիսին։ Բավականին երկար տեղ Տիգրիսին զուգահեռ հոսելուց հետո, Եփրատը միանում է նրան և թափվում Պարսից ծոցը։ Այդ երկու խոշոր գետերը իրար հետ միանալուց հետո կրում են Շատ-էլ-Արաբ ընդհանուր անունը։

Դեպի Պարսից ծոց հոսող մյուս խոշոր գետը Տիգրիսն է։ Տիգրիսը (կոչվել է նաև՝ Դկղաթ), որ Հայկական լեռնաշխարհից սկսվող գետերից ամենաջրառատն է, Եփրատի նման կազմվում է երկու ճյուղից՝ Արևմտյան և Արևելյան։ Արևմտյան ճյուղը, որը կոչվում է նաև ուղղակի Տիգրիս, իր հերթին կազմվում է երկու ճյուղից։ Նրանցից մեկը սկսվում է Խարբերդ քաղաքից հարավ-արևելք գտնվող Գյոլջիկ (Ծովք) լճի հարավը պատող լեռնալանջերի հորդաբուխ աղբյուրներից, որոնք ոչ մի կապ չունեն լճի հետ։ Կարճ տարածության վրա նա դառնում է լեռնային մի արագավազ և ջրառատ գետակ, որը հայտնի է Արղանա-սու անունով։ Արղանա-սուի գրեթե միջին հոսանքի շրջանում, նրա աջ ափին, գտնվում է Արղանա-մադանը, որը հին և միջին դարերում հռչակված էր իր գունավոր մետաղների (գլխավորապես պղնձի) հանքերով։ Շատ չանցած, Արղանա-սուն միանում է Արևմտյան Տիգրիսի մյուս ճյուղի՝ Զիբենե-սուի հետ, որի ակունքն ավելի արևելք է գտնվում։ Վերջինս ահագին տարածության վրա հոսում է բնական թունելով, որը փորել է ինքը Զիբենե-սուն։ Այդ թունելի շրջանում մինչև օրս էլ պահպանվել են ասորական վիմագիր արձանագրություններ։

Արղանա-սուն և Զիբենե-սուն միանալուց հետո, գետն արդեն կրում է իր իսկական անունը՝ Տիգրիս, որը մինչև Դիարբեքիր (հնում՝ Ամիդ կամ Համիդ) քաղաքի մոտերքը հոսում է դեպի հարավ, ապա Դիարբեքիրից քիչ հարավ փոխում է իր

հոսանքի ուղղությունը դեպի արևելք։ Մինչև Արևելյան Տիգրիսի հետ միանալը նա իր մեջ աջ և ձախ կողմերից ընդունում է բազմաթիվ ջրառատ վտակներ։ Սրանց մեջ ամենից նշանավորը ձախ կողմից նրա մեջ թափվող Բաթման-սու գետն է, իր Խուլփ վտակով։ Բաթման-սու գետը հնում հայտնի էր Քաղիրթ և Նիմֆիոս անուններով։ Նրա Խուլփ վտակի աջ կողմում, գետաբերանից հյուսիս-արևմուտք, ոչ հեռու, հնում գտնվում էր Տիգրանակերտ (կոչվեց նաև Մարտիրոսապոլիս, Նփրկերտ, Միափարիկին) քաղաքը, որի տեղում այժմ Միափարիկին կամ Փարիկին անշուք գյուղն է։

Բաթման-սուն ընդունելուց հետո, գետը մտնում է մի լեռնային շրջան։ Նրա հունը հարավից պատող լեռնաճյուղերից մեկի վրա այժմ գտնվում է Հասանքեյֆ գյուղը, որտեղ պահպանվել են ուրարտական զանազան կառուցվածքներ (այդ թվում լեռնալանջի ուղղությամբ դասավորված 16 հարկանի ջրաղացների ավերակներ)։ Գետն, այստեղից շարունակելով հոսել նույն արևելյան ուղղությամբ, Սղերդ քաղաքից հարավ-արևմուտք միանում է Արևելյան Տիգրիսին։

Արևելյան Տիգրիսը կամ Բոհտան-սուն (Քսենոֆոնի մոտ կոչված է Կենտրիտես) սկսվում է Հայկական Տավրոսի և Կորդուաց լեռների կազմած անկյունից, որտեղ տարածվում է Նորդուզ շրջանը։ Ակունքներից քիչ հեռու նա փոխում է իր հյուսիս-արևմտյան ուղղությունը, ընդունելով արևմտյան ուղղություն, որ մինչև Արևմտյան Տիգրիսի հետ միանալը համարյա չի փոխում։ Իր վերին հոսանքի շրջանում, ձախ կողմից նա իր մեջ է ընդունում Կորդուաց լեռների հյուսիսային փեշերից սկսվող Շահբուրսու գետը։ Ավելի արևմուտք աջ կողմից նրա մեջ են թափվում նախ Մոկս գետը, ապա Սղերդ քաղաքի մոտ՝ Բիթլիսի գետը (Բաղեշի գետ) իր Գյոզալդարա վտակով։ Բոհտան-սուն անհամեմատ ավելի սակավաջուր է, քան Արևմտյան Տիգրիսը։ Նրա ավազանում տարածվում էր հին և միջնադարյան Հայաստանի Մոկք աշխարհը։ Երկու Տիգրիսները միանալուց հետո, ճեղքում են Կորդուաց լեռները և դուրս գալիս Միջագետք։ Ձախ կողմից իր մեջ ընդունելով Մեծ Զավ կամ Զաբ վտակը, Տիգրիսը շարունակում է իր ընթացքը դեպի հարավ՝ մինչև Եփրատի հետ միանալը։

Հայկական լեռնաշխարհից երկու խոշոր գետ ևս հոսում են դեպի Կասպից ծով։ Դրանք են Քուռ և Արաքս գետերը։

Քուռն Անդրկովկասի ամենախոշոր գետն է։ Նա իր վերին հոսանքով պատկանում է Հայկական լեռնաշխարհի գետային ցանցին։ Սկիզբ է առնում Անդրկովկասի հրաբխային բարձրավանդակի հյուսիսային մասի հարավ-արևմտյան անկյունից՝ Դեոլեիի (հնում՝ Կող գավառ) ճահիճ-լճակներից։ Հոսելով հարավից հյուսիս ուղղությամբ, մտնում է Արդահանի (Արտահան) սևահողային և բերրի դաշտը։ Ախալցխայի սահմանների մոտ նա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, բայց շատ չանցած, քաղաքի (Ախալցխայի) մոտ շուռ է գալիս դեպի հյուսիս-արևելք։ Ախալցխայից ոչ հեռու, ձախ կողմից իր մեջ ընդունելով Փոցխով ջրառատ գետը, Քուռը շարունակում է հոսել հյուսիս-արևելյան ուղղությամբ։ Բորժոմիի կիրճից դուրս գալուց հետո նա ընդունում է հարավ-արևելյան ուղղություն, կտրելով Արևելյան Վրաստանը, ապա Ադրբեջանը և հասնում Կասպից ծով։ Բացի նշված Փոցխովից, Քուռի մեջ են թափվում Մեծ և Փոքր Կովկասներից սկսվող բազմաթիվ գետեր՝ ավելի և ավելի ջրառատ դարձնելով այն։

Մեծ Կովկասից սկսվող և Քուռի մեջ թափվող բազմաթիվ գետերից առավել նշանավոր են Վրաստանի սահմաններում եղած գետերը։ Այսպես. Լիախվա գետը, որ Քուռի մեջ է թափվում ձախ կողմից Գորի քաղաքի[1] մոտ, Ռեխուլան, Քսանի գետը, որ միանում է Քուռին Մուխրանից հարավ, Արագվան, որ նշվածներից ամենից ջրառատն է և Քուռի մեջ թափվում է Վրաստանի (Վիրք, Իբերիա) հնագույն մայրաքաղաք Մցխեթայի մոտ։

Ադրբեջանի (Աղվանք) սահմաններում Քուռի մեջ թափվող գետերի մի զգալի մասը ամռանը իրենց ստորին հոսանքների շրջանում չորանում են և չեն հասնում Քուռին։ Ադրբեջանի և Վրաստանի սահմանագլխին ձախ կողմից Քուռի մեջ է թափվում նրա ամենաերկար և ջրառատ վտակը՝ Ալազանը իր Խորա վտակով։

Փոքր Կովկասից դեպի Քուռ հոսող լեռնային փրփրալից գետերն ավելի բազմաթիվ են։ Քուռի հոսանքին համընթաց թվարկենք նրանցից մի քանիսը։ Քցիա (Խրամի) սկսվում է Ծալկայից (Վրացական ՍՍՌ) և, իր հերթին մի քանի վտակներ (Բոլնիսի

[1] Գորի քաղաքումն է ծնվել ընկեր Ստալինը։

գետ, Մաշավերա) ընդունելուց հետո, թափվում է Քուռի մեջ։ Նախքան Քուռի մեջ թափվելը Քցիան իր մեջ է ընդունում նաև Դեբեդ գետը։ Դեբեդը կազմվում է Զորագետ (Каменка) և Փամբակի գետերից։ Զորագետն սկսվում է Լոռվա հարթության վրա երկու ակունքներով։ Մի որոշ տեղ հանդիսա դալարումներով հոսելուց հետո դուրս է գալիս Կարակալայի դաշտի (Տաշրատափ) վրայից և մտնում նեղ ու զառիվայր ձորը։

Փամբակի գետը Զորագետից ավելի սակավաջուր է։ Նա սկիզբ է առնում Ջաջուռի թամքոցի տակից և իր մեջ մի քանի մանր մանր գետակներ ընդունելուց հետո Կիրովական քաղաքից ոչ հեռու թեքվում է դեպի հյուսիս ու միանում Զորագետի հետ։ Փամբակի և Զորագետի միախառնվելուց հետո գետն ստանում է Դեբեդ անունը, որն անտառապատ, խոր ձորի միջով հոսելով՝ դուրս է գալիս Քուռի հովիտը, որտեղ Քցիայի հետ միանալուց հետո նրա հետ միասին թափվում է Քուռի մեջ։

Դեբեդից ներքև, Բաբաքարի լեռնալանջերից դեպի Քուռ վազում են Կողբ և Կոթ գյուղերի փոքրիկ գետակները։

Աղստևը (ադրբեջաներեն՝ Աղստաֆա) սկիզբ է առնում Ֆիոլետովոյի (Համզաչիմանի) լեռնանցքի մոտից և շարունակ հոսում է անտառապատ ձորերով, որ Դիլիջանի մոտ լայնանալով կազմում է մի փոքրիկ հովիտ։ Քուռի հետ միանում է Անդրկովկասյան երկաթուղու Փոյլի կայարանի մոտ։

Աղստևից արևելք հաջորդական կարգով Փոքր Կովկասից սկսվում և Քուռի մեջ են թափվում բազմաթիվ գետեր, որոնցից են՝ Հախում, Տավուշ, Զակամ (Զեգամ-չայը), Շամքոր-չայը, Գյանջա-չայը (Գանձակ)[1], Կյուրակ-չայը և Թարթառը, որը հնում հայտնի էր Տրտու անունով։

Քուռն իր միջին և ստորին հոսանքներում առաջացնում է ճահիճներ, որոնք այժմ մեծ հաջողությամբ չորացվում են։ Նա նախքան Կասպից ծով թափվելը միանում է Արաքսի հետ և նրա հետ միասին մտնում ծով։ Անհրաժեշտ է նկատել, որ Քուռն ու Արաքսը, հատկապես իրենց գետաբերանների մոտ, շատ հաճախ են փոխում իրենց հունները, այդ պատճառով էլ պատմության

1 Ադրբեջանական ՍՍՌ-ի իր մեծությամբ երկրորդ քաղաքը՝ Կիրովաբադը, պատմության ընթացքում կրել է մի քանի անուններ՝ Դանձակ, Գյանջա, Ելիզավետապոլ։ Գետն էլ նրա հին անվամբ կոչվել է Գանձակի գետ։

ընթացքում նրանք երբեմն միացած են մտել ծով, իսկ երբեմն էլ՝ առանձին-առանձին։

Արաքսը (հնում՝ Երասխ) մեծ մասամբ հոսում է Հայկական լեռնաշխարհով։ Նա սկսվում է Բյուրակն բարձրավանդակի Սրմանց կամ Սևրմանց գագաթի տակից, որտեղ հավաքվում են ջրառատ բարձրավանդակի հազարավոր աղբյուր-լճակների ջրերի մեծ մասը։ Արևելյան և Արևմտյան Եփրատների ակունքների նման, Արաքսի ակունքն էլ ժողովուրդը դարձրել է պաշտամունքի առարկա, որ երկար դարերի ընթացքում շարունակվել է տեղի բնակչության մեջ մնալ։ Բարձրավանդակի վրայի հազարավոր աղբյուր-լճակների ջրերը, նախ, միանալով՝ սկիզբ են տալիս չորս առվակների, իսկ սրանք էլ, Սրմանց գագաթի լանջին միանալով՝ կազմում են Արաքսը։ Նա սկզբից որպես մի փոքրիկ գետակ վազում է դեպի արևմուտք և, իր մեջ ընդունելով Բյուրակնի ուրիշ լանջերից իջնող բազմաթիվ վտակներ, թեքվում է դեպի հյուսիս-արևելք ու այդ ուղղությամբ շարունակում իր ընթացքը՝ մինչև Կարայազի դաշտը (Տուարածատափ)։ Այստեղ, Արաքսը Կարայազի դաշտում աջ կողմից իր մեջ Կարա-սու գետն ընդունելուց հետո բռնում է դեպի հյուսիս ուղղություն։ Շատ չանցած Փալանթյոքան (Այծպտկունք) գագաթից արևելք ճեղքում է Հայկական Պարբ և դուրս գալիս Վերին ու Ստորին Բասենների սահմանը։ Վերջիններիս սահմանագլխին ձախ կողմից նրա մեջ է թափվում Դեբեբոյնի լեռների տակից սկսվող Հասան-կալա (Մուրց) գետը։ Հասան-կալայի գետաբերանից սկսած Արաքսը թեքվում է դեպի արևելք և սրընթաց արագությամբ անցնում է, նախ՝ Ստորին Բասենով, ապա՝ Կաղզվանով (Երասխաձոր) և դուրս գալիս Արարատյան դաշտը։

Արարատյան դաշտում հյուսիսից և մասամբ էլ հարավից նրա մեջ թափվում են մի շարք վտակներ։ Իրենց ջրառատությամբ և երկարությամբ նշանավոր են հյուսիսից՝ ձախ կողմից թափվող վտակները։ Դրանք են.

Ախուրյան[1]— սկսվում է Արփա լճից, վազում է, նախ՝ դեպի

1 Հնում Ախուրյան կոչվում էր Կարսա գետն այժմյան Ախուրյան գետի ստորին հոսանքի հետ միասին մինչև գետաբերանը, իսկ Արփա լճից բխող մասը կոչվում էր Մեծամորի գետ։ Վերջինս թյուրքերը անվանում էին Արփաչայ, որն այժմ գործածությունից հանված է, և մայր գետը, որ հաշվվում է Արփա լճից սկիզբ առնողը, կոչվում է Ախուրյան։

արևելք, ապա՝ թեքվում է դեպի հարավ և, կտրելով Բազումի ու Շիրակի լեռնային սիստեմներին պատկանող լավային շերտերը, իջնում է Լենինականի մոտ Շիրակի դաշտը։ Շիրակի հարավային մասում, Աղին կայարանի մոտ, Ախուրյանն, աջ կողմից ընդունելով իրենից ավելի ջրառատ և մոտ 50 կմ-ով ավելի երկար Կարսա գետը, շատ չանցած միանում է Արաքսին, ավելի քան 400 մ բարձրություն ունեցող ժայռերի տակ։

Սև ջուր—հնում կոչվում էր Մեծամորի գետ։ Սկսվում է Այղրը լճից և նրա շրջակայքում բխող աղբյուրներից։ Իր միջին հոսանքում ընթանում է գրեթե Արաքսին զուգահեռ և գետախառնուրդին մոտ 15 կմ չհասած, ձախ կողմից ընդունում է Քասաղ գետը։

Արտաշատ մայրաքաղաքի դիրքի վերաբերյալ Մովսես Խորենացու հաղորդած մի վկայությունից երևում է, որ հնում Սև ջուրը (Մեծամոր) Արաքսին զուգահեռ դեպի արևելք հոսելիս է եղել ավելի հեռու՝ մինչև այժմյան Արտաշատի շրջանի Յուվա գյուղը[1]։ Հետևապես, այդ ժամանակներում մինչև Արաքսին միանալը նրա (Սև ջրի) մեջ էին թափվում, Քասաղից բացի, նաև Հրազդանը (Զանգուն) և Ազատ գետը (Գառնի)։

Արարատյան դաշտում անկայուն է եղել նաև Արաքսի հունը։ Դարերի ընթացքում նա մի քանի անգամ փոփոխվել է[2]։ Այժմ էլ Հոկտեմբերյանի դաշտում Արաքսից հյուսիս պարզ կերպով երևվում է նրա հին հուներից մեկը, որը տեղացիներն անվանում են «Հոր Արաքս»։ Նրա հունի անկայունության շնորհիվ էր, որ Հոկտեմբերյանում (Արագածոտն) և Զանգիբասարում Արաքսի վրա կառուցած կամուրջները երկար չեն դիմանում։ Հենց այդ է պատճառը, որ հռոմեական բանաստեղծության մեջ (Վիրգիլիոսի մոտ, 70—19 թթ. մ. թ. ա.) դեպի Հռոմի ստրկացնող լուծն ունեցած հայ ժողովրդի հերոսական պայքարը արտահայտված է իր կամուրջները քանդող Արաքսին նվիրված արտահայտությամբ՝ «Կամուրջ չհանդուրժող Արաքս»։

Հաջորդ վտակը, որ Արարատյան դաշտում ձախ կողմից թափվում է Արաքսի մեջ, Հրազդանն է (Զանգուն)։ Նա սկսվում է Սևանա լճից և մինչև Երևան ունի մեծ անկում։ Իջնելով մեկ աստիճանից մյուսը՝ Հրազդանը հարմարություն է ընձեռում սանդուղքաձև դասավորված էլեկտրակայանների կառուցման համար։

Արաքսի ձախակողմյան վտակներից են նաև Ազատ (Գառնի) գետը, Վեդին, Արփա գետը, Նախիջևան-չայը (հնում՝ սովորաբար գործածական էր «Նախճավան» ձևը), Ալընջա-չայը (Երնջակ գետ), Ողջի գետը (Կապանի գետ), Որոտան գետը, որն իր ստորին հոսանքում կոչվում է Բարգուշատի գետ (հնում՝ Բարկուշատ) և որն աջ կողմից թափվում է Հադար-չայ գետի (Աղավնո գետ) մեջ, ապա նրա հետ միասին միանում Արաքսին։ Ազատ գետի և Արաքսի խառնարանում գտնվում էր Արտաշատ մայրաքաղաքը, որն Արաքսի աջ ափի հետ կապվում էր նրա վրա կառուցված Տափերական կոչվող կամուրջով։

Հայկական լեռնաշխարհում Արաքսի ունեցած աջակողմյան վտակներից նշանավոր են Բալըզ-գյոլ (Գայլատու) լճից սկսվող Զանգիմարը (Դեղին գետ) և Կարմիր գետը, որն իր վերին հոսանքում կոչվում է Կոտուրի գետ (հնում՝ Կոտոր)։

Արաքսի երկարությունը 913 կմ է։ Նրա ավազանը գրավում է Հայկական լեռնաշխարհի գրեթե կեսը։ Խիստ տրմուտ է։ Իր տեղափոխած տիղմի քանակությամբ աշխարհում բռնում է երկրորդ տեղը՝ առաջին տեղը զիջելով Նեղոսին։

Հայկական լեռնաշխարհի գետերը լեռնային բնույթ ունեն. նրանք արագընթաց են, փրփրալից և ունեն հսկայական քանակությամբ էներգիա։ Նրանց անկման ուժը հին և միջին դարերում օգտագործվել է շատ չնչին չափով՝ ջրաղացներ գործի դնելու համար։ Մեր օրերում այդ անսպառ գետային էներգիան լայն

[1] Մովսես Խորենացին Արտաշատի դիրքի մասին գրում է. «Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բոլորովին հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ» («Հայոց պատմություն», թարգմանություն Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, գիրք երկրորդ, էջ 117)։ Այստեղից պարզ երևում է, որ Արտաշատը եղել է Արաքսի (Երասխ) և Մեծամորի (Սև ջուր) խառնարանում։ Այժմ հայոց վաղեմի մայրաքաղաքի՝ Արտաշատի ավերակները գտնվում են Ազատ (Գառնի) և Արաքս գետերի խառնարանում, Արտաշատի շրջանի Յուվա գյուղի մոտ։ Բնականաբար քաղաքը (Արտաշատ) չի կարող իր տեղը փոխել, ուստի Սև ջուրն է, որ փոխելով իր հունն, այժմ ավելի արևմուտքում է թափվում Արաքսի մեջ։

[2] Այդպիսի մի փոփոխության մասին հիշատակում է Խորենացին (տես նույնը, էջ 109)։

չափերով ի սպաս է դրված ժողովրդական տնտեսությանը Հայկական լեռնաշխարհի այն մասերում, որոնք մտնում են ՍՍՌՄ-ի մեջ։ Նրանց էներգիայի բազայի վրա Վրացական, Հայկական և Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաներում կառուցվել են և շարունակվում են կառուցվել բազմաթիվ խոշոր և մանր հիդրոէլեկտրակայաններ, որոնք անխափան կերպով էժան էլեկտրաէներգիա են մատակարարում սոցիալիստական հզոր արդյունաբերությանը և ծաղկած գյուղատնտեսությանը։ ՀԿ(բ)Պ ԿԿ-ի որոշմամբ, Հայկական ՍՍՌ-ի լեռնային գետակների բազայի վրա ռեսպուբլիկայի բոլոր մասերում այժմ կառուցվում են բազմաթիվ մանր (միկրո) հիդրոկայաններ, որոնք պետք է Իլիչի լամպերով լուսավորեն մեր ռեսպուբլիկայի բոլոր գյուղերը։ Արդյունաբերական, տրանսպորտային և այլ հիմնարկ-ձեռնարկների օժանդակությամբ արագ տեմպերով իրագործվում է այդ հոյակապ պլանը։

Հայկական լեռնաշխարհի գետերն իրենց մեծ անկման պատճառով նավարկության համար պիտանի չեն (բացառությամբ Եփրատի որոշ մասերի)։ Նրանք գրեթե պիտանի չեն նաև լաստարկման համար, եթե չհաշվենք պրիմիտիվ լաստարկումները, որոնք կարող են կատարվել մի քանի համեմատաբար մեծ գետերի որոշ մասերում։ Եթե նրանք նշանակություն չեն ունեցել և չունեն ջրային ճանապարհների համար, ապա դրան հակառակ մեծ է եղել և է նրանց նշանակությունը ոռոգման գործում։ Կլիմայի մասին խոսելիս արդեն տեսանք, որ Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմանները, մանավանդ դաշտավայրային շրջաններում, պահանջում են արհեստական ոռոգում, որը կատարվում է կամ անմիջապես գետերով, կամ թե նրանցից հանված առուներով։

Այնքան մեծ չէ Հայկական լեռնաշխարհի գետերի նշանակությունը ձկնորսության համար, ճիշտ է, նրանցից մի քանիսը իրենց մեջ ունեն բավական քանակության ձկներ, բայց նրանց անկարելի է համեմատել Վոլգայի, Դոնի, Հռենոսի, Պոյի և նման այլ գետերի հետ, որոնք հանդիսանում են ձկնորսության համար խոշոր բազաներ։

4. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմանների բազմատեսակությունն իր խոր ազդեցությունն է թողել բուսական աշխարհի վրա, այստեղ ևս առաջ բերելով խիստ բազմազանություն։ Բուսականությունն այս լեռնային երկրում ուղղաձիգ գոտիներ է տալիս ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության։

Ընդհանուր առմամբ Հայկական լեռնաշխարհի հողը բերրի է։ Երկիրը նպաստավոր է գյուղատնտեսության երկու կարևորագույն ճյուղերի՝ երգրագործության և անասնապահության համար։

Երկրի ցածրադիր մասերում ծովի մակերևույթից 500—1100 մետր բարձրության վրա գտնվող հարթություններում (Արարատյան դաշտ, Արածանիի հովիտ, Վանի շրջան, Մեղրու և Ղափանի հովիտներ), արհեստական ոռոգման դեպքում, հաջող կերպով աճում են մերձարևադարձային տեխնիկական այնպիսի կուլտուրաներ, ինչպիսիք են բամբակը, ծխախոտը և այլն։ Այս գոտում հացահատիկային կուլտուրաների այլ տեսակների հետ միասին մշակվում է բրինձ։ Մեծ տարածում ունի կորիզավոր պտուղների և խաղողի մշակումը։ Հնագույն ժամանակներից սկսած Հայաստանը նշանավոր է եղել իր խաղողով, ծիրանով, դեղձով և բազմաթիվ այլ պտուղներով։ Հայկական լեռնաշխարհն ունի խաղողի, ծիրանի, դեղձի և այլ պտուղների բազմաթիվ տեսակներ, որոնք իրենց որակով չեն զիջում աշխարհի որևէ այլ երկրի պտուղների տեսակներին։ Հին և միջին դարերում պտուղների մի զգալի մասը, գլխավորապես չորացած վիճակում, արտահանվել են զանազան երկրներ։ Դժվար է ճշգրիտ որոշել, թե որ ժամանակվանից Հայկական լեռնաշխարհում մարդիկ սկսեցին զբաղվել այգեգործությամբ։ Այստեղ այգեգործության պատմությունն սկսում է հնագույն ժամանակներից, և մարդկային հասարակության պատմությանը վերաբերող առաջին իսկ հիշատակություններից ու նյութական կուլտուրայի մնացորդներից երևում է, որ իրոք Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչները գյուղատնտեսական այլ ճյուղերի հետ միասին զբաղվել են նաև այգեգործությամբ։ Ցածրադիր այս գոտում բավականին ընդարձակ տարածություններ են բռնել ճահճապատ տարածությունները։

Մեզ հասած վկայություններով հսկայական ճահիճներ կային Արմավիրի, Վաղարշապատի, Արտաշատի, Մանազկերտի մոտերքը։ Ճահիճները տարածում ունեն նաև ավելի բարձրադիր գոնաներում՝ Էրզրումի շրջանում, Մուշում, Ալաշկերտում և այլն։ Ցածրադիր դաշտավայրային գոտում շոր և շոգ կլիմայի պատճառով հողի մեծագույն մասը արհեստական ոռոգման բացակայության պատճառով պատած է եղել փշաբույսերով և չորասեր այլ բույսերի տեսակներով։ Այդ տիպի տարածությունները, որոնք վաղ գարնանը ծածկվում են գույնզգույն ծաղիկներով, խոտերի թավշով և արագ կերպով չորանալով վեր են ածվում խոտազուրկ անհրապույր տարածությունների, նորից խոտով զարդարվում են աշնանը՝ ծառայելով որպես անասունների ձմեռանոցներ, նման Մուղանի դաշտին, որտեղ ձմեռն ապաստանում են բազմաթիվ քոչվորական ժողովուրդների միլիոնավոր մանր և խոշոր եղջյուրավոր անասուններ ու ձիեր։

Ցածրադիր դաշտավայրային գոտուն հաջորդում է նախալեռնային գոտին, որը ծովի մակերևույթից ունի 1100—1500 մ բարձրություն։ Այս գոտու ստորին մասերում մինչև 1300 մ բարձրության վրա ևս տարածվում է խաղողի և կորիզավոր պտուղների մշակույթը, իսկ տանձենին, խնձորենին, սալորենին, բալենին, կեռասենին և բազմաթիվ այլ տեսակները՝ մինչև 1500 մետր բարձրության վրա։ Նախալեռնային այս գոտու համար, սակայն, բնորոշ կուլտուրաները հացաբույսերն են՝ ցորեն, տարեկան, գարի, հաճար, կորեկ և այլն։ Հացահատիկներով առանձնապես աչքի են ընկնում Մուշի, Ալաշկերտի և Շիրակի դաշտերը, ինչպես և մի քանի այլ գետահովիտներ, որոնք դեռ վաղ շրջանից ստացել են հացի շտեմարանների համբավ։ Հայկական լեռնաշխարհն իր հարևան Իրանական սարահարթի և Մերձավոր Արևելքի մի քանի այլ երկրների հետ միասին հանդիսանում է վայրի ցորենների նախահայրենիքը։

Ընդհանուր առմամբ նախալեռնային այս գոտին Հայկական լեռնաշխարհում մյուս գոտիների համեմատությամբ ունի ամենից մեծ տարածությունը։

Նախալեռնայինից վերև տարածվում է լեռնային գոտին, ծովի մակերևույթից ունենալով 1500—2500 մ բարձրություն։ Նրա ստորին շերտում մինչև 1900 և նույնիսկ 2000 մ բարձրության

վրա, գլխավորապես լեռնադաշտերում, դեռևս տարածվում են հացահատիկները, միայն այն տարբերությամբ, որ այստեղ ցորենը հաջող չի աճում և քիչ տարածում ունի, իսկ դրա փոխարեն ավելի մեծ տեղ են գրավում գարին ու տարեկանը։ Հացահատիկների ցանքերը լեռնային այդ գոտում երբեմն վնասվում են վաղահաս ցրտերից։ Պակաս վտանգավոր չէ նաև կարկուտը, որը երբեմն տեղում է լեռնային որոշ շրջաններում։

Լեռնային գոտու բարձր շերտերում 1900—2000 մետրից վեր տարածվում են ալպյան մարգագետինները, որոնք բռնում են ընդարձակ տարածություններ։ Ալպյան մարգագետիններով առանձնապես հարուստ են Բյուրակնյան, Կեչուտի կամ Խոնավ, Մրզուզի, Սևանի, Գեղամա և Զանգեզուրի լեռների բարձրադիր լանջերը։ Այդ արոտավայրերը և նրանցից ցած տարածվող լայնածավալ խոտհարքները հանդիսանում են կերի բնական բազա անասնապահության զարգացման համար։ Ամառային եղանակներին իրենց հոտերով և նախիրներով Հայկական լեռնաշխարհի Ալպյան գոտին էին բարձրանում ոչ միայն տեղացի անասնապահները, այլև հարևան և նույնիսկ հեռավոր վայրերի անասնապահությամբ զբաղվող բնակիչները՝ հատկապես Մուղանի և Իրանական Ադրբեջանի կողմերից։

Անտառների տեսակետից ընդհանուր առմամբ աղքատ է Հայկական լեռնաշխարհը։ Նրա կենտրոնական մասերը, եթե չհաշվենք լեռնային շրջաններում տեղ-տեղ երևացող առանձին պուրակները, գրեթե անտառազուրկ են։ Անտառները մեծ տարածություն են գրավում նրա հյուսիսային և հարավ-արևմտյան մասերում։ Թանձրախիտ անտառների ընդարձակ տարածությունները հատուկ են հատկապես հյուսիսային ծայրամասային նահանգներին։ Այդ տեսակետից հայտնի են եղել մանավանդ Արցախ, Գուգարք, Տայք նահանգները, ինչպես նաև Սյունիքի որոշ մասերը։ Եղիշեն հիշատակում է Արցախի անտառների մասին՝ «Թանձրախիտ մայրիք»[1], Մովսես Խորենացին, նկատի ունենալով Տայքի անտառապատությունը, նրա բնությունը բնորոշում է հետևյալ խոսքերով՝ «...Գիջին մառախլապատ տեղիք մայրեաց»[2]։

1 Եղիշէ վարդապետ, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Վենետիկ, 1842, էջ 221։

2 Պատմութիւն հայոց, գիրք Բ. գլ. Զ։

Անտառները մեծ տարածություններ են բռնում նաև Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան և հարավային մասերում— հատկապես Դերսիմում (հնում՝ Ծոփք) և Ռշտունիքում։

Նշվածներից բացի անտառը բավականին մեծ տարածություն է գրավում Կարսա գետի վերնագավառում՝ Սարիղամիշի շրջակայքում։ Սրա ծառատեսակները մեծ մասամբ խեժատու են։

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջաններում ցրված են առանձին փոքր պուրակներ, որոնք ունեն միայն տեղական նշանակություն։ Մեզ հասած հիշատակություններից պարզ երևում է, որ հնում Հայկական լեռնաշխարհում անտառները շատ ավելի լայն տարածություն են գրավել, քան այժմ։ Անտառային տարածությունները կրճատվել են մարդկանց գործունեության հետևանքով։

Հայկական լեռնաշխարհի անտառների ծառատեսակների մեծ մասը լայնատերև է։ Անտառներում առանձնապես տարածված են հետևյալ ծառատեսակները. կաղնի, հաճարի, բոխի, թխկի, հացենի, կեչի։ Զանգեզուրի, Լոռու և Ղարաբաղի անտառներում տարածված են մեծ քանակությամբ վայրի պտղատու ծառեր և թփեր (առավելապես տանձ, խնձոր, սալոր, մոշ, մոռ)։ Որոշ շրջաններում (Մեղրի, Ղափան, Վանա լճի ավազանը և այլն) անտառային պուրակներ են կազմում ընկուզենիները, որոնց պտուղները չորացած վիճակում մյուս մրգերի հետ միասին հանդիսացել են արտահանման նյութ։ Բայց ամենից կարևորը նրանց փայտանյութն է. ընկուզենու փայտը, լինելով կահկարասու համար ամենից որակյալ փայտանյութերից մեկը, մեծ քանակությամբ օգտագործվել է թե՛ տեղական արդյունագործության մեջ և թե՛ արտահանվել է հարևան ու հեռավոր երկրներ։

Մեզ հասած գրավոր վկայություններից երևում է, որ Հին Հայաստանում տնկվել են մի քանի փոքր պուրակ-անտառներ։ Դրանցից համեմատաբար նշանավոր են եղել Արմավիր մայրաքաղաքի մոտ գտնվող սոսիների պուրակը («Սոսյաց անտառ»-ը), Բագարանի շրջանում՝ «Ծննդոց անտառը» և Արտաշատ-Դվինի մոտ գտնվող արհեստական անտառը։ Վերջինս տնկվել է Խոսրով Բ. Կոտակի օրոք (330—339 թթ.)։ Խոսրով Կոտակը Արտաշատ մայրաքաղաքի կլիմայական և դիրքային աննպաստ պայմանների

պատճառով՝ արքունական պալատներ է կառուցում նրանից հյուսիս մի բարձրադիր տեղում, որի շուրջը հետագայում ծավալվեց Դվին մայրաքաղաքը։ Դրա հետ միասին նրա հրամանով տնկվեց այն ժամանակվա համեմատությամբ բավականին մեծ մի անտառ, որը բաղկացած էր կաղնիներից։ Խոսրովի օրոք տնկած այդ անտառը սկսվում էր Գառնի բերդի մոտից, տարածվում էր Աղատ գետի ձորով մինչև Դվինի Տիկնունի ապարանքը, ապա այնտեղից էլ մինչև Արտաշատ և Արաքս։ Այդ անտառի առաջին մասը կոչվեց «Տաճար Մայրի», իսկ երկրորդը՝ «Խոսրովակերտ»։ Նրանց մեջ պահվում էին զանազան տեսակի բազմաթիվ որսի կենդանիներ՝ թագավորական որսի համար։

Հայկական լեռնաշխարհի բնությունը, ինչպես տեսանք, նպաստավոր է անասնապահության համար։ Այնտեղ կան անհրաժեշտ չափով թե խոտհարքներ ու ձմեռային արոտատեղեր և թե ալպյան մարգագետիններ։ Ընտանի կենդանիներից տարածված են եղել՝ ոչխարը, այծը, կովը, եզը, ձին, գոմեշը, ջորին, էշը։

Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ նշված կենդանիներից Հին Հայաստանում ամենից շատ տարածված էին ոչխարները և այծերը։

Հայկական լեռնաշխարհում վայրի կենդանիներից տարածված են եղել՝ աղվեսը, նապաստակը, գայլը, արջը, բորենին, ծայր հարավային մասերում պատահել է առյուծ։ Լեռներն ու դաշտերը հարուստ են որսի կենդանիներով և թռչուններով, որոնց մեջ հայտնի են եղել՝ քարայծը, վայրի ոչխարը, այծյամը, եղնիկը, վարազը, կաքավը, բադը, փասյանը, լորամարգին և այլն։

Հին և միջնադարյան Հայաստանի համար խոշոր նշանակություն ուներ կենդանական աշխարհի մի փոքր ներկայացուցիչը, միջատի մի փոքրիկ տեսակը, որն ապրում էր Արարատյան դաշտի եղեգնաբուսների վրա։ Այդ միջատից պատրաստում էին լավագույն որակի կարմիր ներկ, որը մեր մատենագրության մեջ հայտնի է «որդան կարմիր» անունով, իսկ արաբական աղ-

---

1 Արաքսը, որ երկու կողմից շրջվում էր Արտաշատի պարիսպներին, այդ ժամանակներում հեռացել էր քաղաքից, և վերջինիս շրջակայքում առաջացել էին մեծ տարածություն գրավող ճահիճներ։

բյուրները, որոնք գրեթե առանց բացառության մեծ գովեստով են խոսում հայկական «որդան կարմիրի» մասին, այն կոչում են «ալ-կրրմզի»։ Որդան կարմիր ներկը Հայաստանից արտահանվող ապրանքների մեջ գրավում էր գլխավոր տեղերից մեկը և մեծ հռչակ ուներ Մերձավոր Արևելքի երկրներում։

5. ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իբրև գերազանցորեն լեռնային երկիր՝ Հայկական լեռնաշխարհն աչքի է ընկնում իր բնական հարստություններով։ Բնական հարստությունների տեսակետից Հին Հայաստանը ամենից առաջ հայտնի է եղել իր սեղանի աղով։ Հայկական լեռնաշխարհի սեղանի աղի երեք հռչակավոր հանքերը՝ Կողբը, Նախիջևանը և Կաղզվանը, որոնք մարդկությանը հայտնի են եղել հնագույն ժամանակներից, մինչև այժմ էլ ոչ միայն չեն կորցրել իրենց արժեքը, այլև շարունակում են մնալ, մանավանդ Կողբը, որպես պաշարներով հարուստ աղահանք։ Կողբի աղահանքերում վերջերս գտնված քարե գործիքները կենդանի ապացույց են այն բանի, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչներն աղահանքերը շահագործման են ենթարկել դեռևս հին քարե դարաշրջանից սկսած։ Կողբից, Կաղզվանից և Նախիջևանից բացի, զանազան տեսակի աղեր են տարածված երկրի զանազան մասերում, հատկապես Արևմտյան Եփրատի և Վանա լճի ավազաններում, որոնք, սակայն, ունեցել են գերազանցապես տեղական նշանակություն։ Ոչ պակաս նշանավոր է Հայկական լեռնաշխարհը պղնձի ու նրան ուղեկցող արճճի ու ցինկի հանքերով։ Պղնձի բազմաթիվ հանքեր տարածված են երկրի զանազան մասերում։ Բայց այդ տեսակետից ամենից նշանավորներն էին՝ 1) Գուգարքի Տաշիր գավառը. 2) Այուդենից նշանավորներն էին՝ 1) Գուգարքի Տաշիր գավառը. 2) Այուդենիք նահանգի մի քանի գավառները՝ Վայոց ձորը, Բաղքը, Զորքը. 3) Միսխանայի պղնձի հանքերը։ Սա գտնվում էր Արարատյան նահանգի Վարաժնունիք գավառի մեջ, իսկ այս վերջինը համապատասխանում է ներկայիս Ապարանի և Ախտալայի շրջաններին։ Նրա պաշարներն սպառված են. 4) Արևմտյան Տիգրիսի ակունքներում գտնվող Արղանա-մադան հայտնի պղնձահանքերը, որ մտնում էր Զորրորդ Հայքի մեջ։

Պետք է նշել, որ Սովետական իշխանության օրոք ձեռնարկված երկրաբանական մեծ հետազոտությունների շնորհիվ, որ

շարունակվում է ավելի մեծ թափով, Հայկական ՍՍՌ-ում հայտնաբերվեցին նորանոր հանքեր, որոնք դարձել են կայուն բազա Սովետական Հայաստանի ծաղկած արդյունաբերության համար։

Երկաթը, որի գործածությունը Հայկական լեռնաշխարհի բնակիչներին դարձյալ հայտնի է եղել հնագույն ժամանակներից, ավելի հաճախակի է հանդիպում և մեծ չափերով է տարածված, քան պղինձը։ 7-րդ դարին պատկանող «Աշխարհացույց»-ի մեջ հիշատակվում է, որ երկաթով հարուստ էին Աղձնիք (Արևմտյան Տիգրիսի հովտում) և Տուրուբերան (Միջին Արածանիի ավազանում և Արաքսի ծայր վերնագավառում) նահանգները։ Առանձնապես նշանավոր էին Աղձնիք և Վասպուրական նահանգների սահմանագլխին (Վանա լճի հարավային ափին) գտնվող «երկաթահատ» կամ «երկաթահանք» կոչվող հանքերը՝ Ընձաքիարս լեռան մոտ. այստեղ արդյունահանվում էր նաև կապար, որի պատճառով էլ հանքավայրը հաճախ կոչվում էր նաև «կապարահատ»։

Նավթ դարձյալ հիշատակվում է Աղձնիք և Տուրուբերան նահանգներում։ Նավթային ավազաններ կան նաև Վանից հարավ, Բերկրի քաղաքի շրջանում (Վանա լճի հյուսիս-արևելյան ափերին) և Էրզրումում։

Ներկայումս ամերիկյան մոնոպոլիստներն Արաբիայի և Մերձավոր Արևելքի մի քանի այլ նավթային ավազանների գիշատիչ շահագործման հետ միասին հետազոտական աշխատանքներ են տանում Արևմտյան Հայաստանում՝ Արածանիի և Արևմտյան Եփրատի (Կարա-սուի) ավազաններում՝ նոր նավթահանքեր հայտնաբերելու և իրենց իմպերիալիստական նպատակների համար շահագործելու տենչանքով։ Նրանք առանձնապես հետախուզական ուժեղ աշխատանք են կատարում Էրզրումի (Կարին) շրջանում։

Քարածխով առանձնապես աչքի են ընկնում Արևմտյան Տիգրիսի և Արևմտյան Եփրատի ավազանները։

Ագնիվ մետաղներից Հայաստանում հիշատակվում են ոսկու և արծաթի հանքերի մասին։ Արծաթի հայտնի հանքավայրը գտնվել է Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում՝ ներկայիս Գյումուշխանեում, Խարշատ գետի ափին, իսկ ոսկու հանքերը և ոսկեբեր հողեր հիշատակվում են Հայաստանի չորս մասերում՝

Սպեր գավառում, որը գտնվում էր Ճորոխ գետի վրա (համապատասխանում է ներկայիս Իսպիրի շրջանին), Արարատյան դաշտում, Չորրորդ Հայք նահանգի Պաղնատուն գավառում (Խարբերդից հյուսիս-արևելք՝ Քղի գետի ավազանում) և Հայկական Տավրոսի Վանա լճից հարավ տարածվող հատվածում: Դրանցից առանձնապես հռչակված է եղել Սպերի ոսկու հանքերը: Ալեքսանդր Մակեդոնացին (336—323 թթ. մ. թ. ա.), ինչպես վկայում է Ստրաբոնը, Սպերի ոսկու հանքերը տիրելու համար Մենոն զորավարի հրամանատարությամբ մի զորաբաժին է ուղարկում այդ կողմերը, որը սակայն հաջողություն չի ունենում և խեղդամահ է արվում տեղացիների կողմից[1]:

Ոսկին և արծաթը որպես ուղեկցող մետաղներ հանդես են գալիս նաև պղնձի և գունավոր մետաղների գրեթե բոլոր հանքերում:

Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում, հատկապես հրաբխային շրջաններում և գունավոր մետաղների հանքավայրերում, տարածված է մեծ քանակությամբ ծծումբ:

Նշվածներով, իհարկե, չեն սահմանափակվում Հայկական լեռնաշխարհի հանքային հարստությունները: Կան բազմաթիվ այլ հանքային հարստություններ՝ տորֆ, զառնիկ, խրոմիտ և այլն: Բնական մյուս հարստություններից են շինանյութերը և հանքային ջրերը: Շինանյութերի տեսակետից Հայկական լեռնաշխարհը շատ հարուստ է: Ավազը, կավը և կրաքարերը տարածված են համարյա ամենուրեք: Կան տարբեր տեսակի և գույնի մարմարներ (Երևանի մոտ, Արզաքանում, Արտաշատի շրջանում), որոնք իրենց որակով աշխարհում լավագույն մարմարների թվին են պատկանում: Հրաբխային բազմաթիվ վայրերում մեծ չափերով տարածված են բազմատեսակ տուֆեր: Երևանի և Լենինականի շրջակայքում տարածվում են տուֆերի անսպառ շերտեր: Տուֆերի մեջ ամենից հայտնին Արթիկի վարդագույն տուֆն է, որը ներկայումս մեր ռեսպուբլիկայի պահանջները բավարարելուց բացի, մեծ չափերով ուղարկվում է նաև Սովետական Միության զանազան քաղաքների և արդյունաբերական այլ կենտրոնների շինարարության համար: Պակաս տարածում չունեն նաև գրանիտը,

1 Տես Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա. Երևան, 1944, էջ 91—92։

բազալտը, գիպսը: Պեմզայի հարուստ պաշարներ կան այժմյան Աղինի շրջանում (Անի պեմզայի հանքերը): Շինանյութերի մեջ են մտնում նաև փայտանյութերը, որոնց մասին նշեցինք իր տեղում: Նշված շինանյութերի բարձր որակը և առատությունը, բնականաբար, նպաստել է Հայկական լեռնաշխարհի բնակիչների շինարարական արվեստի զարգացմանը, մի արվեստ, որի կոթողներն անգամ այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքը:

Հրաբուխների տարածվածության շնորհիվ Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր կողմերում բխում են բազմատեսակ և բազմաթիվ հանքային տաք և սառն աղբյուրներ: Նրանք հիմնականում ունեն ածխաթթվային, երկաթային, ծծմբային և ածխաթթվա-ալկալիական բաղադրություն: Հրազդան (Զանգու) գետի ավազանում բխում են ածխաթթու-աղային մի շարք հորդ աղբյուրներ, որոնց մեջ պատմական շատ հին ժամանակներից ի վեր իր բուժիչ հատկություններով հայտնի է եղել Արզնիի հանքային ջուրը, որի բխման վայրում ներկայումս կառուցված է Հայկական ՍՍՌ-ի հայտնի կուրորտներից մեկը:

Ծծմբային տաք աղբյուրներից հայտնի են՝ Դիադինի շրջանի (հնում «Վարշակի ջերմուկ») և Ջերմուկի (Հայոց ձորում) ջրառատ աղբյուրները: Դիլիջանի, Կիրովականի անտառապատ ձորերում ցրված են բազմաթիվ նվազ և հորդաբուխ ածխաթթվա-ալկալիական աղբյուրներ: Հանքային ջրերով հարուստ են նաև Արևմտյան Եփրատի հովիտը, Զանգեզուրը և մի շարք այլ շրջաններ, որտեղ նույնպես տարածված են հրաբուխներ:

Եզրակացություն: Հայկական լեռնաշխարհը հարուստ է մետաղային (գլխավորապես գունավոր) և ոչ մետաղային օգտակար հանածոներով, որակյալ բազմատեսակ շինանյութերով ու բազմապիսի հանքային ջրերով: Բնական այդ հարստությունները, անշուշտ, կարևոր նշանակություն են ունեցել Հին Հայաստանի արհեստների, արդյունագործության և ներքին ու արտաքին առևտրի զարգացման համար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական բարձրավանդակը ներքին և արտաքին հաղորդակցության առումով բավական կղզիացած դիրք ունի: Նրա հյուսիս-

արևմտյան և հյուսիս-արևելյան սահմանները մոտենում են Սև ու Կասպից ծովերին, նույնիսկ Հայկական պետության քաղաքական սահմանները Արտաշեսյան և Արշակունյան հարստությունների ժամանակ հասնում էին Կասպից ծովին, բայց այնուամենայնիվ Հայաստանը մնում է որպես գերազանցորեն ցամաքային երկիր։

Արտաշեսյանների և Արշակունիների թագավորության շրջանում Հայկական պետության մեջ մտնող ծայրագավառները (Փայտակարան, Տայք և այլն), որոնք մոտ էին Կասպից ու Սև ծովերին, հաճախակի դուրս էին գալիս Հայկական պետության շրջանակներից և, տնտեսական, առևտրական ու կուլտուրական տեսակետից լինելով համեմատաբար թույլ զարգացած, շատ թե քիչ ուժեղ ազդեցություն չէին կարող թողնել երկրի ընդհանուր դրության վրա։

Երկրի ներսում ևս պակասում էին մեծ նշանակություն ունեցող ջրային ճանապարհները։ Ճիշտ է, Հայկական բարձրավանդակը ջրառատ երկիր է, բայց ունի լեռնային ռելեֆ։ Հայկական լեռնաշխարհի լճերի և գետերի մասին խոսելիս տեսանք, որ նրանք չեն կարող ծառայել իբրև առաջնակարգ ջրային ճանապարհներ։ Նրանցից մի մասի վրա, իհարկե, նավարկություն կատարվել է, բայց դա ունեցել է շատ սահմանափակ նշանակություն. այնտեղ կատարվել է միայն տեղական հաղորդակցություն մոտիկ ափերի միջև։ Եփրատի վրա, որ երկրի միջով հոսող գետերից ամենախոշորն է, նավարկություն կատարվել է միայն այն տեղերում, որտեղ նա հոսում է հովիտներով և դաշտերով։ Տեղաբնիկ հնագույն բնակիչների կողմից գործածվող լաստերը, որ շինվում էին ուռցրած տկերի վրա, կարողանում էին գնալ միայն գետի հոսանքին համընթաց ուղղությամբ։

Այսպիսով, Հայաստանի նման երկրի համար առաջնակարգ նշանակություն ունեցող ճանապարհները ցամաքային ճանապարհներն էին, իսկ նրանց ուղղությունները և հարմար լինելն էլ կախված էր տվյալ շրջանի ռելեֆի ու տեղական այլ պայմանների հարմարություններից։ Այն շրջաններում, որտեղ ռելեֆը լեռնային է, ճանապարհները դժվարամատչելի էին և փոխադրական ամենալավ միջոցն այդպիսի վայրերում հանդիսանում էին

բեռնակիր անասունները՝ ձին, ջորին, էշը։ Ավելի տափարակ վայրերում՝ սարահարթերում և դաշտերում, ինչպես և գետերի լայն ու խոր ձորերում, ճանապարհներն այնքան հարմար էին, որ նրանցով անցնում էին անիվավոր փոխադրական միջոցները։ Սակայն այդպիսի տափարակ տարածություններն ու հարմար գետահովիտները Հայկական լեռնաշխարհում սահմանափակ տարածություն ունեն և, գրեթե առանց բացառության, կտրատված են լեռնային բարձրություններով։ Այնպես որ զուտ դաշտային բնույթ ունեցող ճանապարհները բացակայում էին երկրի մեծագույն մասերում, իսկ մյուս փոքր մասով անցնող դաշտային ճանապարհներն էլ մի սարահարթից, դաշտավայրից կամ գետահովտից մյուսն անցնելու համար հանդիպում էին լեռնային բարձր շղթաների, անցնելով վերջիններիս համեմատաբար հարմար անցքերով—լեռնացքներով։ Հայկական լեռնաշխարհի լեռնանցքները ունեն մոտ 1200—2000 մ բարձրություն (ծովի մակերևույթից), ձմեռը ծածկվում են խոր ձյունով և նրանց մեծագույն մասը այդ եղանակներին դառնում է անանցանելի՝ բառիս իսկական իմաստով։ Հայկական լեռնաշխարհում համարյա չեն եղել այնպիսի ճանապարհներ, որոնց վրա նման բնույթի արգելակներ ու դժվարություններ չլինեն։ Այսպես, Պարսկաստանից դեպի Տրապիզոն տանող տարանցիկ մեծ ճանապարհն անցնում էր Տրապիզոնի և Բայբերդի միջև գտնվող մի լեռնանցքով, որի բարձրությունը հասնում է մոտ 1900 մ.։ Ակն քաղաքի մոտ բավականին բարձրադիր լեռնանցքով էր անցնում Կարինից (Էրզրում) Մալաթիա տանող մեծ ճանապարհը։ Նույնպիսի արգելակներով էին անցնում նաև Արաքսի հովտից Բայազետի վրայով դեպի Վան, Բաղեշ, Մուշի դաշտից դեպի Խարբերդ, ապա Կարին—Կարս կարևոր ճանապարհները։ Այդ ճանապարհները տեղ-տեղ անցնում են դաշտերով և հովիտներով, տեղ-տեղ էլ դժվարանցանելի լեռնային շղթաներով և բարձրադիր սարահարթներով։

Հայկական լեռնաշխարհի մի զգալի մասն էլ՝ Արցախ, Սյունիք, Դուգարք, Սասուն, Մոկք, Զորբորդ Հայքի որոշ մասերը և այլն՝ գրեթե զուրկ են եղել հարմար ճանապարհներից։ Հաղորդակցության ճանապարհներն այդ լեռնային երկրներում եղել են գլխավորապես նեղ ու փոքրիկ լեռնային կածանները։

Սակայն, չնայած Հայկական լեռնաշխարհը հաղորդակցության համար ունի այդպիսի մեծ դժվարություններ, արգելքներ ու որոշ անհարմարություններ, այնուամենայնիվ, նա իր աշխարհագրական դիրքի շնորհիվ հնագույն ժամանակներից ի վեր հանդիսացել է կարևոր ճանապարհը, կապող օղակը և կամուրջը Հնդկաստանի ու Պարսկաստանի և Սև ու Միջերկրական ծովերի, ինչպես նաև Միջագետքի և Սև ու Կասպից ծովերի միջև։ Նշված երկրների միջև առևտուրն ու ապրանքափոխանակությունը կատարվել է գլխավորապես Հայաստանի վրայով։ Հայաստանի մասնակցությունը միջազգային առևտրին չուներ պասսիվ բնույթ. նրա դերը չէր սահմանափակվում առևտրական կարավանների սպասարկումով։ Նա իր հերթին համաշխարհային շուկաներն էր հանում բազմատեսակ ապրանքներ՝ ցորեն, ձի, ոչխար, միս, ձուկ, չորացրած մրգեր, գինի, բուրդ, բամբակ, ներկեր, մետաղներ, արհեստավորական զանազան արտադրանքներ՝ մահուդ, գորգեր, զանազան գործվածքներ, պերճանքի առարկաներ և այլն։ Այս հանգամանքը, բնականաբար, խոշոր չափով դրական ազդեցություն էր թողնում տնտեսության զարգացման վրա, նպաստելով քաղաքների զարգացման ու աճման։

Մեծ էր նաև Հայկական լեռնաշխարհի ստրատեգիական-քաղաքական նշանակությունը։ Նա մի բնական խոշոր միջնաբերդ է, որն իշխող դիրք ունի Մերձավոր Արևելքի նկատմամբ։ Ոչ ոք չէր կարող ապահով կերպով տիրել Միջագետքը, Պարսից ծոցը, Սիրիան, Փոքր Ասիան՝ առանց նախօրոք Հայկական լեռնաշխարհում ամրանալու։ Արածանիի և Էրզրումի հովիտներին տիրելուց հետո, չափազանց դյուրին է նաև Միջերկրական ծովի կիլիկյան ափերի նվաճումը։ Գլխավորապես Հայկական լեռնաշխարհի ունեցած ստրատեգիական-քաղաքական նշանակության պատճառով էր, որ նա գրեթե ամբողջ պատմության ընթացքում դարձել էր կռվածաղիկ աշխարհակալ պետությունների միջև։ Մի հանգամանք, որը շատ խիստ բացասական ազդեցություն էր ունենում նրա քաղաքական անկախության և տնտեսության զարգացման վրա։

Ամենանշանավոր ճանապարհն այն ճանապարհն էր, որ գալիս էր Միջին Ասիայի կողմերից և Հայկական լեռնաշխարհի վրայով դիմում դեպի Սև ու Միջերկրական ծովերի ափերը։ Միջին Ասիայից և Կենտրոնական Ասիայից դեպի Հայաստան եկող երկու ճանապարհ կար։ Նրանցից մեկը դուրս գալով Խորասանից անցնում էր Կասպից ծովի հարավային և արևմտյան ափերով, ապա, Գիլան և Մազանդարան նահանգների վրայով հասնում էր Արաքսի հովիտը։ Սակայն այս ճանապարհը ոչ այնքան բարեկարգ էր և բազմաթիվ լեռների և ճահիճների պատճառով, որոնք ընկած էին նրա տարբեր հատվածներում, այնքան բանուկ չէր։ Մյուս ճանապարհը, որը դարձյալ դուրս էր գալիս Խորասանի հռչակավոր Հերաթ քաղաքից, անցնում էր Շահ-ռուդով, Թեհրանով և Թավրիզով ու դուրս գալիս Արաքսի հովիտը։ Վերջին ճանապարհն ավելի երկար էր, քան առաջինը, սակայն նա հաղորդակցության համար ավելի հարմար և հանգիստ էր։ Հենց այդ պատճառով է, որ հնագույն ժամանակներից սկսած նա ավելի բանուկ էր և հայտնի։ Այս ճանապարհով էին գլխավորապես կապվում իրար հետ Արևելքն ու Արևմուտքը. նա համաշխարհային առևտրի կարևոր ճանապարհն էր։ Հերաթում նրանից մի ուրիշ ճանապարհ բաժանվելով՝ Զանդահարի նահանգով դիմում էր դեպի Հնդկաստան։

Հերաթից դուրս եկող այդ ճանապարհը դեպի արևմուտք անցնելով կանգ էր առնում Այրարատյան նահանգում, Մասիսի ստորոտների մոտ, որտեղ նա միանում էր Սև ծովից եկող ճանապարհներին։ Իրենց հերթին դեպի Սև ծով էին գալիս Եվրոպայի զանազան մասերից Դանուբի, Դնեստրի, Դնեպրի և Դոնի ջրային ճանապարհները։

Մի ուրիշ մեծ ճանապարհ Միջերկրական ծովի ափերից գալիս էր նույն Մասիսի ստորոտները և միանում Արևելքից եկող նշված ուղուն։ Միջերկրական ծովի ափերից եկող այդ ճանապարհը փյունիկեցիների առևտրական ճանապարհն էր, որը դուրս էր գալիս Տյուրոսից և, կտրելով Սիրիայի անապատը, հասնում էր Եփրատ գետին։ Այստեղ նա բաժանվում էր երկու ճյուղի, նրանցից մեկը գնում էր դեպի հարավ՝ Բաբելոն, իսկ մյուսը՝ դեպի հյուսիս, Արածանիի և Արաքսի հովիտներով դեպի Կասպից ծովը։ Հենց այդ գծով էր Բաբելոնը կապվում հյուսիսային երկրների հետ։ Նույն այդ ճանապարհն հարավում միանում էր Եգիպտոս գնացող գծի հետ։

Հնդկաստանի և Պարսկաստանի ապրանքները Եվրոպան

ստանում էր այն ճանապարհով, որն անցնում էր Հայաստանի վրայով և կանգ առնում Սև Ծովի ափին գտնվող այն ժամանակներում մեծ հռչակ ձեռք բերած Տրապիզոն նավահանգստային քաղաքում։ Վերջինս Եվրոպային, մանավանդ միջին դարերում, հայտնի էր մնում «մետաքսի ճանապարհ» անունով։

Առաջավոր Ասիայի տնտեսական ու քաղաքական կյանքի զարգացման հետ միասին զնալով զարգանում և բազմանում էին նաև համաշխարհային նշանակություն ունեցող ճանապարհները, որոնք առևտրական ու այլ տնտեսական կապերի հետ միասին ունեին նաև վարչական, քաղաքական ու զորական նշանակություն։ Այսպես, Աքեմենյան հարստության հիմնադրումից շատ չանցած (550 թ. մ. թ. ա.) Պարսկաստանը դարձավ աշխարհակալ մեծ տերություն։ Եվ Դարեհ Ա-ի ժամանակ (522—484 թթ.) արդեն պարսկական տիրապետության տակ էին գտնվում հին աշխարհի մեծագույն մասը, այդ թվում և Հայաստանը։ Իրարից բաժան և թշնամի արևելյան մեծ պետությունների՝ Ասորեստանի, Բաբելոնի, Լյուդիայի[1] և Եգիպտոսի միավորումը, ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը[2], խոշոր չափով նպաստեց առևտրի և, հետևապես, առևտրական հաղորդակցության զարգացմանը։ Աքեմենյանների տիրապետության ժամանակաշրջանում Հնդկաստանի հետ առևտրական հարաբերություններ էին պահպանվում թե ծովով և թե ցամաքով։ Աքեմենյան Դարեհ Ա-ն, դրամական ռեֆորմ կատարելուց և դրամների որակն ու կշիռը կանոնավորելուց բացի, միջոցներ ձեռնարկեց ցամաքային հաղորդակցությունը կանոնավորելու և ճանապարհների անվտանգությունն ապահովելու համար։ Աշխարհակալ մեծ պետությունը կառավարելու և նրա հեռավոր ծայրերը կենտրոնի հետ կապելու համար Աքեմենյանների տիրապետության ժամանակ բացվեցին զանազան ուղղությամբ ձգվող ճանապարհներ։ Այդ ճանապարհներից մեկը, որը ամենից բարեկարգն էր և հայտնին, կառուցվել էր Դարեհ Ա-ի ժամանակ։ Նա կոչվում էր «Արքունի ճանապարհ»

[1] Լյուդիական պետությունը տարածվում էր Փոքր Ասիայում։ 546 թ. (մ. թ. ա.) Աքեմենյան առաջին թագավորը՝ Կյուրոսը, պարտության մատնելով լյուդիացիներին, գրավեց Փոքր Ասիան մինչև Էգեյան ծովը։

[2] «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Ա, էջ 54։

կամ «Արքունի պողոտա» և ձգվում էր Պարսից ծոցից հյուսիս գտնվող Շոշ (Սուզա) մայրաքաղաքից մինչև Միջերկրական ծովի ափերը՝ 2500 կմ երկարությամբ։ Այդ ճանապարհն իր միջին մասում՝ մոտ 320 կմ երկարությամբ անցնում էր հին Հայաստանի հարավ-արևմտյան մասով։ Հայաստանում նա ուներ հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք ուղղություն. կտրելով Տիգրիս և Եփրատ գետերը, Արևմտյան Տիգրիսի հովտով գալիս էր Ամիդ (այժմ՝ Դիարբեքիր), ապա այստեղից, Արղանա-սուլի հովտով ու Ծովք լճից արևելք գտնվող լեռնանքներով անցնելով, մտնում էր Խարբերդի դաշտը, իսկ այստեղից էլ՝ Մելիտինե (Մալաթիա) ու ապա շարունակում իր ընթացքը դեպի արևմուտք։

Արքունի ճանապարհից մի քանի ճյուղեր, դուրս գալով Հայկական լեռնաշխարհով, ձգվում էին դեպի հյուսիս և հյուսիս-արևելք՝ մինչև Կապ-կոհ (Կովկասյան շղթա) և Կասպից ծովի ափերը, որոնք կազմում էին Աքեմենյանների տիրապետության հյուսիսային սահմանը։ Ստրատեգիական և քաղաքական մեծ նշանակություն ունեին մանավանդ Մեծ Կովկասի երկու անցքերը՝ Ալանաց դուռը (Դարիալի կիրճը) և Ճորապահակը (Դերբենդի անցք)։ Այդ երկու անցքերն ամենից հարմար ճանապարհներն էին Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս ընկած երկրներից դեպի Աղվանից և Հայոց աշխարհներն անցնելու համար։ Հյուսիսային ցեղերից պաշտպանվելու համար Դերբենդի դուռը ամրացված էր պարսկական դինվորական ուժով, իսկ ավելի ուշ, երբ Հայաստանը ենթարկված էր Սասանյանների տիրապետությանը (V—VII դդ.), այն պաշտպանվում էր Սասանյան արքունիքի կողմից վարձատրվող սյունեցիներից կազմված ուժեղ կայազորով։

Առաջավոր Ասիայում Աքեմենյաններին հաջորդեցին Սելևկյանները։ 331 թ. Ալեքսանդր Մակեդոնացին (336—323 թթ. մ. թ. ա.) Նինվեի ավերակների մոտ գտնվող Գաուգամելայի և Արբելայի շրջակայքում վերջնականապես ջախջախեց և ոչնչացրեց Պարսկաստանի ռազմական ուժը, նվաճեց Աքեմենյան վերջին թագավոր Դարեհ Գ-ի աշխարհածավալ պետությունն ու Հնդկաստանի մի մասը, իրեն հայտարարելով մակեդոնական-պարսկական միացյալ պետության ինքնակալ։ Մակեդոնական այդ խոշոր պետության մայրաքաղաքը դարձավ Բաբելոնը։

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո (323 թ. մ. թ. ա.)

նրա զորավարների մեջ, որոնցից յուրաքանչյուրն ուզում էր ինքը ժառանգել Ալեքսանդրի նվաճած երկրները, ծագեցին երկարատև ու համառ կռիվներ։ Այդ երկարամյա կռիվների արդյունքն եղավ այն, որ մակեդոնական զորավարներն իրար մեջ բաժանեցին Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած երկրները։ Արևելքը բաժին ընկավ Սելևկոս զորավարին, որը 305/304 թվին իրեն հայտարարեց թագավոր։ Սելևկոսի հաջորդները, որոնք նրա անվամբ պատմության մեջ հայտնի են Սելևկյաններ անունով, հետզհետե հիմնադիր եղան մի մեծ աշխարհակալ պետության, որը տարածվում էր Հնդկաստանից մինչև Հելլեսպոնտոս, Սելևկոսը տիրել էր գրեթե ամբողջ Առաջավոր Ասիան։ Նրա իշխանության տակ էին գտնվում Միջագետքը, Հայաստանը, Կապադովկիան, Պարսկաստանը, Պարթևների երկիրը, Բակտրիան, Արաբական երկրները, Տաբարիստանը, Սոգդիանան, Արախոզիան, Վրկանաց երկիրը և բոլոր հարակից երկրները, մինչև Ինդոս գետը։ Ալեքսանդր Մակեդոնացու և նրա հաջորդող Սելևկյանների տիրապետության ժամանակ Առաջավոր Ասիայում սկսվեց տնտեսական զարգացման վերելք։ Մի կողմից զարգանում էր հելլենիստական կուլտուրան, որն արդյունք էր հունական և արևելյան կուլտուրաների ձուլման, իսկ մյուս կողմից էլ՝ առևտուրը, արհեստներն ու նրանց հետ կապված տնտեսության այլ ճյուղերը։ Դրանց շնորհիվ, բնականաբար, կանոնավորվում և ավելի մեծ մասշտաբների էր հասնում հաղորդակցությունը։ Մակեդոնացին և նրա հաջորդները բարեկարգեցին և ապահովեցին Եվրոպայի և Առաջավոր Ասիայի հաղորդակցությունը Միջին Ասիայի և Հնդկաստանի հետ։ Նրանց ժամանակն էր, որ առևտուրն իրոք ստացավ համաշխարհային բնույթ։ Կարճ ժամանակամիջոցում առևտրական խոշոր կենտրոններ դարձան Եգիպտոսում՝ Ալեքսանդրիան, իսկ Մերձավոր Արևելքում՝ Սելևկիան ու Անտիոքը։ Համաշխարհային այդ առևտրին մասնակցում էր նաև Հայաստանը, մանավանդ նրա հարավ-արևմտյան մասը, որը հայտնի էր Ծոփաց աշխարհ անունով։ Վերջինիս միջով էին անցնում համաշխարհային առևտրական ճանապարհները և նպաստում նրա քաղաքների ու առևտրի զարգացմանը։ Աքեմենյանների ժամանակ Հայաստանի այդ մասում (Ծոփքում), Եփրատ գետի ձախ ափին գտնվում էր Տոմիսա ամրությունը, որը նշանավոր կայան էր առևտրական այն կարավանների, որոնք գնում էին դեպի Բաբելոն կամ Փոքր Ասիա։ Համաշխարհային առևտրական ճանապարհի վրա գտնվելու շնորհիվ էր, որ Հայաստանի հելլենիստական առաջին քաղաքները առաջացան Ծոփքում։ Այդ քաղաքներն են Արշամաշատը և Արկաթիակերտը։

Ավելի ուշ շրջանում՝ Արտաշեսյանների տիրապետության ժամանակներում (190 թ. մ. թ. ա. մինչև 1 թ. մ. թ.) Հայաստանի հնագույն քաղաքների՝ Վանի, Մանազկերտի, Արմավիրի, Երվանդաշատի կողքին, երկրի կենտրոնում բարձրանում են Արտաշատ, ապա Տիգրանակերտ քաղաքները։ Վերջին երկուսը բավականին բարեկարգ ճանապարհով կապված էին իրար հետ։ Արտաշատ—Տիգրանակերտ ճանապարհը կոչվում էր «Արքայական ճանապարհ»։ Բացի դրանից, Արտաշատ և Տիգրանակերտ քաղաքներից դուրս էին գալիս այլ ճանապարհներ ևս, որոնք ձգվում էին տարբեր ուղղություններով՝ Արտաշատից դեպի Սատաղ (որը գտնվում էր այժմյան Երզնկա քաղաքից հյուսիս), Արտաշատից դեպի Թավրիզ, Տիգրանակերտից դեպի Արևմտյան Տիգրիսի հովիտը, ուր միանում էր «Արքունական ճանապարհ»-ի հետ և այլն։ Այս ներքին ճանապարհների վրա ևս կառուցվեցին քաղաքներ, առևտրական նշանակություն ունեցող ավաններ և կայարաններ. օրինակ՝ Մաժանկերտը, Զարիշատը, Զարեհավանը, Բագավանը։

Հայկական լեռնաշխարհի ճանապարհների կենտրոնը, սիրտը ուրարտական շրջանում Վանա լճի արևելյան ափերն էին՝ Տուշպա (այժմ Վան) մայրաքաղաքով և Արարատյան դաշտը՝ Արգիշտիխինիլի (Արմավիր) քաղաքով։ Իսկ Հայկական շրջանում երկրի գլխավոր ճանապարհների կենտրոնն ու հանգուցակետը դարձան Արարատյան դաշտում գտնվող Արտաշատ և նրա հյուսիսային շարունակությունը կազմող Դվին մայրաքաղաքները։

6-րդ դարում և հետագայում Դվինից դուրս էին գալիս հինգ գլխավոր ճանապարհներ, որոնք տրված են «Մղոնաչափք»-ում և բավական մանրամասնությամբ նկարագրված են Ալիշանի մոտ[1]։ Արտաշատ-Դվինից դուրս եկող ճանապարհները ունեին հետևյալ ուղղությունները.

---

1 «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 413։

1) արևմտյան, որը ձգվում էր Դվին—Կարին—Կողոնիա (այժմ Շապին-Գարահիսար)—Ամասիա—Բյուզանդիոն ուղղությամբ. 2) հարավ-արևմտյան, որն ուներ հետևյալ ուղղությունը՝ Դվին—Եղեգ (Վանա լճի արևմտյան ափին)—Քղիմար—Ուռհա—Դամասկոս, իսկ այստեղից էլ կապվում էր Երուսաղեմի և Ալեքսանդրիայի հետ. 3) արևելյան, որը Հրազդան գետի հովտով ու Գեղամա ծովի (Սևանա լճի) հարավային ափերով գնում էր դեպի Տրտու գետի (Թարթար) հովիտը և հասնում Աղվանից աշխարհի մայրաքաղաք Պարտավը. 4) հարավ-արևելյանը՝ Դվին—Նախճավան—Թավրիզ ուղղությամբ: Թավրիզում նա միանում էր այն ուղու հետ, որը տանում էր Նինվե—Մծբին—Ուռհա: Նախճավանում այդ ճանապարհից անջատվում էր մի ուրիշ գիծ, որը ձգվում էր դեպի Արդաբիլ և Պարսկաստանի հյուսիսային մասերը. 5) Հյուսիսային, որը Գուգարքի վրայով գնում էր Տփղիս (Թբիլիսի), իսկ այստեղից էլ դեպի ավելի հյուսիս: Տփղիսից մի ուրիշ ավելի բարեկարգ ճանապարհ տանում էր դեպի Պարտավ, որը, մի կողմից, ինչպես տեսանք, կապված էր Դվինի հետ, իսկ մյուս կողմից՝ Կասպից ծովի արևմտյան ափերի և Դերբենդի հետ:

Հիշատակված ճանապարհներից զատ, Հայկական լեռնաշխարհում գործում էին տեղական բազմաթիվ այլ ճանապարհներ, որոնց մասին մենք նշեցինք առանձին շրջանների սելեգը նկարագրելիս:

Առևտրի և հաղորդակցության մեջ Հայաստանն արտակարգ դեր է ունեցել մանավանդ 9-րդ դարի վերջերից մինչև սելջուկյան արշավանքները (11-րդ դարի 40-ական թվականները): Քայքայվող արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև տեղի ունեցող անընդհատ և երկարատև կռիվների պատճառով Միջագետքով, Սիրիայով և Միջերկրական ծովով կատարվող համաշխարհային առևտուրը գրեթե կանգ էր առել: Հենց դրա շնորհիվ էլ համաշխարհային առևտրի մեջ անչափ մեծացել էր Հյուսիսային Հայաստանի դերը: Նա 9—11-րդ դդ. լինելով չեզոք երկիր, որն ընկած էր ռազմական թատերաբեմից դուրս, հանդիսանում էր համաշխարհային առևտրի համարյա միակ ճանապարհը: Այդ ժամանակաշրջանում տարանցիկ ճանապարհներն անցնում էին Այրարատյան աշխարհով: Անհերքելի է, որ այդ հանգամանքը հանդիսացավ այն կարևոր ազդակներից մեկը, որոնց շնորհիվ ոչ

միայն իրենց նշանակությունը պահպանեցին Հայաստանի ավելի հին քաղաքներ՝ Դվինը, Վանը, Նախճավանը և մյուսները, այլ և առաջ եկան ու արագ կարգով փարթամացան նոր քաղաքներ, ինչպիսիք են՝ Անին, Կարսը, Արծնը և ուրիշները: Ավելի աշխուժացավ կարավանային երթևեկությունը հին ճանապարհներով, բացվեցին նոր ճանապարհներ:

Ինչպես տեսանք, Հայկական լեռնաշխարհը գտնվելով Արևելքի և Արևմուտքի միջև, հանդիսացել է նրանց կապող օղակը: Այդ պատճառով էլ նա զանազան ուղղություններով կտրատված էր հաղորդակցության կարևոր գծերով: Հայաստանի այդպիսի դիրքը նրա տնտեսության համար դրական էր այն առումով, որ նա սերտորեն կապված էր համաշխարհային առևտրի հետ, որն իր հերթին ազդում էր ներքին առևտրի և արհեստագործության զարգացմանը: Սակայն ճանապարհի վրա ընկած լինելը Հայաստանի համար ուներ նաև խիստ բացասական նշանակություն: Որպես ստրատեգիական և տնտեսական խոշոր նշանակություն ունեցող երկիր և, գրեթե միշտ, գտնվելով աշխարհակալ պետությունների միջև, արևելքից՝ Պարսկաստանը, իսկ արևմուտքից՝ Հռոմը, ապա Բյուզանդիան, Հայաստանը շարունակ թատերաբեմ է եղել բազմաթիվ կռիվների, որոնք տեղի էին ունենում շատ հաճախ: Եթե դրա վրա ավելացնենք նաև այն, որ բազմաթիվ ավերիչ արշավանքները, որոնք պատմության ընթացքում տեղի ունեցան արաբների (7—9-րդ դդ.), սելջուկների (11—12-րդ դդ.) և թաթար-մոնղոլների ու թուրքական այլ ցեղերի կողմից դեպի Հայաստան, ապա հասկանալի է դառնում, որ իրոք Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը երկրի տնտեսության զարգացման տեսակետից ուներ թե դրական և թե բացասական նշանակություն:

Հայկական լեռնաշխարհի դիրքը տնտեսության զարգացման համար նպաստավոր էր այնքանով, որքանով որ նա, գտնվելով Արևելքն Արևմուտքի և Հյուսիսը Մերձավոր Արևելքի երկրների հետ միացնող ճանապարհների խաչմերուկում, առևտրական, տնտեսական, կուլտուրական և այլ կապերով կապված էր հին ժամանակներում զարգացած այդ երկրների հետ: Բայց հենց այդ նույն պատճառով նա հաճախ վեր էր ածվում պատերազմական գործողությունների թատերաբեմի, որ տեղի էին ունենում պարսկական և հռոմեական, ապա բյուզանդական պետությունների միջև:

Ավելի ուշ Հայաստանը պարբերաբար ոտնակոխ էր լինում օտար այլ դավթիչների կողմից։

Այնպես որ Հայաստանի համար կարելի է բնորոշ համարել 10-րդ դարի արաբական աշխարհագիր Իբն-ալ Ֆաքիհ Համադանիի «Քիթաբ-ալ-Բուլդան» («Գիրք երկրների մասին») աշխատության մեջ ասված հետևյալ խոսքերը. «Ես գտա գրքերի մեջ,— ասում է Քաբը,— որ Մեքքան ավերում են հաբեշները, Մեդինան՝ սովը, Բասրան՝ ջրհեղեղները, Քուֆը՝ գաղթականությունները. Ջարաշը քանդվում է կայծակների հարվածներից և երկրաշարժից, Խորասանը՝ այլևայլ պատճառներից, իսկ Ռեյը հարստահարում են դեյլեմացիները և թաթարստանցիները։ Ինչ վերաբերվում է Հայաստանին և Ատրպատականին, այս երկու երկրները կործանվում են հեծելազորի սմբակներից, մեկ էլ կայծակների հարվածներից ու երկրաշարժից»[1]։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Վերջին տասնամյակների ընթացքում կատարված հնագիտական, ֆիլոլոգիական, պատմական, ազգագրական և այլ բնույթի հետազոտությունների շնորհիվ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված են հին քարե դարին (պալեոլիթին) վերաբերող նյութական կուլտուրայի մնացորդներ։

Հայկական լեռնաշխարհը հնագույն ժամանակներում, երբ իշխում էր նախնադարյան-համայնական կենցաղը, բնակեցված է եղել բազմաթիվ տոհմերով, ցեղերով և ցեղախմբերով։

Հին Արևելքում հասարակական կյանքն ավելի վաղ է առաջադիմել։ Սեպագիր արձանագրությունների նորագույն ուսումնասիրություններն ու հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռ նախքան մեր թվարկությունը ավելի քան երկու հազար տարի առաջ, Հայկական լեռնաշխարհի հարավային հարևան Միջագետքում արդեն ձևավորվել էին Ասորեստանի և Բաբելոնի թագավորությունները։ Դրանից մի քիչ ավելի ուշ Առաջավոր Ասիայի հուսիսային մասերում հանդես են եկել Խեթական թագավորությունն ու Միտանին, ինչպես և Հայասա-Ազզի ու Նաիրի ցեղային միությունները։

Խեթական թագավորությունը տարածվում էր Հայկական լեռնաշխարհից անմիջապես արևմուտք Հալիս գետի (այժմ Կզըլ-իրմակ) ավազանում։ Խեթերի մայրաքաղաք Խութաշաղի ավերակներում հայտնաբերված թագավորական արխիվը բավականաչափ տվյալներ է տալիս նրանց ներքին կյանքի, ռազմական արշավանքների և հարևանների հետ ունեցած հարաբերությունների մասին։ Խեթերի թողած հիերոգլիֆ և սեպագիր արձանագրություններից երևում է, որ նրանք սերտ հարաբերությունների մեջ են եղել իրենց արևելյան հարևանների՝ Հայկական լեռնաշխարհի բնակիչների հետ։ Նրանք նույնիսկ իրենց իշխանությանն էին ենթարկել Հայկական լեռնաշխարհի արևմտյան որոշ մասերը։ Այդ թագավորությունը մոտ հինգ դար հանդիսանում էր Առաջավոր Ասիայի խոշորագույն պետությունը և, որպես այդպիսին, քաղաքական ու կուլտուրական խոշոր ազդեցություն էր թողնում Առաջավոր Ասիայի իր հարևան երկրների վրա։ Խեթական թագավորությունը բացի խեթերից կազմված էր բազմաթիվ այլ ցեղերից ու ցեղախմբերից, որոնք գտնվում էին զարգացման տարբեր մակարդակի վրա։ Հենց այդ անմիատարրության և նրանց միջև եղած ներքին կապերի թուլության պատճառով էր, որ այդ թագավորությունը մ. թ. ա. մոտ 1200 թվին Առաջավոր Ասիա ներխուժած նոր ցեղախմբերի հարվածներից կործանվեց։ Նրա բեկորները Փոքր Ասիայի և Ասորիքի սահմանագլխին որոշ ժամանակ պահպանեցին իրենց գոյությունը, բայց այլևս նրանք չկարողացան քաղաքական կարևոր դեր խաղալ Առաջավոր Ասիայում։

Միտանի.— Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ժողովուրդներին խեթերն անվանում էին խուրրիներ,

---

1 Տես Լեո, Հայոց պատմություն, հ. Ա. Թիֆլիս, 1917, էջ 165։

1 Այս բաժինը գրելիս, նորագույն աշխատությունների հետ միասին, մեծապես օգտվել ենք «Հայ ժողովրդի պատմություն» աշխատության մակետից, որը որոշ վերափոխություններից հետո արդեն հրատարակված է։

իսկ ասորեստանցիները՝ սուբարիներ։ Խուրրի կամ սուբարի կոչվող այդ ցեղախմբերը մեծ թիվ էին կազմում հատկապես Միջագետքի հյուսիսային և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասերում։ Պարզված է, որ խուրրիները մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջում ունեին բավական ուժեղ մի միություն և մ. թ. ա. 18-րդ դարում նրանք արդեն հիմք դրեցին մի պետության, որը պատմության մեջ հայտնի է Միտանի անունով։ Միտանի պետությունն իր մեջ ընդգրկում էր մոտավորապես հետևյալ տերիտորիաները. ամբողջ Հյուսիսային Միջագետքը, Վանա լճի ավազանը, Արևելյան և Արևմտյան Տիգրիս գետերի և Հայկական Տավրոս լեռնաշղթայի միջև ընկած շրջանները, ինչպես և Արածանի գետի ստորին, գուցե նաև նրա միջին և վերին հոսանքների շրջանները։ Նա հետագայում իրեն է միացրել նաև Ասորիքի (Սիրիայի) հյուսիսային մասերը։ Այսպիսի սահմաններում, բնականաբար, Միտանին հաշվվում էր իր ժամանակի Առաջավոր Ասիայի խոշորագույն պետություններից մեկը։ Նա դրեթե շարունակ պատերազմների մեջ էր գտնվում Խեթական պետության, Բաբելոնի, Ասորեստանի և Եգիպտոսի հետ։ Մեզ են հասել խուրրիների լեզվով գրված սեպագիր մի շարք արձանագրություններ։

Հարևանների հետ ունեցած անվերջ պատերազմների հետևանքով Խուրրիների պետությունը, հետզհետե թուլանալով, մ. թ. ա. 15-րդ դարում ուժեղացած Ասորեստանի կողմից ստանում է ծանր հարված, որից հետո նա մոտ երկու դար, որպես Ասորեստանի վասալ իշխանություն, իր գոյությունը աշխարհագրական նեղ շրջաններում պահպանելուց հետո, մ. թ. ա. 14-րդ դարի վերջին վերջնականապես քայքայվեց։ Միտանիի կազմի մեջ մտնող այն տերիտորիաները, որոնք ընկած էին Վերին Միջագետքում, նրա անկումից հետո անցան Ասորեստանին։

Միտանի պետության քայքայումն ու անկումը ևս, Խեթական պետության նման, հիմնականում բացատրվում է նրա բնակչության անմիատարրության և տարբեր շրջանների միջև եղած թույլ ու հեղհեղուկ կապով։ Միտանի պետության մեջ բնակվող բազմաթիվ ցեղերի և ցեղախմբերի ամենից մարդաշատը և զորեղը խուրրիների կամ սուբարիների ցեղախումբն էր, որի ձեռքին էլ հենց հիմնականում գտնվում էր քաղաքական իշխանությունը։

Միտանի անունը ավելի ուշ պահպանվեց մատիեն ժողովրդի անվան մեջ։ Իսկ նրա մեջ քաղաքական կարևոր դեր կատարող սուբարիների (խուրրիների) հիշատակը, պատմական թատերաբեմից հեռանալուց հետո, պահպանվել է իրենց երկրի աշխարհագրական անվան մեջ, որը համապատասխանում է ուրարտական շրջանի Ծուպանի և հին հայկական Ծոփք աշխարհագրական անուններին։ Թվում է, թե սուբարիների անվան հետ պետք է կապել նաև Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին բարձրացող Ծիպան կամ Սիփան (կոչվել է նաև Նեխ-Մասիք) լեռնագագաթի անունը։

Հայասա.— Խեթական արձանագրությունների հայտնաբերման և վերծանման շնորհիվ, որ կատարվել է 20-րդ դարում բավական տեղեկություններ ենք ստանում Հայասա կամ Հայասա-Ազզի երկրի մասին։ Այդ արձանագրությունների մեջ հաղորդված տեղեկություններից պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում դեռևս մ. թ. ա. 15-րդ դարում կազմավորվել էր հայա ցեղերի Հայասա կամ Հայասա-Ազզի ցեղային միությունը։ Հայասան իր մեջ ընդգրկում էր բավական ընդարձակ տերիտորիաներ։ Նրա կազմի մեջ էին մտնում ավելի ուշ շրջանում Փոքր Հայք կոչվող երկրի մեծ մասը (Իրիսի վտակ Գայլ գետի ավազանում) և Բարձր Հայքի արևմտյան մեծ մասը։

Այլ կերպ ասած, Հայասայի տերիտորիան բաղկացած էր Գայլ, Արևմտյան Եփրատ և Ճորոխ գետերի վերին հոսանքներում ընկած շրջաններից։ Տերիտորիալ տեսակետից, համապատասխան երկու հիմնական ցեղախմբերի, Հայասան բաժանված էր երկու մասերի՝ հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան։ Դրանցից առաջինը կոչվում էր Ազզի և հանդիսանում էր ազզի ցեղախմբերի երկիրը, իսկ երկրորդը բուն Հայասան էր՝ հայասա ցեղախմբերի բուն երկիրը[1]։

Հայասա և ազզի ցեղախմբերից կազմված ցեղային այդ միության առաջնորդներին խեթերն անվանում են «թագավոր»։

14-րդ դարի սկզբից սկսած (մ. թ. ա.) Հայասայի «թագավորները», լայնացնելով իրենց երկրի տերիտորիան, արևմուտքում նրա սահմանը հասցրել էին Խեթական թագավորությանը։ Իսկ հարավում և հարավ-արևելքում նա սահմանակից էր Միտա-

[1] Տես Гр. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947, աշխատության կցված քարտեզը։

նին։ Այդ պատճառով էլ Հայասա-Ազզին հաճախակի ընդհարման մեջ էր գտնվում իր այդ հարևանների՝ Խեթական թագավորության և Միտանիի հետ։ Խեթերի հետ նրա ունեցած պայքարի ժամանակաշրջանը շարունակվեց ավելի քան երկու դար սկսած մեր թվարկությունից առաջ 14-րդ դարի սկզբներից։

Հայասա-Ազզին ռազմացեղային մի ուժեղ և բավական մարդաշատ միություն էր։ Այնտեղ դասակարգային տրոհումը, համեմատած իր արևմտյան հարևան Խեթական թագավորության հետ, դեռևս այնքան չէր խորացել։

Հայասան ուներ սեփական զորք, բավականաչափ զարգացած տնտեսություն, կուլտուրա։ Բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր։ Բավականաչափ զարգացած է եղել նաև մետաղագործությունը։ Հայասայում կային մի քանի քաղաքներ և բերդեր։ Նրա նշանավոր քաղաքներից էր Կոմմախան։ Ուսումնասիրողների կարծիքով, վերջինս համապատասխանում է Արևմտյան Եփրատի ձախ ափին գտնվող հին հայկական Անի ամրոցին, որը միջին դարերից սկսած հայտնի է Կամախ անունով և այժմ էլ գոյություն ունի[1]։

12-րդ դարի սկզբներից սկսած (մ. թ. ա.), երբ կործանվեց Խեթական թագավորությունը, ընդհատվում են նաև նրա հարևան Հայասայի վերաբերյալ գրավոր տեղեկությունները։ Սակայն մի քանի անուղղակի հանգամանքներ ցույց են տալիս, որ հայասացիները հետագա դարերում էլ շարունակեցին Հայկական լեռնաշխարհում որոշ պատմական դեր խաղալ։

Նաիրյան ցեղախմբեր.—Միտանիի անկումից հետո, նրա կազմի մեջ մտնող ցեղախմբերը, որոնք բնակվում էին գլխավորապես Հայկական Տավրոսի ու երկու Տիգրիսների (Արևմտյան և Արևելյան) միջև ընկած շրջաններում և Վանա լճի ափերին, ասորական արձանագրություններում[2] կոչված են Նաիրի[3] ժողովուրդներ։

[1] Տես Гр. Капанцян. Хайаса—колыбель армян, Ереван, 1947, աշխատության կցված քարտեզը։

[2] Նաիրի երկրի ցեղերի մասին եղած ամենահին արձանագրությունը ասորական Սալմանասար Ա. թագավորինն է, որը վերաբերվում է մ. թ. ա. 1280 թվին, այդ արձանագրության մեջ նա հիշատակում է Նաիրի երկրներն իր կողմից նվաճելու մասին։

[3] Նորագույն ուսումնասիրությունների համաձայն «Նաիրի» նշանակում է «գետային», «գետերի»։ Այնպես որ այդ անունը էթնիկական ծագում չունի։

12-րդ դարին (մ. թ. ա.) վերաբերող ասորական Թիգլաթպալասար Ա. թագավորի (մ. թ. ա. 1116—1090 թ. թ.) թողած արձանագրություններից երևում է, որ դեպի Նաիրիի երկրների վրա կատարած իր արշավանքների ժամանակ նրա դեմ դուրս եկած Նաիրյան երկրների «թագավորների» թիվը հասնում էր 60-ի։ Դրանից էլ հետևում է, որ Նաիրիի ժողովուրդը միատարր չէր։ Բազմաթիվ «թագավորներ»-ի (սրանք իրականում եղել են ցեղախմբերի առաջնորդներ) գոյությունն այդ ժամանակաշրջանում ցույց է տալիս, որ Նաիրի երկրներում բնակվում էին մի քանի տասնյակ ցեղային և տոհմացեղային միություններ, որոնք արտաքին վտանգների ժամանակ դաշնակցած դուրս էին գալիս ու կռվում իրենց անկախության համար։

Նաիրյան ցեղախմբերը նախկինում Միտանի պետության կազմի մեջ մտնող տեղաբնիկներից էին, որոնք խուրրիների (սուբարիների) պետության (Միտանիի) կործանումից հետո տերիտորիալ և քաղաքական տեսակետից բաժանվեցին իրարից։

Նաիրիի ժողովուրդների (ցեղախմբերի) տնտեսական կյանքի պատմությանը վերաբերող նյութերից շատ քիչ բան է հասել մեզ։ Սակայն հասած այդ սակավ նյութերն էլ բավական հիմք են ծառայում գաղափար կազմելու նրանց զբաղմունքի մասին։ Նրանց տնտեսության հիմքը կազմում էին գյուղատնտեսության երկու գլխավոր ճյուղերը՝ երկրագործությունն ու անասնապահությունը, որոնց հետ միասին անշուշտ գոյություն ուներ նաև արհեստագործությունը։

Նաիրին դեռևս պետություն չէր բառիս իսկական իմաստով։ Բայց այնտեղ ապրող ցեղախմբերը զարգացման տեսակետից բավականին առաջադիմել էին և նրանց հետագա քայլն անխուսափելիորեն տանում էր դեպի դասակարգերի և պետության առաջացումը։

Ուրարտական ցեղախմբեր.—Նաիրյան ցեղախմբերի կազմի մեջ մտնող ուրարտացիները (որպես առավել զարգացած և ուժեղ ցեղախումբ), աստիճանաբար իրենց ենթարկելով նաիրյան մյուս ցեղախմբերին, 9-րդ դարի կեսերին հիմնադրեցին մի պետություն,

որը պատմության մեջ հայտնի է Ուրարտու[1], Ուրաշտու կամ Վանի թագավորություն անունով։

Նրա առաջին թագավորներն ուղղակի կրում էին «Նաիրի երկրի արքա» (հայերեն՝ «Գետերի երկրի արքա») տիտղոսը։ Իսկ հետագայում պետության մեջ քաղաքական իշխանությունն իրենց ձեռքը վերցրած ուրարտացիների բուն երկրի՝ Բիաինայի անվամբ կոչվում էին «Բիաինա երկրի արքա»։

Ուրարտուն իր ծաղկման շրջանում (մոտավորապես մ. թ. ա. 8-րդ դարի առաջին կեսում) գրավում էր համարյա ամբողջ Հայկական լեռնաշխարհը։ Նրա սահմաններն այդ ժամանակաշրջանում հյուսիսում հասնում էին Փոքր Կովկասի և Զլդերի լեռնաշղթաներին, հարավում՝ Կորդուաց լեռնաշղթային և Արևմտյան Տիգրիս գետին, արևմուտքում՝ Եփրատ գետին, իսկ արևելքում՝ Փոքր Կովկասի հարավ-արևելյան ծայրերը Ուրմիա լճի արևելյան ափերի հետ միացնող գծին։ Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ վերոհիշյալ ժամանակաշրջանում դեռ դրանից էլ ընդարձակ են եղել Ուրարտական պետության սահմանները։ Չնայած Ուրարտական պետության կազմի մեջ մտնող մի շարք երկրների աշխարհագրական դիրքը դեռևս չի ճշտված, բայց, այնուամենայնիվ, այդպիսի ենթադրության համար հիմք է ծառայում և հավանական է համարվում այն, որ այդ երկրներն ամբողջովին, կամ համենայն դեպս նրանց մեծ մասը, գտնվում էին նշված սահմաններից դուրս՝ Վիրքի (Վրաստան) և Աղվանքի (Հյուսիսային Ադրբեջան) կողմերում։ Քաղաքական և հասարակական զարգացման տեսակետից Ուրարտական պետությունը բաժանվում էր երկու մասի՝ կենտրոնական և ծայրամասային երկրներ։ Առաջինն ուրարտացիների բուն երկիրն էր, որը հայտնի էր Բիաինա անունով։ Բիաինան գտնվում էր Վանա լճի ավազանի շրջակայքում։ Այստեղ բնակչության մեծամասնությունը կազմում էին ուրարտացիները։ Նա տարածվում էր կենտրոնական մասում և կազմում էր պետության կորիզը։ Ուրարտական կենտրոնական այդ մասում բնակչությունը համեմատաբար ավելի միասնական էր և նրա շրջանների միջև եղած տնտեսական ու քաղաքական կապերն ավելի

1 Մինչև 9-րդ դարը (մ. թ. ա.) ասորական երկու արձանագրությունների մեջ կոչված է «Ուրուատրի», իսկ 9-րդ դարից հետո միշտ կոչվել է Ուրարտու։

բազմակողմանի և ամուր էին։ Բիաինայում նախնադարյան համայնքն իր տեղը զիջել էր գյուղական համայնքին և ստեղծվել էր ստրկատիրություն։

Ուրարտական պետության մայրաքաղաքը՝ Տուշպան կամ Տոսպը, որն ուներ կենտրոնական դիրք Բիաինա երկրում, գտնվում էր Վանա լճի արևելյան ափին։ Տուշպան հետագայում կոչվեց Վան, Վան—Տոսպ։ Վան անունը առաջացել է «Բիաինա» անվան հընչյունափոխությունից։ Տուշպա կամ Տոսպ անունը հետագայում հայերը տարածեցին Վան քաղաքի, նրա շուրջն ընկած գավառի և ապա նաև լճի վրա։

Ուրարտական պետության մեջ մտնող ծայրամասային երկրների տերիտորիաները միասին վերցրած մի քանի անգամ գերազանցում էին կենտրոնական մասից՝ Բիաինա երկրից։ Այստեղից էլ միանգամայն անվիճելի պետք է համարել ուսումնասիրողների արտահայտած այն կարծիքը, ըստ որի ուրարտացիներն իրենց ղեկավարած այդ պետության մեջ կազմում էին փոքրամասնություն։ Ծայրամասային երկրների բնակչությունն է՛լ ավելի էր անմիատարր։ Արձանագրությունների մեջ հիշատակվող բազմաթիվ երկրներից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում էր մի-մի էթնիկական-տերիտորիալ միավոր՝ մի ցեղախմբի երկիր։ Այնպես որ Ուրարտական պետության ծայրամասերի վարչական-տերիտորիալ բաժանումները հիմնականում համընկնում էին էթնիկական շրջանների հետ։ Բնակչությունն իր հասարակական զարգացման տեսակետից այս երկրներում ավելի ցածր աստիճանի վրա էր գտնվում, քան Բիաինայում։ Նրանց միջև թույլ էին քաղաքական և տնտեսական կապերը։ Այստեղ, ավելի հին ժամանակաշրջանների հետ համեմատած, արագ կերպով քայքայվում էր տոհմական հասարակությունը, մի պրոցես, որ Հայկական լեռնաշխարհում սկսվել էր դեռևս մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսերին։

Ուրարտական պետության մասերը կազմող երկրներից և այլ աշխարհագրական վայրերից շատերի անունները պահպանվեցին հետագա դարերի ընթացքում։ Այսպես, ասորական արձանագրությունների տեքստերում հաճախակի հիշատակվող Էնզիտե լեռնային երկիրը համապատասխանում է Պտղոմեոսի հիշատակած Անզիտենի և հայկական միջնադարյան Անձիտի (կամ Հանձիտ) հետ։ Նրանք իրար համապատասխանում են ոչ միայն հնչյունական

տեսակետից, այլ և տեղագրությամբ. նա տարածվում էր Արածանիի (Մուրադ չայ) ստորին հոսանքի շրջանում։ Կասկած չկա այն բանում, որ ուրարտական Դիաուեխի (ասորական Դայանի) երկրանունը համապատասխանում է հունական անտիկ պատմագիրների հիշատակած Տաոխի և հայկական միջնադարյան Տայք անվան հետ։ Ուրարտական Կոմմուխը անտիկ գրականության մեջ պահպանվել է Կոմագեն ձևով, Մելիտիենն՝ Մալաթիա ձևով (Եփրատի աջ ափին), Արզանի գետի անունը (անտիկ պատմագիրների մոտ՝ Արզանիաս)՝ Արածանի ձևով։ Ուրարտական Ախուրիանի, Աշտուխինի քաղաքները, որոնք գտնվում են Սարիղամիշի կողմերում (Կարսից հարավ-արևմուտք), իրենց տեղագրությամբ և անունների հնչյունական տեսակետից, ինչպես գտնում են նորագույն ուսումնասիրողները, լիովին համապատասխանում են առաջինը Ախուրյան գետի, իսկ երկրորդը՝ Կարսի շրջանում գտնվող Աստախանե վայրի (միջնադարյան Աստեղանի) անվանը։ Անգամ այժմյան հայկական բազմաթիվ քաղաքների և գյուղերի անունները գալիս են ուրարտական շրջանից, որոնք, իհարկե, ժամանակի ընթացքում կրել են որոշ ձևափոխություններ։ Այսպես. հավանական է համարվում այն, որ Ալաշկերտը համապատասխանում է նույն տեղում հայտնաբերված ուրարտական արձանագրության մեջ հիշատակված Անաշի հետ, չնայած նրան, որ հայերն այն (Ալաշկերտը) միջնադարում անվանում էին Վաղարշակերտ։ Վաղուց արդեն ցույց է տրված, որ հին և միջնադարյան հայկական Մանազկերտ քաղաքի (այժմ ևս՝ Մանազկերտ—Արածանիի ձախ ափին) անունն առաջացել է ուրարտական Մենուա թագավորի անունից, որն այդ քաղաքի հիմնադիրն է։

Կարելի է բերել նույն կարգի բազմաթիվ այլ օրինակներ ևս, բայց այդքանն էլ բավական է, որպեսզի համոզվենք այն բանում, որ իրոք Հայկական լեռնաշխարհի տեղագրական և այլ բնույթի աշխարհագրական անունների մի զգալի մասը գալիս է ուրարտական շրջանից։

Եթե քաղաքական ու հասարակական արտադրական հարաբերությունների տեսակետից ուրարտական պետությունը բաժանված էր երկու մասի, ուրարտացիների բուն երկրի (Բիաինայի) և ծայրամասային նահանգների, ինչպես քիչ առաջ ասացինք, ապա էթնիկական տեսակետից նա բազմատարր էր։ Ուրարտական պետության վարչա-տերիտորիալ միավորները, մանավանդ ծայրամասային նահանգներում, հիմնականում միաժամանակ հանդիսանում էին էթնիկական միավորներ։ Չնայած այն բանին, որ Ուրարտական պետությունն ստեղծեց որոշ բարենպաստ պայմաններ Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղախմբերի և ցեղերի տընտեսական, կուլտուրական և քաղաքական սերտ կապերի և ձուլման համար, այնուամենայնիվ, այդ պետության մեջ մնացին նախկին ցեղերի և ցեղախմբերի մեծագույն մասը։

Արդի գիտությունն իր բարձրարժեք ուսումնասիրություններով կարողացել է պարզաբանել Ուրարտական շրջանում Հայկական լեռնաշխարհում, հատկապես նրա արևմտյան և հարավային մասերում, ապրող տեղաբնիկներին վերաբերող բազմաթիվ հարցեր։ Նյութական կուլտուրայի մնացորդների, ուրարտական և ասորական սեպագիր արձանագրությունների, ուրարտական շրջանի աշխարհագրական անունների, ինչպես և ժամանակագրական տեսակետից ավելի մոտ ապրած անտիկ մատենագիրների հաղորդած տեղեկությունների հիման վրա, ներկայումս ոչ միայն պարզված է ուրարտական բնակչության հասարակական զարգացման աստիճանը և կուլտուրային ու տնտեսությանը վերաբերող բազմաթիվ խնդիրներ, այլ և նրանց էթնիկական մոտավոր կազմը։

Ուրարտական պետության կազմի մեջ մտնող ցեղախմբերից են.

ա) Ուրարտացիներ.— Սրանք հիմնականում բնակվում էին, ինչպես արդեն վերև ասացինք, Բիաինա երկրում (Վանա լճի ավազանում)։ Հավանաբար նրանց մի որոշ մասն էլ կայազորային ծառայություն էր անում և պետական պաշտոններ վարում ծայրամասային երկրներում։ Իրենց պետության ծայրամասային երկրներն ու սահմանները պաշտպանելու համար ուրարտացիները կառուցել էին բազմաթիվ բերդեր։ Մեծ քանակությամբ բերդեր էին կառուցված ոչ միայն պետության հարավային (Ասորեստանի կողմում) և հարավ-արևելյան (Վանա և Ուրմիո լճերի միջև ընկած լեռնային երկրները) կողմերում, այլ և հյուսիսային մասերում՝ Արաքս գետի միջին հոսանքի շրջանում։ Հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ, Հայկական ՍՍՌ տերիտորիայում հայտնաբերված են ուրարտական մի քանի քաղաքների և բերդերի ավերակներ։ Այսպես, Սևանա լճի հարավ-արևմտյան

մասում Հաթամխան գյուղի մոտ հայտնաբերված մի մեծ բերդի ավերակները հանդիսանում են ուրարտական Տուլիխու քաղաքի (ավելի ճիշտ՝ բերդաքաղաքի) մնացորդները. Նոր Բայազետի մոտ գտնվող ժայռի վրա դարձյալ կան հին բերդի ավերակներ։ Այդ բերդը ևս ուրարտական ժամանակաշրջանի է և կրել է «Խալդ աստծու քաղաք» անունը։ Նույն Սևանա լճի հարավային ափին Ծովինար գյուղից ոչ հեռու հայտնաբերված են ուրարտական մի ուրիշ բերդի ավերակներ։ Ուրարտական ժամանակաշրջանում այդ բերդը կոչվում էր «Թեյշեբ աստծու քաղաք»։ Բերդեր են եղել նաև Երևանի շրջակայքում, այժմյան Կարմիր Բլրի (ուրարտական ժամանակաշրջանում կոչվել է «Թեյշեբաինի») տեղում, Շենգավիթում և, հավանաբար, Երևանում։ Ուրարտական ժամանակաշրջանում Հարավային Անդրկովկասում, որը կազմում էր Ուրարտական պետության հյուսիսային բարեբեր երկիրը, ամենից հռչակվածը Արգիշտիխինիլի («Արգիշտիի քաղաք») քաղաքն էր, որ կառուցված էր Արգիշտի Ա-ի օրոք (մ. թ. ա. 781—760 թթ.)։ Արգիշտիխինիլին, որ համապատասխանում է Երվանդյանների տիրապետության և ավելի ուշ ժամանակաշրջանի հայկական Արմավիր քաղաքին, հանդիսանում էր ուրարտացիների երկրորդ մայրաքաղաքը։

Նույնպիսի բերդեր և բերդաքաղաքներ կային նաև, ինչպես նշեցինք, Ուրարտական պետության մյուս ծայրամասերում։ Իսկ դա ցույց է տալիս, որ բուն ուրարտացիների մի մասը գտնվելիս են եղել պետության ծայրամասային երկրներում և քաղաքներում՝ այստեղ կատարելով զինվորական և վարչական ծառայություններ։

Ուրարտացիները երբեմն նրանց գլխավոր աստծու՝ Խալդի անվամբ որոշ գիտնականների մոտ կոչվել են խալդեր։ Բայց այժմ պարզված է, որ ուրարտացիները խալդեր չեն կոչվել։ Հետևապես ժխտվում է այն կարծիքը, ըստ որի ուրարտացիները Խալդ աստծու անվամբ իրենց իբր կոչել են խալդեր։ Նրանց անունը հետագայում պահպանվել է ալարոդ ժողովրդի, Արարատ երկրանվան, Ռշտունիք գավառանվան, Ռշտունյաց նախարարական տան անվան մեջ։

բ) Արմեններ.— Բ. Բ. Պիոտրովսկին իր «Հայ ժողովրդի առաջացման մասին» աշխատության մեջ, ուրարտական արձանագրությունների, անտիկ և միջնադարյան հայկական աղբյուրների, ինչպես և անուղղակի պատմական փաստերի հիման վրա, բավականին մանրամասնորեն խոսում է Արմինա-Արմե երկրի և նույնանուն՝ արմեն ցեղախմբի մասին, որը, նրա կարծիքով, հանդիսացել է որպես հայ ժողովրդի մեջ մտած տեղական արմենական էթնիկ խմբակցության հիմնական էլեմենտը։ Արմենները հանդիսանում էին տեղաբնիկ նաիրյան ժողովուրդներից մեկը։ Նրանք տեղական արմենական-խուրրիական ցեղային մի խմբակցություն էին։

Արմենների բուն երկիրը գտնվում էր Ուրարտական պետության հարավ-արևմտյան մասում՝ Հայկական Տավրոսի և Տիգրիս գետերի միջև։ Նրանց երկիրը տերիտորիալ տեսակետից համարյա համընկնում էր Նաիրյան երկրների հետ։ Այդ տերիտորիայում, բացի արմեններից, բնակվում էին նաև նաիրյան այլ ցեղախմբեր։ Ուրարտական պետության կործանմանն անմիջապես հաջորդող ժամանակաշրջանին վերաբերվող վկայություններից երևում է, որ արմենները գրավել են բավականին մեծ տերիտորիա, և նրանք նաիրյան ցեղախմբերի մեջ մոտավորապես մ. թ. ա. 6-րդ դարում ամենից մարդաշատն են եղել։ Ուրարտուի անկման շրջանում արմեններն անջատվելով նրանցից (մ. թ. ա. 7-րդ դարում) կազմեցին առանձին ռազմա-ցեղային միություն։

գ) Մատիններ, ալարոդներ և սասպեյրներ.— Սրանց մասին գրավոր վկայություն ունի 5-րդ դարի (մ. թ. ա.) հայտնի պատմագիր Հերոդոտը։ Այս երեք ցեղախմբերն էլ տեղաբնիկ են։ Նրանցից առաջին երկուսը՝ մատիենները և ալարոդները հնագույն խուրրիական ցեղից են։ Հավանական է համարվում այն, որ «մատիեն» ցեղախմբի անունը մնացել է «միտանի» պետության անունից, իսկ ալարոդները համարվում են ուրարտացիների անմիջական հետնորդները։ Այնպես որ երկուսն էլ (թե՛ մատիենները և թե՛ ալարոդները) տեղական խուրրիական, իսկ ավելի ուշ ուրարտական կոչվող ցեղախմբերից էին։ Ալարոդները բնակվում էին Արարատյան դաշտավայրի և Վանա լճի կողմերում, մատիենները՝ Վանա և Ուրմիո լճերի շրջաններում։

Սասպեյրները պատկանում էին Հայասա-Ազզի ցեղախմբերի թվին։ Նրանք բնակվում էին Ճորոխ գետի վերին հոսանքի շրջանում։ Զարմանալի հավանական է համարվում այն, որ սասպեյր-

ների անունը պահպանվել է միջնադարյան Հայաստանի Բարձր Հայք կոչվող նահանգի Սպեր գավառանունով։

դ) Տայեցիներ, մարդեր, խալդայներ, կորդուացիներ.— Սրանց, ինչպես նաև մի քանի այլ ցեղախմբերի մասին հիշատակում է հույն պատմագիր Քսենոֆոնը, որը մ. թ. ա. 401—400 թվերին անցել է Հայկական լեռնաշխարհով։ Տայեցիները, խալդայները և կորդուացիները տեղաբնիկ էին, իսկ մարդերը Հայկական լեռնաշխարհ էին եկել հարևան Մեդիայից (Մարաստանից)։

Տայեցիները, որ Քսենոֆոնի մոտ կոչված են տաոխներ, հիմնականում բնակվում էին Ճորոխի միջին հոսանքի և նրա աջակողմյան վտակ Օլթիի ավազանում, այսինքն այն տերիտորիայում, որը հետագայում հայ մատենագրության մեջ կոչված է Տայք (Տայոց աշխարհ)։ Տայեցիների երկիրը ուրարտական ժամանակաշրջանում կոչվում էր Դիաուեխի։

Խալդայների հիմնական երկիրն այդ ժամանակներում համարում են հայկական մատենագրության մեջ Խաղտիք կոչված երկիրը, որը տարածվում էր Սև ծովի հարավ-արևելյան լեռնային ափերին, հյուսիս-արևմուտքից սահմանակցվելով Տայոց աշխարհին։ Քսենոֆոնի վկայությամբ նրանք արմենների մոտ ծառայում էին որպես վարձու զինվորներ։

Կորդուացիները Քսենոֆոնի մոտ կոչված են կարդուխներ։ Հույն պատմագրի վկայության համաձայն, կորդուացիները բնակվում էին լեռներում և, ռազմիկ լինելով հանդերձ, չէին ենթարկվում թագավորներին։ Նրանք եղել են բավականին զարգացած ժողովուրդ։ Նրանց «տները կահավորված էին բազմաբանդակ պղնձե ամաններով», ապրում էին «բազմաթիվ ու գեղեցիկ տներում, որոնք հարուստ էին պաշարեղենով. և գինի ևս շատ կար, որը պահում էին ծեփված հորերում»[1]։ Կորդուացիները բնակվում էրն Կենտրիտես (Բոհտան-սու) գետից հարավ ընկած երկրում, որն այդ ժողովրդի անվամբ էլ հետագայում շարունակվեց կոչվել Կորդուաց աշխարհ[2]։ Տերիտորիալ տեսակետից Կորդուաց աշխարհը կազմում է այժմյան Քրդստանի մասը։ Նկատի ունենալով այդ,

1 Քսենոֆոն, Անաբազիս, տես Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա., Երևան, 1944, էջ 382 և 383։

2 7-րդ դարի (մ. թ.) «Աշխարհացույց»-ի մեջ կոչված է «Կորճեք»։

ինչպես և Կորդուք ու Քրդստան, Կորդուացի և քուրդ (կորդ) անունների հնչյունական նմանությունները, որոշ ուսումնասիրողներ արտահայտել են այն կարծիքը, ըստ որի կորդուացիները հանդիսացել են այժմյան քրդերի նախորդները։ Արդի պատմագիտությունն իրավացիորեն ժխտում է այդ սխալ կարծիքը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կորդուացիները, ինչպես կարելի է պարզ տեսնել Քսենոֆոնի վերը բերված վկայությունից, նստակյաց և բավականին զարգացած ժողովուրդ էին, հետևապես նրանք չէին կարող լինել մի այնպիսի ժողովրդի նախահայրեր, որոնք հետագայում երկար դարերի ընթացքում միայն վարում էին վաչկատուն կյանք։

Մարդերը կամ մեդացիները (մարերը) հիմնականում բնակվում էին Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան մասերում։ Նրանց երկիրն իրենց անունով էլ կոչվում էր Մեդիա կամ Մեծ Մեդիա (հայ պատմագրության մեջ կոչվել է Մարաստան)։ Մեդացիները լինելով Հայկական լեռնաշխարհի հարևան երկրի բնակիչներ, բնականաբար, նրանց մի մասն անցել է Հայկական լեռնաշխարհի խորքերը։ Ենթադրվում է, որ նրանց հիմնական բնակության շրջանները Հայկական լեռնաշխարհում եղել են հայ մատենագրության մեջ հետագայում Տուրուբերան կոչվող նահանգի Մարդաղի և Վասպուրական նահանգի Մարդաստան գավառները։ Հռոմեական պատմագիր Տակիտոսի հիշատակության համաձայն, հռոմեական զորավար Կորբուլոնը Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը գրավելուց հետո (58 թ. մ. թ.), երբ 59 թ. իր զորքով շարժվում էր դեպի Տիգրանակերտ, անցավ Մարդերի երկրով։ Վերջիններս, նույն պատմիչի ասելով, հաճախակի հարձակումներ էին կատարում և մեծ վնասներ պատճառում դեպի Տիգրանակերտ արշավող հռոմեական բանակին[1]։ Դրանից հետո մատենագրական աղբյուրներում այլևս չենք գտնում մարդերի մասին որևէ հիշատակություն։ Ենթադրվում է, որ հայ Արշակունիների տիրապետության շրջանում հայտնի դարձած Մարդպետական նախարարական տունը, որը իշխում էր Մարդպետական աշխարհում (Վասպուրականի հյուսիս-արևմտյան գավառները), առաջացել է մարդերի

1 Տես Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., էջ 336։

ավագանուց՝ դասակարգային արոհման հետագա խորացման շնորհիվ։

Մեծ Մեդիայում և Ատրպատականում բնակվող մեդացիները (մարերը) աղվանների հետ միասին հանդիսանում են այժմյան ադրբեջանական ժողովրդի նախնիները։

ե) Ցեղեր և ցեղախմբեր, որոնց մասին գրավոր հիշատակություններ չկան։—Վերևում նշված տոհմացեղերից, ցեղերից և ցեղախմբերից բացի, Հայկական լեռնաշխարհում նախահայկական շրջանում բնակվելիս են եղել բազմաթիվ այլ ցեղեր և ցեղախմբեր, որոնց մեծագույն մասը մտել է հիշված ցեղախմբերի միության մեջ։ Այդ ցեղերի և ցեղախմբերի մասին մեր ձեռքը չեն հասել գրավոր հիշատակություններ, կամ այնպիսի աղբյուրներ, որոնց միջոցով հնարավոր լիներ համեմատաբար բազմակողմանի գաղափար կազմել նրանց վերաբերյալ։ Սակայն այդ բացը մասնակիորեն վերացվում է արդի լեզվաբանության և պատմական գիտության զարգացման շնորհիվ, որոնք հնարավորություն են ստեղծել, բանասիրական և պատմական անուղղակի որոշ նյութերի հիման վրա, պարզաբանել հնագույն ժամանակներում Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերին և ցեղախմբերին վերաբերվող մի քանի կնճռոտ հարցեր։

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհում ապրող հնագույն ցեղերն ու ցեղախմբերը, մտնելով ժողովուրդների կազմավորման պրոցեսի մեջ, դադարեցին ինքնուրույն գոյություն ունենալուց։ Նրանցից որպես հիշատակ (չհաշված կազմավորված ժողովրդի վրա նրանց թողած տնտեսական, լեզվական, կուլտուրական և քաղաքական ազդեցությունները) մնացել են այն շրջանների աշխարհագրական անունները, որոնց մեջ նրանք բնակվելիս են եղել։ Լեզվաբանների կարծիքով մեզ հասած աշխարհագրական այն անունները (հատկապես տերիտորիա ցույց տվող), որոնք ունեն հոգնակի թիվ, ցույց են տալիս հավաքական գաղափար։ Այդպիսի անուններն արտահայտում են թե՛ տվյալ ցեղի և թե այն երկրի անունները, որտեղ այդ ցեղերը կամ ժողովուրդն ապրում էին։ Իսկ դրաբարյան հայերենում Հայկական լեռնաշխարհի տերիտորիայի իմաստ ունեցող (գավառի, աշխարհի և այլնի) անունների մի զգալի մասն ունի հոգնակի թիվ։ Այլ կերպ ասած, Հին Հայաստանի (ինչպես և նրա հարևան երկրների) գավառանունների և «աշխարհ»-ների (նահանգների) անունների մեծ մասն ունի էթնիկական ծագում։ Այսպես՝ «Աղձնիք» նշանակում է «աղձիններ» (ժողովուրդ) և նրանց կողմից բնակեցված երկիրը, «Հայք»՝ «հայեր» (ժողովուրդ) և «Հայաստան» (երկիր), «Կորճայք»՝ «կորճեր» (ժողովուրդ) և նրանց կողմից բնակեցված տերիտորիան։ Նույն երևույթն է նկատվում նաև հարևան երկրների տեղանունների մեջ։ Օրինակ՝ «գամիրք» նշանակում է «կիմերներ» (ժողովուրդ) և նրանց կողմից բնակեցված երկիրը՝ հույների Կապադովկիան, «պարսք»՝ «պարսիկներ» և «Պարսկաստան», «Աղվանք»՝ «աղվաններ» և «Աղվանստան» (այժմ Ադրբեջան), «Վիրք»՝ «վրացիներ» և «Վրաստան» և այլն։

Ուստի ենթադրվում է (և շատ հավաստի է), որ Հին Հայաստանի Սյունիք, Գուգարք, Աղձնիք, Ուտիք, Կարին (կամ Բարձր Հայք) և այլ նահանգների, ինչպես և Ապահունիք, Հարք, Բզնունիք, Ռշտունիք, Վայոց ձոր, Գեղարքունիք և բազմաթիվ այլ գավառների անուններն ունեն էթնիկական ծագում։ Այսինքն նրանցից ամեն մեկում հնագույն ժամանակներում ապրելիս է եղել նույնանուն տոհմը, ցեղը կամ ցեղախումբը[1]։

Այսպիսով անվիճելի է այն, որ նախահայկական հնագույն ժամանակներում Հայկական լեռնաշխարհում բնակվելիս են եղել մի քանի տասնյակ տեղաբնիկ ցեղախմբեր, որոնց մեծագույն մասը մտել է նույն ցեղախմբերի թվին պատկանող խուրրիների և հայասացիների ցեղային միության, իսկ հետագայում՝ ուրարտացիների պետության մեջ։ Նրանք զարգացման տեսակետից գտնվելիս են եղել տարբեր մակարդակի վրա։

Տեղաբնիկների մասին նախքան վերջացնելն անհրաժեշտ ենք համարում երկու խոսք ասել նրանցից մեկի՝ «բալ»-երի կամ «բաղ»-երի վերաբերյալ։

«Բալեր» կամ «բաղեր» ցեղախմբի անունը ոչ մի տեղ չի հիշատակված։ Նրանց մասին ևս գիտնականների կողմից դատողություններ են արվում «բաղ» արմատ ունեցող աշխարհագրական տեղանունների հիման վրա։ Այսպես, պրոֆ. Գր. Ղափանցյանը ենթադրում է, որ հնագույն ժամանակներում խեթերի (կամ հեթիթ-

---

[1] Տոհմանուններից և ցեղանուններից մի քանիսը հիշատակված են բևեռագիր արձանագրությունների մեջ։

ներ) երկրից արևելք, մոտավորապես այժմյան Բիթլիսի (հնում՝ Բաղեշ) և Բալուի (Բալահովիտ) շրջաններում բնակություն էր հաստատել փոքրասիական տեղաբնիկ հզորագույն ցեղերից մեկը հանդիսացող «բալեր» կամ «բաղեր»-ը։ 8-րդ դարում (մ. թ. ա.), կիմմերների ճնշման տակ, բաղերը (մենք կասեինք նրանց մի մասը) շարժվել են դեպի արևելք և բնակություն հաստատել Հայկական լեռնաշխարհի արևելյան մասերում, ընդ որում նաև Սյունիքի հարավային մասում։ Բալերի բուն երկրում, Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում,—նրանց անունը պահպանվել է Բալահովիտ, Պաղնատուն, Պաղին, Բաղեշ և այլ տեղանունների ձևով, իսկ արևելքում՝ Սյունիքում՝ Բաղաբերդ և Բաղք (Բաղաց աշխարհ) անուններով[1]։ Նույն այդ ցեղանվան հետ է կապվում նաև Բաղասական աշխարհի (Կաղբ, Փայտակարան) անունը։

ղ) Կիմմերներ և սկյութներ.— Թե՛ կիմմերները և թե՛ սկյութները եկվոր են։ Նրանք Հայկական լեռնաշխարհ են եկել հարավային ռուսական տափաստաններից։ Կիմմերները մ. թ. ա. 8-րդ դարի վերջին Մերձվոլգյան տափաստաններից, Հյուսիսային Կովկասի վրայով և Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան մասով շարժվել են դեպի Առաջավոր Ասիայի արևմտյան մասերը։ Նրանք այնտեղ հաստատվեցին Հայկական լեռնաշխարհից արևմուտք գտնվող Կապադովկիայում, որը հայերի կողմից (կիմմերների անունով) կոչվեց Գամիրք[2]։ Ենթադրվում է, որ նրանց մի մասը, արշավանքի ընթացքում, հաստատվեց նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևմտյան շրջաններում[3]։

---

[1] Проф. Гр. Капанцян, Историко-лингвистич. значение топонимики древней Армении (*Երևանի Պետական Համալսարանի «Գիտական աշխատություններ», 1940 թ., հատ. 14-րդ, էջ 380—381*).

[2] Կիմմերների անունից առաջացած են համարում Կոմայրի (որը ոչ շատ հեռու անցյալում կոչվեց Ալեքսանդրապոլ, իսկ այժմ՝ Լենինական) քաղաքի անունը։

[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 421, *պրոֆ. Մելիք-սեթ-Բեկ*, Древняя Русь и армяне (*Հայկական ՍՍՌ Գ. Ա. Մառի անվան Լեզվի ինստիտուտ, «Աշխատությունների ժողովածու», հատ. Ա., Երևան, 1946, էջ 98. Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ., Երևան, 1947, էջ 146*։

Հաջորդ դարի սկզբներին (մ. թ. ա. 7-րդ դ.) Ռուսաստանի հարավային տափաստաններից սակերը (=սկյութացիներ) կասպից ծովի արևմտյան ափերով արշավեցին դեպի Մերձավոր Արևելք՝ այդ թվում նաև Անդրկովկաս ու Հայաստան։ Սակերն Անդրկովկասում տարածվեցին մինչև Սև (Պոնտական) ծովը։ Նրանց մի մասը հաստատվեց մ. թ. ա. 7-րդ դարի «Աշխարհացույց»-ի մեջ նկարագրված Ուտի կամ Ուտիք աշխարհի Շակաշեն արգավանդ գավառում (այժմյան Կիրովաբադի շրջան), որը համապատասխանում է հույն-հռոմեական հեղինակների Սակասենեին։ Սակերը, հաստատվելով Անդրկովկասում, բնականաբար, այնտեղ պետք է թողնեին որոշ ազդեցություն՝ էթնիկական, լեզվական և այլ տեսակետներից։ Նրանց հիշատակն Անդրկովկասում պահպանվել է մի շարք աշխարհագրական անուններում։ Այսպես, բացի վերը հիշված Շակաշենից, սակերից է մնացել նաև «զոկ» անունը։ Ենթադրվում է նաև, որ սակերի անունից է առաջացել նաև «Սիսակ-ան» (Սյունիք) անունը։

Մեր կարծիքով, սակերի անունից առաջացած պետք է համարել նաև այժմյան Զանգեզուր անունը, որը միջնադարում կոչվում էր Զագ-ե-ձոր (սակ-ե-ձորի աղավաղումը)։

2. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ԵՎ ՆՐԱ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Ասորեստանն ու Ուրարտուն մ. թ. ա. 7-րդ դարում վերին աստիճանի թուլացել էին՝ իրար միջև հաճախ կրկնվող պատերազմների և հարատև մրցակցության պատճառով։ Դրա հետ միասին, նրանց վերջնական անկման համար պատմական նախապայմաններ են ստեղծվում նոր հանդես եկող ժողովուրդների ներսում առաջացած հասարակական զարգացմամբ, դասակարգերի և պետությունների կազմավորմամբ։ Ասորեստանի և Ուրարտուի կազմի մեջ մտնող երկրները, հասարակական կյանքի զարգացման և նրա հետևանքով առաջացած սերտ կապերի շնորհիվ, վեր էին ածվել բավականաչափ ուժեղ ռազմա-ցեղային միությունների։

Առանձին այդ երկրներում իշխող դիրք ձեռք բերած ավագանին այլևս չէր բավականանում իր ցեղային միության ներսում ունեցած իշխանության ամրապնդմամբ. նա ձգտում էր ան-

կախության և միաժամանակ սկսում էր իր իշխանությունը տարածել հարևան թույլ զարգացած ցեղախմբերի և ցեղերի վրա։ Հասարակական կյանքի զարգացման և դասակարգային արոհման խորացման սոցիալական այդ բազայի վրա, մեծ պետությունների ներսում, վերին աստիճանի թույլ կապերով կապված և բռնությամբ մի պետության մեջ միավորված առանձին երկրները սկսում են անջատվել՝ կազմելով առանձին պետություններ և բռնելով ինքնուրույն զարգացման ուղի։

Առաջավոր Ասիայում, ինչպես մի այլ առիթով նշվեց, մ. թ. ա. 8—9-րդ դդ. հանդես էին եկել կիմմերներն ու սկյութացիները, որոնք հաճախ օգնում էին խոշոր պետությունների կողմից բռնի ուժով իրենց միացած փոքր երկրներին անջատվելու և, նրանց հետ դաշնակցելով, պայքար էին սկսել մեծ պետությունների դեմ։

Մեդերը, բաբելացիները սկյութացիները կործանեցին Առաջավոր Ասիայի հզորագույն պետությունը՝ Ասորեստանը։ Նրանք 612 թվականին հիմնահատակ ավերեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինուեն, իսկ 7 տարի հետո՝ մ. թ. ա. 605 թվականին վերացրին Ասորեստանի թագավորությունը։ Ուրարտական պետությունը ևս ենթարկվեց մեդերի և սկյութացիների հարվածներին։ Երևանի մոտ գտնվող Կարմիր Բլուրում կատարված հնագիտական պեղումներով, ինչպես և պատմական մի շարք վկայություններով պարզվել է, որ սկյութացիները գրավել և կործանել են ուրարտական պետության հյուսիսային մասի կարևոր կենտրոնները, իսկ մեդերը գրավել են նրա կենտրոնական մասերը՝ Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքը։ Այնպես որ մ. թ. ա. 585 թվականին ուրարտական պետությունը վերջնականապես կործանվեց։

Կործանված Ուրարտական պետության տերիտորիայում ապրող ցեղային միությունների հասարակական հետագա զարգացումը պատմականորեն ընթանում էր դեպի ժողովրդի և պետության առաջացումը։

Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղային միությունների հասարակական զարգացումը մ. թ. ա. 7—6-րդ դարերում արդեն հասել էր այն աստիճանի, որ սկսվեց նրանցից մի ժողովուրդ կազմելու պատմական անխուսափելի պրոցեսը։

Ուրիշ կերպ ասած, հասարակության դարավոր զարգացումն Հայկական լեռնաշխարհում այնքան էր առաջադիմել, որ «լոկ իրար կողք-կողքի ապրող ցեղերի միության տեղը» պետք է բռներ նրանց միաձուլումից առաջացած հայ ժողովուրդը։

Դեռևս կազմավորման արշալույսին գտնվող հայ ժողովուրդը ընկավ օտար տիրապետության տակ (Աքեմենյանների, ապա Սելևկյանների տիրապետության տակ) և ստիպված էր դարեր շարունակ պայքարել, որպեսզի կարողանար ստեղծել իր սեփական պետականությունը։ Այդ պայքարն իր հերթին ևս մեծապես նպաստեց Հայկական լեռնաշխարհի ցեղախմբերի միաձուլմանը։ Այնպես որ երբ հիմնադրվեց միասնական Հայկական պետությունը (մ. թ. ա. 6—5-րդ դդ.), հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը հասել էր իր պատմական-օրինաչափական ավարտին, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի բնակչությունը հիմնականում միավորվել էր հայ ժողովրդի մեջ՝ կազմելով ինքնուրույն պետություն։

Մեր թ. առաջին դարի հեղինակ-աշխարհագիր Ստրաբոնի վկայությամբ, մեր թվարկությունից առաջ երկրորդ դարի առաջին կեսին (Արտաշես Ա-ի օրոք) Հայկական լեռնաշխարհում արդեն տիրապետում էր մի լեզու՝ հայերենը. «այնպես որ, բոլորը միալեզու եղան», ասում է Ստրաբոնը։

Հին Հայաստանի բնակչության գերակշիռ մեծամասնությունը կազմում էին հայերը։ Նրանց թիվը անհամեմատ ավելի մեծ էր կենտրոնական նահանգներում՝ Վասպուրականում, Տուրուբերանում, Այրարատում, Սյունիքում և այլուր։

Հին Հայաստանի հայ բնակչության թվի վերաբերյալ չկան հատուկ ուսումնասիրություններ։ Հայագիտական աշխատությունների մեջ, որտեղ այս կամ այն առիթով խոսված է այդ հարցի մասին, Հին Հայաստանի բնակչության թվի վերաբերյալ տրված են հակասական և վերին աստիճանի անհավանական թվեր։ Այդ կարգի ուսումնասիրությունների մեջ հայերի թիվը ատանվում է վեցից մինչև ավելի քան երեք տասնյակ միլիոնի սահմաններում։

Վիճակագրությունն ընդհանրապես երիտասարդ գիտություն է։ Հայաստանում հին և միջին դարերում բնակչության ընդհանուր թիվն իմանալու համար հատուկ մարդահամար չի կատարվել, եթե չհաշվենք հարկատուների քանակի որոշումը աշխարհագիրնե-

րի ժամանակ։ Ուստի նրա բնակչության թվի մասին խոսելիս՝ անգամ հատուկ ուսումնասիրություն կատարելու դեպքում էլ, միայն կարելի է մոտավոր թիվ տալ, այն էլ ենթադրության շրջանակներում։

Հիմք ընդունելով զորքի քանակը, հարկերի ավյալները (գլխահարկը) և զանազան այլ անուղղակի հիշատակությունները, կարելի է եզրակացնել, որ Հին Հայաստանի հայ բնակչության թիվը չի անցել 5—6 միլիոնից։ Հավանական պետք է համարել, որ բուն Հայաստանի բնակչության թիվը 5—6 միլիոնի է հասել 13-րդ դարում[1] մոնղոլների ավերիչ արշավանքների նախօրյակին։

Հին Հայաստանում հայերից բացի, որոնք կազմում էին նրա բնակչության հիմնական զանգվածը, բնակություն էին հաստատել նաև այլ ժողովուրդներ։

Հռոմեական պատմիչ Ապպիանոսի վկայությամբ, Տիգրան Բ-ն (առաջին դար, մ. թ. ա.) իր արշավանքների ժամանակ, հելլենիստական 12 քաղաքներից 300 000 բնակիչ գաղթեցրեց և բնակեցրեց Հայաստանի քաղաքներում, հատկապես պետության նոր մայրաքաղաք Տիգրանակերտում։ Նրա գաղթեցրած բնակչությունը բաղկացած էր գլխավորապես հույներից, ասորիներից և հրեաներից։ Նույն դարի 40-ական թվականներին, երբ հայ-պարթևական միացյալ զորքերը գրավեցին Ասորիքը (Սիրիան), ապա Փյունիկիան և Կիլիկիան, բազմահազար հրաներ գաղթեցին և բնակություն հաստատեցին արևելյան երկրներում՝ այդ թվում և Հայաստանում։ 5-րդ դարի մատենագիր Փավստոս Բուզանդը վկայում է, որ չորրորդ դարում հրեական բազմահազար ընտանիքներ կային Երվանդաշատ, Արտաշատ, Զարեհավան և Հայաստանի այլ քաղաքներում[2]։ Նրա հաղորդած թվերից երևում է, որ հայկական որոշ քաղաքներում հրեաները բավականին մեծ տոկոս էին կազմում։ Որպես ընդհանուր երևույթ, կարելի է նշել, որ Հայաստանում գտնվող հույները, հրեաները և ասորիները բնա-

---

1 Տես Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., էջ 116։

1 Փաստոս Բուզանդ, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 262—263։

կություն էին հաստատել գերազանցապես քաղաքներում, իսկ նրանց հիմնական զբաղմունքն էր առևտուրն ու արհեստագործությունը։ Տիգրան Բ-ի (95—55 թթ.) և Արտավազդ Բ-ի (55—33 թթ. մ. թ. ա.) բերած հույն, ասորի և հրեա ռազմագերիների մի մասը ստրկացման էր ենթարկված։

Նշված ժողովուրդներից բացի, Հին Հայաստանում բավականաչափ մեծ թիվ էին կազմում նաև հարևան ժողովուրդները։ Այսպես, Գուգարքում և Տայքում հայերի հետ միասին բնակվում էին վրացիներ, որոնք այդ նահանգների հյուսիսային գավառներում կազմում էին մեծամասնություն։ Ուտիքում և Արցախում, մանավանդ նրանց արևելյան գավառներում, մեծ տոկոս էին կազմում հարևան աղվանները։ Հայաստանի հարավ-արևելյան նահանգներում բնակություն էին հաստատել մեդացիները, իսկ հետո՝ պարսիկները։ Մի ժամանակ Հայկական պետության կազմի մեջ մտնող Փայտակարանում, որ տարածվում էր Արաքս գետի ստորին հոսանքի շրջանում, հայերի թիվն աննշան էր, այնտեղ գերազանցապես ապրում էին այլ ժողովուրդներ։ Հայաստանի հյուսիս-արևմտյան մասերում՝ հայերի, հույների և այլ ժողովուրդների հետ միասին բնակվում էին նաև պոնտական այլևայլ ժողովուրդներ։ Հարևան ժողովուրդները, մանավանդ վրացիներն ու աղվանները, բնակության տեսակետից հայերի հետ այնքան էին ներթափանցել իրար մեջ, որ դժվար է նրանց էթնիկական սահմաններն առանձին-առանձին որոշել։

Ուրեմն այսպես, Հին Հայաստանում բացի հայերից բնակվում էին նաև հույներ, հրեաներ, ասորիներ, պարսիկներ, վրացիներ, աղվաններ և այլն։ Դրանից բացի, ամառները իրենց հոտերի հետ միասին զանազան վաչկատուն ցեղեր, գլխավորապես Մերձկասպյան տափաստաններից, գալիս էին Հայաստանի բարձրադիր արոտավայրերը, որպես ժամանակավոր բնակիչներ։

Ավելի ուշ շրջանում, արաբական տիրապետության օրոք, մոտ 8-րդ դարի կեսերից սկսած, Աբբասյան հարստության խալիֆները հայ ժողովրդին «հնազանդ» պահելու և Հայկական լեռնաշխարհի ստրատեգիական կարևոր դիրքն իրենց քաղաքական նպատակներին (ընդդեմ Բյուզանդիայի) ծառայեցնելու համար, Հայաստանում բնակեցնում էին մի շարք արաբական ցեղեր, որոնք պետք է հանդիսանային խալիֆայության հուսալի հենարա-

նը։ Այդպիսի քաղաքականության հետևանքով Հայաստանում արաբական տարրը հետզհետե աճում է։ Վանա լճի ավազանում ստեղծվում են Կայսիկ և Ութմանիկ արաբական ցեղերի էմիրությունները։ Արճեշում, Խլաթում, Դվինում և հայկական մի քանի այլ քաղաքներում բնակեցվում են մեծ թվով արաբ ու պարսիկ բնակիչներ, որոնց խալիֆայության կողմից տրվում էր մեծ արտոնություններ և իրավունք՝ ի հակադրություն տեղաբնիկ հայերի։

11-րդ դարից սկսած՝ Հայկական լեռնաշխարհում բնակություն են հաստատում նաև սելջուկ թուրքերը, իսկ 13-րդ դարից՝ մոնղոլները և թաթարները։

Հայաստանում օտար ժողովուրդներ բնակեցնելու հետ միասին պարբերաբար երկրից դուրս էր տարվում հայ բնակչության մի մասը։ Այդ երևույթը սկսվել էր դեռևս բյուզանդական կայսր Հուստինիանոսի ժամանակներից (մ. թ. 527—568 թթ.)։ Բյուզանդական կայսրությունը պարբերաբար պավլիկյան շարժման մասնակիցներին Հայաստանից արտաքսելուց և ոչնչացնելուց բացի, բազմահազար հայեր էր գաղթեցնում դեպի իր պետության արևմտյան սահմանները, որտեղ նրանք պետք է կայսրությունը պաշտպանեին արտաքին վտանգներից։ Հայերի և առհասարակ պավլիկյան շարժման մասնակիցների տեղափոխման բյուզանդական քաղաքականությունը դրանով հետապնդում էր, մի կողմից՝ Հայաստանում հայ էթնոսի նվազեցման միջոցով ավելի հաստատուն դարձնել իր տիրապետությունը, իսկ, մյուս կողմից՝ ոչնչացնել մեծ ծավալ ընդունած պավլիկյան շարժումը, որը ֆեոդալիզմի դեմ պայքարելուց բացի, վարում էր նաև ազատագրական պայքար ընդդեմ բյուզանդական կայսրության։ Հայերի տեղափոխումն իրենց սեփական երկրից դուրս ավելի մեծ չափեր է ընդունում, մանավանդ, 11-րդ դարի առաջին քառորդից սկսած։ 1021 թվին Վասպուրականի Սենեքերիմ թագավորը արևելյան դանդաղ ցեղերի հարձակումներից դրդված և Բյուզանդիայի ճնշման տակ, իր երկիրը հանձնում է Կայսրությանը, իսկ ինքը, բազմահազար հայերի հետ միասին, տեղափոխվում Փոքր Ասիա։ 1045 թվին նույն բախտին արժանացան նաև Գագիկ Բ. Բագրատունի թագավորը և բազմաթիվ հայեր։ Դրանից հետո, սելջուկների արշավանքների ժամանակ և ավելի ուշ՝ մոնղոլների և թուրքական զանազան ցեղերի ասպատակությունների պատճառով, հա-

յերի մի զգալի մասը ստիպված էր թողնել հայրենիքն ու դիմել դեպի Բյուզանդիա և Սև ծովի ափերը։

Հայերին տեղափոխելու բյուզանդական քաղաքականության հետևանքով Փոքր Ասիայում և նրա հարավ-արևելյան անկյունում՝ Կիլիկիայում սկսեցին մեծ դեր խաղալ այնտեղ կուտակված մեծ թիվ կազմող հայերը։ Նրանք Կիլիկիայում հիմնադրեցին հայկական թագավորությունը, որը խոշոր դեր խաղաց հայ ժողովրդի պատմության մեջ։

Չնայած այդ տեղափոխումներին և զանազան օտար ժողովուրդների Հայաստանում բնակություն հաստատելուն, այնուամենայնիվ, բուն Հայաստանում հիմնական բնակիչները, անգամ մինչև առաջին համաշխարհային պատերազմը, կազմում էին գերազանցապես հայերը։

Անուղղակի ավյալներից ելնելով՝ կարելի է ասել, որ Հին Հայաստանի բնակչության խտությունը միատեսակ չի եղել նրա բոլոր մասերում։ Բնակչության միջին խտությունը ճշգրիտ չի կարելի որոշել, որովհետև չի պարզված նրա ճշգրիտ թիվը։ Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ բնակչության խտությունն անհամեմատ մեծ է եղել կենտրոնական, համեմատաբար հարթավայրային, նահանգներում (Այրարատում, Տուրուբերանում, Վասպուրականում), Բարձր Հայքում ու Չորրորդ Հայքում։ Դա, նախ, երևում է նրանից, որ Հին Հայաստանի այդ մասերում էին գտնվում գլխավոր և մարդաշատ քաղաքները՝ Արտաշատ, Դվին, Վաղարշապատ, Արճեշ, Խլաթ, Բաղեշ, Վան, Ոստան, Կարին, Արծն, Տիգրանակերտ, Արշամաշատ և մյուսները։ Երկրորդ, բնակչության դրադմունքի մեջ այդ նահանգներում երկրագործությունն անհամեմատ ավելի մեծ տեղ էր գրավում, քան լեռնային շրջաններում։ Բնական է, որ երկրագործությունը ենթադրել է տալիս բնակչության ավելի մեծ խտություն, քան բնական արոտավայրերի բազայի վրա հենված անասնապահությունը, որն ավելի մեծ ծավալ ուներ լեռնային շրջաններում։ Եթե դրանց վրա գումարենք նաև այն հանգամանքը, որ ծայրամասային լեռնային նահանգների՝ Սյունիքի, Տայքի, Արցախի և մյուսների տերիտորիաների մի զգալի մասը գրավում են ապառաժոտ և քարքարոտ տարածությունները, ապա միանգամայն պարզ է, որ վերջիններում բնակչության խտությունն այդ ժամանակներում մեծ լինել չէր կարող։

Բնակչության խտությունը մասնավորապես բարձր էր Արարատյան դաշտավայրում, Ալաշկերտի հովտում, Մուշի դաշտում, Վանա լճի ավազանում, Կարինի շրջանում և Խարբերդի դաշտում։ Եթե ընդունելու լինենք, որ Հին Հայաստանում բնակչության ընդհանուր թիվը (ներառյալ նաև մյուս ժողովուրդները) հասել է ամենաքիչը 4—5 միլիոնի, ապա համապատասխանաբար խտությունը կազմել է 13—17 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա։

3. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Հին Հայաստան ասելով նկատի ունենք հայ ժողովրդի կազմավորման ավարտից սկսած մինչև արաբական արշավանքների ժամանակ եղած տերիտորիան։

Այժմ գրեթե քաղաքացիական իրավունք ստացած հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի համաձայն այդ ժամանակաշրջանը, ֆեոդալիզմի զարգացման աստիճանից ելնելով, բաժանված է երկու մասի. նախաֆեոդալական հասարակության շրջան և վաղ ֆեոդալական հարաբերությունների շրջան։ Վերջին շրջանի մեջ է մտնում նաև արաբական տիրապետության ժամանակաշրջանը։

Բնակչության դասակարգային կազմը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները և նրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցերը, լինելով հայ ժողովրդի պատմության անմիջական ուսումնասիրության նյութը, կսահմանափակվենք միայն վաղ-ֆեոդալական հարաբերությունների շրջանում եղած դասակարգերի և նրանց կազմի մեջ մտնող դասերի թվարկմամբ, տալով համառոտ ծանոթագրություններ։

Վաղֆեոդալական հարաբերությունների շրջանում հասարակությունը բաժանված էր երկու հակադիր դասակարգերի. ազնվական կամ ֆեոդալ-նախարարական դասակարգի (որի մեջ մտնում էր նաև հոգևորականությունը) և գյուղացիության կամ շինականների դասակարգի։ Իրավական տեսակետից առաջինը ազատների կամ շահագործողների դասակարգն էր, իսկ երկրորդն անազատների կամ շահագործվողների դասակարգը։

Ազնվական դասակարգը բաժանվում էր երկու մեծ խմբի՝ աշխարհիկ ֆեոդալների (նախարարների) և հոգևոր ֆեոդալների։ Դրանցից յուրաքանչյուրի մեջ կար վասալական աստիճանավորություն կամ, այլ կերպ ասած, ֆեոդալական հիերարխիա։ Նախարարների դիրքն այդ հիերարխիայի մեջ որոշվում էր թագավորին տրվող զորքի թվով։ Հին Հայաստանում ֆեոդալական հիերարխիան ուներ հետևյալ աստիճանները.

Ազնվական-ֆեոդալական սանդուղքի ամենաբարձր աստիճանը բռնում էր հայոց թագավորը (իսկ մարզպանների տիրապետության շրջանում Սասանյան Պարսկաստանի արքայից արքան), հանդիսանալով բոլոր նախարարներին գլխավորող սյուզերենը։ Թագավորից հետո ըստ աստիճանի գալիս են.

Բդեշխները։ Բդեշխները Հայաստանի ծայրամասային չորս նահանգների ֆեոդալ-իշխաններն էին, որոնք արտաքին վտանգից պաշտպանում էին երկրի հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան սահմանները։ Սրանք կոչվում էին «գահերեց», այսինքն բարձր գահ ունեցող իշխաններ։

Ավագ նախարարներ։ Հայտնի էին իրենց տոհմային ծագումով, զորքի մեծ քանակությամբ և հողերի ընդարձակ տիրույթներով։ Սրանք, թե՛ Արշակունիների տիրապետության և թե՛ մարզպանների տիրապետության օրոք, պետության մեջ ունեին սոցիալ-տնտեսական և քաղաքական մեծ կշիռ։

Կրտսեր նախարարներ։ Սրանք իրենց տոհմական ծագումով, զորքի թվով ու կալվածքների ծավալով, ավագ նախարարների հետ համեմատած, ավելի աննշան էին և տնտեսական նշանակությամբ ու քաղաքական դիրքով այնքան էլ աչքի ընկնող դեր չէին խաղում։ Կրտսեր նախարարները հաճախ, թագավորից զատ, վասալական կախում էին ունենում ավագ նախարարներից։

Ազատներ։ Սրանք ազնվական մանր կալվածատերեր էին և հանդիսանում էին նախարարների վասալները։ Ազատներից կազմվում էր հայկական զորաբանակի հեծելազորը։ Կար նաև ռամիկներից բաղկացած այրուձի՝ մասնավորապես մարզպանության շրջանում։

Ֆեոդալիզմի ձևավորման հետ միասին ֆեոդալականացվում է նաև հայկական եկեղեցին։ Ֆեոդալիզմի դաղափարախոսների բավական ստվար բանակը՝ հոգևորականությունը նույնպես ուներ

18 121
121

էր աստիճանավորությունը՝ հիերարխիան։ Քրիստոնեության շրջանում այդ հիերարխիայի գլուխ կանգնած էր կաթողիկոսը։

Գյուղացիությունը կազմում էր ամենամարդաշատ և շահագործվող դասակարգը։ Շահագործվող այս դասակարգի ներսում ևս գոյություն ուներ որոշ շերտավորում. նախարարական հողերի վրա ապրող և աշխատող շինականները ճորտական կախման մեջ էին տվյալ կալվածատիրոջից։ Դրանց համեմատությամբ, իհարկե, ավելի բարձր էին ազատ գյուղացիները։ Գյուղացիության մեջ բացի իրավական անհավասարությունից կար նաև գույքային որոշ անհավասարություն։

Շինականները կոչվում էին «անազատ»։ Նրանք պարտավոր էին կալվածատիրոջը վճարել աշխատապարտ և արդյունավճար ռենտա։ Շինականների այդ պարտականությունները հին հայկական պատմագրության մեջ հայտնի էին «ի հարկի ծառայութիւն» անունով։ Նրանք իրենց ստացած բերքի զգալի մասը պարտավոր էին տալ կալվածատիրոջը։ Բացի դրանից, շինականները տալիս էին պետական հարկեր, որոնք առանձնապես ծանր էին պարսկական և բյուզանդական տիրապետության օրոք (5—7-րդ դդ-ում)։ Պարսկական պետության գանձվող հարկերից էին հողահարկը («հաս») և գլխահարկը («սակ»)։ Հողահարկը գանձվում էր բերքի $^1/_6$—$^1/_3$-ի չափով՝ նկատի ունենալով հողի որակը, մշակույթի տեսակը, ոռոգումը և այլն։ Շինականների դրությունն առանձնապես ավելի ծանրացավ, երբ 6-րդ դարի կեսերից սկսած մտցվեց հողահարկը դրամով գանձելու սիստեմը։ Գլխահարկը գանձվում էր 20-ից 50 տարեկան անձերից։ Նշված հարկերից բացի, գյուղացին «պտուղ» անվան տակ հայկական եկեղեցուն էր տալիս իր ստացած բերքի մեկ տասներորդ մասը։ Գյուղացիներն այս կամ այն առիթով պարտավոր էին ձրիաբար աշխատել զանազան կառուցումների (ճանապարհների, ջրանցքների, կամուրջների, տաճարների և այլն) վրա։

Իրենց դրությամբ ավելի ծանր պայմաններում էին գտնվում ստրուկները, որոնք Հին Հայաստանում կազմում էին բավական մեծ թիվ։ Սրանց աշխատանքը գերազանցապես գործադրվում էր պետական շինարարությունների և լեռնային արդյունահանության գործում։ Նրանք կառուցում էին ճանապարհներ, ջրանցքներ, ամրարտակներ և այլն։ Ստրկական աշխատանքով էր մասամբ

մշակվում նաև վանքապատկան հողերը։ Ավելի սովոր էր տնեբում աշխատող ստրուկների թիվը։ Վերջիններս մեր հին մատենագրության մեջ կոչվում են «ծառա»-ներ և «աղախին»-ներ։

Քաղաքներում առանձին դաս էին կազմում առևտրականները և արհեստավորները։ Նրանք իրավական դրությամբ ավելի բարձր էին, քան շինականները։ 9—13-րդ դարերի հետ համեմատած քաղաքային այդ դասը 1—7-րդ դարերում չափազանց թույլ էր թե՛ իրավական տեսակետից և թե՛ թվով։ Առևտրականները և արհեստավորներն իրենց դիրքով տարբերվում էին իրարից։ Բացի դրանից, նրանցից յուրաքանչյուրն իր հերթին ենթարկված էր շերտավորման։ Առևտրականներից գանձվող հատուկ հարկը կոչվում էր «բաժ» (մաքս)։

Քաղաքային անազատ բնակչությունը և գյուղացիությունը կոչվում էին «ռամիկ»-ներ։

Հին Հայաստանում, ինչպես և հետագա դարերում, բնակչության հիմնական զբաղմունքը կազմում էին գյուղատնտեսության երկու կարևորագույն ճյուղերը՝ երկրագործությունն ու անասնապահությունը, որոնցից և ստացվում էր երկրի եկամտի բացարձակ գերակշիռ մասը։ Ստացված եկամուտների չափերն ի նկատի ունենալով, որոշ տարբերություն կարելի է տեսնել նաև նշված երկու ճյուղերի միջև։ Նրանցից երկրագործությունն իր արտադրանքի չափով ավելի առաջնակարգ տեղ էր գրավում։

Առաջավոր Ասիայում երկրագործությամբ զբաղվել են ամենահնագույն ժամանակներից սկսած։ Այդ զբաղմունքը, անասնապահության և, մասամբ, որսորդության հետ միասին, կազմել է հին ժողովուրդների նյութական բարիքների հիմնական աղբյուրը։

Անդրկովկասում և մասամբ էլ հարևան երկրներում մինչև այժմ կատարած հնագիտական պեղումներից պարզվում է, որ այդ երկրներում երկրագործությամբ զբաղվել են անգամ հին քարե դարում։ Երկարատև դարերի ընթացքում գնալով ավելի է առաջադիմել երկրագործությունը և միաժամանակ դարձել բազմաճյուղ։

Հայկական լեռնաշխարհում երկրագործության զարգացման տեսակետից առանձնապես մեծ քայլ էին կատարել ուրարտացիները և այն բազմաթիվ ցեղամիությունները, որոնք մտնում էին Ուրարտական պետության կազմի մեջ։

Ուրարտացիներն Անդրկովկասի ժողովուրդներին (հայերին, վրացիներին և աղվաններին) իբրև ժառանգություն թողին ոչ միայն իրենց նյութական կուլտուրան, մետաղագործությունը (հատկապես երկաթի մշակման տեխնիկան), ճարտարապետությունը, այլև երկրագործության մշակույթի և ջրանցքաշինության նախորդ ժամանակաշրջանների հետ համեմատած բարձր տեխնիկան։ Մենք իր տեղում ասացինք, որ ուրարտացիները, նկատի ունենալով Հայկական լեռնաշխարհի չոր կլիմայական պայմաններում արհեստական ոռոգման անհրաժեշտությունը, մի շարք ջրանցքներ էին անցկացրել Վանա լճի ավազանում, Արաքսի ու Արածանիի հովիտներում և այլուր։ Ուրարտացիները գործածության մեջ էին դրել երկաթե խոփը, որն այդ ժամանակաշրջանի համեմատությամբ մեծ զարկ տվեց երկրագործությանը։ Ուրարտացիներից ժառանգություն ստացած երկրագործության մշակույթի տեխնիկան Անդրկովկասում ձևավորված ժողովուրդների մոտ սոսկ ընդօրինականություն չէր, և ոչ էլ մնաց միևնույն աստիճանի վրա, այլ այդ ժողովուրդները, վերցնելով ուրարտացիներից նրանց երկրագործության և ջրանցքաշինության տեխնիկան, այն ավելի զարգացրին։

Հին Հայաստանում երկրագործության մեջ իշխող էին երկդաշտյան և եռադաշտյան սիստեմները, հիմնական գործիքն արորն էր, որին ամրացված էր երկաթե խոփ։ Լեռնային փակ շրջաններում երկար դարեր շարունակ գործածության մեջ էին մնացել նաև երկրագործական ավելի պրիմիտիվ գործիքներ։

Հին Հայաստանի երկրագործական հիմնական մշակույթներն էին՝ հացահատիկներն ու բանջարեղենը, այգեգործությունը և տեխնիկական կուլտուրաները։

Հացահատիկները Հայկական լեռնաշխարհի ամենահին կուլտուրաներից են։ Հայաստանն Առաջավոր Ասիայի իր հարևան երկրների հետ միասին քաղաքակիրթ մարդկությանը տվել է հացահատիկների, հատկապես ցորենի մի քանի տեսակներ։ Հին Հայաստանում ցանվող հացահատիկներից առանձնապես մեծ տարածում ունեին՝ ցորենը, գարին, տարեկանը, կորեկը, հաճարը, բրինձը և ոսպը։ Դրանց մի մասը, ներքին կարիքները բավարարելուց հետո, արտահանվում էր այլ երկրներ։ Բնական պայմաններից ելնելով, Հացահատիկների ցանքատարածությունները տեղաբաշխված էին հետևյալ կերպ. ցորենը, գարին, տարեկանը, հաճարը, ոսպը և մասամբ նաև կորեկը ցանվում էին գլխավորապես բարձրադիր դաշտավայրերում և նախալեռնային ու լեռնային շրջաններում։

Հացահատիկային կուլտուրաների ցանքսերով, ինչպես ասացինք բուսական ու կենդանական աշխարհի մասին խոսելիս, առանձնապես աչքի էին ընկնում Շիրակի, Մուշի և Ալաշկերտի դաշտերը։ Բրնձի մշակույթը հիմնականում տարածված էր Արաքսի և Արևելյան ու Արևմտյան Եփրատների հովիտներում։

Հացահատիկներից գարին, բացի այն, որ մարդիկ հաց էին թխում և օգտագործում որպես անասնակեր, ծառայում էր որպես հումք գարեջուր ստանալու համար։ Ինչպես երևում է, գարեջուր պատրաստելու տեխնիկան շատ վաղուց է հայտնի եղել Հայկական լեռնաշխարհում։ Քսենոֆոնի հիշատակության համաձայն, դեռևս մ. թ. ա. 5-րդ դարի վերջերին Հայաստանում արտադրում և գործ էին ածում գարեջուրը։ Հույն պատմիչը, ինչպես պարզ երևում է նրա վկայությունից, ծանոթ չի եղել գարեջուր ստանալու տեխնիկային։ Հավանաբար հենց Հայաստանն էլ եղել է գարեջրի առաջին հայրենիքներից մեկը։

Ինչպես իր տեղում տեսանք, Հայաստանի կլիմայական պայմանները նպաստավոր են այգեգործության զարգացման համար։ Ոռոգման սիստեմը, որ ընդգրկում էր բավական մեծ տարածություններ, հնարավորություն էր ընձեռում ցածրադիր դաշտավայրային շրջաններում զբաղվելու խաղողի, դեղձի և ծիրանի մշակությամբ։ Այդ երեք կուլտուրաներն էլ ունեին տեղական մի կությամբ։ Այդ երեք կուլտուրաներն էլ ունեին տեղական մի կությամբ։ Սակայն տեսակներ, որոնք իրենց որակով մեծ համբավ ունեին Առաջավոր Ասիայի և այլ երկրների շուկաներում։ Հայաստանից արտահանվում էին բավական մեծ քանակությամբ չորացրած մրգեր, գլխավորապես չորացրած դեղձ, ծիրան և խաղող։

Խաղողի մշակությունը Հայաստանում ունի բազմադարյան պատմություն։ Մարդկային հասարակության վերաբերող առաջին իսկ հիշատակություններից ու ներկայումս կատարած նյութական կուլտուրայի պեղումներից պարզ երևում է, որ Հայկական լեռնաշխարհում այգեգործությունը, այդ թվում հատկապես խաղողի մշակությունը, սկսվել է շատ վաղ ժամանակներից։ Խաղողը թարմ վիճակում օգտագործելուց և չորացնելուց բացի, ենթարկվել է

նաև վերամշակման։ Նույն Քսենոֆոնի հիշատակության համաձայն Հայաստանում խաղողից պատրաստում էին գինի։ Մատենագրական վկայությունների համաձայն, Հայաստանում գինին վաղ ժամանակներից հանդիսանում էր արտահանության կարևորագույն ապրանքներից մեկը։ Խաղողի մշակության տարածվածության շնորհիվ նա իր արտացոլումն է գտել հայ ճարտարապետության և արվեստի այլ բնագավառների մեջ։

Խաղողի, դեղձի և ծիրանի մշակությամբ առանձնապես աչքի են ընկնում Վանա լճի ավազանը, Եփրատ ու Արաքս գետերի հովիտները և Գողթն ու Նախիջևան գավառները։

Նույն շրջաններում և նրանցից բարձր մինչև 1500 մ բարձրությունների վրա տարածված են եղել նռենին, տանձենին, խնձորենին, սերկևիլենին, բալենին, սալորենին, կեռասենին և բազմաթիվ այլ պտղատու ծառեր, որոնք էլ բավականաչափ բարձր տեսակարար կշիռ են ունեցել այգեգործության մեջ։

Մեր մատենագիրների անուղղակի վկայություններից կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանում գտնվել է վանքերի ու իշխանական տների ձեռքին այգիների գերակշիռ մասը, որոնք մշակվում էին ճորտական կախում ունեցող գյուղացիների ու ստրուկների աշխատանքով։

Տեխնիկական կուլտուրաների մեջ կարևոր տեղ էին գրավում բամբակը, կտավհատը, քնջութը և կանեփը։ Բամբակը հիմնականում տարածված էր Արաքսի և Արածանիի հովիտներում, ինչպես և Վանա լճի ավազանում։ Հայաստանում արտադրվող բամբակը, ինչպես մենք տեսանք բուսական աշխարհի մասին խոսելիս, ոչ միայն բավարարում էր ներքին շուկայի կարիքները, այլև արտահանվում էր որպես անմշակ հումք։

Պակաս նշանակություն չունեին նաև քնջութը, կտավհատը և կանեփը։ Դրանցից առաջինի մշակությունը տարածված էր գրեթե նույն շրջաններում, ինչ որ բամբակը, իսկ վերջին երկուսը բարձրանում էին մինչև լեռնային գոտու ստորին շերտերը։ Հայաստանում մշակվող քնջութի, կտավհատի և կանեփի բաղայի վրա գյուղերում, ավաններում և քաղաքներում կային բազմաթիվ ձիթհաններ։ Ձեթից ստացված քուսպը տրվում էր անասուններին որպես խտացրած կեր։ Ձիթհանության մասին հիշատակություններն ավելի հաճախակի են դառնում 10—13-րդ դարերի սկզբնաղբյուրներում։ Ակադեմիկոս Մառի կողմից Անիում հայտնաբերած ձիթհանն այնքան խոշոր է եղել, որ նա այն անվանում է գործարան։

Հայաստանում բավական լայն տարածում ուներ նաև բանջարաբուծությունը։ Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում ցանում էին բազմատեսակ բանջարեղեն, համեմունքներ, վարունգ, կաղամբ, լոբաբուլսեր և այլն։ Ավելի ցածրադիր վայրերում՝ սեխ, ձմերուկ։

Գյուղատնտեսության մյուս կարևորագույն ճյուղն անասնապահությունն էր։ Հայկական լեռնաշխարհի ֆիզիկո-աշխարհագրական պայմանները նկարագրելիս տեսանք, որ նպաստավոր պայմաններ կային անասնապահության զարգացման համար։ Հայկական լեռնաշխարհում կան անհրաժեշտ չափով խոտհարքներ ու ձմեռային արոտատեղիներ։ Մեծ տարածում ունեն ալպյան մարգագետինները։ Պահվում էր մեծ քանակությամբ ոչխարներ, այծեր, եզներ, կովեր, գոմեշներ, ջորիներ, էշեր և այլն։ Ոչխարաբուծությամբ և այծաբուծությամբ զբաղվում էին գլխավորապես լեռնային շրջաններում։ Եզների ու կովերի բուծումը տարածված էր գրեթե բոլոր շրջաններում, իսկ գոմեշներ պահում էին միայն հարթավայրային և շամբուտ վայրերում։ Ջորիներն ու էշերը, ոչխարների և այծերի նման, դարձյալ հիմնականում մեծ տարածում ունեին լեռնային մասերում՝ Սյունիքում, Արցախում, Բարձր Հայքում և այլուր։

Անասունները, հատկապես ոչխարներն ու այծերը, կազմում էին Հայաստանից արտահանվող կարևոր ապրանքներից մեկը։ Ոչխարներից ու այծերից ստացած բրդի մի մասը ևս արտահանվում էր անմշակ վիճակում։

Անհրաժեշտ է նշել, որ Հին Հայաստանի անասնապահության ամենակարևոր ճյուղերից մեկը, որով Հայկական լեռնաշխարհը հռչակված էր դեռ շատ հնուց, ձիաբուծությունն էր։ Արտահանվող ապրանքների մեջ մեծ տեղ ու տեսակարար կշիռ ունեին ձիերը։ Պարսից Աքեմենյան արքայից արքաները Հայաստանից որպես հարկ տարեկան վերցնում էին 20 հազար ձի։ Հայաստանի զինվորական ուժի մի զգալի մասը կազմում էր հեծելազորը, որի ձիերը բացառապես տեղական էին։

Հին Հայաստանում հռչակված էր մանավանդ ձիու մի տե-

սակը, որը կոչվում էր «նժույգ»։ Մ. թ. առաջին դարի աշխարհագիր Ստրաբոնը, որ ծնվել էր Փոքր Հայքի Ամասիա քաղաքում և քաջ ծանոթ էր Հայաստանին, չափազանց մեծ գովեստով է խոսում ձիերի մասին, նշելով, որ նրանք ունեն բարձր հասակ և «անզուգական դեղեցկություն»։ Հայ մատենագիրները մեր երկրի ձիերի լավ հատկությունները բնորոշելու համար գործ են ածում զանազան ածականներ՝ «սրավար», «սրաթռիչ», «օդապարիկ» և այլն։

Ստրաբոնը, մանրամասն խոսելով Հայաստանի ձիերի մասին, դրա հետ միասին հաղորդում է, թե նրանք արդյունք են երկրի լավ արոտավայրերի։ Նրա հիշատակության համաձայն Հայաստանում ձիաբուծությունն ամենից շատ զարգացած էր Փավենե, Կոմիսենե և Օրխիստենե գավառներում։ Ստրաբոնի հիշատակած այդ գավառները դեռևս անծանոթ են մեզ համար, չի պարզաբանված նրանց համապատասխանող հայկական աշխարհագրական անունները։ Սակայն հայտնի է, ինչպես նկատել է պրոֆ. Լեոն, որ ձիու ազնիվ տեսակով հռչակված նահանգներից մեկը Արցախն էր (Լեռնային Ղարաբաղ), որին սահմանակից էր Մուղանի ընդարձակ դաշտավայրը։ Իսկ այս վերջինը հին ժամանակներից սկսած հռչակված էր ձիերի համար որպես արոտատեղի[1]։ Հին Հայաստանում իր ձիերով հայտնի է եղել նաև Սյունյաց աշխարհը։ Այս երկրամասն իր բազմահազար հեծյալներին մատակարարում էր տեղական ընտիր ձիեր[2]։

Երկրագործությունից և անասնապահությունից բացի, Հին Հայաստանում գոյություն ուներ և բավականին զարգացած գյուղատնտեսության փոքր ճյուղերից մեկը՝ շերամապահությունը։ Այդ զբաղմունքը, որ կապված է թթենու այգիների հետ, համեմատաբար լայն չափերով տարածված էր Սյունիքում, Արցախում, Գողթնում, Նախիջևանում, Վանի շրջանում և Արտաշատ—Դվինի շրջակայքում։ Միջին դարերում հայկական մետաքսը լրիվ չափով բավարարում էր երկրի մետաքսագործության պահանջը, որը բավականին զարգացած էր հատկապես Դվինում։ Դեռ ավելին, մետաքսե գործվածքների և պատրաստի ապրանքների հետ միասին որոշ չափով արտահանվում էր նաև բոժոժ։

Գյուղատնտեսությունից հետո Հին Հայաստանի տնտեսության մեջ իր տեսակարար կշռով մեծ տեղ էր բռնում արհեստագործությունը։ Արհեստն այդ ժամանակաշրջանում դեռևս լրիվ չէր անջատվել գյուղատնտեսությունից։ 9-րդ դարից սկսած գյուղատնտեսությունից անջատվող արհեստագործությունը կենտրոնանում է նոր զարգացող ֆեոդալական քաղաքներում։ Արհեստագործության զարգացման համար խթաններ էին հանդիսանում ներքին ու արտաքին շուկաները, տարանցիկ առևտուրը, երկրի ընդերքում եղած բազմաթիվ ու բազմապիսի հումքային բազան և այլն։

Հին Հայաստանում գոյություն են ունեցել բազմապիսի արհեստներ։ Արհեստների մեջ առաջնակարգ տեղը բռնում էր մետաղագործությունը, որը գալիս էր խորը հնությունից։ Մետաղագործական արհեստների թվին պատկանող զինագործությունը, որն ուներ պետական պաշտպանական նշանակություն, ընդունել էր բավականին լայն չափեր և իր արտադրանքով բավարարում էր երկրի զինված ուժերի սպառազինության պահանջները։ Մետաղագործական արհեստներից էին նաև դարբնությունը, պղնձագործությունը և ոսկերչությունը։ Դրանցից առաջինը հիմնականում կապված էր գյուղատնտեսության հետ, իսկ վերջին երկուսը՝ գերազանցապես քաղաքային կյանքի։ Հայաստանում արհեստների մեջ ոչ պակաս կարևոր նշանակություն ունեին շինարարական արհեստները՝ քարտաշությունն ու որմնադրությունը, ինչպես նաև հյուսնությունը։ Պետք է ենթադրել, որ այդ արհեստների գծով զբաղված էին բավականաչափ մեծ թվով մարդիկ։ Մատենագրական վկայությունների համաձայն, հայ արհեստավորներից բացի, օտար այլ երկրներից տարբեր ժամանակներում Հայաստան էին եկել բազմաթիվ քարտաշներ ու որմնադիրներ։ Նրանց մի մասը Հայաստան էր բերված փոքրասիական երկրներից և Միջագետքի ու Սիրիայի կողմերից որպես գերազանցապես ռազմական գերիներ (Տիգրան Բ-ի և Արտավազդ Բ-ի ժամանակներում), կամ պետական դիվանագիտական հատուկ պայմանագրերով

1 Լեո, Հայոց պատմություն, հ. Ա., Թիֆլիս, 1917, էջ 156։

2 Նախարարությունների մեջ ամենից շատ հեծյալ զորքն ուներ Սյունիքը։ Ըստ «Զօրանամակի» նրա հեծյալների քանակը հասնում էր 19 400-ի։ («Զօրանամակ»-ի տեքստը տես Ալիշանի «Այրարատ» աշխատությունը, Վիեննա, 1890, էջ 425)։

(Տրդատ Ա-ի օրոք), իսկ մյուս մասը կամովի էր եկել։ Հայաստան եկած հրեաների, հույների և ասորիների գերակշիռ մասը բնակվում էր քաղաքներում և զբաղվում էր արհեստագործությամբ ու առևտրով։ Շինարարական արհեստը կանգնած էր զարգացման բավական բարձր աստիճանի վրա։ Նրա արտադրության արդյունքն էին Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին և այլ քաղաքների հոյակապ շինությունները և մի շարք տաճարներ, որոնց թվում և հիասքանչ Զվարթնոցը։ Շինարար արհեստավորի ձեռքի արդյունքն էին նաև ճանապարհները, ջրանցքները, կամուրջները և այլ կառուցումները, որոնց ավերակները այժմ ևս հիացնում են դիտողին։

Հին Հայաստանում մեծ չափերի էր հասել հնագույն շրջանից գոյություն ունեցող արհեստներից մեկը՝ կավագործությունը, որն ուներ իր բազմապիսի ճյուղերը, այն է՝ թրծած աղյուսի, ջրատար կավե խողովակների և կղմինդրի արտադրությունը, բրուտագործությունն իր կավե ամաններով և այլն։

Պակաս նշանակություն չունեին կաշեգործությունը, ներկարարությունը և, մանավանդ, ջուլհակությունը, որն արտադրում էր բամբակյա, բրդյա և մետաքսյա հյուսվածքներ։

Չնայած այդ բոլորին, Հայաստանը թե՛ վաղ ֆեոդալիզմի և թե՛ զարգացած ֆեոդալիզմի շրջանում մնում է բնատնտեսության ինքնամփոփ պայմաններում, չնայած նրան, որ Հայաստանը հնուց ներգրավված էր միջազգային առևտրական փոխանակության մեջ։

Արհեստավորներն իրենց սոցիալական դրությամբ գրեթե հավասար էին գյուղացիներին, այսինքն պատկանում էին շահագործվող դասակարգին։ Բայց իբրև քաղաքի ազգաբնակության հիմնական մաս՝ վայելում էին որոշ արտոնություններ։

Արհեստների հետ սերտորեն կապված է հասարակական արտադրության մի այլ տեսակը՝ լեռնային արդյունահանությունը։

Բնական հարստությունների մասին խոսելիս մենք տեսանք, որ Հայկական լեռնաշխարհն ունի մետաղային և ոչ մետաղական բազմաթիվ հանքեր, որոնք շահագործման են ենթարկվել Հին Հայաստանում։ Լեռնային արդյունահանության մեջ առաջնակարգ տեղ է գրավել սեղանի աղի, պղնձի, արճճի, ոսկու, արծաթի, զառիկի, մարմարի, տուֆի, պղնձարջասպի և այլ հանքատեսակների շահագործումն ու նրանց վերամշակումը։ Լեռնային արդյունահանության հետ անմիջական կապված էին մի քանի արհեստներ՝ դարբնություն, հյուսնություն և այլն։ Հանքերում աշխատողների մի զգալի մասը կազմում էին ստրուկները։

Լինելով աշխարհագրական բարենպաստ պայմաններում, Հայաստանում վաղ անցյալից սկսած մեծ տեղ էր գրավում նաև տարանցիկ ու տեղական առևտուրը, որի մասին, նպատակահարմարությունից ելնելով, խոսեցինք ճանապարհների բաժնում։

Որսորդություն։ Որսորդությունը մարդկային հասարակության ամենահնագույն զբաղմունքն էր։ Նա ավելի հին պատմություն ունի, քան անասնապահությունը, երկրագործությունը և արհեստները։

Չնայած հասարակության զարգացման հետ միասին գյուղատնտեսության ճյուղերն ու արհեստները հետզհետե գրավել են ավելի առաջնակարգ տեղ, բայց որսորդությունը մնացել է և անգամ այժմ մնում է որպես հասարակական արտադրության ճյուղերից մեկը։

Հին Հայաստանի որսորդության մեջ իր արտադրանքի քանակով առաջնակարգ տեղ էր գրավում ձկնորսությունը։ Սևանա լճի իշխան ձկի տեսակները, Վանա լճի տառեխը, ինչպես և մեծ գետերից որսած ձկները, Հայաստանից արտահանվող ապրանքների շարքում ունեին տեսակարար մեծ կշիռ։ Որսված ձկներն արտահանվում էին թե՛ թարմ և թե՛ չորացած ու աղ դրած վիճակում։

Մեր մատենագիրների հաղորդած տեղեկությունների համաձայն, Վանա լճի հյուսիս-արևելյան ափին կառուցված էր արքունական հատուկ ձկնորսարան, որտեղ որսված ձկների գերակշիռ մասն արտահանվում էր արտաքին այլ երկրներ։

Ավելի պակաս նշանակություն ուներ և սեզոնային բնույթ էր կրում կենդանիների որսը։ Այս զբաղմունքը համեմատաբար ավելի շատ էր տարածված լեռնային շրջաններում՝ Սասունում, Խութում, Մոկքում, Սյունիքում և այլուր։

Կենդանիների որսով զբաղվելը Հին Հայաստանում դարձել էր մի տեսակ զվարճալիք արիստոկրատ խավի, թագավորների և ֆեոդալ իշխանների համար։ Հայ պատմագիրներ Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և մյուսների մոտ նկարագրված են

որսորդության բազմաթիվ տեսարաններ, որոնց մեջ անմիջականորեն մասնակցում էին վերնախավի բարձրաստիճան ներկայացուցիչները։ Արշակունի հայ թագավորներն ունեին իրենց որսատեղիները։ Մենք արդեն տեսանք, որ նրանցից Խոսրով Կոտակը (330—339 թ.) Ազատ գետի (Գառնի) ափերին Արտաշատ—Դվինի շրջակայքում տնկած կաղնի անտառը արհեստական եղանակով լցնել տվեց որսի կենդանիներով՝ այն դարձնելով իր որսատեղին։

Արքունական և ֆեոդալ իշխանական որսահանդեսներին մասնակցում էին նաև զինված հատուկ ջոկատներ, որոնք կազմվում էին հեծյալներից։ Այնպես որ որսորդությունը հանդիսանում էր ոչ միայն որպես զվարճալիք, այլև նա ծառայում էր միջոցներից մեկը զինվորներին ռազմական կոփվածություն տալու համար։

Մի առանձին զբաղմունք էր նաև զինվորական ծառայությունը իշխանական և արքունի մշտական բանակներում։ Մշտական բանակի զինվորների բացարձակ մեծամասնությունը կազմում էր հեծելազորը։ Հեծյալների թիվն Արշակունիների տիրապետության ժամանակշրջանում հասնում էր 35000-ի, և նա բացառապես կազմված էր ազատներից, այդ պատճառով էլ հեծելազորը կոչվում էր «ազատագունդ» կամ «ազատազորք»։ Ազատների վերնախավը՝ ֆեոդալ-նախարարները, կրտսեր նախարարները և մյուսները վարում էին համապետական և տեղական բարձր պաշտոններ։ Հեծյալների դասն էին կազմում ազատները՝ մանր ազնվականությունը։

Հոգևորականությունը, որ կազմում էր բավական ստվար թիվ, զբաղված էր եկեղեցու սպասարկումով՝ քարոզելով ֆեոդալիզմի գաղափարախոսությունը։

Ամփոփելով մեր ասածները ֆեոդալական Հայաստանի բնակիչների զբաղմունքի (տնտեսության ճյուղերի) մասին, հանգում ենք հետևյալ եզրակացությանը։ Երկրի նյութական բարիքները ստեղծում էին շահագործվող անազատները՝ գյուղացիները, արհեստավորները և մասամբ ստրուկները, իսկ շահագործող-ազատները, որոնք վարում էին պետական զանազան պաշտոններ, կատարում էին զինվորական ծառայություն, սպասարկում հայ եկեղեցուն, ապրում էին շահագործվողների հաշվին, խլելով նրանցից անգամ վերջին պատառը։ Եվ միանգամայն բնական է, որ ֆեոդալական Հայաստանում, դեռ շատ վաղուց, բռնկվեցին

մի շարք ըստ էության սոցիալական շարժումներ, որոնք, ինչպես նշում է Էնգելսը, խոսելով Եվրոպայի միջնադարյան նույնանման շարժումների մասին, կրում էին աղանդավորական բնույթ։ Այդ շարժումներից էին բորբորիտների (5-րդ դ.), մծղնեից (5-րդ դ.) և իր ծավալով ու խորությամբ բավական հզոր ու տիրող դասակարգերի համար շատ ավելի սարսափելի պավլիկյան շարժումները։ Վերջինս, ծագելով Հայաստանում (6-րդ դ.) ոչ միայն չսահմանափակվեց նրա սահմաններում, այլև պավլիկյանությունը, համապատասխան հող գտնելով Արևմուտքում, տարածվեց նաև այնտեղ և դարձավ միջնադարյան Եվրոպայի գյուղացիական շարժումների նախակարապետը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ (ՍԿՍԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 7-ՐԴ ԴԱՐԸ)

1. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ 5-ՐԴ ԴԱՐԻՑ (Մ. Թ. Ա.) ՄԻՆՉԵՎ 1-ԻՆ ԴԱՐԸ (Մ. Թ.)

Հայաստանի հնագույն բնակիչների մասին խոսելիս տեսանք, որ նրանք կազմել էին պետական որոշ միավորումներ, ցեղային միություններ։ Այդ ցեղային միությունների մեջ հասարակական զարգացման տեսակետից ամենից բարձր աստիճանի հասավ Ուրարտական պետությունը։ Ցեղային միությունների գրաված տերիտորիաները, որոնց մասին դարձյալ գաղափար կազմեցինք վերևում, կազմված էին առանձին ցեղախմբերի և ցեղերի բնակության շրջաններից։ Հետևապես, նրանց մոտ չկար վարչական բաժանում բառիս իսկական իմաստով, այլ կային բազմաթիվ էթնիկական շրջաններ, որոնք միավորված էին պետական որոշակի կազմ ունեցող որևէ ցեղային միության մեջ։

Հենց այդ ցեղային միություններից էլ նույն տերիտորիայի վրա կազմավորվել է հայ ժողովուրդը։ Հայաստան ասելով պետք է հասկանալ այն ամբողջական տերիտորիան, որտեղ ապրել ու իր պատմությունն է կերտել հայ ժողովուրդը։

Ուրարտական պետության կործանումից հետո հայ ժողովրդի կազմավորման պրոցեսն այնքան էր խորացել ու ընդգրկել ավելի լայն շրջաններ, որ 5-րդ դարից սկսած (մ. թ. ա.) եղած հիշատակություններն արդեն կարելի է հաշվել հայ ժողովրդի և նրա զբաղեցրած տերիտորիայի՝ Հայաստանի մասին եղած տեղեկություններ։

Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ գտնվելու ժամանակներից սկսած՝ Հայաստանի մասին մեզ են հասել Դարեհ Ա-ի (522—484 թթ.) Բիսիթունի (Քիրմանշահ քաղաքի մոտ) արձանագրությունը և հույն պատմագիրների՝ Հերոդոտի ու Քսենոֆոնի գրավոր հիշատակությունները։

Դարեհի Բիսիթունի արձանագրության մեջ հիշատակված վայրերը, որոնց մի քանիսի տեղադրությունը դեռևս չի ճշտված, գտնվում էին Հայաստանի (արձանագրության մեջ՝ Արմինա) հարավային սահմանամերձ շրջաններում, այդ պատճառով էլ նրա արձանագրությամբ հնարավոր չէ որոշակի գաղափար կազմել Հայաստանի տերիտորիալ ամբողջականության մասին։ Գրեթե նույնպիսի թերություններ ունեն նաև Հերոդոտի ու Քսենոֆոնի հաղորդած վկայությունները (նրանց վկայությունների հիման վրա ևս անհնար է Հայաստանի ամբողջ սահմանների վերաբերյալ վերջնական եզրակացության հանգել)։ Սակայն, այնուամենայնիվ, նրանց հաղորդած տեղեկություններն անհամեմատ ավելի ամբողջական և որոշակի են ու հնարավորություն են տալիս, գոնե մոտավոր չափով, իմանալ Հայաստանի տերիտորիալ մեծությունը։

Աքեմենյանների տիրապետությունը, որ հաստատվել էր Հայաստանում Դարեհ Ա-ի ժամանակ 519 թ., շարունակվեց մինչև 330 թ. (մ. թ. ա.)։

Դարեհ Ա-ի ժամանակ (մ. թ. ա. 522—484 թթ.) Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ մտնող բոլոր երկրները, որոնց թվում և Հայաստանը, ենթարկվեցին պետական ու վարչական վերակազմության։ Հերոդոտի վկայության համաձայն, Դարեհ Ա-ը պարսկական ամբողջ պետությունը բաժանեց 20 մեծ շրջանների՝ սատրապությունների, որոնց կառավարիչներն էլ կոչվում էին սատրապներ (հայերեն «աշխարհապահ»)։ Սատրապները, որոնք իրենց շրջաններում ունեին վարչական ու դատական իշխանություն և հավաքում ու Աքեմենյան արքունիքն էին ուղարկում պետական հարկերը, ենթարկված էին անմիջապես Դարեհի բարձրագույն իշխանությանը։ Հայաստանի նախկին իշխանավորները, չնայած ենթարկված էին սատրապներին, բայց պահպանել էին իրենց նախկին իրավունքները։

Հայկական ցեղախմբերի բնակության շրջանները, որոնք Հերոդոտի մոտ կոչվում են Արմենիա, կազմում էին Աքեմենյան Պարսկաստանի երկու սատրապություններ՝ 13-րդը և 18-րդը։ 13-րդ սատրապության մեջ մտնում էին Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները՝ Արմենիան (արմենների երկիրը), Հայասա-Ազզին և նրանց հարևան մի քանի մանր ցեղեր։ Արմենիան տարածվում էր Տիգրիսի վերին և Արածանիի ստորին հոսանքների շրջանում և տերիտորիալ տեսակետից համապատասխանում էր ավելի ուշ շրջանում Ծոփք ու Աղձնիք նահանգներին («աշխարհներ»-ին)։ Հավանական պետք է համարել այն, որ այդ ժամանակներում Արմենիայի մեջ են մտել նաև բազմաթիվ այլ շրջաններ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասերից։

Պատմիչի հիշատակության համաձայն Արմենիան իր արևմտյան սահմանը կազմող Եփրատ գետից սկսած դեպի հարավարևելք, «արքունական» ճանապարհի ուղղությամբ, տարածվում էր 320 կմ։ Եթե նույն չափով նա տարածվում էր նաև արևելյան ուղղությամբ, իսկ դա շատ հավանական է, ապա արևելյան սահմանը Արածանիի ուղղությամբ հասել է Վանա լճի ավազանը՝ իր մեջ ամփոփելով Տուրուբերանի մեծ մասը։

Արմենների երկրից անմիջապես հյուսիս տարածվում էր Հայասան, որն արևմուտքում իր մեջ էր ընդգրկում Հալիս և Գայլ գետերի ավազանները (Փոքր Հայքը), իսկ արևելքում՝ Արևմտյան Եփրատի վերին հոսանքի վրա ընկած շրջանները մինչև Կարինի (Երզրումի) մոտերքը։ Հյուսիսային կողմից նրա սահմանը կազմում էր Պոնտական լեռնաշղթան, իսկ հարավում սահմանակցվում էր Արմենիայի հետ։

Արմենիայից և Հայասայից բացի, Աքեմենյան Պարսկաստանի 13-րդ սատրապության մեջ էին մտնում նաև Հայասայից հյուսիս մինչև Պոնտական ծով (Սև ծով) ընկած շրջանները։

Այսպիսով, դուրս է գալիս, որ դեռևս իր կազմավորման ավարտին չհասած հայ ժողովրդի մի հատվածի (գլխավոր հատ-

վածի)՝ արդեն հիմնականում իրար հետ ձուլված հայասացիների և արմենների զբաղեցրած տերիտորիան բավական ընդարձակ էր։ Նրա սահմանները ձգվում էին արևմուտքում մինչև Հալիսի գետաբերանը, արևելքում՝ Կարինի մոտերքը և Վանա լճի ավազանը, հյուսիսում՝ Պոնտական լեռները, իսկ հարավում՝ Կորդուաց աշխարհն ու Հյուսիսային Սիրիան։ Հայասացիների և արմենների երկիրն այդ սահմաններում իր տերիտորիայով կազմում էր Հայկական լեռնաշխարհի գրեթե կեսը։

18-րդ սատրապությունը, դարձյալ Հերոդոտի վկայությամբ, կազմված էր մատիենների, սասպեյրների և ալարոդների երկրներից։ Հերոդոտի վկայությունն այն մասին, թե 18-րդ սատրապության մեջ բնակվում էին սասպեյրներ, մատիեններ և ալարոդներ, անուղղակի կերպով գալիս է ասելու, որ Հայկական լեռնաշխարհի արևելյան մասում, ուր տարածվում էր 18-րդ սատրապությունը, նրա ժամանակներում (մ. թ. ա. 5-րդ դար) հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը արևմտյան մասի հետ համեմատած դեռ այնքան առաջ չէր գնացել։

Զափազանց հետաքրքրական է, իհարկե, իմանալ 18-րդ սատրապության ճշգրիտ սահմանները, սակայն փաստերի բացակայության պատճառով առայժմ զրկված ենք այդ հնարավորությունից։ Ընդհանուր ձևով կարելի է ասել, որ մատիեններն ապրում էին Վանա և Ուրմիո լճերի միջև, ալարոդները՝ Վանա լճի ավազանում, Արարատյան դաշտավայրում և նրանից արևելք՝ մինչև Արաքսի ստորին հոսանքի վրա ընկած շրջաններում, սասպեյրները՝ Սպերի և Տայքի կողմերում։

Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի մասին ամենակարևոր աղբյուրը Քսենոֆոնի «Անաբազիս» աշխատությունն է, որի մեջ բավական մանրամասնությամբ նկարագրված է Քսենոֆոնի և 10 000 հույն զորքի վերադարձը Հայաստանի ու Տրապիզոնի վրայով դեպի Հունաստան, որը տեղի է ունեցել 401—400 թթ. (մ. թ. ա.)։ Հայաստանի մասին Քսենոֆոնի հաղորդած տեղեկությունները միանգամայն արժանահավատ են, որովհետև նա ինքն անձամբ եղել է Հայաստանում և այն նկարագրել է իբրև ականատես։ Քսենոֆոնի տեղեկությունները վերաբերվում են Հայաստանի (Արմենիայի) այն մասերին, որոնց միջով նա անցել է հույն զորքերի հետ միասին։

Նրա հաղորդած տեղեկությունների հիման վրա, հնարավոր է դառնում դատել ոչ միայն զուտ պատմական մի շարք հարցերի մասին, այլև նրանք թույլ են տալիս շատ թե քիչ որոշակի գաղափար կազմել այն ժամանակի Հայաստանի տերիտորիայի և վարչական բաժանման վերաբերյալ[1]։

Քսենոֆոնի հիշատակության համաձայն, Արմենիան իր ժամանակներում վարչականորեն բաժանված էր երկու մասի՝ Արևելյան Արմենիայի և Արևմտյան Արմենիայի։ Նրանցից յուրաքանչյուրը կազմում էր մի-մի սատրապություն և մտնում էր Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ։ Ն. Ադոնցի կարծիքով Քսենոֆոնի հիշատակած Արմենիայի (Հայաստանի) Արևելյան և Արևմտյան մասերը համապատասխանում են Աքեմենյան ժամանակաշրջանի

---

1 Քսենոֆոնի հաղորդած տեղեկությունները, ինչպես բուն տեքստում ասացինք, վերաբերում են Հայաստանի նրա նահանջի ճանապարհին ընկած շրջաններին։ Այդ պատճառով էլ բազմաթիվ ուսումնասիրողներ հետաքրքրվել են Քսենոֆոնի նահանջի ճանապարհի ուղղությունը լուսաբանելու հարցով։ Չնայած դրան, մինչև օրս էլ դեռ վերջնականապես չի պարզված նրա նահանջի ճանապարհի ուղղության հարցը. ուսումնասիրողների մոտ գոյություն ունի տարակարծիքություն։ Պատմական և պատմա-աշխարհագրական երկերում այդ մասին հայտնված են մի քանի կարծիքներ։

Քսենոֆոնի և հույն զորքի Հայաստանով անցած ճանապարհի ուղղությունը որոշելու համար բոլոր ուսումնասիրողներն էլ օգտվում են հենց իրեն՝ պատմիչի հիշատակություններից։ Նա իր ճանապարհի նկարագրություններում հիշատակում է մի շարք վայրերի անուններ, որոնցից մի քանիսի տեղադրությունը հայտնի է, և անուններն էլ պահպանվել են հին հայկական մատենագրության մեջ։ Դրանք են. Կարգուխների երկիրը, որ համապատասխանում է հին հայկական Կորդուաց աշխարհին, Եփրատը, որը համապատասխանում է Հայկական Արածանիին, Փասիանների երկիրը՝ հին հայկական Բասեն գավառին, Տաոխների երկիրը՝ հին հայկական Տայքին, Տրապիզոնը, որ այժմ էլ հին, Տաոխների երկիրը՝ հին հայկական Տայքին, Տրապիզոնը, որ այժմ էլ գոյություն ունի և մի քանի այլ վայրեր։ Ուստի ուսումնասիրողներն ինչպիսի զիգզագներով էլ տանեն Քսենոֆոնին իր զորքով, համենայն դեպս նրան անց են կացնում նշված վայրերով։

Գրեթե բոլոր ուսումնասիրողները, բացառությամբ հանգուցյալ պրոֆ. Ստ. Լիսիցյանի, Քսենոֆոնի նահանջի ճանապարհը Կորդուաց աշխարհից մինչև Մուշի դաշտը, որոշում են միևնույն ուղղությամբ։ Նրանց կարծիքով Քսենոֆոնը Կորդուաց աշխարհից Հայաստան է մտել Բոհտան-սուի (Քսենոֆոնի մոտով՝ Կենտրիտես) գետաբերանից ոչ հեռու՝ Սղերդ քաղաքի մոտով, այնուհետև Հայաստանի միջով շարժվել է դեպի հյուսիս-արևմուտք՝ մինչև Զիբենե-

վերոհիշյալ 18-րդ և 13-րդ սատրապություններին[1]։ Այս հարցի վերաբերյալ մյուս գիտնականների կարծիքներն անընդունելի են։ Ամենից հավանականը հենց Ադոնցի կարծիքն է։ Մեր կարծիքով դրանից երևում է, որ Հերոդոտի ժամանակ 18-րդ սատրապության մեջ հայացման պրոցեսը շատ խորն էր գնացել, այդ էր պատճառը, որ Հերոդոտից հետո շատ չանցած, Քսենոֆոնն արդեն 18-րդ սատրապությունը հիշատակում է ոչ որպես սասպեյրների, մատիենների և ալարոդների երկիր, այլ Արևելյան Արմենիա (Արևելյան Հայաստան)։

Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանում (4-րդ դարի վերջերից մինչև 2-րդ դարի սկիզբները մ. թ. ա.), երբ արդեն հիմնականում կազմավորվել էր հայ ժողովուրդը, Հայաստանի մի մասը միայն ենթարկված էր Սելևկյան թագավորներին։ Հայաստանը այդ ժամանակ բաղկացած էր երեք հիմնական մասերից՝ Փոքր Հայք, Ծոփք և Մեծ Հայք։ Սրանցից Փոքր Հայքը և Մեծ Հայքի հյուսիսային մասը ինքնուրույն էին և կառավարվում էին տեղական թագավորներով։ Պատմագիտական և հնագիտական վերջին ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ Մեծ Հայքում իշխում էին Երվանդունի «թագավորները»։ Երվանդունիներն Արարատյան դաշտավայրում կառուցել էին մի քանի բերդեր և քաղաքներ, որոնց մեջ ամենանշանավորներն

ու գետի միջին հոսանքը, իսկ այստեղից էլ, թեքվելով հյուսիս-արևելյան ուղղությամբ, անցել է Հայկական Տավրոս լեռնաշղթան և մտել Մուշի դաշտը։

Քսենոֆոնի նահանջի ճանապարհի Մուշի դաշտից մինչև Տրապիզոն ձգվող հատվածի ուղղության վերաբերյալ նույն ուսումնասիրողների մոտ կան տարբեր կարծիքներ։ Նրանցից ոմանք պնդում են, որ Քսենոֆոնը Մուշի դաշտից դիմել է հյուսիս կամ հյուսիս-արևելք և, անցնելով Եփրատ-Արածանին, նախ մտել է Խնուսի դաշտը, ապա Կարնո շրջանը, իսկ այստեղից էլ դիմել է դեպի արևմուտք, Բաբերդի մոտ անցնելով Ճորոխը, ուղղվել է հյուսիս-արևելք և հասել Տրապիզոն։ Գիտնականների մյուս մասի կարծիքով հույները Մուշի դաշտից մտել են Մանազկերտի շրջանը, որտեղից գնացել են դեպի հյուսիս և անցել Արածանին՝ այժմյան Ղարաքիլիսեի մոտ ու դուրս եկել Ալաշկերտի դաշտը, իսկ այստեղից էլ, ուղղությունը վերցնելով դեպի արևմուտք Կարինի ու Բաբերդի մոտով, հասել են Տրապիզոն։ Ակադեմիկոս Մանանդյանը հույների նահանջի ճանապարհը Ալաշկերտի դաշտից սկսած մինչև Տրապիզոն

[1] Н. Адонц, Армения в эпох Юстиниана, С. Петербург, 1908, стр. 390.

էին Երվանդաշատ քաղաքը և Երվանդակերտ ամուր բերդը։ Այնպես որ Մովսես Խորենացու հիշատակած Այրարատյան թագավորությունը հենց նույն Մեծ Հայքի Երվանդունի թագավորությունն է՝ Արմավիր մայրաքաղաքով։

Սելևկյանների շրջանում հայկական երկրները՝ Փոքր Հայքը, Ծոփքը և Մեծ Հայքը, որոնք անմիջապես սահմանակից էին իրար, գրավում էին հետևյալ տերիտորիաները.

Ծոփքը կազմված էր Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքի և ստորին Արածանիի վրա ընկած շրջաններից։ Նա Մեծ Հայքին միացվեց բավական ուշ՝ Տիգրան Բ-ի օրով։

Մեծ Հայքը, ինչպես և հայկական մյուս երկրները՝ Ծոփքն ու Փոքր Հայքը, տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր տարածություն։ Գերմանացի հայագետ Հյուբշմանը, հենվելով Ստրաբոնի վկայությունների վրա, ենթադրում է, որ Սելևկյան շրջանում բուն Հայաստանը (հայկական բոլոր երկրներն առանց Փոքր Հայքի) իր մեջ էր ընդգրկում հետագա 15 նահանգներից հազիվ չորսը՝ «Չորրորդ Հայքը, Աղձնիքը, Տուրուբերանը և Այրարատը»[1]։ Հյուբշմանի այդ ենթադրությունը նույնությամբ չի կարելի ընդ-

---

որոշում է մի այլ ուղղությամբ։ Ըստ նրա, հույները Ալաշկերտի դաշտով և Հայկական Պարի վրա գտնվող Դալի-բարա լեռնանցքով անցել են Բասենի, այստեղից՝ դեպի Օլթի շրջանը, ուր գտնվում էր տաոխների երկիրը և, այնուհետև, Սարիղամիշի շրջանով և Կարսի հարավային մասով, դեպի Կաղզվանի կողմերը։ Կաղզվանի շրջանից նրանք շարժվել են Արարատյան դաշտով արևելք, մինչև Հրազդան գետի մոտերքը, ապա թեքվելով հյուսիս-արևմուտք, անցել են Արագածի հյուսիսային մասով և դուրս եկել Շիրակի դաշտը, այստեղից էլ շարունակելով իրենց ճանապարհը՝ Արդահանի հարավային մասով դեպի Ճորոխ, անցել են գետը և մակրոնների ու կոլխերի երկրների միջով ուղղվել դեպի Տրապիզոն։

Պրոֆ. Ստ. Լիսիցյանը հույների նահանջի ճանապարհը որոշում է միանգամայն այլ ուղղությամբ։ Ըստ նրա, հույները Կորդուաց աշխարհից մտնելով Հայաստան շարժվել են «արքունական ճանապարհի» ուղղությամբ և դուրս եկել Խարբերդի դաշտը։ Այստեղից նրանք գնացել են Լեչեգ-Քղի-Փերի գետի ուղղությամբ և Բյուրակնի արևմտյան մասով դուրս եկել Արաքսի վերին հոսանքի շրջանը, այնուհետև Արաքսի հոսանքին համընթաց գնալով, անցել են Հայկական Պարը և դուրս եկել Բասենի դաշտը, իսկ այստեղից էլ Կարինի ու Բաբերդի վրայով հասել Տրապիզոն։

[1] Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղաց անունները, թարգմ. Պիլոկիկեանի, Վիեննա, 1907, էջ 16։

դունել, ինչպես նկատում է ակադ. Հ. Մանանդյանը[1]։ Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանում Հյուբշմանի նշած նահանգներից բացի, Մեծ Հայքի մասերն են կազմել նաև Վանա լճից հարավ գտնվող Մոկաց աշխարհն ու Ռշտունիքը, ինչպես և լճից հարավ-արևելք ընկած բազմաթիվ շրջաններ։

Բացի դրանից, պետք է նշել, որ հետագայում Մեծ Հայքին միացած Բարձր Հայք նահանգի արևմտյան և հյուսիս-արևմտյան մեծագույն մասը ևս հայկական էր և Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանում մտնում էր Փոքր Հայքի մեջ։

Փոքր Հայքը Սելևկյանների ժամանակաշրջանում ուներ ավելի մեծ տերիտորիա, քան երկրորդ դարից (մ. թ. ա.) մինչև 3-րդ դարը (մ. թ.) ընկած շրջանում։ Այդ ժամանակաշրջանում, բացի Հալիս և Գայլ գետերի ավազաններից, Փոքր Հայքի մեջ էր մտնում նաև հետագայում Բարձր Հայք կոչվող նահանգի մեծագույն մասը, որը, սակայն, Արտաշես Ա-ն (մ. թ. ա. 2-րդ դ.) միացրեց Մեծ Հայքին և այնուհետև նա միշտ մնաց որպես Մեծ Հայքի կազմի մեջ մտնող մի շրջան։

Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների մանրազնին ուսումնասիրությունից ակադ. Մանանդյանը գալիս է այն եզրակացության, որ «Փոքր Հայքը, Մեծ Հայքը և Ծոփքը Սելևկյանների ժամանակ պահպանել էին իրենց ներքին ինքնուրույնությունը դեռ 3-րդ դարում (մ. թ. ա.)։ Նրանք չէին կազմում Սելևկյան պետության երկրամասը, չէին բնակեցրած հունական դաղթականներով և չէին դառել, բնականաբար, գաղութացման շրջան»[2]։

Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանում հայկական երկրներում՝ Մեծ Հայքում, Փոքր Հայքում և Ծոփքում զարգանում է տնտեսությունը և կուլտուրան։ Հասարակության դասակարգային շերտավորումն այդ հիման վրա ավելի է խորանում։ Կազմավորված հայ ժողովուրդն արդեն սկսում է ամեն մի առիթ օգտագործել ինքնուրույն պետականություն ձեռք բերելու համար։ Շատ չանցած հայկական ինքնուրույն պետականությունը դարձավ պատմական իրողություն։

---

1 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., էջ 103։

2 Նույն տեղ, էջ 110։

Երրորդ դարի ընթացքում Սելևկյան պետությունը մշտական պատերազմների, ապստամբությունների և իշխող վերնախավի ներքին երկպառակտությունների շնորհիվ, հետզհետե թուլանում էր։ Նրանց աշխարհակալ պետությունից աստիճանաբար անջատվում էին նորանոր երկրներ։

Չորրորդ դարի վերջերին (մ. թ. ա.) Սելևկյանները կորցրին նախ և առաջ իրենց իշխանությանը ենթակա հնդկական գավառները։ Մոտ 255 թվին Սելևկյան թագավորի դեմ ապստամբեց Բակտրիայի և Սոգդիանայի կուսակալը՝ այդ երկրներում հիմնադրելով իր թագավորությունը։ Դեռ դրանից էլ առաջ կարողացել էին իրանց ինքնուրույնությունն ստեղծել Կապադովկիան, Պոնտոսը, Հայաստանը և Ատրպատականը։

Այնուհետև երրորդ և երկրորդ դարերում Սելևկյանների դեմ հանդես եկան նրանց հզոր ախոյանները՝ Արևելքում Պարթև Արշակունիները, որոնք 250 թվին ապստամբելով Սելևկյան սատրապի դեմ, սպանել էին նրան և Պարթևների երկրում հաստատել իրենց թագավորությունը, գրավելով նաև Վրկանաց աշխարհը։ Նույն երրորդ դարում, երբ Պարթև Արշակունիները քայլ առ քայլ էին դառնում Սելևկյանների արևելյան երկրներին, Արևմուտքում վերջիններիս դեմ հանդես եկավ նաև Հռոմը։ Երկրորդ դարի սկզբներին Հռոմն արդեն գրավել էր արևմտյան փոքրասիական մի քանի երկրներ։ Հռոմայեցիների և Սելևկյան թագավոր Անտիոքոս Մեծի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մագնեզիայի մոտ 190 թվին (մ. թ. ա.), որտեղ Սելևկյանները ծանր պարտություն կրեցին։ Այդ ճակատամարտից հետո Հռոմը փաստորեն հնարավորություն ստացավ ամրացնելու իր դիրքերն ու ազդեցությունը Փոքր Ասիայի մանր պետությունների նկատմամբ։ Հռոմն, սկզբում ձևանալով իբրև փոքր պետությունների հովանավոր և ազատարար, կարողացավ իրար դեմ հանել այդ պետությունները, ուժասպառ անել նրանց և ամենուրեք հաստատել իր տիրապետությունները։ Մագնեզիայի մոտ Անտիոքոս Մեծի կրած ծանր պարտությունից օգտվելով, իրենց անկախ հայտարարեցին Մեծ Հայքի Արտաշես և Ծոփքի Զարեհ կառավարիչները։ Կազմվում են Մեծ Հայքի և Ծոփքի պետությունները։

Փոքր Հայքը դրանցից էլ դեռ շատ առաջ էր ձեռք բերել ինքնուրույն պետականություն։

Մեծ Հայքի և Ծոփքի հայկական թագավորությունների գրաված տերիտորիաների մասին բավականաչափ լավ գաղափար ենք կազմում աշխարհագիր Ստրաբոնի վկայությունների հիման վրա։ Բերենք Ստրաբոնի այն վկայությունը, որտեղ նա խոսում է Արտաշես Ա-ի և Զարեհի օրոք Մեծ Հայքի ու Ծոփքի հայկական թագավորությունների տերիտորիաների ընդարձակման մասին. «Պատմում են,— ասում է Ստրաբոնը,— որ Արմենիան եղել է առաջ փոքր և մեծացել է Արտաքսիասի (Արտաշեսի) և Զարիադրիսի (Զարեհի) ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն էին և նրա անկումից հետո թագավորեցին՝ մեկը Ծոփքի, Ակիսենեսի, Օդոմանտիսի և մի քանի այլ գավառների վրա, իսկ մյուսը՝ Արտաշատի շուրջը գտնվող երկրի վրա։ Սրանք ընդարձակեցին իրենց երկրների սահմանները և գրավեցին շրջակա ժողովուրդներից հետևյալ շրջանները. մեդացիներից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Խորձենեն և Գոգարենեն, որ գտնվում է Քուռ գետի մյուս կողմում, խալիբներից և մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատաոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի կողմերը գտնվող երկրները և ասորիներից՝ Տամորիտիսը. այնպես որ բոլորը միալեզու եղան»[1]։

Մեջ բերված վկայությունից երևում է, որ Մեծ Հայքի Արտաշես թագավորը գրավել էր Կասպյան երկիրը (Փայտակարանը), Վասպուրականը (Ստրաբոնի մոտ՝ Բասորոպեդա), Փավնիտիսը (?), որը մի քանի ուսումնասիրողների մոտ նույնացվում է Սյունիքի հետ, Պարիադրեսի լեռնալանջերը՝ Տայքը, Խորձենեն, Գուգարքը (Գոգարենե), Կարնո գավառը (Կարենտիես), Դերջանը (Դերքսենե)՝ Կարինից արևմուտք, և Տմորիքը (Կորդուաց լեռներից հարավ)։ Իսկ Ծոփքի թագավոր Զարեհը գրավել էր Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը և Եկեղյաց գավառը, որը այդ ժամանակներում ավելի մեծ տերիտորիա էր գրավում, քան հետագա դարերում։

Այսպիսով, այսբեփրատյան Հայաստանը, այսինքն Մեծ

[1] Տե՛ս Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Ա., էջ 116։

Հայքն ու Ծոփքը, Արտաշես Ա-ի (189—160 թթ. մ. թ. ա.) և Զարեհի օրոք իրենց մեջ բովանդակում էին՝ Փայտակարանը, Սյունիքը, Վասպուրականը, Այրարատը, Գուգարքը, Տայքը, Բարձր Հայքի մեծ մասը, Տուրուբերանը, Զորրորդ Հայքը, Աղձնիքը, Մոկքը, Կորճեքի մեծագույն մասը և թերևս նաև Ուտիքն ու Արցախը, այսինքն ավելի ուշ շրջանի՝ Արշակունիների թագավորության ժամանակաշրջանի հայկական պետության 15 նահանգներից՝ 14-ը։

Վերև մեջ բերված վկայության մեջ Ստրաբոնը հաղորդում է նաև, որ ընդլայնված Հայաստանում բնակչությունը խոսում էր մի լեզվով՝ հայերենով։ Դա ցույց է տալիս, որ Արտաշեսի ժամանակ Հայկական լեռնաշխարհում տարածված և գերակշռող լեզուն եղել է հայերենը։

Նույն այս երկրորդ դարում, Մեծ Հայքից ու Ծոփքից բացի, ընդարձակվել էր նաև Եփրատից արևմուտք տարածվող Փոքր Հայքը, որը նվաճել էր Պարիադրես (Պարխարյան) լեռների արևմրայան լեռնալանջերն ու Պոնտոսի հյուսիս-արևելյան ծովափնյա շրջանները։ Այդ մասին Ստրաբոնը հաղորդում է. «Փոքր Հայքը,— ասում է նա,— բավական պտղաբեր երկիր է։ Այստեղ ևս, ինչպես և Ծոփքում, միշտ կառավարում էին երկիրը սեփական իշխանները, որոնք կամ բարեկամ ու դաշնակից էին մյուս արմենիներին և կամ իրենց գործերը վարում էին առանձին ու անկախ։ Փոքր Հայքն իրեն հպատակեցրել էր խալդայներին և տիբարենիներին, այնպես որ նրա իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»[1]։

Հայկական այդ երեք թագավորությունների մեջ ամենարնդարձակը և զորեղը Արտաշես Ա-ի թագավորությունն էր՝ Մեծ Հայքը։

Բավականանալով Փոքր Հայքի վերաբերյալ վերը կատարած համառոտ ծանոթագրությամբ և նրա մասին ավելի մանրամասն թողնելով կանգ առնել հետագա դարերի մասին խոսելիս, այժմ տեսնենք ինչպիսի փոփոխություններ կրեցին այսբեփրատյան

[1] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., էջ 119։

հայկական թագավորությունները՝ Մեծ Հայքն ու Ծոփքը, Արտաշես Ա-ի հաջորդող հետագա մյուս արտաշեսյան թագավորների օրով։

Մեծ Հայքի մասին պատմագիրները մանրամասն տեղեկություններ են հաղորդում սկսած Տիգրան Բ-ի (95—55 թթ. մ. թ. ա.) ժամանակներից։

Տիգրան Բ-ն գահ բարձրանալուց անմիջապես հետո, վերագրավում է պատանդությունից ազատվելու համար Պարսկաստանին զիջած 70 հովիտները, որոնք գտնվում էին Ատրպատականի կողմերում և Մեծ Հայքին էին միացված դեռևս Արտաշես Ա-ի օրոք։ Այդ 70 հովիտներն ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով տերիտորիալ տեսակետից համապատասխանում էին հետագայում Պարսկահայք կոչված նահանգին։ Տիգրանն այնուհետև (մոտավորապես 94 թվին մ. թ. ա.) Մեծ Հայքին է միացնում Ծոփքը[1]։ Ծոփքը Մեծ Հայքին միացվելուց հետո, նրա կազմի մեջ էլ ընդմիշտ մնաց հետագա դարերի ընթացքում։

Ծոփքի միացումից հետո, Տիգրան Բ-ի ընդարձակ թագավորությունը արևմուտքում բացի Պոնտոսից անմիջապես սահմանակից դարձավ նաև Կապադովկիային։ Ծոփքի միացումից շատ չանցած, և գուցե դրանից էլ առաջ, Տիգրան Բ-ն Մեծ Հայքին միացրեց նաև Փոքր Հայքի արևելյան շրջանները, որոնք կազմեցին Կարնո աշխարհի (հետագայում Բարձր Հայք կոչված) մասերը։ Հարավային կողմերում նա հայկական պետությանը միացրեց Կորդուաց աշխարհը։

Տիգրանի նվաճած այդ երկրները այնուհետև կազմեցին հայկական պետության մասերը։ Դրանցից բացի նա վարում էր նաև զավթողական պատերազմներ, որոնց հետևանքով հայկական պետությանն ուղղակի միացրեց կամ նրանից վասալական կախման մեջ դրեց մի շարք այլ երկրներ։ Այսպես՝ Պոնտական պետության հետ դաշինք կնքելուց մի քանի տարի անց, օգտվելով պար-

[1] Ստրաբոնն այդ մասին հետևյալ կերպ է հաղորդում. «Արտաշեսի սերընդեցն էր Տիգրանը. նա իշխում էր այսպես կոչված բուն Արմենիայում, որը սահմանակից էր Մեդիային, Ադիաբենին, Իբերիային մինչև Կողքիս և Սև ծովի մոտ գտնվող Կապադովկիային։ Իսկ Զարեհի սերնդեցն էր Ծոփաց երկրի Արտանեսը, որն իշխում էր Արմենիայի հարավային և, գլխավորապես, արևմտյան մասերում։ Տիգրանը սրան հաղթեց և դառավ ինքը տեր բոլոր այդ երկրներին»։ Նույն տեղը, էջ 137։

թևական պետության ներքին թուլությունից, պատերազմ հայտարարեց նրանց և, մոտ եռամյա (88—85 թթ. մ. թ. ա.) այդ պատերազմում հաղթելով պարթև Արշակունիներին, իր պետությանը միացրեց Ատրպատականը, Մեծ Մեդիան, Կորդուքը (Հայկական Տավրոսից հարավ), Ադիաբենը, Օսրոյենը (Միջագետքում), Միգդոնիան (Միջագետքում)։ Վերջինիս ռազմական և քաղաքական խոշոր նշանակությունը հաշվի առնելով, Տիգրանն այդ երկիրը դարձրեց փոխարքայություն՝ այնտեղ փոխարքա նշանակելով իր եղբայր Գուրասին, որի ռեզիդենցիան դարձավ Մծերին քաղաքը։ Պարթևական պատերազմներից մոտ մեկ տարի հետո՝ 84 թվին (մ. թ. ա.) Տիգրանն իր զորքերը շարժեց դեպի արևմուտք և հաջորդական կարգով գրավեց հետևյալ երկրները. Կոմագենը (Եփրատի արևելյան ափին), Սելևկյան Ասորիքը (կամովին հանձնվեց), Փյունիկյան և Կիլիկիայի դաշտային մասը։

Ասորիքի նվաճումով Տիգրանը վերացրեց Սելևկյանների թագավորությունը, իսկ նրանց հռչակավոր մայրաքաղաք Անտիոքը կարճ ժամանակով դարձավ հայկական պետության մայրաքաղաքներից մեկը։

Տիգրանի նվաճողական պատերազմները տևեց մոտ 25 տարի՝ մինչև 70 թ. (մ. թ. ա.)։ 70-ական թվականների վերջերին նրա թագավորությունը դարձել էր մի աշխարհակալություն, որի սահմանները տարածվում էին. հյուսիս արևելքում՝ Քուռ գետը և Կասպից ծովը, հարավ-արևմուտքում՝ Հորդանան գետն ու Միջերկրական ծովը՝ հյուսիս-արևմուտքում՝ Պարիադրեսի (Պարխարի) լեռները, իսկ հարավ-արևելքում՝ Մեդական լեռները։

Տիգրանն իր արշավանքի ընթացքում, Պոնտոսից բացի, ամուր դաշնակցություն ուներ Վիրքի (Արևելյան Վրաստան) և Աղվանքի (Հյուսիսային Ադրբեջան) հետ։ Վերջիններիս բազմահազար զինվորները ծառայություն էին անում Տիգրանի բանակներում և մասնակցում նրա վարած պատերազմներին։

Տիգրանի զավթողական պատերազմներով ձեռք բերված երկրները՝ Ատրպատականը, Մեծ Մեդիան, Ադիաբենը, Օսրոյենը, Միգդոնիան, Կոմագենը, Ասորիքը և մյուսները շատ կարճ ժամանակով մնացին Հայկական պետության կազմում։ Երբ նվաճված երկրներն անջատվեցին Տիգրանի պետությունից, իսկ դա տեղի ունեցավ Պոմպեոսի արշավանքից հետո (65 թվին մ. թ. ա.),

Հայաստանի քաղաքական սահմանները գրեթե համընկան Հայկական լեռնաշխարհի սահմանների հետ։ Այնպես որ Հին Հայաստան կամ հայագիտության մեջ հաճախակի գործածվող Պատմական Հայաստան ասելով տերիտորիալ տեսակետից պետք է հասկանալ ոչ թե Տիգրան Բ-ի աշխարհակալ պետությունը, այլ Արտաշես Ա-ի օրով եղած Մեծ Հայքի տերիտորիան և Տիգրանի ժամանակ նրան միացրած Ծոփքը, Փոքր Հայքի արևելյան մասը, Կորդուքը և Նոր Շիրականը, որն ավելի ուշ շրջանում կոչվում էր Պարսկահայք։ Հին Հայաստանն այդպիսի կազմով, որ տերիտորիալ տեսակետից բացի հյուսիս-արևելյան և հյուսիսային մասերում եղած շեղումներից, հիմնականում համընկնում էր Հայկական լեռնաշխարհին, ուներ հետևյալ սահմանները. հյուսիսում նրա սահմանը կազմում էր Քուռ գետը, հարավում՝ Կորդուաց և Մասիոս լեռները, արևմուտքում՝ Եփրատ գետը, իսկ արևելքում՝ Կապուտան լիճն ու նրանից հյուսիս-արևելք ձգվող լեռնաշղթան։ Տիգրան Բ-ի ժամանակներից սկսած, նշված սահմաններում ամփոփված երկիրը հայտնի է դարձել՝ Մեծ Հայք կամ Հայաստան անունով։ Եվ չնայած նրան, որ հետագա դարերում հաճախակի փոփոխություններ են կրել նրա սահմանները, մերթ նեղացել են, մերթ լայնացել և մերթ էլ վարչական-քաղաքական տեսակետից երկիրը բաժանվել է տարբեր պետությունների միջև, այնուամենայնիվ, աշխարհագիրների և պատմաբանների մոտ Հայաստան է կոչվել վերը հիշված տերիտորիալ ամբողջականությունը։ Թե ինչքանով է համապատասխանում Հայաստան աշխարհագրական այդ հասկացողությունը պատմական իրողությանը, կտեսնենք հետո, հարմար առիթով։

Այժմ, նախքան Արտաշեսյանների թագավորության ժամանակաշրջանի Հայաստանի վարչական բաժանման մասին խոսելը, համառոտակի կերպով ծանոթանանք նրա անմիջական հարևան երկրների հետ։

* *
*

Սելևկյանների և Արտաշեսյանների տիրապետության շրջանում Հայաստանը գտնվում էր մի շարք փոքր երկրների միջև։

Այդ երկրներից էին՝ Վիրքը, Աղվանքը, Ատրպատականը, Պարթևական թագավորությունը, Կապադովկիան, Պոնտոսը և Տիգրիսի վերին հոսանքում ու Հյուսիսային Միջագետքում ընկած Ադիաբենի, Միգդոնիայի (Մծբին կենտրոնով) և Օսրոյենի (Եդեսիա կենտրոնով) փոքրիկ թագավորությունները, որոնք մեծ մասամբ ենթակա էին պարթևներին։ Հայաստանն այդ հարևանների հետ ուներ էթնիկական, տնտեսական և կուլտուրական կապեր։ Նրանց գրաված տերիտորիաների մեծությունները հաճախակի ենթարկվում էին փոփոխությունների։ Նույն վիճակն էր ապրում և Հայաստանը։

Վիրք (Իբերիա)։ Իբերական ցեղերն Արևելյան Վրաստանում (Քուռի ավազանում) դասակարգային տրոհման բազայի վրա իրենց շուրջն են համախմբել այնտեղ ապրող մյուս ցեղախմբերին, և դրանով իսկ կազմավորվել է Իբերների (հայ.՝ Վիրքի) կամ Քարթլիի թագավորությունը, որի կենտրոնը Արմազի քաղաքն էր։ Վրացական ավանդության համաձայն Իբերական թագավորության հիմնադիրը համարվում է Փառնավազը։

Իբերիան գրավում էր այժմյան Արևելյան Վրաստանը։ Նրա սահմանները ձգվում էին արևմուտքում սկսած Տայքից (վրացերեն՝ Տաո) և Պարխարյան (Պարիադրես) լեռներից ու հարավում Գուգարքից մինչև Մեծ Կովկասի լեռնաշղթան։

Արդի Արևմտյան Վրաստանը հնագույն ժամանակներում հայտնի էր Կոլխիդա (Կողքիս) անունով։ Դեռևս 6—5-րդ դարերում (մ. թ. ա.) Սև ծովի արևելյան ափերին, այդ թվում և Կոլխիդայում, հիմնվում են հունական մի քանի գաղութ-քաղաքներ։ Հենց այդ ժամանակներումն են կառուցվել Ռիոնի գետաբերանում Փազիս (այժմ՝ Փոթի) և Դիոսկուրիա (այժմ՝ Սուխումի) քաղաքները։ Ռիոնի ավազանում ապրող ավելի զարգացած կոլխերի անունով հույներն այս երկիրն անվանում էին՝ Կոլխիդա, վրացիները՝ Էգրիսի, հայերը՝ Եգերք։ Դրանից էլ առաջացել է աճար և մեգրել (բառացի՝ «եգերացի») անունները։ Կոլխիդան ընկած էր Սև ծովի արևելյան ափերին, իր մեջ ընդգրկելով Աբխազիայից մինչև Լազիստան ընկած ընդարձակ տարածությունները, որի մեծագույն մասերը հարթություն են։ Կոլխիդայի քաղաքական կենտրոնը Այան էր։

Աղվանք։ Աղվանների մասին եղած առաջին հիշատակու-

թյունը վերաբերում է 4-րդ դարի երկրորդ կեսին (մ. թ. ա)։ Այդ հիշատակության համաձայն աղվաններն Աքեմենյան Դարեհ Գ-ի զորքերի շարքերում կռվում էին Ալեքսանդր Մակեդոնացու դեմ։

Աղվաններն այն ժամանակներում այժմյան Սովետական Ադրբեջանի տերիտորիայում ապրող ցեղերի ու ցեղախմբերի մեջ ամենից զորեղը, զարգացածը և, հավանաբար, մարդաշատն էին։ Սրանք իրենց ղեկավարությամբ կազմեցին մի ցեղային միություն։ Աղվանների անունով էլ այդ ցեղային միությունը, հետագայում նաև ժողովուրդն ու երկիրը, կոչվեց Աղվանք (հունական աղբյուրներում՝ ալբաններ և Ալբանիա)։

Ստրաբոնի վկայությամբ աղվանները միավորում էին 26 ցեղ և, իբր, նրանցից յուրաքանչյուրն ուներ իր առանձին լեզուն։ Աղվանքը տերիտորիալ տեսակետից գրեթե համընկնում է այժմյան Սովետական Ադրբեջանի հետ։ Աղվանները, մեդերի հետ միասին, հանդիսանում են այժմյան ադրբեջանական ժողովրդի նախնիները։

Հնագույն այդ ժամանակներում Աղվանքի վարչական կենտրոնը Կապաղակն էր, իսկ հետագա դարերում մայրաքաղաք դարձավ հռչակավոր Պարտավ քաղաքը՝ Թարթար գետի ափին։

Վրացիներն ու աղվանները և վերջինների հետնորդ ադրբեջանցիները, հայերի համար հանդիսացել են ամենամերձավոր և մշտական հարևանները։ Ճիշտ է, հայ ժողովրդի պատմությունն իր մյուս հարևանների՝ Պարթևական թագավորության, Պոնտոսի, Ատրպատականի, Հյուսիսային Միջագետքի պատմության հետ նույնպես կապված է սերտորեն, բայց նախ նրանք շատ չանցած կորցրին իրենց ինքնուրույնությունը (բացի Պարթևական թագավորությունից, որը տևեց մինչև մ. թ. 3-րդ դարի առաջին քառորդի վերջը) և վերածվեցին հռոմեական պրովինցիաների ու պարսկական տիրապետության մեջ մտնող շրջանների, երկրորդ՝ պատմական պայմանները հայերին, վրացիներին և աղվաններին անհամեմատ ավելի էր մոտեցրել իրար, քան մյուս հարևաններին։

Ատրպատական։ Տարածվում էր Ուրմիո լճից դեպի արևելք և հնագույն ժամանակներում հայտնի էր Փոքր Մեդիա անունով։ Այնտեղ, Ուրմիո լճից հարավ-արևելք, գտնվում էր մեդական կռապաշտության հայտնի կենտրոն Գանձակ քաղաքը։ Ալեքսանդր Մակեդոնացին, երբ գրավեց այս երկիրը, այն (Գանձակը) որպես ժառանգություն հանձնեց Գանձակի քրմապետ Ատրոպատին (բառացի՝ «կրակի տեր»)։ Քրմապետ Ատրոպատի անունով էլ երկիրը կոչվեց Ատրպատական[1]։

Ատրպատականը 1-ին դարում (մ. թ. ա.) միացվեց Պարթևական թագավորությանը։ Այդ երկրանունը հետագայում արաբական հնչյունափոխությամբ հայտնի դարձավ «Ադրբեջան» ձևով։

Ատրպատականը տերիտորիալ տեսակետից հիմնականում համընկնում է այժմյան Իրանական Ադրբեջանին։

Պարթևական թագավորություն։ Հայաստանին սահմանակից էր հարավ-արևելյան մասից։ Սա հելլենիստական ժամանակաշրջանում Հայաստանի հարևան երկրներում ձևավորված պետությունների մեջ բավականաչափ ուժեղ էր և երկար գոյություն ունեցավ։ Պարթևների երկիրը, որ տարածվում էր Կասպից ծովի հարավային ափերին, Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանում իրենից ներկայացնում էր մի սատրապություն։ Սակայն, ինչպես վերը տեսանք, պարթևները դեռևս 3-րդ դարի կեսերին (մ. թ. ա.) ապստամբեցին Սելևկյանների դեմ և 248 թ. Պարսկաստանում հիմնեցին իրենց թագավորությունը, որը կարճ ժամանակվա ընթացքում դարձավ աշխարհակալ մեծ պետություն։ Այստեղ թագավորում էին պարթև Արշակունիները, սկսած 248 թվից (մ. թ. ա.) մինչև 236 թիվը (մ. թ.)։ Ինչպես ասացինք, մեծ մասամբ Պարթևական թագավորությանն էին ենթարկված Հայաստանի հարավային հարևանները՝ Հյուսիսային Միջագետքում և Տիգրիսի վերին հոսանքում ընկած Ադիաբենի, Միդդոնիայի և Օսրոյենի փոքրիկ թագավորությունները, իսկ շատ չանցած նաև Ատրպատականը։

Կապադովկիա։ Տարածվում էր Պոնտոսից և Փոքր Հայքից հարավ մինչև Կիլիկիա։ Ծովքի կողմից հարևան էր Մեծ Հայաստանին՝ նրա հետ սահման ունենալով Եփրատ գետը։ Արևմուտքում Կապադովկիայի տերիտորիան ձգվում էր մինչև Լիկաոնիա, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Գալատիա։ Կապադովկիայում սելևկյան տիրապետության սկզբնական շրջանում կազմակերպվել էր առանձին թագավորություն, որի հիմնադիրն էր Արիարաթ Բ-ն։ Չնայած նրան, որ աքեմենյանների տիրապետության շրջանում

1 Ատրպատական բառացի նշանակում է «Կրակի երկիր»։

Կապադովկիան ենթարկվել էր իրանական պետականության և կուլտուրայի ազդեցության, այնուամենայնիվ հելլենիզմի դարաշրջանում այստեղ նրա (հելլենիզմի) ազդեցությունն ավելի ուժեղ արտահայտվեց։ Հռոմը ոտք դնելով Փոքր Ասիա, այստեղ եղած մանր թագավորությունների թվում Կապադովկիայի նկատմամբ նույնպես հանդես եկավ «հովանավորի» դերում, բայց շատ չանցած միացրեց Հռոմեական կայսրությանն իբրև պրովինցիա։

Պոնտոս։ Աքեմենյանների տիրապետության ժամանակ Պոնտոսը միացած էր բուն Կապադովկիային, որի հետ նա ուներ նաև կուլտուրական, կրոնական և, մասամբ, ցեղային որոշ կապեր։ Պոնտական թագավորությունը տարածվում էր Սև ծովի հարավային ափերին. հյուսիսում նրա տերիտորիան ողողվում էր Սև ծովով, իսկ հարավում, ցամաքի կողմից, սահմանակցվում էր Բիթանիային, Գալատիային, Կապադովկիային և Փոքր Հայքին։ Պոնտոսի բնակչությունը բազմալեզու էր։ Նրա բնակչության իշխող դասի մեջ զգալի մասը կազմում էր պարսկական ազնվականությունը։ Ծովափնյա շրջաններում՝ Սինոպում, Ամիսոսում, Տրապիզոնում և մյուս քաղաքներում հնագույն ժամանակներից սկսած հաստատվել էին հունական գաղութներ։

Պոնտական թագավորությունն իր հզորության ու փառքի գագաթնակետին հասավ 1-ին դարի առաջին կեսին՝ Միհրդատ Եվպատորի ժամանակ (112—63 թթ. մ. թ. ա.)։ Միհրդատը դրավելով Պոնտական պետության գահը, նրան միացրեց բազմաթիվ այլ երկրներ, այնպես որ նրա պետության սահմանները հյուսիսում հասնում էին մինչև հարավային Ռուսաստան։ Միհրդատի թագավորության ժամանակ Պոնտոսը հանդիսանում էր Փոքր Ասիայի ամենահզոր պետությունը։

Միհրդատը գրավեց և իր պետությանը միացրեց նաև Փոքր Հայքը (112 թ. մ. թ. ա.), որը մինչ այդ առանձին թագավորություն էր։

Սակայն պոնտական աշխարհակալ պետության գոյությունը շատ կարճատև եղավ։ Նրա վտանգավոր ախոյան Հռոմը դեպի Պոնտոս կատարած իր մի քանի արշավանքներից հետո 60-ական թվականներին (մ. թ. ա.) վերացրեց այդ թագավորությունը, իսկ նրա գրաված տերիտորիաները դարձրեց հռոմեական պրովինցիաներ։ Դրանից հետո Պոնտոսն ընդմիշտ մնաց հռոմեական աշխարհակալության կազմում որպես լոկ պրովինցիա։

Սելևկյանների և առաջին Արտաշեսյանների ժամանակաշրջանի Հայաստանի հարևան երկրների մասին մեր ասածներից երևում է այն, որ Հայաստանի արևելյան, հարավային և արևմտյան հարևանները 1-ին դարի 60-ական թվականներից սկսած (մ. թ. ա.) մինչև 1-ին դարի կեսերը (մ. թ.) աստիճանաբար կորցրեցին իրենց անկախությունը։ Նրանց մի մասը ենթարկվեց Հռոմին, իսկ մյուս մասը՝ Պարսկաստանին, և այլևս չվերականգնվեց նրանց անկախ պետականությունը։ Դրանից հետո Հայաստանն անմիջապես հարևան դարձավ արևելքում պարսկական, իսկ արևմուտքում հռոմեական աշխարհակալ տերություններին, որոնք երկար դարեր շարունակ կռվում էին Հայաստանին տիրելու համար։ Հայաստանի մերձակից հարևանները՝ Վիրքն ու Աղվանքը, որոնց պատմական բախտն ընդմիշտ եղել է Հայաստանի նման, գտնվում էին նույն պայմաններում, ինչ որ Հայաստանը։ Երեք հարևանները՝ հայերը, վրացիներն ու աղվանները միացած իրար հետ, պայքարում էին թե՛ արևմտյան և թե՛ արևելյան զավթիչների դեմ, որոնք փորձում էին ոչնչացնել նրանց պետականությունը, իսկ ժողովուրդը ճուլել։

* * *

Արտաշեսյանների տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի վարչական բաժանման մասին խոսելիս նախ և առաջ պետք է ասենք, որ նկատի պետք է ունենալ միայն այն տերիտորիան, որ Պոմպեոսի արշավանքից հետո մնաց Տիգրան Բ-ի հայկական պետության մեջ։ Մինչ այդ Տիգրանի կողմից հայկական պետությանը միացված մյուս երկրները, որոնք 65 թվի պայմանագրով դուրս մնացին նրա շրջանակներից, երբեք Հին Հայաստանի բուն մասերը չեն կազմել։

Արտաշեսյանների թագավորության շրջանում հայկական պետությունը վարչական տեսակետից բաժանված էր երկու խոշոր մասերի՝ ներքին գավառների և արտաքին երկրների։

Արտաքինի մեջ մտնում էին Արվաստանի (Մծբինի շրջակայքը), Կորդուքի, Նոր-Շիրականի, Գուգարքի, Ծոփքի և Աղձնիքի բդեշխությունները, որոնք Տիգրան Բ-ի և Պոմպեոսի միջև կնքված

65 թվի դաշնագրով մնացին հայկական պետության կազմում։ Բդեշխությունները կիսանկախ երկրներ էին, որոնք վասալական կախում ունեին հայ թագավորներից։ Բդեշխությունների վասալական կարևոր ծառայությունը հայոց թագավորներին այն էր, որ նրանցից յուրաքանչյուրն իր կողմում պաշտպանում էր հայկական պետության սահմանները։ Այդ պատճառով էլ բդեշխությունները կոչվում էին նաև «կողմնակալություն» կամ «սահմանակալություն»։ Բդեշխները արքունիքում ավելի բարձր դիրք ունեին, քան երկրի ներսի հողատեր ազնվականները։ Բդեշխների այդ բարձր դիրքը ցույց տալու համար մեր սկզբնաղբյուրների մեջ նրանց նկատմամբ գործ է ածվում «զահերեց» տիտղոսը։ Բդեշխի պաշտոնը բոլոր տեղերում ժառանգական էր, բացի Տիգրան Բ-ի օրոք Աղձնիքի բդեշխի պաշտոնը, որը վարում էր թագավորի մերձավորներից մեկը։ Այդ էլ այն պատճառով, որ Աղձնիքը Տիգրանակերտ մայրաքաղաքով հանդերձ պատկանում էր արքունական տանը։

Մի փոքր այլ էր պետության ներքին շրջանների վարչական վիճակը։ Կենտրոնական գավառներում կառավարիչները նշանակում էր թագավորը։ Կառավարիչներ էին նշանակվում արդեն բավականաչափ ընդարձակ հողային կալվածքներ ձեռք բերած ազնվականներից։ Նրանք չնայած ձեռք էին բերել բավականաչափ կալվածատիրական իրավունքներ, բայց ժառանգաբար իրավունք չունեին կառավարել տվյալ գավառը կամ շրջանը։ Թագավորը «աշխարհներում» ու «գավառներում» կառավարիչ էր նշանակում ամենաազդեցիկ հողատիրական տոհմի ավագին՝ տալով նրան «նահապետ», «տանուտեր» տիտղոսը։ Այսպիսով, նախկին ցեղային տերիտորիայի պետը դառնում է պետական-վարչական պաշտոնյա-իշխան։

Արտաշեսյանների թագավորության ժամանակաշրջանի երկրի ներքին գավառների վարչական բաժանման մասին շատ քիչ տեղեկություններ են հասել մեզ։ Այդ պատճառով էլ առայժմ հնարավոր չէ տալ վարչական բաժանման լիակատար և վերջնական պատկերը։ Ակադ. Հ. Մանանդյանը, հավանական համարելով, որ Հին Հայաստանը դեռևս Արտաշես Ա-ի ժամանակաշրջանում «ունեցել է ֆեոդալական կազմակերպությանը (տնտեսաձևին—Թ. Հ.) հատուկ սաղմերը և առանձին հիմքերը», գտնում է, որ երկիրը այդ

ժամանակ մասնատված էր բազմաթիվ շրջանների, որոնց մեջ,— նրա կարծիքով,— հավանորեն տնտեսապես և քաղաքականապես գերակշռող դեր էր կատարում կալվածատեր ազնվականությունը»[1]։

Հռոմեական աշխարհագիր Պլինիոս Ավագի վկայությամբ Հայաստանը նրա ժամանակ (23—79 թթ. մ. թ.)[2] բաժանված էր 120 շրջանների, որոնց նա անվանում է սատրապեդիաներ (բառացի՝ «զորավարություններ»)։ Ուսումնասիրողների կարծիքով, այդ շրջանների մեծագույն մասը գոյություն ուներ դեռևս Տիգրան Բ-ի օրոք։ Նրանց մի զգալի մասը վարչական միավորներ լինելով հանդերձ, միաժամանակ հանդիսանում էին էթնիկական շրջաններ։

Հավանական պետք է համարել այն, որ Արտաշեսյանների թագավորության ժամանակաշրջանում, հատկապես Տիգրանի օրով, վարչական շրջանները հիմնականում համապատասխանում էին ռազմականին։

Արտաշեսյանների ժամանակ Հայաստանն ուներ երկու մայրաքաղաք՝ Արտաշատը, որ կառուցվել էր Արտաշես Ա-ի օրոք (մոտավորապես 166 թվին մ. թ. ա.) և Տիգրանակերտը (կառուցված Տիգրան Բ-ի օրոք 77 թ. մ. թ. ա.)։

2. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ 1-ԻՆ ԴԱՐԻ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 7-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍԸ (Մ. Թ.)

Հայկական պետության տերիտորիան հաջորդ ժամանակների համեմատությամբ իր մաքսիմում չափին հասավ Արշակունիների թագավորության ժամանակ (66—429 թթ. մ. թ.)։ Այսպես, պատմագիրների հաղորդած տեղեկություններից պարզ երևում է, որ այդ ժամանակաշրջանում հայկական պետության սահմանը հարավ-արևելքում հասնում էր Զինթա ամրոցին (այժմյան Քելիշինի

---

[1] «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», Երևան, 1934 թ., էջ 248—251 Համեմ. նաև Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 392.

[2] Հռոմեական այդ աշխարհագիրը մահացավ Իտալիայի Վեզուվ հրաբուխի վրա, երբ նա 79 թվին (մ. թ.) փորձում էր ուսումնասիրել նրան խառնարանը։

լեռնանցքի շրջանում) և Ատրպատականի Գանձակ քաղաքին (Մարաղայից հարավ)։ Հարավում հայկական պետության սահմանը այդ ժամանակ հասնում էր Կորդուաց լեռներին և Արևմտյան Տիգրիսին, Հյուսիսում՝ Քուռ գետին, իսկ արևմուտքում՝ Եփրատին։

Նշված սահմանների մեջ ամփոփված լայնածավալ տերիտորիան, էթնիկական բնակեցվածության տեսակետից, լիովին չի կարելի Հայաստան համարել։ Ոչ միայն Ատրպատականում, այլև Փայտակարանում, ամբողջապես, և Կորդուքի, Արցախի Ուտիքի, Գուգարքի ու Տայքի որոշ մասերում գերազանցապես բնակվում էին այլ ժողովուրդներ՝ կորդուացիներ, մարեր, աղվաններ, վրացիներ։ Այնպես որ Արշակունիների շրջանում հայ ժողովրդի էթնիկական սահմանները միայն մոտավոր չափով էին համընկնում պետական սահմանների հետ։ Եթե հարավ-արևելքում, արևելքում և հյուսիսում հայկական պետության սահմաններն ավելի ընդարձակ էին էթնիկականից, ապա արևմուտքում ճիշտ հակառակն էր. այստեղ հայկական պետության սահմանն անցնում էր Եփրատ գետով, մինչդեռ ամբողջ Փոքր Հայքը, որի բնակչության հիմնական մասը կազմում էին հայերը, տարածվում էր Եփրատ գետից արևմուտք։ Դեռ ավելին, մի քիչ ավելի ուշ՝ 6-րդ դարում հայկական տարրը ձգվում է դեպի արևմուտք այն աստիճան, որ համարյա ամբողջ Կապադովկիայում ձեռք է բերում բացարձակ գերակշռություն, որով մասնավորապես և պայմանավորված էր Հուստինիանոսի ժամանակաշրջանում (527—565) կատարված նոր պրովինցիալ բաժանումը Փոքր Ասիայի արևելյան մասում։

Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում վերը նշված հայկական պետության քաղաքական սահմանները գրեթե մնացել են անփոփոխ մինչև 387 թ.։ Նշված սահմանները Արշակունիների ժամանակաշրջանի հայկական պետության մաքսիմում սահմաններն էին։ Ծայրամասային նահանգները՝ Աղձնիքը, Կորդուքը, Արցախը, Ուտիքը, Գուգարքը, երբեմն ապստամբելով դուրս էին գալիս հայկական պետության շրջանակներից, բայց ճնշվում էին նրանց ապստամբությունները և նորից միացվում հայկական պետությանը։ Բացի դրանից, Հռոմն ու Պարսկաստանը ևս ժամանակավորապես իրենց ձեռքն էին դցում Հայաստանի մեջ մտնող զանազան շրջաններ, որոնք տարածվում էին հարավ-արևելքում, հարավում և հարավ-արևմուտքում։ Սակայն մինչև

չորրորդ դարի երկրորդ կեսը հայկական զորքի ուժով այդ շրջանները նորից էին միացվում Հայաստանին։

Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում հայկական պետության հիմնական մայրաքաղաքներն էին՝ Արտաշատը և Վաղարշապատը։

Երկարաձիգ պատերազմները Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև վերջացան նրանով, որ 4-րդ դարի վերջերին Հայաստանը բաժանվեց Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև։ Պայմանագրային այդ համաձայնությունը, որ տեղի ունեցավ 387 թվին, ուժի մեջ մնաց մինչև 591 թ., երբ Պարսկաստանի համեմատությամբ Բյուզանդիայի բարենպաստ պայմանների շնորհիվ Հայաստանի կենտրոնական նահանգները Սասանյաններից ժամանակավորապես անցան Բյուզանդիային։

Պարսկաստանի և Հռոմի միջև կնքված հատուկ պայմանագրով Հայաստանի ծայրամասային նահանգները՝ Ծոփքը, Աղձնիքը, Կորդուքը, Նոր-Շիրականը (Պարսկահայքը), Բաղասական աշխարհը (Փայտակարանը), Արցախը, Ուտիքն ու Գուգարքը համարվեցին Հայաստանից ընդմիշտ անջատված։ Հայաստանի կազմում մնում էին միայն կենտրոնական նահանգները, որոնք բաժանվեցին հիշյալ պետությունների միջև։ Հայաստանի խոշորագույն մասը՝ $^4/_5$-ը անցավ պարսիկներին, իսկ $^1/_5$-ը հռոմայեցիներին։

Այդ բաժանումից հետո, որ պատմության մեջ հայտնի է Հայաստանի քաղաքական առաջին բաժանում անունով, այլևս Մեծ Հայքն ամբողջությամբ ընդգրկող մի միասնական հայկական թագավորություն չառաջացավ։

Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի բաժանումը ոչ միայն լոկ տերիտորիալ իմաստ ուներ, այլև քաղաքական ու, նույնիսկ, կուլտուրական։ Թե՛ պարսիկները և թե՛ հատկապես հռոմայեցիները հրամայողաբար ազդում էին հայ ժողովրդի ներքին կյանքի վրա՝ իհարկե բացասական իմաստով։

387 թվի այդ բաժանմամբ Հայաստանում Հռոմի ու Պարսկաստանի միջև սահման անցնում էր Մծբին—Կարին (այժմ Էրզրում) գծով։

Այդ գծի ուղղությամբ թե հռոմեական և թե պարսկական մասում կային և կառուցվեցին մի շարք բերդաքաղաքներ ու բերդեր։

Այսպես. սահմանի հարավային ծայրակետ Մծբինը, որ ամրացված քաղաք էր, գտնվում էր պարսկական բաժնում, նրա դիմաց դեպի հյուսիս տարածվող Դարա շրջանում գտնվում էր հռոմեական Դարա կամ Անաստասուպոլիս ամուր քաղաքը (այժմյան Կարա-Դարա փոքրիկ գյուղի մոտ)։ Անաստասուպոլիսը, որ այդպես էր կոչվել Հայաստանի բաժանումից հետո, Անաստաս կայսրի օրով ամրացվեց։ Նա գտնվում էր սահմանի վրա՝ ի հակադրություն պարսկական Մծբինի։

Ավելի հյուսիս, սահմանային Նիմփիոս (այժմ՝ Բաթման-սու) գետի աջ կողմին գտնվում էր Մարտիրոսուպոլիս (Տիգրանակերտ) քաղաքը՝ հռոմեական մասում։ Գետի մյուս կողմում (ձախ ափին) տարածվում էր պարսկական Արզանան հարուստ շրջանը՝ Արզն քաղաքով։ Բացի դրանից, Մարտիրոսուպոլիսի ուղիղ դիմաց պարսկական մասում, Ակբա լեռան վրա գտնվում էր Ակբա ամրոցը (այժմ՝ Անուշիրվան կալա)։ Ակբայից ոչ այնքան հեռու գոյություն ունեին ևս պարսկական սահմանագլխային երկու բերդեր՝ Ափումը և Խլոմարը կամ Քղիմարը։ Հենց պարսկական այդ բերդերի (Ակբայի, Ափումի և Խլոմարի) գրավման համար էին օպերացիաներ կատարում հռոմեական զորքերը 6-րդ դարի վերջերին ծագած երկարատև պատերազմների ընթացքում։ Ափումի տեղը ճշգրիտ հայտնի է։ Նա գտնվում էր Իլիջա լեռների լանջին, որտեղից սկիզբ է առնում Բաթման-սու գետի ակունքներից մեկը։ Ափումից ոչ հեռու դեպի արևելք գտնվում էր Խլոմարը։

Պարսկական Ակբա, Ափում և Խլոմար բերդերի դիմաց կանգնած էին հռոմեական ամրացված բերդերը։ Այսպես. բացի Մարտիրոսուպոլիսից և նրանից հյուսիս գտնվող Աթթախ բերդից գոյություն ուներ և Փիս բերդը, որը գտնվում էր Մարտիրոսուպոլիսից 35 կմ հեռավորության վրա, Փիսից դեպի արևմուտք 8—10 կիլոմետր հեռավորության վրա գտնվում էին Կլեյսուրի երկու լեռնանցքները՝ մեկը մյուսին շատ մոտ։ Այս կողմերում պարսկական մասից դեպի հռոմեականը կարելի էր անցնել միայն այդ երկու լեռնանցքներով, այլ ճանապարհ գոյություն չուներ։ Մեզ հասած տեղեկությունների համաձայն, հետագայում Հուստինիանոս կայսրի օրով ավելի ամրացվեցին ստրատեգիական բացառիկ նշանակություն ունեցող Փիս բերդն ու Կլեյսուրի լեռնանցքները։

Փիսից հյուսիս, լայնական ուղղությամբ տարածվում է Հայկական Տավրոսը։

Հայկական Տավրոսից հյուսիս Արածանիի հովտում սահմանն ուղղված էր դեպի Թեոդոսուպոլիս (Կարին)։ Այս շրջանում հռոմեական տիրապետությունը պարսկականի հետ շփվում էր Հաշտյանք և Խորձյան գավառներում՝ Կթառիճ և Արտագերս[1] բերդերի ամրացված գծով։ Կթառիճը գտնվում էր Հաշտյանք գավառում և մինչև Հուստինիանոս կայսրը նա իրենից ներկայացնում էր մի անշուք գյուղ։ Հուստինիանոսն այստեղ կառուցեց ամուր բերդ՝ արհեստական ջրամբար—խրամատներով, այն դարձնելով Հաշտյանք գավառամասում պաշտպանության հենակետ։ Նույնպիսի ֆունկցիա էր կատարում Արտագերսը Խորձյան գավառում։

Թեոդոսուպոլսի կողմերում երկու պետությունների սահմանը այնքան էլ որոշակի չէր։ Այս մասում երկու կողմերի բնակիչները խնամիական և այլ կապերով կապված էին իրար հետ ու հաճախ անցնում էին ցանկացած կողմը։

Թեոդոսուպոլիսը գտնվում էր հռոմեական մասում։ Նա ուղղակի սահմանի վրա չէր, այլ մի փոքր արևմուտք։ Այս մասում անմիջական սահմանի վրա գտնվում էր Դու գյուղը, իսկ դեպի հյուսիս, Կանդիլ լեռան մոտերքում՝ Մաղիկ գյուղը։

Ի հակադրություն Թեոդոսուպոլսի, պարսկական մասում գտնվում էր Բոլ կամ Բող բերդը, որը բավականաչափ մեծ դեր խաղաց 6-րդ դարի պարսկա-հռոմեական պատերազմների ժամանակ։ Բող բերդի տեղը ճշգրիտ չի որոշված։ Սովորաբար այդ բերդը տեղադրում են այժմյան Համամ-կալա քաղաքի (հնում՝ Վաղարշավան) տեղը։ Ադոնցի կարծիքով Բող բերդի ավերակները պետք է որոնել Կարգաբազար լեռների շրջանում գոյություն ունեցող Բուա-կալա ամրոցի մոտերքում։ Ըստ նրան Բողը պետք է կապել Սպերի ոսկու հանքերի հետ, իբր այդ բերդն ավելի հին ժամանակներում հսկում էր ոսկու հանքերի վրա։

---

1 Խորձյանում գտնվող այդ Արտագերս բերդը (հռոմեական և բյուզանդական պատմագիրների մոտ գործ է ածված «Արտալես» և «Արտալեսոն» ձևով, մենք այն հայերեն ընթերցում ենք «Արտագերս») չպետք է շփոթել Երասխաձոր գավառի Արտագերսի հետ։ Վերջինիս մեջ էր հայոց զորքերի հետ միասին ամրացել Փառանձեմ թագուհին Արշակ II-ին Տիգրոնում Շապուհ II-ի կողմից ձերբակալելու և Անհուշ բերդը նետելուց հետո (368 թ)։

Ուրեմն այդպես, Հայաստանի 387 թվի առաջին բաժանման գծի ուղղությամբ հռոմեական մասում գտնվում էին Անաստասուպոլիս (Դարա), Մարտիրոսպոլիս (Տիգրանակերտ), Աթթախ, Փիս, երկու Կլեյսուրներ, Կթառիճ, Արտագերս և Թեոդոսուպոլիս (Կարին) ամրացված կետերը։ Իսկ պարսկական մասում՝ Մծբին, Արզն, Ակբա, Ափում, Խլոմար և Բող բերդերը։

Երկու պետությունների միջև եղած սահմանն անցնում էր հետևյալ բնագծերով (հարավից-հյուսիս), Մծբին—Իլջայի լեռներ—Բաթման-սու գետ—Սերոկի լեռներ—Դևեբոյնի և Կարգաբաղարի լեռներ—Կանդլի լեռներ և դեպի հյուսիս արևմուտք՝ մինչև Սև ծովի մոտերքը։

Նկարագրված գծից արևելք ընկած էր Հայաստանի Սասանյան Պարսկաստանին անցած մասը, որը հայտնի է Արևելյան Հայաստան անունով, իսկ գծից արևմուտք հռոմեական մասն էր՝ Արևմտյան Հայաստանը։

Այժմ ծանոթանանք Արևմտյան և Արևելյան Հայաստանի հետ առանձին-առանձին։

Արևմտյան Հայաստան։ Արևմտյան Հայաստանը տերիտորիալ և ժողովրդի կազմի տեսակետից իրենից ներկայացնում էր մի ամբողջություն. այնտեղ գերազանցապես ապրում էին հայերը։ Սակայն Հռոմեական կայսրությունից ունեցած կախվածության աստիճանի տեսակետից այնտեղ գոյություն ունեին երեք կարգի վարչական միավորներ՝ Ավտոնոմ նախարարություններ կամ Սատրապական Հայաստան, Ներքին Հայք և Փոքր Հայք։ Նրանք իրարից տարբերվում էին ոչ միայն կայսրությունից ունեցած կախվածության աստիճանով, որի մասին կանդրադառնանք քիչ հետո, այլև տարբեր ժամանակներում էին միացվել կայսրությանը։ Այսպես. Փոքր Հայքը Հռոմի կողմից գրավված էր դեռևս 1-ին դարում (մ. թ. ա.) և երկարատև կռիվները Հռոմի ու Պարսկաստանի միջև գնում էր միայն Մեծ Հայքի համար։ Ավտոնոմ նախարարությունների տերիտորիաները, որ տարածվում էին Մեծ Հայքի հարավ-արևմտյան մասում, Հռոմի կողմից գրավվեց մոտավորապես 374 թվին, իսկ Ներքին Հայքը Հռոմին անցավ 387 թվին Հայաստանի առաջին բաժանման պայմանագրով։

ա) Ավտոնոմ նախարարություններ կամ Սատրապական

Հայաստան։ Ավտոնոմ նախարարությունները գրավում էին Արածանիի ստորին և Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքների վրա ընկած շրջանները։ Նրանք թվով վեց էին. դրանք են՝ Մեծ Ծոփքը, Անգեղտունը, Անձիտը, Շահունյաց Ծոփքը, Հաշտյանքը և Բալահովիտը։ Սատրապությունների տերիտորիան ավելի հին ժամանակներում կազմում էր Ծոփքի թագավորությունը։

Այդ նախարարությունները իրենց տերիտորիայով համապատասխանում են այժմյան հետևյալ շրջաններին. Մեծ Ծոփքը տարածվում էր Բաթման-սու գետից արևմուտք մինչև Արղանա-սու գետի միջին և ստորին հոսանքի շրջանը։ Անգեղտունը տարածվում էր Արղանա-սու և Ջիբենե-սու գետերի վերնագավառում, Բալահովիտը գրեթե համընկնում էր այժմյան Բալու շրջանի հետ։ Հաշտյանքը մի փոքր տարբերությամբ իր տերիտորիայով համընկնում է այժմյան Գենջի և Ճապաղաջուր շրջաններին։ Անձիտը կամ Հանձիտը՝ Խարբերդի շրջանին, իսկ Շահունյաց Ծոփքը՝ Զարսանջակին (Խարբերդից հյուսիս-արևմուտք)։

Ավտոնոմ նախարարություններում, ինչպես հենց անունը ցույց է տալիս, հայ նախարարները ներքին կյանքում ունեին ինքնուրույնություն, սակայն քաղաքական գործերում ենթարկված էին Հռոմին և որոշ չափով վերահսկողության տակ էին իրենց ներքին գործերում։

բ) Ներքին Հայք։ Սա հռոմեացիների, ապա բյուզանդացիների մոտ կոչվել է նաև «Մեծ Հայք»։

Ներքին Հայքը կազմված էր Եփրատի վերին հոսանքում ընկած գավառներից, որոնք թվով տասնեմեկ էին՝ Խորձյան, Պաղնատուն, Մունձուր, Դարանաղի, Եկեղյաց, Մանանաղի, Դերջան, Կարին, Շաղգոմք, Սպեր և Առյուծ (վերջինս հիշատակված է միայն «Աշխարհացույց»-ի մեջ)։ Ներքին Հայքը իր տերիտորիայով համընկնում էր «Աշխարհացույց»-ի մեջ նկարագրված Բարձր Հայքի (Կարնո երկիր) հետ։

Հիշատակված գավառներն ունեին հետևյալ տեղադրությունը. Խորձյանը գտնվում էր Քղի գետի վրա՝ այժմյան Քղի սանջակի տեղը։ Պաղնատունը տարածվում էր Խորձյանի մոտ, նույն գետի ստորին հոսանքի շրջանում։ Պաղինից արևմուտք, Մունձուր գետի վրա, Մունձուր գավառն էր։ Մյուս գավառները տարածվում էին Եփրատի ուղղությամբ՝ Կամախից մինչև նրա ակունքների

շրջանը՝ Թեոդոսուպոլսի մոտ, հետևյալ հերթականությամբ՝ Դարանաղի (համապատասխանում է այժմյան Կամախի շրջանին), Եկեղյաց (Երզնկայի շրջանը), Մանանաղի (Դերջանից հարավ), Դերջան, Կարինի (Էրզրումի շրջան), Շաղագոմք (Օվաջըղի շրջան) և Սպեր (Իսպիրի շրջան)։

Ներքին կամ Մեծ Հայքի Եկեղյաց, Դերջան և Սպեր գավառներին շփվում էր Փոքր Հայքը։

գ) Փոքր Հայք։ Փոքր Հայքը, ինչպես մենք տեսանք, կազմում էր հնագույն Հայասա երկրի մասը։ Այս երկիրը հայկական էր և ընկած էր Եփրատից արևմուտք։ Աքեմենյան տիրապետության քայքայման ժամանակ առաջինը Փոքր Հայքն էր, որ դեն շպրտեց աքեմենյան լուծը և ստեղծեց իր հայկական անկախ պետությունը։ Փոքր Հայքի թագավորության տիրապետության տակ էին գտնվում նաև հարևան խալդերի և տիբարենների երկրները, այնպես որ նրա սահմանները հյուսիսում հասնում էին Տրապիզոն և Փառնակիա նավահանգիստները։ Սակայն Փոքր Հայքի անկախությունը երկար չտևեց։ Միհրդատ Եվպատորը 112 թ. (մ. թ. ա.) գրավում է այն և միացնում Պոնտական թագավորությանը։ Այնուհետև 66 թ. (մ. թ. ա.) հռոմեական զորավար Պոմպեոսի կողմից Պոնտոսի հետ միասին գրավվում է նաև Փոքր Հայքը և դարձվում Հռոմեական կայսրությանը ենթակա շրջան։ Սկզբում նա անմիջապես չմիացվեց Հռոմին, այլ դարձավ Հռոմի ձեռքին իբրև նվիրատվության առարկա, որ տրվում էր այս կամ այն վասալ երկրին՝ Հռոմի նկատմամբ ունեցած հավատարմության և կատարած ծառայությունների համար։

Փոքր Հայքն անմիջականորեն Հռոմեական կայսրությանն է միացվում որպես նրա բաղկացուցիչ մաս Վեսպասիանոս կայսրի օրոք (69—79 թթ.)։

Հայ պատմագիրների մոտ չափազանց քիչ և աղոտ են Փոքր Հայքի մասին եղած տեղեկությունները։ Փոքր Հայքի դերը որոշ չափով նաև անտեսված է հայագիտական մի շարք ուսումնասիրությունների մեջ։ Հայ ժողովրդի պատմությունը առանց Փոքր Հայքի պատմության կլինի թերի, որովհետև Փոքր Հայքը ոչ միայն տերիտորիալ տեսակետից հարևան էր Մեծ Հայքին, այլև կուլտուրական, տնտեսական և այլ կապերով սերտորեն կապված էր վերջինիս հետ։ Ավելին՝ Փոքր Հայքում ապրող բնակչության

մեջ հայերը միշտ էլ կազմել են բացարձակ մեծամասնություն։

Առաջին դարից սկսած (մ. թ. ա.) Փոքր Հայքը կազմում էր հռոմեական Կապադովկիա պրովինցիայի մի մասը։ Կապադովկիան որպես պրովինցիա կազմված էր փոքրասիական նախկին փոքրիկ թագավորությունների տերիտորիաներից։ Մինչև Փոքր Հայքը նրան միացնելը, Կապադովկիան կազմված էր երկու մասից՝ Բուն Կապադովկիա և Պոնտոս։ Դրանցից առաջինը գտնվում էր Տավրոսի մոտ և այլ կերպ կոչվում էր Մեծ Կապադովկիա, իսկ երկրորդը՝ Պոնտական լեռների շրջանում և կոչվում էր Պոնտական Կապադովկիա։ Մեծ Կապադովկիան բաժանված էր տասը սարատեղիական շրջանների, իսկ Պոնտական Կապադովկիան՝ երեք։ Այդ բաժանումները շատ չանցած կորցրին իրենց արժեքը և Կապադովկիան դարձավ հռոմեական պրովինցիա։

Սկզբնաղբյուրների հաղորդած խառնափնթոր տեղեկությունների հիման վրա հնարավոր չէ ճշգրիտ որոշել Փոքր Հայքի ամբողջական սահմանները։ Ն. Ադոնցն իր աշխատության մեջ («Армения в эпоху Юстиниана», С. Петербург, 1908 г.) մանրազնին քննության ենթարկելով Փոքր Հայքի վերաբերյալ եղած վկայությունները, գալիս է այն եզրակացության, որ Փոքր Հայքը հռոմեական Կապադովկիա պրովինցիայի կազմի մեջ եղած ժամանակ բաղկացած էր հինգ շրջաններից։ Այդ շրջանները հյուսիսից հարավ ունեն հետևյալ հաջորդական կարգը. Օրբալիսենե, Այտուպանա, Այրետիկա, Օրսենե և Օրբիսենե։ Հիշատակված մարզերից Օրբալիսենեն գտնվում էր Գայլ գետի (Կելկիտ-չայ) վրա, հաջորդ երկուսը՝ Այտուպանան ու Այրետիկան գտնվում էին Հալիսի ափերին (առաջինը աջ ափին, իսկ երկրորդը՝ ձախ)։ Օրսենեն և Օրբիսենեն տարածվում էին Կանգալա գետի շրջանում (առաջինը՝ հյուսիսում, իսկ երկրորդը՝ հարավում)։

Այսպիսով, Փոքր Հայքն իբրև Կապադովկիա պրովինցիայի մի մաս, իր մեջ ընդգրկում էր Գայլ գետի ավազանի վերին և միջին մասերը, Հալիս գետի (Կզըլ-իրմակ) վերին հոսանքի շրջանները և Տիվրիկ գետի ավազանն ամբողջությամբ վերցրած։

Փոքր Հայքի ծայրամասային քաղաքները իրար հետ միացված էին խոշոր նշանակություն ունեցող ռազմական ճանապարհով։ Այդ ճանապարհը Փոքր Հայքի տերիտորիայում կազմում էր մի մեծ շրջան, միացնելով հետևյալ քաղաքներն իրար հետ. Սեբաս-

տիա—Նիկոպոլիս—Զիմարա—Մելիտինե և նորից Սեբաստիա։ Այդ ճանապարհը, նշված քաղաքներից դուրս եկող ռազմական այլ ճանապարհների հետ միասին, Փոքր Հայքը դարձնում էր ստրատեգիական կարևոր մի հանգույց։

Այդ էր Փոքր Հայքի տերիտորիան այն ժամանակաշրջանում, երբ նա հանդիսանում էր Կապադովկիա պրովինցիայի մասը։ Նույն այդ տերիտորիայում հայ բնակչությունը կազմում էր մեծամասնություն։

Սակայն Փոքր Հայքը մինչև վերջ չմնաց Կապադովկիայի կազմում։ Երրորդ դարի վերջին՝ Դիոկղետիանոս կայսեր օրոք, նա բաժանվեց Կապադովկիայից և մտավ Հռոմեական կայսրության մեջ որպես առանձին պրովինցիա՝ կազմելով Պոնտական դիոցեզի պրովինցիաներից մեկը։ Չորրորդ դարի վերջին կեսին Թեոդոս կայսեր օրով (379—395 թթ.) Փոքր Հայքը բաժանվեց երկու մասի՝ Առաջին Հայքի և Երկրորդ Հայքի։ Առաջին Հայքը կազմում էր Սեբաստիայի մարզը՝ համանուն կենտրոններով և Կոլոնիա, Սատաղ, Սեբաստոպոլիս ու այլ քաղաքներով։ Երկրորդ Հայքը տարածվում էր նրանից հարավ՝ Մելիտինեի շրջակայքը և դեպի ավելի արևմուտք։ Նրա մեջ մտան բացի Մելիտինեից, որը նրա կենտրոնն էր, նաև Արկա, Կոմանա, Արիարաթ ու այլ քաղաքներ։

Առաջին և Երկրորդ Հայքերի բռնած տերիտորիաները զգալի չափով մեծ էին նախկին Փոքր Հայքի տերիտորիայից։ Նրա այդ մեծացումը կատարվեց Կապադովկիայի հաշվին։

Այդպիսի դրությամբ Փոքր Հայքը մնում էր մինչև Հուստինիանոս կայսրի ռեֆորմները։

Մինչև Հուստինիանոս կայսրի ռեֆորմները կայսրության արևելյան մասը բաղկացած էր երկու պրեֆեկտուրայից[1]։ Դրանցից մեկը կոչվում էր Արևելյան պրեֆեկտություն, որը բաղկացած էր հինգ դիոցեզներից, սրանց թվում և գտնվում էր Պոնտական դիոցեզը։ Եփրատից արևմուտք գտնվող հայկական երկրները՝ Առաջին Հայքը, Երկրորդ Հայքը և Պոլեմոնյան Պոնտոսը, որպես պրո-

1 Մինչև 5-րդ դարի երկրորդ քառորդը Բյուզանդական կայսրությունը բաժանված էր չորս երկրամասի՝ պրեֆեկտուրայի, որոնք տրոհված էին դիոցեզների, սրանք էլ իրենց հերթին՝ պրովինցիաների։

վինցիաներ, մտնում էին Պոնտական դիոցեզի մեջ։ Կայսրության ռազմական միավորումները համընկնում էին քաղաքացիական-վարչական բաժանման հետ։ Պրովինցիաները վարչական տեսակետից կառավարվում էին պրեզիդենների կողմից, իսկ ռազմականորեն դրանք ենթարկվում էին դուքսերին և կոմսերին, սրանք էլ՝ մագիստրոսներին։ Պոնտական դիոցեզում, որը բաղկացած էր 11 պրովինցիայից և որի մեջ, ինչպես ասացինք, մտնում էին Եփրատից արևմուտք գտնվող հայկական երկրները, կար միայն մի դուքս։ Այդ դուքսը կոչվում էր Հայաստանի դուքս (dux Armeniae), որի իշխանությունը տարածվում էր Առաջին Հայքի, Երկրորդ Հայքի և Պոլեմոնյան Պոնտոսի վրա։ Հայաստանի դուքսի տրամադրության տակ կար բավականին ստվարաթիվ մի բանակ, որի զինվորների թիվը հասնում էր մոտ 30 000-ի։ Զինվորական գլխավոր միավորները գտնվում էին Սատաղում (Առաջին Հայք) և Մելիտինեում (Երկրորդ Հայք)։ Հայաստանի դուքսը պատվավոր դիրք էր գրավում վասալական հիերարխիայում։

Այնպես որ Փոքր Հայքը կազմում էր կայսրության բաղկացուցիչ մասը։ Վարչական և իրավական տեսակետից այլ էր նախկին Մեծ Հայքից Կայսրությանը միացած նահանգների դրությունը։ Սրանք ունեին կիսանկախ վիճակ. այսինքն արտաքին քաղաքականությամբ և վասալական ծառայություններով կապված էին Կայսրության հետ, իսկ ներքին կյանքում ունեին ինքնուրույնություն։

Ներքին Հայքում պետական ամենաբարձր պաշտոնը կոչվում էր Հայաստանի կոմես (comes Armeniae), որը նշանակվում էր կայսրի կողմից։ Կոմսը ռազմական գործերում ենթարկվում էր մագիստրոսին։ Սատրապական Հայաստանում իշխում էին հայ նախարարները (սատրապները), որոնց վրա հսկելու նպատակով պետական այլ պաշտոնյա չկար։

Ռազմական միավորումների և վարչական բաժանման այդ ձևը Արևմտյան Հայաստանում իր գոյությունը պահպանեց մինչև 6-րդ դարի երկրորդ քառորդը՝ Հուստինիանոս կայսրի ժամանակները։

Հուստինիանոս կայսրը (527—565 թթ.) հանդիսանում էր Ցեսարի և Օգոստոսի քաղաքականության ամենաջերմ հետևորդներից և կատարեց մի շարք ռեֆորմներ, որոնք ընդգրկեցին օրենսդրական, դատական, ռազմական և վարչական բնագավառ-

ները։ Կատարյալ դեսպոտ Հուստինիանոսը կայսրության հիմքը համարում էր զենքն ու օրենքը։

Հուստինիանոսը 529 թվականին հատուկ հրովարտակով ռազմական վերակազմության ենթարկեց Բյուզանդական կայսրության մեջ եղած հայկական բոլոր հողերը։ Արևմտյան Հայաստանում նրա կատարած ռազմական վերափոխություններն արդյունք էին պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ վերջինի ունեցած անհաջողությունների։ Այդ պատերազմները ցույց տվեցին, որ Ներքին Հայքի նախարարությունները և Սատրապական Հայաստանի զորքերը չէին կարող և ցանկություն էլ չունեին միաբանված կռվել բյուզանդական կանոնավոր զորքերի շարքում ի փառս օտարների։ Անգամ գործը հասնում էր նրան, որ Ներքին Հայքի կոմեսը չէր կարողանում ի մի գումարել երկրում եղած նախարարական զինված ուժերը։ Հուստինիանոսի կատարած ռազմական վերակազմության համաձայն Արևմտյան Հայաստանում նշանակվեց մի ստրատեգ կամ մագիստրոս, որի տրամադրության տակ դրվեցին մեծ թվով զինվորներ։ Վերացվեցին Սատրապական Հայաստանի նախարարների իշխանական պաշտոնները, իսկ նրանց տեղը նշանակվեցին օտարազգի երկու դուքսեր։ Ռազմական այդ վերափոխության էությունը կայանում էր նրանում, որ Բյուզանդական կայսրության ենթակա հայկական բոլոր երկրները՝ Առաջին Հայքը, Երկրորդ Հայքը, Ներքին Հայքը և Սատրապական Հայաստանը ընկան մի զինվորական պետի տիրակալության տակ։ Այդ պետը կոչվում էր ստրատեգ կամ մագիստրոս (մոտավորապես համապատասխանում է գեներալ-նահանգապետին), որի նստավայրը Թեոդոսուպոլիս (Կարին) բերդաքաղաքն էր։ Մագիստրոսին էին ենթարկվում բյուզանդական Հայաստանի մնացած բոլոր պաշտոնյաները՝ դուքսերը և մյուսները։ Վերացվեց կոմեսի պաշտոնը, հայ նախարարների սեփական զորք ունենալու ժառանգական իրավունքները և այլն։

Մագիստրոսի տրամադրության տակ գտնվող գլխավոր բերդաքաղաքներն էին, ամրությունների առաջին գծի վրա՝ Թեոդոսուպոլիսը (Ներքին Հայքում) և Մարտիրուպոլիսը (Սատրապական Հայաստանում)։ Դրանցից դեպի արևմուտք անցնում էր ամրությունների երկրորդ գիծը՝ Սատաղ (Առաջին Հայքում) և Մելիտինե (Երկրորդ Հայքում) բերդաքաղաքներով։

Հուստինիանոսի օրով, նրա հրամանով վերակառուցվեցին և դժվարամատույց դարձան Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող բոլոր ամրություններն ու բերդերը։ Ըստ հարմարության աստիճանի գոյություն ունեին ամրությունների մի քանի տեսակներ՝ ամրացված քաղաքներ, կարևոր բերդեր, խրամատավորված ճամբարներ և այլն։

Երզնկայի մոտ, Քեշիշ-դաղի նախալեռներում գտնվող Ջեմին բնակավայրը, որն այնքան հայտնի էր իր ընտիր գինիներով, ենթարկվեց վերակառուցման և կոչվեց Հուստինիանուպոլիս՝ դառնալով քաղաքական-վարչական կենտրոն Ծոմինա անունով, որտեղ նստում էր նաև Եկեղյաց գավառի եպիսկոպոսը։

Հուստինիանոսի կատարած ռազմական վերակազմությանը մոտ 7—8 տարուց հետո հաջորդեց վարչականը։ Նա հայերի նկատմամբ համառ կերպով վարում էր բյուզանդականացման քաղաքականություն։ Նրա կատարած վարչական վերակազմությունն ու ժառանգական կարգի վերաբերյալ տված հրովարտակները տանում էին դեպի Բյուզանդիային ենթարկված հողերում բնակված հայության վերացումը։ Հուստինիանոսի կատարած վարչական վերակազմությունը շատ ավելի մեծ բացասական հետևանքներ ունեցավ Արևմտյան Հայաստանի բնակչության կյանքում, քան ռազմականը։

535 և 536 թվերին բոլոր դիոցեզներում կատարած վարչական վերակազմության հետ միասին Հուստինիանոսի հրովարտակով վերակազմվեցին նաև Բյուզանդական կայսրությանը ենթակա հայկական բոլոր երկրները՝ Առաջին Հայքը, Երկրորդ Հայքը, Ներքին Հայքը և Սատրապական Հայաստանը։ Այդ հրովարտակի համաձայն, հայկական երկրները բաժանվեցին չորս վարչական շրջանների (պրովինցիաների)՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք։ Հուստինիանոսի վարչական բաժանումը համընկնում է դատականի հետ։

Առաջին Հայք։ Վարչական այս միավորը համարվեց պրոկոնսուլություն (փոխկոնսուլություն), որի կենտրոնը Հուստինիանուպոլիսն էր։ Նրա մեջ մտան նախկին Ներքին Հայքը ամբողջապես (Թեոդոսուպոլիս և այլ քաղաքներով հանդերձ), նախկին Առաջին Հայքի արևելյան շրջանները, Սատաղ, Նիկոպոլիս, Կոլոնիա քաղաքներով և Պոլեմոնյան Պոնտոսի մի մասը՝ Տրապիզոն գլխավոր քաղաքով։

Երկրորդ Հայք: Կազմվեց նախկին Առաջին Հայքի մյուս մասից (Սեբաստիա և Սեբաստուպոլիս քաղաքներով հանդերձ) նախկին Պոլեմոնյան Պոնտոսի Կոմանա քաղաքի շուրջն ընկած շրջաններից և Հելլենապոնտոսի Ջելա ու Բերիսա քաղաքների շրջակայքի տերիտորիաներից։ Այս վարչական միավորի ղեկավարի դիրքն ու պաշտոնի կոչումը մնաց նախկինը՝ դուքս։ Կենտրոնը Սեբաստիան էր։

Երրորդ Հայք: Կազմակերպվեց նախկին Երկրորդ Հայքի տերիտորիայից և կենտրոնը մնաց նույնը՝ Մելիտենեն (Մալաթիա)։ Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում այս պրովինցիայի ամրացման վրա։ Երրորդ Հայքը ղեկավարվում էր կոմեսի կողմից։

Չորրորդ Հայք: Նախկինում ղեկավարվում էր անկախ սատրապների (հայ նախարարների) կողմից և հետևապես պրովինցիայի կառուցվածք չուներ։ Տերիտորիալ տեսակետից լիովին համընկնում էր նախկին վեց նախարարություններից բաղկացած Սատրապական Հայաստանի հետ։ Ղեկավարության և նրա աստիճանի տեսակետից Չորրորդ Հայքը հաշվվեց կոնսուլություն։ Կենտրոնը Մարտիրոպոլիսն էր, իսկ գլխավոր բերդը՝ Կթառիճը։

Ստեղծված չորս պրովինցիաների ղեկավարները նշանակվում էին կայսեր կողմից։ Աղնվականության դրությունը մինչև ամուսնության և ժառանգական կարգի մասին եղած հրովարտակը, մնաց նույնը, ինչ որ կար նախկինում։ Սակայն դա ամիսների հաշիվ եղավ, որովհետև 536 թվականի մարտի 18-ին նույն Հուստինիանոս կայսրը հատուկ հրովարտակ արձակեց, որով Արևմտյան Հայաստանի նախարարական իշխանությունները զրկվեցին քաղաքական ինքնուրույնությունից։ Այս հրովարտակի համաձայն ժառանգական իրավունքներ տրվեց թե՛ նախարարական տների կրտսեր անդամներին և թե՛ կանանց։ Հետևանքն այն եղավ, որ Հայկական նախարարություններն սկսեցին տրոհվել նախարարների ժառանգների (թե՛ արական և թե՛ իգական սեռի) միջև, դրանով իսկ, կորցնելով իրենց դերն ու նշանակությունը։

Հուստինիանոսի ռեֆորմների նպատակն էր Արևմտյան Հայաստանը զրկել տեղական ուժից ու ինքնուրույնությունից և այն աստիճանաբար լուծել Կայսրության մեջ։

Հուստինիանոսի ռեֆորմների հետևանքով Արևմտյան Հայաստանում առաջանում են դժգոհություններ, բանը հասնում է զինված ընդհարման։ Սակայն Կայսրության կողմից ձեռք են առնվում կտրուկ միջոցներ և ճնշվում։ Նախարարներից շատերն ստիպված էին իրենց կալվածքները վաճառել և տեղափոխվել Արևմուտք։ Դրանով չի սահմանափակվում հայ ժողովրդի մի խոշոր հատվածին բերած Բյուզանդական կայսրության չարիքները։ Ստեղծված պայմանների պատճառով Փոքր Հայքի հայերը, դեռևս 5-րդ դարի կեսերին, աստիճանաբար կորցնում էին իրենց մայրենի լեզուն։

Սակայն պատմական որոշ անցքեր խանգարեցին Բյուզանդական կայսրության պլանները։ Հայաստանի երկրորդ բաժանումից հետո (591 թ.) Փոքր Հայքի հայերը սերտ շփման մեջ են մտնում Արևելյան Հայաստանից Բյուզանդիային անցած կենտրոնական նահանգների հայ բնակչության հետ։ Բացի դրանից, մեծ քանակությամբ հայեր բյուզանդական կայսրերի գործադրած բռնությամբ տեղափոխվեցին Արևմուտք։ Հայերի դեպի Արևմուտք տեղափոխման հոսանքն այնքան ուժեղ և մեծ մասշտաբի էր, որ հաջորդ դարում (7-րդ դ.) պրովինցիաների բաժանման ժամանակ մի լայնարձակ տերիտորիա, որ նախկինում հայկական չէր, կոչվեց հայերի անվամբ։ Նա տարածվում էր Կեսարիայից մինչև Սև ծով։ Ահա այդ հանգամանքները նպաստեցին ոչ միայն Փոքր Հայքի հայերի պահպանմանը, այլև նորանոր շրջաններում հայերի դերակշիռ մաս ձեռք բերելուն։ Հայաստանից դեպի Բյուզանդական տերիտորիան ստեղծված հայերի այդ հոսանքը միաժամանակ մեծ բացասական ազդեցություն թողեց Արևելյան Հայաստանի քաղաքական հզորության և տնտեսական զարգացման վրա։ Տեղափոխությունները կատարվում էին վարչական բռնի ուժով, տեղափոխվածների զգալի մասը (մանավանդ 6-րդ դարի վերջերին, Մորիկ կայսրի օրոք) որպես զինվորներ ուղարկվում էին Կայսրության արևմտյան սահմանները պաշտպանելու համար։

Արևմտյան Հայաստանի վարչական վիճակը, 6-րդ դարի վերջերին մի փոքր փոփոխություններ կրելով հանդերձ, գոյություն ունեցավ մինչև 7-րդ դարի կեսերը, մինչև արաբների հանդես գալը։

Արևելյան Հայաստան։ Հայագիտական գրականության մեջ Արևելյան Հայաստանն հաճախ կոչված է

Մարզպանական Հայաստան կամ Պարսկահայաստան։ Վերջին այդ անվանակոչումները ոչ գիտական են, որովհետև երկրի անունը ոչ թե որոշվում է տիրողներով՝ մարզպաններով կամ քաղաքական վիճակով, տվյալ դեպքում պարսկական տիրապետությանը ենթակա լինելով, այլ այն ժողովրդի անվամբ, որ այդ երկրում բնակվում է։ Հետևապես երկիրը պետք է կոչել իր իսկական անունով, այսինքն Հայաստան։ Իսկ նրա երկու հատվածներն իրարից տարբերելու համար արևելյան մասը, որ մտնում էր Պարսկաստանի տիրապետության ներքո, պետք է անվանել Արևելյան Հայաստան, իսկ արևմտյանը, որը մտնում էր Բյուզանդիայի կազմի մեջ՝ Արևմտյան Հայաստան։

Արևմտյան Հայաստանը առաջին բաժանումից երկու տարի անց, Հայաստանի այդ մասի թագավոր Արշակ Գ-ի մահից հետո (389 թ.) անմիջապես միացվեց կայսրությանը, իսկ Արևելյան Հայաստանում հայկական ինքնուրույն թագավորությունն իր գոյությունը պահպանեց մինչև 429 թիվը։ Բացի դրանից, ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, որտեղ 6-րդ դարում գրեթե լիովին ոչնչացվեցին հայկական խոշոր նախարարությունները, սովորությունները, ավատական կարգը և երկիրը վերածվեց որպես Կայսրության կազմի մեջ մտնող լոկ պրովինցիայի, ապա Արևելյան Հայաստանում Հայկական թագավորությունը վերացնելուց մոտ երկու տասնյակ տարուց հետո, Սասանյան արքայից արքաների կիրառած իրանիզացիայի քաղաքականությունը գլխովին տապալվեց։ Հայ ժողովուրդն իր ազատագրական պատերազմներով «խելքի բերեց» Սասանյան տիրակալներին, որ նրանք հրաժարվեն իրանիզացիայի քաղաքականությունից, չնայած նրանց անհաջող փորձերն այդ ուղղությամբ շարունակվում էին իրենց տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում։

Սասանյան Պարսկաստանը 6-րդ դարում ապրում էր իր հզորության ամենաբարձր աստիճանը։ Խոսրով Ա. Անուշիրվանի ժամանակ (531—579 թթ.) ավարտվեց Սասանյան Պարսկաստանի ռազմա-վարչական և հարկային ռեֆորմը։ Սասանյան ամբողջ պետությունը բաժանված էր չորս երկրամասի՝ արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային։ Այդ երկրամասերը կոչվում էին «քուստակներ»։ Խոսրով Անուշիրվանի օրով մինչ այդ քուստակներում եղած ռազմական և վարչական միացյալ պաշտոնը

բաժանվեց երկու պաշտոնների՝ մեկը վարչական գծով, իսկ մյուսը՝ ռազմական։ Այնպես որ յուրաքանչյուր քուստակ (երկրամաս) գլխավորում էին երկու բարձրաստիճան պաշտոնյաներ, նրանցից մեկը վարչական գծով էր և կոչվում էր «պատգոսպան»։ Սրա իրավասություններն ունեին քաղաքական-վարչական բնույթ՝ հարկերի հավաքում, պետական շինարարություն և այլն։ Քուստակի մյուս բարձրաստիճան պաշտոնյան ռազմական գծով էր։ Նա, որ կոչվում էր «սպայապետ», հանդիսանում էր տվյալ քուստակի ռազմական ուժերի գերագույն հրամանատարը։ Քուստակները բաժանված էին ավելի փոքր վարչական միավորների՝ մարզերի և «շահրների»։ Հայաստանը, Ատրպատականը, Վրաց աշխարհն ու Աղվանքը մտնում էին հյուսիսային կամ Կապկոհ (Կովկասյան) քուստակի մեջ։ Հյուսիսային քուստակի կենտրոնն էր Ատրպատականի Գանձակ քաղաքը (Ուրմիա լճից հարավ-արևելք)։ Հյուսիսային քուստակի մեջ մտնող մարզերի և շահրների թիվը հասնում էր 13-ի։ Հայաստանի մարզպանը նշանակվում էր Սասանյան արքունիքի կողմից և հանդիսանում էր նույն արքունիքի հրահանգներն իրականացնող երկրի ամենաբարձր պաշտոնյան։ Մարզպան էր նշանակվում ոչ միայն պարսիկներից, այլ նաև հայերից։ Հայաստանում, ինչպես և մյուս մարզպանություններում, մարզպանից բացի կային նաև երկու բարձր պաշտոններ՝ սպարապետություն և հազարապետություն։ Սպարապետը վարում էր երկրի զորքերի գլխավոր հրամանատարության պաշտոնը, իսկ հազարապետը զբաղվում էր երկրի ներքին տնտեսական, կուլտուրական և շինարարական գործերով։ Թե՛ սպարապետը և թե՛ հազարապետը ստորադրված էին մարզպանի նկատմամբ. նրանք ենթարկվում էին վերջինին։ Մարզպանի պարտականությունների մեջ էին մտնում, բացի Սասանյան արքունիքի հրահանգները կատարելուց, նաև երկրի ներքին կարգի պահպանումը, գործակալների միջոցով արքունի հարկերի հավաքումը, բռնկված ապստամբությունների ճնշումը, Հայաստանի մարզպանության սահմանների պաշտպանությունը արտաքին հարձակումներից և այլն։ Մարզպանների վարչական կենտրոնը՝ մայրաքաղաքը մինչև 5-րդ դարի կեսը Արտաշատն էր, ապա դրանից հետո դարձավ Դվինը։

484 թվին Նվարսակում Վահան Մամիկոնյանի և պարսից արքունիքի միջև կնքված պայմանագրից սկսած, Հայաստանի

մարզպանությունը կոչվեց «տանուտիրական» երկիր, իսկ մարզպանը՝ «Հայոց տանուտեր»։ Այդ պայմանագրով փաստորեն երկիրը ձեռք բերեց կիսանկախ վիճակ։ Ճիշտ է 509 թվին Հայաստանը նորից կոչվեց մարզպանություն, բայց երկար չանցած նորից փոխվեց դրությունը և այն մնաց որպես «Տանուտիրական» երկիր մինչև արաբների արշավանքները։

Հայ նախարարները (որոնց հետ կծանոթանանք քիչ հետո, երբ խոսք կլինի Հայաստանի վաղ ֆեոդալական շրջանում ունեցած ներքին վարչական բաժանման մասին) Պարսկական արքունիքում ունեին իրենց գահերը հիերարխիայի սիստեմում, իրենց համապատասխան աստիճանները։ Բայց, ընդհանուր առմամբ, հայ Արշակունիների նախկին արքունիքում ունեցած գահերի հետ համեմատած նրանց դիրքը Տիզբոնի արքունիքում ցածր էր։ Հայ նախարարների շարքում Տիզբոնի արքունիքում առաջին գահը գրավում էր Սյունիքի նախարարը։ Սյունիքը Հայաստանի մարզպանության մեջ էր մտնում որպես առանձին «շահր»։ Սյունիքի իշխանությունը ուներ բավականին լայն իրավունքներ։ 571 թվին Սյունիքը դուրս եկավ Հայաստանի մարզպանությունից և մինչև արաբների առաջին արշավանքը դեպի Հայաստան 640 թիվը անմիջականորեն ենթարկվում էր Հյուսիսային քուստակի պատգոսպանին և սպայապետին։ Հյուսիսային քուստակում Հայաստանին վարչականորեն հավասար իրավունքներ ունեին Վրաց աշխարհը, Աղվանքը և Ատրպատականը, իսկ Արևմտյան քուստակում՝ Ադիաբենը և Արվաստանը։ Դրանցից առաջինի մեջ էր մտնում որպես «շահր» Հայկական Աղձնիք նահանգը, իսկ երկրորդի մեջ՝ Նուշիրականը, դարձյալ որպես «շահր»։ «Շահրներում», ինչպես օրինակ, Սյունիքում, Աղձնիքում, Նուշիրականում, գլխավորում էին տեղական հայ իշխանները-նախարարները և նրանք մարզպանությունների նկատմամբ ունեին մի տեսակ ներքին ինքնուրույնություն։

Ընդհանուր առմամբ Հյուսիսային կամ Կապկոհի քուստակի մեջ մտնող մարզպանությունները՝ Հայաստանը, Վրաց աշխարհը, Ատրպատականը, Աղվանքը, համեմատաբար ավելի թույլ էին կապված Սասանյան Պարսկաստանի բուն պետության հետ, քան մյուս քուստակների մեջ մտնող մարզպանությունները։

Արևելյան Հայաստանի տերիտորիան մարզպանների տիրապետության շրջանում (429—640 ԹԹ.) զգալի չափով փոքր է համեմատած հայ Արշակունիների տիրապետության շրջանում եղած տերիտորիայի հետ։ Այդ ժամանակաշրջանում Հայաստանի մարզպանության շրջանակներից դուրս էին գտնվում նախկինում Հայկական պետության կազմի մեջ մտնող (խոսքը վերաբերվում է միայն Հայաստանի արևելյան մասին) Գուգարքը, Ուտիքը, Արցախը, Փայտակարանը, Պարսկահայքը (Նուշիրական), Կորճեքը և Աղձնիքը։ Գուգարքն այդ ժամանակաշրջանում մտնում էր Վրացական մարզպանության մեջ, Ուտիքն ու Արցախը՝ Աղվանքի մարզպանության մեջ, Փայտակարանը՝ Ատրպատականի մարզպանության մեջ, իսկ Պարսկահայքը, Աղձնիքը և Կորճեքը՝ Արևմտյան քուստակի մեջ։ Այլ կերպ ասած, Արևելյան Հայաստանը մարզպանների տիրապետության շրջանում իր մեջ միավորում էր հետևյալ վեց նահանգները («աշխարհները»)՝ Այրարատ, Վասպուրական, Տուրուբերան, Սյունիք, Մոկք, և Տայք։ Սյունիքի 571 թվին դուրս գալը միայն ձևական և ժամանակավոր (մինչև 640 թ.) բնույթ էր կրում, նա լոկ վարչական առումով դուրս մնաց, իսկ իրականում տնտեսական, կուլտուրական և այլն առումներով մնաց որպես Հայաստանի մասը կազմող երկիր։

Հայաստանի առաջին բաժանմամբ Հռոմի և Պարսկաստանի միջև որոշված սահմանը նույն դրությամբ մնաց մինչև 591 թիվը, երբ Բյուզանդական կայսրությունը օգտվելով Պարսկական պետության ներքին թուլությունից և գահի ժառանգության համար ծագած կռիվներից, կարողացավ պարսիկներից խլել Հայաստանի մեծ մասը՝ կենտրոնական նահանգները՝ Այրարատյան աշխարհի խոշորագույն մասը մինչև Դվին, Տուրուբերանը և Տայքը։ Պարսկական մասում մնացին Այրարատյան Աշխարհից մի փոքր մաս՝ Դվինն իր շրջակայքով և Սյունիք, Վասպուրական ու Մոկք նահանգները։

Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև եղած սահմանի հյուսիսային հատվածի ուղղությունը մինչև վերջերս սխալ էր պատկերացվում[1]։ Այդ հարցի առթիվ կատարած իր արժեքավոր ուսում-

1 Հայաստանի 591 թվի բաժանման և Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև եղած սահմանային գծի ուղղության վերաբերյալ ստույգ տեղեկություններ է հաղորդում 7-րդ դարի պատմիչ Սեբեոսն իր «Պատմութիւն ի Հերակլն» աշխատության մեջ։ (Ս. Պետերբուրգ, 1879 թ.)։

նասիրության շնորհիվ, դոց. Ս. Երեմյանը վերջնականորեն պարզել է երկու պետությունների (Բյուզանդիայի և Պարսկաստանի) միջև եղած սահմանի ուղղությունը (ըստ 591 թ. բաժանման), որը որոշվում է հետևյալ գծով. Տփղիս (Թբիլիսի)—Թռեղքի լեռներ (Թրիալեթի լեռներ)—Խոնավ լեռներ—Բազումի լեռներ՝ մինչև Աղստև գետի հետ հատվելը—Գեղամա լեռներ—Ազատ գետ—Արաքս գետ՝ Ազատ գետի գետաբերանից մինչև Մասիսի դիմաց—Մակու—Առեստավան—(Վանա լճի հյուսիս-արևելյան ափին)—Ընձաքիարս գագաթը՝ Վանա լճի հարավային ափին—Մծբին[1]։

Հայաստանի երկրորդ բաժանումից հետո (591 թիվ) նախկին Արևելյան Հայաստանի ներքին կյանքի և վարչական վիճակի մեջ շոշափելի փոփոխություններ տեղի չունեցան՝ մինչև արաբական արշավանքները։ Արևմտյան Հայաստանում եղան որոշ փոփոխություններ։ Նրա վարչական կենտրոնը Թեոդոսուպոլսից փոխադրվեց Շիրակաշատ քաղաքը, որը կոչվեց Մավրիկապոլիս (այժմ Մավրակ գյուղը, Լենինականից ոչ հեռու)։ Բացի դրանից, հյուսիսային Միջագետքը և նախկին Չորրորդ Հայքի հարավային որոշ մասեր միացվեցին և կազմվեց հռոմեական Հյուսիսային Միջագետք կամ Մյուս Չորրորդ Հայք պրովինցիան, որի վարչական կենտրոնը Ամիդն էր (Դիարբեքիր)[2]։

*

* *

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե Հին Հայաստանում

[1] Տես՝ «Атлас истории СССР», часть I, Москва, 1948

[2] Այսպիսով, Արևմտյան Հայաստանում իրար կողք կողքի գոյություն ունեին երկու Չորրորդ Հայքեր՝ մեկը իսկական Չորրորդ Հայքը, մյուսը Հյուսիսային Միջագետքի կամ Մյուս Չորրորդ Հայքը։ Առաջինի վարչական կենտրոնը, ինչպես տեսանք, Մարտիրոսուպոլիսն էր (Տիգրանակերտը), իսկ երկրորդինը՝ Ամիդը (Դիարբեքիր)։ Այդ պատճառով էլ շփոթություն է ստեղծվել Ամիդի և Տիգրանակերտի միջև։ Գրականության մեջ (թե սկզբնաղբյուրների և թե ուսումնասիրությունների մեջ) հաճախ Ամիդը նույնացված է Տիգրանակերտի հետ։ Վերջնականապես պարզված է Տիգրանակերտի գիրքը։ Նրա ավերակները գտնվում են այժմյան Փարկեն կամ Սիլվան քաղաքի տեղը։ Մինչդեռ Ամիդը գտնվում էր այժմյան Դիարբեքիրի տեղում (Արևմտյան Տիգրիսի աջ ափին)։

առաջինից 7-րդ դարերում ներքին վարչական բաժանման ինչ սիստեմ գոյություն ուներ և ինչով էր պայմանավորված այն։ Այդ դարերում Հայաստանում արդեն ձևավորվել էին ֆեոդալական հարաբերությունները։ Ուրեմն, հասարակական տնտեսաձևը ֆեոդալականն էր։

Յուրաքանչյուր երկրի ներքին վարչական բաժանումը պայմանավորված է և լիովին համապատասխանում է այն հասարակական-տնտեսական ձևին, որ տվյալ ժամանակաշրջանում ապրում է այդ երկրի ժողովուրդը։ Մասնավոր սեփականության վրա հենված պետական սիստեմներում ընդհանրապես, իսկ կապիտալիստական և իմպերիալիստական պետություններում հատկապես, երկրի վարչական բաժանումն ելնում է ոչ թե տնտեսության զարգացման հեռանկարներից, բնապատմական պայմաններից, ժողովրդի կազմից և նրանց առանձնահատկություններից, այլ հետապնդում է շահագործման, ռազմական և ոստիկանական նպատակներ։

Ֆեոդալիզմի դարաշրջանին հատուկ էր երկրի տերիտորիալ մասնատվածությունը։ Յուրաքանչյուր ֆեոդալի իշխանության տակ գտնվող գավառը կամ երկիրն իրենից ներկայացնում էր վարչական-քաղաքական միավոր՝ համարյա կիսանկախ պետություն։

Ֆեոդալական Հայաստանի տերիտորիան, 1—7-րդ դարերում եղած նախարարական (ֆեոդալական) տներին համապատասխան, մասնատված էր բազմաթիվ մանր ու խոշոր գավառների։ Ամեն մի ֆեոդալական-նախարարական տուն ուներ իր «աշխարհը», «գավառը»։ Նախարարները հանդիսանում էին իրենց «գավառի» կամ «աշխարհի» տերը։

«Տեր», «տանուտեր» տերմինները, որ այնքան շատ են հիշատակվում մեր պատմագիրների կողմից, պետք է հասկանալ ոչ թե իբր լոկ նախարարական սոսկ տանուտերը, այլ տերիտորիալ իմաստով, այսինքն տվյալ «աշխարհի», գավառի՝ Սյունիքի, Ապահունիքի և այլնի տերը, տիրապետողը, իշխողը[1]։

Հին Հայաստանում վարչական-քաղաքական բաժանումը տե-

[1] Джавахов И., Государственный строй древней Грузии и древней Армении, СПБ, 1905, стр. 108 -109.

ղի է ունեցել ֆեոդալիզմի ձևավորման հետ միասին և նրանից կախված։ Նախաֆեոդալական շրջանում, ինչպես համապատասխան տեղում ասացինք, Հայաստանի տերիտորիալ միավորները հիմնականում համընկնում էին էթնիկական շրջանների հետ։ Ուրիշ կերպ ասած, այդ տերիտորիալ միավորները էթնիկական շրջաններ էին և ոչ թե լոկ վարչական միավորներ, որոնց ծագումը կամ առաջացումը սերտորեն կապված է դասակարգերի և պետության առաջացման հետ։ Հետևապես Հին Հայաստանում վարչական բաժանումը բառիս իսկական իմաստով իր սկզբնավորությունն է ստացել Արտաշեսյանների տիրապետության հենց սկզբնական շրջաններից։ Հայ ժողովրդի կազմավորման ընթացքում Հայկական լեռնաշխարհում բնակվող բազմաթիվ ցեղերն ու ցեղախմբերը, որոնցից յուրաքանչյուրը զբաղեցրել էր որոշ շրջան, գավառ, երկրամաս, միավորվեցին նրա մեջ՝ կորցնելով իրենց ինքնուրույն գոյությունը (որպես ցեղի կամ ցեղախմբի), իսկ նրանց զբաղեցրած տերիտորիալ-էթնիկական շրջանները, ձևավորվող ֆեոդալական կարգերին համապատասխան, դարձան վարչական միավորներ, նախարարություններ։ Արտաշեսյանների թագավորության շրջանում արդեն կային ֆեոդալիզմի սաղմերը և այն վերջնականապես ձևավորվեց Արշակունիների թագավորության շրջանում։ Արտաշեսյանների ժամանակաշրջանում եղած վարչական բաժանման ձևի մասին մենք համառոտակի ծանոթացանք քիչ առաջ։ Այժմ մի քանի խոսք հետագա շրջանում եղած վարչական բաժանման մասին։

Վաղ ֆեոդալիզմի շրջանում, որ սկսվում է Արշակունիների տիրապետության հենց սկզբից, արդեն ձևավորվել էին բազմաթիվ նախարարական (ֆեոդալական) տներ, որոնցից յուրաքանչյուրը տիրում էր որոշ տերիտորիայի վրա։ Այսպես. Բագրատունիներն իշխում էին Սպերում, Բագրևանդում և ապա Կոգովիտում, Մամիկոնյանները՝ Տայքում և Տարոնում, Կամսարականները՝ Շիրակում, Ամատունիները՝ Արտազում, Մարդպետի տոհմը՝ Մարդպետականում (Վասպուրականի հյուսիս-արևմտյան մասը, ներառյալ նաև Նախիջևանի գավառը), Ռշտունիները՝ Ռշտունիքում և Տոսպում, Սյունյաց իշխանները՝ Սյունիքում, Արծրունիները՝ Աղբակում, Մոկաց իշխանները՝ Մոկքում, Խորխոռունիները՝ Խորխոռունիքում և այլն։

Արշակունյաց արքայական տունը, որը պետք է դիտել որպես ամենազորեղ նախարարությունն այդ շրջանում, տիրում էր Արարատյան աշխարհի մեծագույն մասի վրա, Ճակատք, Մասյացոտն, Արագածոտն, Ոստան, Շարուր, Կոտայք, Նիգ և մի քանի այլ գավառների վրա[1]։

Լայնածավալ «աշխարհներ» ունեին նաև Հայաստանի չորս բդեշխները («կողմնակալ», «սահմանակալ»)՝ Գուգարքի, Նուշիրականի, Աղձնիքի և Ծոփքի, որոնց մասին Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները քննելով, ակադ. Հ. Մանանդյանը[2] միանում է Ն. Ադոնցի այն կարծիքին, թե բդեշխությունները նախկինում ինքնուրույն փոքրիկ թագավորություններ էին, որոնք Տիգրան Բ-ի ժամանակ ենթարկվեցին հայ թագավորների քաղաքական իշխանությանը[3]։

Ընդարձակ կալվածքներ ուներ նաև եկեղեցին. կաթողիկոսական աթոռը կալվածքներ ուներ 15 գավառներում։ Այդ կալվածքները մեծամասամբ գտնվում էին՝ Այրարատում, Տուրուբերանում (Տարոն գավառում) և Բարձր Հայքում (Դարանաղի, Եկեղյաց ու Գերջան գավառներում)։ Քրիստոնեական եկեղեցին ևս ենթարկվում էր արագ ֆեոդալականացման։

Ահա դրանք էին ֆեոդալական Հայաստանի տերերը։ Նրանցից յուրաքանչյուրի դրված կալվածքները և նրանցից կախում ունեցող ավելի մանր նախարարների կալվածքները միասին կազմում էին մեկ-մեկ վարչական-քաղաքական միավորներ՝ ֆեոդալական իշխանություն կամ նախարարություն (այստեղ հաշվի չի առնվում եկեղեցու այն մանր կալվածքները, որոնք ցրված էին

---

1 Արշակունյաց գահի օրինական ժառանգից բացի, թագավորի մյուս որդիներին կամ այն հարազատներին, որոնք հավակնություն ունեին խախտել ավատական կարգը և ժառանգել թագավորության իրավունքը, արգելվում էր քնակվել Արարատյան աշխարհում՝ արքունիքին մոտ. նրանց կալվածքներ էին տրված արքունիքից հեռու՝ Վասպուրական նահանգի Առբերանի (Վանա լճի հյուսիս-արևելյան մասում), Տուրուբերան նահանգի Ադիովիտի (Վանա լճից հյուսիս) և Չորրորդ Հայք նահանգի Հաշտյանք գավառներում։

2 «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 34—38։

3 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908, стр. 283, 410—411,

երկրի զանազան մասերում)։ Հին Հայաստանի նախարարությունների թիվը հաշվվում է մոտավորապես 50—70։

Նախարարությունների մի մասը իր մեջ ընդգրկում էր մեկ գավառ (օրինակ Բզնունիք, Խոռխոռունիք և այլն), մի մասը՝ մի քանի գավառներ (օրինակ՝ Բագրատունիները), իսկ մի մասն էլ՝ ամբողջ նահանգներ, «աշխարհ»-ներ (օրինակ՝ Սյունիք, Մոկք, Տայք)։ Խոշոր նախարարություններն իրենց հերթին տրոհված էին մանր մասերի, որոնցում իշխողները ստորադրված էին և կախում ունեին գլխավոր նախարարից՝ «նահապետ»-ից։ Նախարարները ժառանգական էին։ Սրանք վասալական կախման մեջ էին գտնվում Արշակունի թագավորներից՝ կատարելով նրանց համար վասալական ծառայություն և իրենց զորքով մասնակցելով պատերազմներին։ Նախարարների գահերի աստիճանավորության կարգը (բոլոր ավագ նախարարներն Արշակունյաց արքունիքում ունեին իրենց գահը) կախված էր ոչ միայն նախարարների տված զորքի քանակությունից, այլև նրանց գրաված տերիտորիայի մեծությունից։ Հին Հայաստանում ցրված բազմաթիվ նախարարությունները՝ ֆեոդալական իշխանություններն իրարից կալվածքներ և ամբողջական գավառներ գրավելու համար հաճախ ընդհարվում էին իրար հետ, որի հետևանքով առանձին նախարարությունների սահմանները ենթարկվում էին խոշոր փոփոխությունների։ Նախարարությունների տիրապետության տակ գտնվող կալվածքները, բացի հարևան նախարարություններից զենքի ուժով ձեռք բերածները, ըստ ծագման երեք տեսակի էին՝ ժառանգաբար անցնող կալվածքներ, որ մեր մատենագրության մեջ կոչված է «հայրենականք», գրամով ձեռք բերվածներ՝ «քսակագինք» կամ «գանձագինք» և սյուզերենի (թագավորի) կողմից ծառայությունների համար պարգևածներ՝ «պարգևականք»։ Գրամով գնված կալվածքները դառնում էին «հայրենականք»։ Ժամանակի ընթացքում հաճախ «հայրենականք» էին դառնում նաև թագավորի կողմից պարգևած կալվածքները։

Արշակունիների անկումից հետո՝ Հայաստանում «սեպուհական» հողատիրության բազայի վրա հանդես են գալիս մի շարք նոր նախարարական տներ, որոնք կալվածներ են գրավում երկրի տարբեր անկյուններում։ Ֆեոդալիզմի խորացման այս շրջանում, որը համընկնում է մարզպանների և արաբական տիրապետության ժամանակաշրջանի հետ, նախորդ շրջանից գոյություն ունեցող նախարարական տների ճյուղավորման և նոր նախարարական տների առաջացման պատճառով, ավելի է մասնատվում երկրի տերիտորիան։ Այս շրջանում մատենագիրների կողմից հիշատակվում են այնպիսի գավառանուններ, որոնք գոյություն չունեին Արշակունիների տիրապետության շրջանում։ Արաբական տիրապետության շրջանում, բացի հայ ֆեոդալական տներից, Հայաստանի տարբեր մասերում հանդես են գալիս նաև արաբապարսկական քաղաքական միավորներ՝ էմիրություններ։

Ֆեոդալական Հայաստանի վարչական-տերիտորիալ բաժանման մասին ամբողջական տեղեկություններ է հաղորդում 7-րդ դարի հեղինակ Անանիա Շիրակացին իր «Աշխարհացույց»-ում[1]։

«Աշխարհացույց»-ի մեջ Մեծ Հայքը, որի սահմանները քաղաքական առումով հայ Արշակունիների թագավորության ժամանակ տարածվում էին Քուռ գետից մինչև Վերին Միջագետք և Կասպից ծովից մինչև Արևմտյան Եփրատի ընթացքը, բաժանված է 15 «աշխարհի», որոնք իրենց մեջ ամփոփում են 187/193 գավառ[2]։ Դեռևս Արշակունիների թագավորության շրջանում գոյություն ուներ այդ 15 «աշխարհների» (մեր մատենագրության մեջ կոչված են նաև «նահանգ», «կողմ», «տուն», «գունդ») և նրանց մեջ մտնող գավառների մեծ մասը։ Սակայն այդ շրջանում պատմիչների կողմից որոշակի տարբերություն չի դրվում «աշխարհ» և «գավառ» հասկացողությունների միջև։ «Գավառն» ու «աշխարհը»

---

1 «Աշխարհացույց»-ի («Աշխարհացուցց») հեղինակի վերաբերյալ հայագիտության մեջ գոյություն ունի երկու տեսակետ։ Դրանցից մեկի համաձայն «Աշխարհացույց»-ը պատկանում է պատմահայր Մ. Խորենացու գրչին, իսկ ըստ երկրորդի, որն ավելի հիմնավոր է և այժմ համարյա քաղաքացիական իրավունք է ստացել, այն («Աշխարհացույց»-ը) պատկանում է 7-րդ դարի գիտնական Անանիա Շիրակացուն։ «Աշխարհացույց»-ի ժամանակի վերաբերյալ համարյա տարակարծիքություն չկա. հայագետների ճնշող մասի կարծիքով այն 7-րդ դ. գործ է։

2 Տես՝ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», հրատ. պրոֆ. դ-ր Աշ. Աբրահամյանի, Երևան, 1944։ Այս աշխատության մեջ մեջբերված «Աշխարհացույց»-ի տեքստում գավառների թիվը 187 է (էջ 348—351), իսկ Ինճիճյանի օգտագործած վենետիկյան տեքստի համաձայն՝ 193 (տես նրա «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» աշխատությունը, Վենետիկ, 1822 թ.)։

հաճախակի հիշատակվում են իրար կողք կողքի, մինչդեռ «Աշխարհացույց»-ի մեջ «աշխարհ»-ը և «գաւառ»-ը բոլորովին տարբեր հասկացողություններ են՝ ամենից առաջ տերիտորիայի մեծության տեսակետից։

«Աշխարհացույց»-ի համաձայն, Մեծ Հայքը Արշակունիների թագավորության շրջանում բաղկացած էր հետևյալ 15 «աշխարհ»-ներից. Բարձր Հայք կամ Կարնո աշխարհ (Արևմտյան Եփրատի հովտում), Ծորորդ Հայք (նախկին Ծոփքը—ստորին Առածանիի և Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքի շրջաններում), Տայք (Ճորոխ գետի և նրա աջակողմյան Օլթի վտակի ավազաններում), Տուրուբերան կամ Տարոնի երկիր (Արածանիի հովտում և Արաքս գետի ակունքների շրջանում), Աղձնիք (Արևմտյան Տիգրիսի ավազանում և Հայկական Տավրոսի կենտրոնական շրջաններում), Գուգարք (Քուռի վերին հոսանքի շրջանում և այժմյան Լոռի-Փամբակի շրջաններում), Այրարատ (Արաքսի միջին հոսանքի ավազանում և վերին Արածանիի հովտում), Վասպուրական (Վանա լճից արևելք՝ հարավում սկսվելով Հայկական Տավրոսի մոտից, հյուսիս-արևելքում հասնում էր մինչև Արաքս գետի ընթացքը), Մոկք (Բոհտան-սուի և Հայկական Տավրոսի միջև), Կորնեք կամ Կորդուաց աշխարհ (Բոհտան-սուից հարավ), Ուտիք (համապատասխանում է այժմյան Ղազախ-Շամշադինի կողմերին), Արցախ (Լեռնային Ղարաբաղ), Սյունիք (այժմյան Զանգեզուրը, Հայոց ձորը և Սևանա լճի ավազանը միասին վերցրած), Գարսկահայք (կամ Նուշիրական), որ տարածվում էր Ուրմիո լճի արևմտյան կողմերում, Փայտակարան (Արաքս գետի ստորին հոսանքի շրջանում)։

Նշված այդ նահանգների պատմա-աշխարհագրական բնութագրությունները՝ նրանց բնապատմական պայմանները, վարչական դրությունն ըստ ժամանակագրական կարգի, գավառաբաժանումը, պատմական կարևորագույն վայրերի տեղագրությունն ու նրանց համառոտ պատմությունը և այլն կազմում են Հայաստանի պատմական աշխարհագրության նյութի մեծագույն մասը, որը նախատեսվում է շարադրել սույն աշխատության երկրորդ պրակում։

Մեծ Հայքի սահմանների մասին եղած Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի տվյալները, ինչպես տեսանք, վերաբերում են

ոչ թե իր՝ հեղինակի ապրած ժամանակաշրջանին (7-րդ դարին), այլ հայ Արշակունիների տիրապետության ժամանակ հայկական պետության ունեցած մաքսիմում տերիտորիային։ Հեղինակը, ճիշտ է, իր աշխատության մեջ նշում է ծայրագավառներից մի քանիսի (Գուգարքի, Ուտիքի, Արցախի, Փայտակարանի) անջատումն Հայաստանից, բայց, ընդհանուր առմամբ, նրա տվյալները իր ժամանակվա Հայաստանի սահմանների մասին վիճելի են։ Նա, ըստ երևույթին, առաջնորդվել է ոչ թե քաղաքական, տնտեսական կամ էթնիկական հատկանիշներով, այլ «Հայաստան» է համարել այն ընդարձակ տերիտորիան, որն իր ժամանակներում կազմում էր հայկական եկեղեցու թեմը։

«Աշխարհացույց»-ում նկարագրված Հին Հայաստանի նահանգներից մի մասը հանդիսանում էր վարչական միավորներ՝ նախարարություններ կամ բդեշխություններ, օրինակ. Սյունիքը (մի նախարարություն էր, ուր իշխում էր Սյունի նախարարական տունը), Մոկքը (դարձյալ կազմում էր մի նախարարություն, ուր տիրում էին Մոկաց իշխանները), Տայքը (ամբողջովին գտնվում էր Մամիկոնյան նախարարական տան իշխանության ներքո), Գուգարքը (կազմում էր մի բդեշխություն), Աղձնիքը (դարձյալ առանձին բդեշխություն էր) և այլն։ Այդպիսի նահանգների մեջ մտնող գավառները Հայաստանի պատմության ավելի վաղ շրջանում (մեծ մասամբ) էթնիկական շրջաններ էին (առանձին տոհմերի, ցեղերի կամ ցեղախմբերի զբաղեցրած տերիտորիաներ), որոնց բնակիչները դասակարգային շերտավորման հիման վրա առաջացող ժողովրդի (տվյալ դեպքում հայ ժողովրդի) հետ միավորվելով դադարեցին ինքնուրույն գոյություն ունենալուց. նրանց ավագանին ֆեոդալիզմի ձևավորման հետ միասին աստիճանաբար ձեռք բերեց իշխանական իրավունքներ, իսկ նրանց զբաղեցրած տերիտորիան դարձավ փոքր իշխանություն, որը ենթարկված էր տվյալ նահանգում իշխող գլխավոր նախարարությանը։

Նահանգների մյուս մասը սոսկ աշխարհագրական-տերիտորիալ հասկացողություններ էին։ Այդպիսին էին, օրինակ, կենտրոնական երեք խոշոր նահանգները՝ Այրարատը, Տուրուբերանը և Վասպուրականը։ Այս նահանգներից յուրաքանչյուրի տերիտորիաներում իշխում էին ոչ թե մեկ, այլ բազմաթիվ նախարարական տներ։ Այնպես որ չկար Այրարատի, Տուրուբերանի կամ Վասպու-

բականի մասշտաբով մի այնպիսի նախարարական տուն, որին անմիջականորեն ենթարկվելիս լինեին տվյալ նահանգում եղած մյուս ավագ նախարարությունները։ Վասպուրականում առանձին-առանձին իրենց սեփական գավառներն ունեին և իշխում էին հավասար իրավունքներով (անմիջականորեն վասալական կախում ունենալով Հայոց թագավորից, իսկ մարզպանների տիրապետության ժամանակ՝ Պարսից արքայից) Արծրունիները, Ռշտունիները, Ամատունիները, Անձևացիք և այլ իշխանական տներ. Այրարատում, չհաշված Արշակունիները, իշխում էին Բագրատունիները, Կամսարականները, Դիմաքսյանները, Սահառունիները և ուրիշները, դարձյալ կազմելով հավասար իրավունքներ ունեցող և անմիջապես Արշակունի թագավորներին ենթարկվող նախարարություններ. Տուրուբերանում նախարարություններ էին կազմում Մամիկոնյանները, Խոռխոռունիները, Բզնունիները և այլն։ Այսպիսով, նշված վերջին երեք նահանգներում, որոնց նման էին նաև հավանաբար Հին Հայաստանի մի քանի այլ նահանգներ ևս, վարչական միավորներ էին կազմում ոչ թե իրենք նահանգներն ամբողջությամբ վերցրած, այլ նրանց մեջ մտնող գավառները։ Այդ տիպի նահանգներում յուրաքանչյուր գավառ կամ թե երկու-երեք, գուցե և ավելի, գավառներ, միասին կազմում էին այս կամ այն նախարարական տանը պատկանող տերիտորիան։ Իսկ նախարարություններն էլ, ինչպես ասացինք, հենց իրենցից ներկայացնում էին ֆեոդալական Հայաստանի վարչական-քաղաքական միավորները։

Նախարարական տները մեծ մասամբ կրում էին այն գավառի կամ երկրի անունը, որի վրա իշխում էին կամ, ընդհակառակը, իրենց տոհմական անունները տալիս էին տվյալ երկրին[1]։ Երկու դեպքումն էլ ստացվում են միևնույն արդյունքը, այն, որ նախարարական տան և նրա իշխանության տակ գտնվող երկրի անունները մեծ մասամբ համընկնում էին՝ Խոռխոռունիներ—Խոռխոռունիք, Բզնունիներ—Բզնունիք, Երվանդունիներ—Երվանդունիք, Պալունիներ—Պալունիք, Մոկաց իշխաններ—Մոկք, Սյունյաց իշխաններ—Սյունիք և այլն։

Բացի տնտեսության ֆեոդալական ձևից, որն իր ժամանակին

[1] Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 299.

նշել է վարչական բաժանման հիմքը և նրա սիստեմը պայմանավորողը, Հին Հայաստանի վարչական բաժանման մեջ որոշ դեր էր խաղում նաև երկրի բնաշխարհագրական բնույթը։ Հայկական լեռնաշխարհի օրոգրաֆիկ և Հին Հայաստանի վարչական ստորաբաժանումների քարտեզներին նայելիս, իսկույն աչքի է ընկնում այն կապը, որ գոյություն ունի երկրի ռելեֆի և վարչական ստորաբաժանումների միջև։ Յուրաքանչյուր նահանգ կամ գավառ իրենից ներկայացնում է մի ֆիզիկո-աշխարհագրական ռայոն՝ սահմանափակված լինելով, մեծ մասամբ, բնական արգելագծերով՝ լեռներով, գետերով և այլն։ Երկիրն ունի լեռնային բնույթ, լեռնաշղթաները ձգվելով տարբեր ուղղություններով խաչաձևվում և կազմում են բազմաթիվ ձորեր և հովիտներ։ Այդ է պատճառը, ինչպես նկատում է Լենն, որ Հայաստանի աշխարհագրական բազմաթիվ անուններ (հատկապես գավառանուններ) կազմված են «ձոր», «փոր» և «հովիտ» բառերի հետ բարդվելով։ Այդ ձորերն ու հովիտներն էլ բնականաբար ոչ քիչ կարևոր դեր են խաղացել վարչական միավորների տերիտորիալ ամբողջականությունը որոշ չափով պայմանավորելու խնդրում։

Աշխարհագրական միջավայրի խաղացած դերը միանգամայն այլ ձևով է բնութագրված կղերա-ֆեոդալական և բուրժուական պատմաբանների մոտ։ Նրանց մեծ մասը փորձ է անում Հայաստանում ֆեոդալիզմի առաջացումը և նրան հատուկ վարչական բաժանումը հիմնականում «բացատրել» լոկ Հայկական լեռնաշխարհի բնական պայմաններով։

Մարքսիստական պատմական գիտությունը ժխտում է աշխարհագրական ֆակտորների թեորիան և հասարակության զարգացման հիմնական ազդակը, հասարակության ֆիզիոնոմիան որոշողը համարում է արտադրության եղանակը՝ հասարակական արտադրական ուժերն ու նրանց հետ անքակտելիորեն կապված հասարակական արտադրական հարաբերությունները։

Ընկեր Ստալինը այդ մասին տալիս է հետևյալ սպառիչ պատասխանը.

«Այդ դեպքում հասարակության նյութական կյանքի պայման-

[1] Հայկական լեռնաշխարհը, ինչպես նշել ենք, գրեթե համընկնում է Հին Հայաստանի հետ։

ների սիստեմի մեջ ո՞րն է այն գլխավոր ուժը, որը որոշում է հասարակության ֆիզիոնոմիան, հասարակակարգի բնույթը, հասարակության զարգացումը մեկ հասարակակարգից դեպի մյուսը։

Պատմական մատերիալիզմն այդպիսի ուժ է համարում մարդկանց գոյության համար անհրաժեշտ ապրուստի միջոցների հայթայթման եղանակը, հասարակության ապրելու և զարգանալու համար անհրաժեշտ նյութական բարիքների՝ սննդի, հագուստի, ոտնամանի, բնակարանի, վառելիքի, արտադրության գործիքների և այլնի արտադրության եղանակը»[1]։

Իհարկե մարքսիստական-լենինյան պատմական գիտությունը բոլորովին չի ժխտում աշխարհագրական միջավայրի՝ երկրի դիրքի, նրա ընդերքում եղած հարստությունների հասարակության վրա թողած ազդեցությունները։ Նա կարող է արագացնել կամ դանդաղեցնել հասարակության զարգացման ընթացքը, սակայն այդ ազդեցությունը հասարակության զարգացման հիմնական պայմանը չէ, որոշակի ազդակը չէ, նա չէ, որ բնորոշում է հասարակության ֆիզիոնոմիան։

Աշխարհագրական միջավայրի հասարակության զարգացման վրա թողած ազդեցության չափի և դերի բնորոշումը հանճարեղ կերպով տվել է ընկեր Ստալինը իրեն հատուկ պարզ ու հստակ ոճով.

«Անվիճելի է,—գրում է ընկեր Ստալինը,—որ աշխարհագրական միջավայրը հասարակության զարգացման մշտական և անհրաժեշտ պայմաններից մեկն է և, իհարկե, ազդում է հասարակության զարգացման վրա,— նա արագացնում կամ դանդաղեցնում է հասարակության զարգացման ընթացքը։ Բայց նրա ազդեցությունը որոշիչ ազդեցություն չէ, որովհետև հասարակության փոփոխություններն ու զարգացումն անհամեմատ ավելի արագ են տեղի ունենում, քան աշխարհագրական միջավայրի փոփոխություններն ու զարգացումը։ Երեք հազար տարվա ընթացքում Եվրոպայում փոխվել են երեք տարբեր հասարակակարգեր՝ նախնադարյան-համայնական հասարակակարգը, սարկատիրական հասարակակարգը, ֆեոդալական հասարակակարգը, իսկ Եվրոպայի արևելյան մասում, ՍՍՌՄ մեջ փոխվել են նույնիսկ չորս

1 Համկ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց, Երևան, 1946, էջ 163։

հասարակակարգեր։ Մինչդեռ այդ նույն ժամանակաշրջանում աշխարհագրական պայմանները Եվրոպայում կամ բոլորովին չեն փոխվել, կամ այն աստիճան աննշան չափով են փոխվել, որ աշխարհագրությունը հրաժարվում է այդ մասին նույնիսկ խոսելուց։ Եվ՝ այդ հասկանալի է։ Աշխարհագրական միջավայրի փոքրիշատե լուրջ փոփոխությունների համար պահանջվում են միլիոնավոր տարիներ, այնինչ մարդկանց հասարակակարգի նույնիսկ լրջագույն փոփոխությունների համար բավական է միքանի հարյուր կամ երկու հազար տարի։

Իսկ սրանից հետևում է, որ աշխարհագրական միջավայրը չի կարող հասարակական զարգացման գլխավոր պատճառ, որոշիչ պատճառ ծառայել, որովհետև այն, ինչ համարյա անփոփոխ է մնում տասնյակ-հազարավոր տարիների ընթացքում, չի կարող գլխավոր պատճառ ծառայել այն բանի զարգացման համար, ինչը արմատական փոփոխությունների է ենթարկվում հարյուրավոր տարիների ընթացքում»[1]։

1 Համկ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց, Հայպետհրատ, Երևան, 1946, էջ 161—162։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց), Տփղիս, 1909։
2. Եղիշե, Վարդանանց պատմությունը (թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով պրոֆ. դոկտ. Ե. Տեր-Մինասյանի), Երևան, 1936։
3. Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917։
4. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане („Сборник материалов для описания местностей и племен Кавказа"), Тифлис, 1901 г., выпуск XXIX, 1902, г. вып. XXXI, 1903 г., вып. XXXII.
5. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909։
6. Կորիւն, Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ Վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիս, 1913։
7. Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։
8. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա. և Բ., Երևան, 1936։
9. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց (թարգմանություն, ներածություն և ծանոթություններ դոկտ. Մալխասյանի), Երևան, 1940։
10. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912։
11. Սեբեոս եպիսկոպոս, Պատմութիւն։ Երևան, 1940։
12. Ստեփաննոս Սիւնեցի, Մեկնութիւն քերականին (տես „Дионисий Фракийский и армянские толкователи", издал и исследовал Н. Адонц), Петербург, 1915.

31. Ստեփաննոս Տարօնացի (Ասողիկ), Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885։
14. Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910 թ.։
15. Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։
16. «Օտար աղբյուրները հայերի մասին», հունական աղբյուրներ, № 1-ին, Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940։

բ) ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՆԱԶԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ

17. Էնգելս Ֆ., Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948։
18. «Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի պատմության համառոտ դասընթաց», Երևան, 1946։
19. Абих Г. В., Геология Армянского Нагорья, перев. Б. З. Коленко, Тифлис, Западная часть, т. XXI, 1899. Восточная часть, т. XXIII, 1902.
20. Աբրահամյան Աշոտ, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944։
21. Адонц Н., Армения в эпоху Юстиниана (политическое состояния на основе нахарарского строя), С. Петербург, 1908.
22. Ալիշան Ղևոնդ, Այրարատ, Վենետիկ, 1890։
23. Ալիշան Ղևոնդ, Հայապատում, մասն Բ., Վենետիկ, 1901։
24. Ալիշան Ղևոնդ, Սիսական (տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի), Վենետիկ, 1893։
25. Ալիշան Ղևոնդ, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855։
26. Առաքելյան Բ., Միգրացիոն տեսությունը և հայ ժողովրդի առաջացման հարցը, Երևան, 1948։
27. Գեորգ-Մեսրոպ, Հայաստան (աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական և մշակութային տեսակետներով), Կ. Պոլիս, 1919։
28. Գեորգ-Մեսրոպ, Հայոց պատմութիւն (քննական), հատ. Ա., Կ. Պոլիս, 1914։
29. Джавахов И., Государственный строй древней Грузии и древней Армении, С. Петербург, 1905.

30. Еремян С. Т., Сюния и оборона Сасанидами кавказских проходов (Академия Наук СССР, Армянский филиал, „Известия“, № 7 (12), Ереван, 1941).

31. Ինճիճեան Ղ., Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. Ա., Բ. և Գ., Վենետիկ, 1835.

32. Ինճիճեան Ղ., Սոսրագրութիւն Հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822.

33. Լեո, Հայոց պատմություն, հատ. Ա., Թիֆլիս, 1917.

34. Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ., Երևան, 1947.

35. Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ., Երևան, 1946.

36. Линч, Х. Ф. Б., Армения (путевые очерки и этюды, т. т. I и II, Тифлис, 1910).

37. Լիսիցյան Ստեփան, ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1940 թ.:

38. Ляйстер А. Ф. и Г. Ф. Чурсин, География Кавказа (природа и население), Тифлис, 1924.

39. Капанцян Гр., Историко-лингвистическое значение топонимики древней Армении. (Երևան, Պետական համալսարան, Գիտական աշխատություններ, հ. 14-րդ, Երևան, 1940).

40. Капанцян Гр., Хайаса—колыбель армян, Ереван, 1947.

41. Ղափանցյան, Գր., Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940.

42. «Հայ ժողովրդի պատմություն», Առաջին մաս (մակետ), Երևան, 1949.

43. Հակոբյան Թ., Սյունյաց և Բաղաց թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով (թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր վիճակում), Երևան, 1948 թ.:

44. Հյուբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմանեց Հ. Բ. Պիլեգիկճյանը, Վիեննա, 1907.

45. Пиотровский Б. Б., История и культура Урарту, Ереван, 1943.

46. Մանանդյան Հակոբ, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեվտինգերյան քարտեզի, Երևան, 1936.

47. Մանանդյան Հակոբ, Հայաստանի քաղաքները X—XI դարերում, Երևան, 1940.

48. Մանանդյան Հակոբ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա., Երևան, 1945.

49. Մանանդյան Հակոբ, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934.

50. Манандян Акоб, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1930.

51. Марр, Н. Я., Термин „скиф“ („Избранные работы“, том пятый), Москва-Ленинград, 1935.

52. Меликсет-Бек Л. М., Древняя Русь и армяне (տես Հայկական ՍՍՌ-ի Գիտութ. Ակադ. Մառի անվան Լեզվի ինստիտուտ, Աշխատությունների ժողովածու, հատ. 1-ին, Երևան, 1946).

53. Шопен И., Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, С. Петербург, 1852.

54. Ռեկլյու Էլիզե, Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավազանը, Վաղարշապատ, 1890 թ.:

55. Օրմանյան Մաղաքիա, Ազգապատում, մասն Ա. և Բ., Կ Պոլիս, 1912.

56. Բառարաններ, զանազան մասշտաբի պատմական ու ժամանակակից մի շարք քարտեզներ և այլ օժանդակ նյութեր.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

Գլուխ առաջին

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 7

1. Սահմանները, երկրաբանական անցյալն ու ռելեֆը . . 7

2. Կլիմայական պայմանները 50

3. Ջրագրությունը 59

4. Բուսական և կենդանական աշխարհը 77

5. Բնական հարստությունները 82

Գլուխ երկրորդ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ . . . 85

Գլուխ երրորդ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 96

1. Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչները և նրանց բնակության շրջանները 96

2. Հին Հայաստանի բնակչության թիվը և նրա էթնիկական կազմն ու խտությունը 113

3. Հին Հայաստանի բնակչության դասակարգային կազմը և զբաղմունքը 120

Գլուխ չորրորդ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ (ՍԿՍԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ Մ. Թ. 7-ՐԴ ԴԱՐԸ) 133

1. Հին Հայաստանի տերիտորիան և վարչական բաժանումը 5-րդ դարից (մ. թ. ա.) մինչև 1-ին դարը (մ. թ.) . . 133

2. Հին Հայաստանի տերիտորիան և վարչական բաժանումը 1-ին դարի կեսից մինչև 7-րդ դարի կեսը (մ. թ.) . 153

Օգտագործված գրականություն 184

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
16 և 60	—	Գեղմաղանի	Գեղամայի
17	վ. 9	Ալագյաղ	Ալանգյաղ
20	վ. 15	(Արևելք)	(Արևիք)
33	ն. 18	Խավաջուբ	Խաղաջուբ
45	վ. 18	Ղարաբաղի	Ղարադաղի
63	ն. 14	(Ծովակ Հյոնսիսս)	(Ծովակ Հյուսիսս)
116	վ. 10	13-բդ դարում[1]	13-բդ դարում՝
116	ն. 7	Հայաստանում	Հայաստանում[1]

Գլխ. խմբագիր՝ Ս. ՍՈՍՈՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՎՖ 02574։ Պատվեր № 73։ Տիրաժ 1500։ Տպագրական 12 մամուլ։
Հանձնված է արտադրության 1951 թ. մարտի 27-ին։
Ստորագրված է տպագրության 1951 թ. մայիսի 25-ին։

Հայկական ՍՍՌ Պետական Հեռակա մանկավարժական ինստիտուտի տպարան,
Երևան, Տերյանի փ. № 127

Հայաստանի Ազգային գրադարան
NL0423278

ԳԻՆ՝ 4 Ռ. 50 կ.

21191